Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաuություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

15815

1907 № 81.

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՈՒՍՈՒՄՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ

Գինն է 90 կոպ.

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академия Наук СССР

BIB. MUS. ASIAT. C. A. 1818 ПЕЧАТЬ АЗIАТСКАГО МУЗЕУМА

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

491.99-8
Ա-44

ԹԻՖԼԻՍ

Тип. М. Вартанянца, Гановск. ул. д. № 3.

Տպարան Մովսէս Վարդանեանցի

1906

գրm-к
3658
491.99-8
Ա-44
1005-10
6 FEB 2013

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՈՒՍՈՒՄՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՒԻ

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ
Тип. М. Вартанянца, Гановск. ул. д. № 3.
Տպարան Մովսէս Վարդանեանցի
1906

06 FEB 2013

Дозволено Цензурою, 22 Марта 1906 г. Тифлисъ.

1010-95

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԵՐԳ, ԶՐՈՅՑ, ԱԽԱՆԴՈՒԹԻՒՆ, ԱՌԱՍՊԵԼ

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կանաչ վիթխարի
ընկուզենու տակ,
Իրենց հասակի
կարգով ծալպատակ,
Միասին բազմած,
մի շրջան կազմած,
Քեֆ էին անում և ուրախանում
Մեր հսկայ պապերն ու մեր հայրերը՝
Գիւղի տէրերը։
Մենք առոյգ ու ժիր գեղջուկ մանուկներ՝
Երեք դասընկեր,
Նրանց առաջին գլխաբաց կանգնած,
Ձեռքներըս խոնարհ սրտներիս դրած,
Ջի՜լ, ուժեղ ձայնով նրանց սպասում
Տաղ էինք ասում։
Երբ գլխարթաձայն մեր երգը լռեց,
Մռայլ թամադան բեխերն ոլորեց,

Նրա հետ վերցրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ օրհնեցին.—Ապրէ՛ք, երեխէ՛ք,
Բայց մեզ պէս չապրէք։
Ժամանակ անցաւ, նրանք էլ անցան,
Ջրւարթ երգերըս վշտալի դարձան,
Եւ ես յիշեցի մեր օրը լալիս,
Թէ մեզ օրհնելիս
Ինչո՞ւ ասացին.—Ապրէ՛ք, երեխէ՛ք,
Բայց մեզ պէս չապրէք…
Խաղաղութի՜ւն ձեզ, մեր անբա՜խտ պապեր,
Ձեզ տանջող ցաւը մեզ էլ է պատել.
Այժմ տխրութեան, թէ քեֆի ժամին
Մենք էլ՝ օրհնելիս մեր զաւակներին՝
Ձեր խօսքն ենք ասում.—Ապրէ՛ք, երեխէ՛ք,
Բայց մեզ պէս չապրէք։

Յովհաննէս Թումանեան։

ԵՐԳԻ ՀՐԱՊՈՅՐԸ

Մեզնից հազա՜ր—հազար տարի առաջ, մեզնից շա՜տ ու շատ հեռու՝ կապոյտ ծովերի միւս ափում կար մի աշխարհ։

Այնտեղ ծաղիկներ կային, նախշուն ու սիրո՜ւն ծաղիկներ՝ թիթեռների պէս՝ փռւած ժայռերի ու դաշտերի վրայ, և նրանց անուշ հոտով լցւել էին այդ աշխարհի սարերն ու ձորերը։

Այնտեղ աղբիւրներ կային, պայծառ ու բչբչան աղբիւրներ՝ մանուկների պէս՝ որոնք ուրախ ու զըւարթ թռչկոտում էին քարից քար, ծաղիկները համբուրելով։

Բայց այնտեղ մարդիկ չար էին և անգութ։

Մի խեղճ, մի որբ ու աղքատ մանուկ էր ապրում այդ մարդկանց մէջ. նա գիշերը տեղ չունէր գլուխը դնելու, հաց չունէր ուտելու և շոր՝ հագնելու։

Նա մենակ էր, ինչպէս մի թռչուն ամայի ժայռերի մէջ։

Եւ նա մեծացաւ բոլորի աչքի առաջ՝ անտես ու ան-

յայտ. կերակրւում էր դաշտի բոյսերով և պատսպարւում էր անտառների ու այրերի մէջ։

Բայց բոլոր մարդկանցից ծածուկ՝ իր մատներով նա շօշափում ու զննում էր մարդկանց սրտերը. և նա տեսնում էր, որ քարից էին այդ սրտերը, ժէռ քարից։

Եւ երբ բաւական մեծացաւ ու այդ աշխարհի բոլոր մարդկանց սրտերը զննեց ու շօշափեց, վշտացած համոզւեց, որ բոլորի սրտերը քա՜ր են, իսկական քա՜ր…

Այդ ժամանակ նա թողեց այդ քարասիրտ աշխարհը և ճանպայ ընկաւ մի ուրիշ, լաւ աշխարհ գտնելու համար։

Շատ գնաց թէ քիչ, միայն նա հասաւ ծովափին, և երբ ափի աւազների վրայ շրջում էր, նա տեսաւ այնտեղ ընկած մի շատ սիրուն, մի շատ գեղեցիկ, շողշողուն ձուկ։

Ձուկը նրան տեսաւ, դարձաւ՝ մարդու լեզւով ասաց.

—Բարի՛ տղայ, ծովի ալիքը ինձ ձգեց աւազների վրայ, չեմ կարող գնալ ծովը՝ քոյրերիս մօտ, խղճա՜ ինձ, վերցրո՛ւ, ծովը ձգի՛ր։

Մանուկը, որ բարի սիրտ ունէր, առանց վախենալու վերցրեց ձուկը և քնքշութեամբ տարաւ՝ բաց թողեց ծովի մէջ։

Եւ երբ ձուկը փաթաթւեց առաջին ալիքին՝ դարձաւ՝ ասաց մանուկին.

—Ինչ որ սիրտդ կուզի, ասա, ես կըկատարեմ քո արած լաւութեան փոխարէն։ Մանուկը մի փոքր մտածեց և ասաց.

—Ինձ այնպիսի մի հնար տուր, որ մարդկանց կըրծքի տակ քարը իսկական սիրտ դարձնեմ։

—Դու անկ ես ուզում, հրաշալի՛ տղայ… Շա՜տ լաւ։ Կտրիր ծովափի եղէգներից մէկը և նրանից մի սրինգ շինիր. գնա մարդկանց մէջ և՛ նըւագիր և՛ երգիր։ Եւ երբ կըտեսնես, որ նրանց աչքերը արցունքով լցւեցին, այն ժամանակ կիմանաս, որ քարը հալւեց, սիրտ դարձաւ…

Այսպէս խրատեց ձուկը մանուկին, իսկ ինքը փաթաթւելով ալիքների հետ՝ սուզւեց ծովի խորքում։

Մանուկն իսկոյն կտրեց եղէգը, սրինգ շինեց և սուլեց։ Այնպէս քաղցր, այնպէս հոգեգրաւ ու անուշ դուրս հոսեցին հնչիւնները սրնգի միջից, որ բոլոր թռչունները կանգ առած՝ լռեցին՝ լսելու համար։

Եւ մանուկն շտապեց մարդկանց մօտ, մտաւ մարդաշատ քաղաքը, կանգնեց հրապարակում և սրինգը նուագեց։

Քնքուշ ու գեղեցիկ,—ուղղակի մանուկի սրտի խորքերից դուրս ցայտեցին երկնային, շքեղ երգերը։

Նա երգում էր արցունքով թրջած հացը աղքատների. ցուրտ, անտուն գիշերները աշնան. նա երգում էր փակ դռներն ու քար սրտերը մարդկանց. անտէր անտէրունչ մենակութիւնը որբերի։

Եւ փռւեցին նրա երգերը հրապարակի վրայ, մտան ամեն մի խրճիթ ու տուն, փշրեցին բոլոր սրտերի քարերը և ծորեցին սրտերի խորքերում։

Եւ ամեն մի սիրտ խայթում էր իր անգթութեամբ և լցւում էր ծովի չափ սիրով, որ ծովի պէս յուզւում էր ափերից և դուրս թռչում։

Եւ ամեն մի մարդ ուզում էր դուրս թռչել, վազել, սիրով ու կարօտով գրկել մի ուրիշ, անծանօթ մարդու, գրկել, համբուրել նրան և մեռնել նրա համար։

Եւ ահա մարդիկ դուրս թռան տներից, վազեցին հրապարակ, շրջապատեցին մանուկին, առաջին անգամ նկատեցին, որ աղքատ է ու մենակ. գրկեցին և համբուրեցին նրան, և իրանց կեանքում առաջին անգամ արտասւեցին ու վշտահար հեկեկացին։

Իսկ մանուկը նւագում էր աւելի քաղցր, աւելի զգայուն և սրտառուչ, իսկ մարդիկ ամենքը, ամենքը լսում էին հոգեսլաց և լալիս էին ու լալիս։

Ահա այդ օրւանից աշխարհ եկաւ երգը. երգի միջոցով հալւեցին քար սրտերը, և այդ օրւանից սէրը վշտի հետ անբաժան բուն դրաւ մարդկանց սրտերի մէջ։

Աւետիս Իսահակեան։

ԵՐԳԻ՛

Երբ որ տրտում ես, բարեկամ,
Զախորդութեան օրերդ,
Թող ամեն ինչ, երգարան
Ազգային դու առ ձեռըդ։

Երգէ՛, երգէ՛ դարդն ազգիս,
Երգէ՛ ամուր, անդադրում,
Հոգով, մտքով կրփոփւիս,
Հաւատա՛ ինձ, մէկ պահում։

Երբ խնդում ես, բարեկամ,
Յաջողութեան ժամերին,
Երգէ՛ երգ դու ցնծութեան,
Մեր պաշտելի պապերին։

Քու խնդութեան՝ խնդակից,
Այնիւ գործիդ բաջալեր
Կըլնին հողի խոր տակից
Մեր պանծալի նախորդներ...

Երգէ՛ մանկան քո գրկում,
Երգէ՛ խնջոյքի միջին,
Ե՛ւ սուրբ ահեղ ճակատում,
Ե՛ւ բանտումը խաւարչտին։

Երգով յիշէ մեր նախնեաց,
Երգով թող ընէ քո որդին,
Երգն է մարդուն անգին գանձ,
Լոկ չար մարդիկ երգ չունին։

Ռ. Պատկանեան․

ԿԱԼԱՆԱՒՈՐ ԵՒ ԱԶԱՏ

Փակւած վանդակում սոխակ էր երգում,
Նըրա երգերից լաց—ողբ էր լըսւում։

—

Ազատ երկնքում ծիծառ էր թռչում,
Նըրա երգերից բերկրանք էր հնչում։

Լևոն Մանւէլեան։

Ե Ր Գ Ը

(Ձւեդերէնից)

—

Մի զոյգ թռչուններ գարնանը երգելով էին իրանց բոյնը շինում, ծլըլալով էին յարդ կրում դէպի նոր բնակարանը. նրանց երգը հնչւում էր անտառներում և ուրախ աշխատանքի ձայները տարածւում էին ամեն կողմը։

Երբ անցորդները լսում էին այդ երգը, նրանց թւու էր, թէ երգիչները ճիւղից ճիւղ են թռչկոտում անհոգ ու անգործ։ Բայց ոչ,—այդ օրը նրանց ամենատա աշխատանքի օրն էր, նրանք հազիւ էին կարողանու փոքր ինչ հանգիստ առնել ամառային կարճատև, վաղանցուկ գիշերներին։ Երբ բոյնը պատրաստ էր՝ թըռչունների երգը լռեց։ Երջանկութիւնից արբեցած ու անձայն՝ մայրն հրճւում էր իր բնակարանից, իսկ ամուսինն ամեն առաւօտ ճոխ սեղան էր պատրաստում ընկերոջը իր սէրն ապացուցանելու համար։

Նրանց երջանկութիւնն այդ ժամանակ այնքան մեծ էր ու կատարեալ, որ անհնարին էր դայլայլիկներով ար տայայտել։

Անիրաւ ձեռքեր բոյնը աւերեցին, և նրանց երջանկութեան ու աշխատանքի պտուղները գետին ընկան ջախջախւեցին։ Այս մեծ ցաւից յետոյ մայրն չընտեց

ճղան վրայ իր անբախտութիւնը սգալու, և բարձրաձայն ու յուզիչ ձայնով չողբաց իր անգին կորուստը։

Պէտք էր նոր բուն շինել, և նորից լսւեց աշխատանքի ազնիւ ու հպարտ երգը։ Դայլայլիկը վերստին հնչւեց, և այս անգամ այնքան և այնքան քաղցր, խորը, որ շրջակայ բոլոր թռչունները յափշտակւած ականջ էին դնում նրանց երգի ուժգին և անոյշ հնչիւններին։

Աշուն էր արդէն, բայց նրանց հզօր երգը գարնան բոյր ունէր. տերևաթափ անտառն անգամ նրանց յուզիչ հնչիւններով կարծես նորից կանաչում էր ու զարդարւում...

Երգելով արթնացար դու, իմ երկիր, քո հարիւր տարւայ քնից։ Մեծ երգիչները իրանց քնարով քունըդ վանեցին, և հայրերից ժառանգած հին աւանդութիւնները աչքերդ բաց արին։ Եւ քո երիտասարդութիւնը, իմ ազգ, սկսեց թափառել գիւղից գիւղ՝ մեծ երգիչ—բանաստեղծների հզօր խօսքերը շրթունքներին։ Կարծում էիր միթէ, որ երիտասարդ ու աղջիկներ քո մռայլ հօրիզոնի տակ թափառական երգում էին իրանց սեփական զւարճութեան համար. ո՛չ, երիտասարդ ու կորովի սերունդն էր այն, որ քար էր կրում մեր հայրենի տան հիմքերը դնելու և անձնւիրութեան ու զոհերի հարկերն էր հաւաքում հայրենիքի սեղանի վրայ դնելու համար։ Նրանց ջանքերով պատերը բարձրանում էին հա բարձրանում, և շատ չանցած լուսաւորութեան դրօշակը ծածանւում էր հազարաւոր տների կտուրների վրայ։

Մեր բունը քանդեցին. մեր տունն աւերակ դարձրին, բայց հազիւ էր վերջացել աւերածի սև գործը, երբ ատաղծագործի աշխատանքի երգը դարձեալ հնչւեց կաղնենու երկրի վրայ և տարածւեց անցաւ ծովի այն կողմը։ Ահա ես նորից տեսնում եմ Ֆինլանդիայի երգիչներին շրջելիս, ես տեսնում եմ երիտասարդներին և օրիորդներին սպիտակ գլխարկներով*). ահա նրանք անց-

---

*) Ֆինլանդիայի ուսանողները և ուսանողուհիները սովորաբար կրում են սպիտակ փոքրիկ գլխարկներ։

նում են գիւղից գիւղ քաղաքից քաղաք և խայտալով մտնում են ամենայետ ընկած անկիւնները։

Ստեղծագործող, ուժգին երգը հնչում է շքեղ դահլիճներում և ցածրիկ ու կորած յարկերի տակ։

Եկէք երգով ցրենք մառախուղը մեր դաշտերից, երգելով մեր անտառները յուսոյ կանաչով զարդարենք։

Եկէք երգով հալցնենք սառոյցը մեր սրտերից և երգելով դարձնենք աւերակները ծաղկած բնակավայրեր։

Մենք երգելով կընորոգենք քո աւերակ բոյնը, իմ երկիր։

Մարիամ Մէլիք-Բէգլարեան-Օհանեան։

«ԼՈՒՐ-ԴԱ-ԼՈՒՐ»

(Քրդական աւանդութիւն)

—

Այնտեղ—Սև ջրի չքնաղ եզերքներումն էր, որ ապրում էր Հասօն։ Երկրի սիրուն և քաջ պատանին էր նա։ Ոչ մի մարդ նրան չէր կարող գինաթափ անել։ Աւազակը սիրտ չունէր նրա հօտի շուրջը ման գալ և ոչ իսկ գայլը ոչխարի կողքին քարշ գալ։ Հասօն որքան որ բարի էր դէպի լաւը, այնքան էլ անգութ էր դէպի չարը։

Սիրուն էր Հասօն, նոր ծագող արևի պէս չքնաղ։ Երկրի հարսնացուների խելքը գնում էր նրան տեսնելիս։ Հապա նրա նուագելը։ Նրա «փող»-ից հանած ձայները կարելի էր որ հրեշտակներն ունենային, այդքան գրաւիչ, այդքան սիրայոյզ։ Զայներ, որոնք հոսում էին մելամաղձիկ, կլկլում էին որպէս հեզիկ վտակ և դայլայլում որպէս սիրահար սոխակ։

Մարդ թէ անասուն, այդ ձայնը լսելիս, ակամայ մօտ էին գալիս, քարանում ու աշխատում էին չկորցնել նրա ոչ մի գեղգեղանքը։

Նստում էր Հասօն ժայռերի գլխին, աչքերը ուղղած լայն հորիզոնին. Սև ջուրը գալարապտոյտ ոտքների տակին, գլգլուն գեփիւռը խաղում ճակատին...

Եւ նա ածում էր։

Պէտք էր տեսնել թէ ինչպէս գամփռները գլուխները թաթերի վրայ, աչքերը սրնգին, դառնապէս լալիս, կնձկնձում էին։

Պէտք էր տեսնել թէ ինչպէս այն անմիտ ոչխարները մոռանում էին ուտելը ու մօտ գալիս։

Հասօն քարերին էր դողացնում, Սև ջրի ալիքները յուզում։ Բնութիւնն էր քարացնում, գեփիւռին ողբացնում. ամեն ինչ շարժում ու հրեշտակների նախանձը գրգռում։

Այսպէս էր Հասօն։

Էլ ինչպէ՜ս ոչխարները չըհնազանդէին սրնգի ձայնին։

Ինքը չէր շարժւում, ոչխարներին նւագով՝ կանչում էր մօտը։

Արածացնելու համար ածում էր «Բէրիկ»-ը, ջրելու համար՝ «Խօզաթ»-ը և հեզ անասուններին իր շուրջը ժողվելու համար՝ «Ոչխարի կոչը»։

Ոչխարները՝ լսելուն պէս՝ թողնում էին ամեն ինչ, անցնում ամեն բան, գալիս Հասօի շուրջը հաւաքւում։

Ապրում էր Հասօն այսպէս երջանիկ, հեռու մարդկանցից, բնութեան գրկում, լեռների կրծքում։ Երջանիկ էր նա որպէս մի իշխան, սիրւած իր հօտից և նւիրւած իր երգերին։

II.

Մի օր Հասօն տեսաւ աղայի միակ աղջկան։ Զալխէ էր անունը։

Սիրուն էր Զալխէն։ Կախարդիչ՝ աչքերը, սալւի էր բօյը, կամար՝ ունքերը, գողտրիկ՝ թշերը։

Զալխէն էլ տեսաւ Հասօին. Զալխէի ու Հասօի սրտերն իրար հետ խօսեցին։

Տխրեց Հասօն։ Կորցրեց աշխուժութիւն, կորցրեց զւարթութիւն։ Օրերով պտոյտ էր գալիս մեծ պալատի շուրջը, թէկուզ ոչխարն այնտեղ էլ ուտելու խոտ չգտնէր։ Աչքը աշտարակին, նւագում էր տխրագին, սիրտը սրնգի մէջ դնում ու արտասւում։

Ջալխէն էլ էր տանջւում։ Թաքնւած լուսամուտի ետևում, նա աչքը չէր հեռացնում Հասօից, ականջը՝ նրա նւագից։ Ո՛չ ուտում էր և ո՛չ էլ խմում․ տանջւում էր միայն։

Երկուսն էլ գիտէին որ շատ հեռու են միմեանցից, որ աղայի աղջիկը չոբանի կին չի լինի։

Բայց սէրը Աստուծոյ կրակն է, շատ զօրեղ կրակ․ Նա կտրում—անցնում է ամեն հեռաւորութիւն, թափանցում ամեն խորութիւն։

Սէրը ո՛չ հեռաւորութիւն է ճանաչում, ո՛չ էլ խորութիւն։

III.

Հեռատես էր աղան ու խիստ խորամանկ։ Շուտով նկատեց նա Հասօի վիշտը։ Բարկացաւ, կատաղեց, ուզեց սպանել յանդուգն չոբանին, բայց խոհեմ էր։ Չուզեց իր տան անունը կոտրել յաւիտեան ու մի չոբանի արիւնը մտնել ի զուր։

Բայց ինչ կասէին, եթէ իմանային, որ մի չոբան նրա աղջկայ ետևից է ընկել։ Պէտք էր Հասօին հեռացնել․ հեռացնել ինքնակամ, զո՛հ խորամանկութեան։ Պէտք էր այնպէս մի խաղ սարքել, որ Հասօն թողնէր ինքը, հեռանար ու մէկ էլ այդ կողմերը չըդառնար։

Մ՛տածեց աղան, երկար մտածեց ու գտաւ հնարք։ Մարդ ուղարկեց, կանչեց Հասօին ու ասաց նրան։

«Գիտեմ, Հասօ, ասաց չար աղան—գիտեմ, որ ուզում ես իմ աղջկան առնել։ Դու քաջ տղայ ես․ լսել եմ լաւ սրինգ էլ ածում ես։ Աղջիկս քեզ կըտամ, միայն կըդնեմ մի պայման։ Լսել եմ որ ոչխարները քեզ հնազանդում են ու սրնգիդ ձայնից գրաււած՝ քեզ մօտ են գալիս։

«Գետնից մինչև այդ բարձր աշտարակը—տեսնո՞ւմ ես նրան—դնել կըտամ փայտեայ մի սանդուխք․ դու կընստես այնտեղ—բարձրում, ոչխարներդ կը ժողովւին ցածրում։ Ահա պայմանը։ Եթէ դու բարձրից, սրինգդ ածելով, կարողացար ոչխարներին սանդուխքի վրայով

քեզ մօտ վեր հանել, այն ժամանակ աղջիկս քեզ հալալ, առ ու վայելիր։

«Ապա թէ ոչ՝ խայտառակ եղիր, ինչ ունիս-չունիս՝ հաւաքիր, և քանի շուտ է՝ այս կողմերից հեռացիր։ Մի չոբան՝ աղայի փեսայ չի լինիլ—այդ խելքիցդ հանիր»։

Հասօն ժպտեց, խոր գլուխ տւաւ, «Տէր ես, աղա՛»—ասաց,—ասածիդ համաձայն եմ»։

IV.

Շինել տւաւ աղան փայտեայ սանդուխքը։—Իննսուն և ինն աստիճան ունէր նա։—Հասօից ծածուկ կոտրեց նրա մէջ տեղի մի աստիճանը․ կոտրածը թոյլ կերպով դրաւ իր տեղը այնպէս, որ ոչինչ չէր երևում, բայց մի թոյլ սեղմում հերիք կըլինէր՝ փայտը ձգելու, և մի աստիճանից դէպի միւսը՝ մի արշինաչափ տեղ բաց թողնելու, այդպիսով էլ ոչխարների անցնելը անհնար դարձնելու։

Օ՛, չար էր աղան. հպարտ էր, հպա՛րտ... Այդ խարդախութիւնն արաւ չար աղան։ Հասօին աշտարակի ծայրը հանեց, Ջալխէին պատշգամբի վրայ ու ասաց չոբանին։ «Ահա Ջալխէն, խրախուսւիր, հալալ է քեզ նա, թէ ասածս արիր»։

Ջալխէն տեսաւ Հասօին, ժպտեց նրան, կարմրեց ու նշան արաւ։ Իմացաւ չոբանը որ Ջալխէն սիրտ էր տալիս իրան։ Սիրտն ուրախութիւնով լցւեց։ Առաւ սրինգը, բերանին դրեց, քէօլոգը ծռեց ու նւագն սկսեց։

Թնդաց սար ու ձոր, շարժւեցին ծառեր, դողացին քարեր, յուզւեց չար աղան, խելայեղ եղաւ Ջալխէն, քիչ մնաց թռնէր ցած ու գնար ոչխարի պէս ընկնէր Հասօի ոտքերը։

Շարժւեցին ոչխարները, մօտեցան սանդուխքին ու սկսեցին միմեանց ետևից բարձրանալ աշտարակն ի վեր։

V.

«Լօ՛, լօ՛, լօ՛, Հասօ՛, Սև-ջրի չոբա՛ն, սար ու ձոր մըր-կըտացնող ջիւան․ գազան մեղմացնող, քար ու ծառ յու-

զող չոբան։ Ինչո՞ւ յիմարի պէս հաւատացիր աղային։ Ինչո՞ւ բարձրացար ծայրը աշտարակի։ Ջուր դառնայիր մօրդ փորում, Հասօ։ Երանի չըմտնէիր այս աշխարհը, որ լիքն է աղաներով։ Երանի չտեսնէիր արևի փայլը, որ քեզ այրեց-խորովեց, Սև ջրի ալիքները, որ քեզ տրորեց. շամբի օրօրուելը, որ քեզ կախարդեց։ Լօ՛, լօ՛, լօ՛... մի՞թէ կըմանչը [1]) այնքան նամէրդ [2]) եղաւ, որ սէրը ծաղրեց։ Միթէ՞ նրա խիղճը կորաւ. Աստուածը մոռցա՞ւ։ Խեղճ Հասօին ինչո՞ւ Չէյթանի բաժին արաւ, աշխարհը լացի ու սուգի մէջ դրաւ... լօ՛, լօ՛...»

Հա՛ բարձրանում էին ոչխարները, հրում միմեանց։ Սրնգի ձայնից դիւթուած մոռանում էին իրանց տակի անդունդը։ Աչքերը Հասօին ուղղած, բարձրանում էին։

Աշխարհը զմայլած դիտում էր. Չար աղան քար էր կտրել։ Իսկ Զալխէն մինչև կէս մէջքը կռացել, ձեռները Հասօին էր պարզել ու գոչում էր.

—«Ես քոնն եմ, Հասօ, քոնը յաւիտեան։—Ես քեզ եմ պատկանում, և այնքա՛ն եմ սիրում, որքան չի սիրում թիթեռը՝ ճրագին, սոխակը՝ վարդին, աշխարհը՝ արևին ու բոյսը՝ հողին։

«Դու ես իմ ճրագը, դու ես իմ վարդը, դու իմ արևն ու դու իմ հողը...

Լսում էր Հասօն, սիրտը խշխշում։ Ածում էր, ածում, նւագը ուժովցնում։

Եւ ոչխարները բարձրանում էին, շարքով բարձրանում։

VI.

Հասաւ նէրի [3]) այծը կտրած աստիճանին։ Զգաց որ մահը առջևն է, բայց դիւթուած էր—ոտքը դրեց փայտի վրայ։

Ճարժուեց փայտը. լսեց մի մայիւն և սիրուն նէ-

1) Քիւրդ։
2) Անազնիւ, ամարդի։
3) Առաջնորդող այծ։

րին պտոյտ գործելով օդի մէջ, գնաց ջախջախուելու անդունդի քարերի վրայ։

Մ՚ղկտաց Հասօն։—«Հէյ վախ, իմ սիրուն նէրի» կանչեց սրտաբուղխ. բայց աչքը երբ Զալխէին ընկաւ, մոռացաւ նէրիին։ Սրինգը դրեց բերնին ու սկսեց ածել։

Ոչխարները տեսան նէրու դրութիւնը, կանգ առին, մտածեցին ետ գնալ, բայց դիւթուած էին, առաջ գնացին։

Փորձեց առաջին ոչխարը, ետ ետ քաշւեց, առջևի ոտքերը բարձրացրեց և ուզեց թռնել։—Մի մայիւն արձակեց և գնաց այծի ետևից։

—«Վա՜խ, վա՜խ, իմ անմեղ ոչխար, մղկտաց Հասօն։ Նայեց Զալխէին, մոռացաւ ոչխարին, ոյժ տըւաւ «փող»-ին։

Փորձեց երրորդ ոչխարը, մինչև իսկ թռաւ, բայց կպաւ աստիճանին, մի պտոյտ գործեց, խղճուկ կերպով մայեց ու գնաց, ու գնաց դէպի խոր անդունդը։

—«Թռէք, անցէք իմ սիրուն ոչխարներ—երգեց Հասօն—թռէ՛ք իմ թաւամազ դառնուկներ, եկէք ձեր տիրոջ մօտ»։

Ոչխարներն էլ չէին շարժւում. ետ ետ էին գնում։

Կատաղեց Հասօն—բացւածքը չէր տեսնում—որչափ սէր ունէր ու զգացմունք, ներշնչեց սրնգին. գեղգեղանքներով քարացրեց բնութիւնը... բայց ոչխարները ետ ետ էին գնում։

Ամաչեց աղան իր գործից, կիսամեռ եղաւ Զալխէն յուսահատութիւնից։

Փոխեց Հասօն եղանակը։

Այժմ ինքն էլ չըգիտէր ինչ էր ածածը։

Դադրել էր քամին, կանգնել էր ջուրը, լռել ամեն ինչ։

VII.

Ո՞վ չի լսել «Լուր—դա—լուրը», որին չի դիմանալ ոչ մի քար սիրտ։ Որին լսելով՝ կըթրթռայ գիւրագգաց սիրտը, կըմարի։ Որին լսելով՝ սիրազգաց աղջիկը կըգժւի և դէպի սրտակիցը կըսլանայ։

Սքանչելի է նա. երգերի փառքն է նա։
Հրեշտակների մրմունջը, Հասօի ոգին է նա…
Զարժւեցին ուխարները, գլորւեցին շատերը։
Զարժւեց և Հասօն, կռացաւ, տեսաւ բացւածքը։
Հասկացաւ ամեն ինչ, նայեց աղային։

Զգաց, որ Զալխէն կորած էր իր համար, ինքն էլ աշխարհի համար։ Զարժւեց Զալխէն էլ, նայեց աղային, նայեց Հասօին։

Զգաց, որ Հասօն կորել էր իր համար, ինքն էլ աշխարհի համար։

Եւ լռեց ամեն ինչ…

«Լուր—դա—լուրը» կտրւեց, նրա խաղի վերջին թռթռումը գնաց մեռնելու օդի մէջ…

Յետոյ… լսւեց մի ճիչ…

Ու երկու մարմիններ արագ պտոյտ գործելով օդի մէջ, գնացին միասին, ջախջախւելու անդունդի խորքերում… և միմեանց գրկում։

Հասօն և Զալխէն էին դրանք…

Վ. Փափազեան։

ԾԱՂԿԱՁՈՐ

(Աւանդութիւն)

Գարուն էր։ Ձիւնը, սառոյցը հալւած.
Ամեն տան դռներ, երդիկներ բացւած,
Արևը վերէն վայր նայում էր հաշտ,
Ծիծաղում էին ձոր, հովիտ ու դաշտ։

Հայոց աշխարհը սիրուն է գարնան,
Սա եդեմական դրախտի է նման,
Սոխակ ու արտոյտ թփի, արտի մէջ
Օրնիբուն սաղմոս կարդում են անվերջ։

—«Քոյրեր, խաղալու ձորնիվայր երթանք»,—
Ասացին իրար անմեղ հայ կուսանք,

Պահծու երփներանգ հագան նոքա շոր,
Պճնազարդ գնացին ուղիղ դէպի ձոր։

Գոյն-գոյն հալաւով [1]) ձորը փռւեցան,
Խաղով, պարերով կուշտ զւարճացան.
Պանիր, կաթ ու հաց հետերն ունէին,
Խորտիկի նստան ժամ միջօրէին։

Ինչպէս չար բազէն անմեղ թռչնակին,
Այնպէս դարանած գունդ անգութ Պարսկին,
Ական թօթափել աղջկանց վրան,
Սուր ու զէնքերով արագ թափեցան։

Հայ պարկեշտ կուսանք՝ խոստման մտերիմ,
Որ տրւել էին հայ փեսաներին,
Մահաբեր սրից չըսարսափեցին,
Արիւնաթաթաւ՝ գետին գլորւեցին։

Արևը իջաւ սարերի թիկունք.
Մայրերը ասին. «Ո՞ւր են մեր աղջկունք».
Այսպէս հոգետանջ ու մտամոլոր,
Զուտ-շուտ վազեցին նոքա դէպի ձոր։

Ամեն մի բլուր, ամեն մի առւակ
Ծածկել էր աղջկայ պարզարուն զիակ,
Ամեն մի տերև, ծառի ամեն ծիլ
Ներկել էր աղջկայ արեան ջինջ կաթիլ։

Ծնողք շատ լացին ու չըսփոփեցան,
Ընկան գետնի վրայ ու խոր քնեցան.
Մէկ էլ առաւօտ աչքերն որ բացին,
Տրտմել զարմեցին ու էլ չի լացին։

Ամեն մի բլուր, ամեն մի առւակ
Ծածկել էին վարդ, շուշան, մանուշակ,
Ամեն մի տերև, ծիլ, բանջար ու խոտ
Բուրկէնի նման էին խնկահոտ։

---

[1]) Հալաւ՝ Ղարաբաղի բարբառում նշանակում է՝ շապիկ, իսկ ռաճկահայոց բարբառում ընդհանուր՝ հագուստ, հանդերձ, զգեստ։ Այս մտքովն է գործ դրւած այստեղ։

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ու այնուհետև ամեն նոր գարուն
Ջորն այն ծաղկունքով է միշտ զարդարուն,
Ու այդ չարաշուք օրից մինչ այսօր
Ջորի անունը մնաց ծաղկաձոր։

Ռափայէլ Պատկանեան։

ԱՐՑՈՒՆՔԻ ԱՂԲԻՒՐ

Մօտեցաւ արևն Արևմուտ սարին ու դօշին չոքեց։
«Գնում եմ մօրս ծոց, ճանպայ տուր, թէ չէ՝ կըվառե
ես քեզ»։ Սարը կռացաւ ու ճանպայ տըւաւ. արևը ժըպ-
տաց, սարերի գլխներ ամպեր ու երկինք կարմրեցին
յանկարծ։
Նախիրն է դառնում հեռու դաշտից, գառներ են
մայում, այծեր մըկըկում, կովեր բառանչում, երեխայք
ծըւում։ Ինչո՞ւ են լալիս սրանք լեղաճաք, այս ինչ պա-
տահեց։
—Վա՜յ, Մարէ-մէրիկ, գոռում են նրանք, օրըդ խա-
ւարեց։ Սև-Ջորի միջում մենք խաղում էինք ալաջա պա-
ըը, երբ վրայ տըւին մեզ յանկարծ փաշայի քուրդ նո-
քարները։ Նրանք մտրակով մեզ լաւ ծեծեցին ու տու
բշեցին, իսկ քո Անուշին ամուր կապեցին ու թամքի
դրին։ «Մայրիկ էր կանչում, մայրիկ ջա՜ն, ո՞ւր ես, ին
սպանեցին»։ Բայց նրանք Անուշին ապտակ խըեցին, իս
կոյն լռեցրին։ Նա ձէնը կտրեց. քըղերը փախան. Անու
շըդ կորաւ։ Վա՜յ, Մարէ-մէրիկ, քեզ սև լուր բերինք
օրըդ սևացաւ։
Դառն կսկիծը նրա գլուխն ընկաւ, տանել չըկա-
րաց, արցունքը ցամքեց, աչքերը պլշած ու կանգնած
մնաց... Յանկարծ ծիծաղեց, խելքը կորցրած...
—Եկէք, բալաներ, էսօր Անուշիս ես հարս եմ շինել
հարսանիք արել... մեռնեմ ես նրա մարմար թշերին
շմշատ մատներին, մեռնեմ փեսայիս բօյ ու բուսա-
թին... դէ, պար բռնեցէք, հարսնիք է, բալէք»...

Ու ինքը պարեց... բայց յանկարծ ճըչաց, մազերը փետեց ու դուրս արշաւեց...

Վեր կացաւ քամին, երկինք ու երկիր իրար հետ խառնեց, սև ու մութ ամպեր իր ծոցից հանեց, մէկ մէկի զարկեց։ Լռեց ամեն բան. քամին էր միայն, որ մռնչում էր, քամին էր միայն, որ սուլում, ոռնում ու շառաչում էր...

Բայց ձորի միջից մի ձայն է գալիս։ Նա էլ հեծկըլ-տում, նա էլ է ոռնում ու վայ է տալիս։ Արդեօք Բորե-նի՞ն, թէ գայլն է սպառնում այս խուլ գիշերում. թէ բուն է՝ վախից սարսափած գիւղին սև շիւան բերում։ Ոչ, ոչ, չի կարող ոչ մարդագէլը, ոչ գայլը, ոչ բուն,— ոչ մի շնչաւոր չի կարող դիմնալ կատաղած քամուն։ Մարէ-մէրիկն է այն ձորում նստած, Անուշին կանչում, ձայնը չի լսում, նա հեծկլտում է, մազերն է փետում...

Բայց չի դադարում կատաղած տարրը. երկինքը ելաւ, անձրև ու կարկուտ իր միջից ժայթքեց, և մելա-մաղձոտ՝ նրա հետ՝ գիւղի զանգակն է հնչում, իսկ հե-ռու ձորից մի խուլ հեծկլտանք նրա հետ խառնում...

Անցան տարիներ։ Մարէ-մէրիկը ձորը չէր թողնում. մազը գըզզըւած, տկլոր ու նիհար խոտ էր ճարակում, աչքերին արցունք և թափառելով՝ Անուշ էր կանչում։

Այսչափ կսկըծից, այսչափ արցունքից գազան փա-շայի սիրտը չըկակղեց։ Բայց ժայռը կակղեց, իր սիրտը պատռեց թշւառ մօր լացից և արտահոսեց Սև-Ջորի մի-ջից պաղ ու վըճիտ ջուր, որ մինչև այսօր այնտեղ կոչում են «Արցունքի Աղբիւր»։

Գէորգ Աստւածատրեան։

ԹԵԽԱՋՈՒՐԿ ԱՐԱԳԻԼ

(Արանիից)

Գերի արագիլն ինչպէս բանտարկւած,
Բարձր պարսպի յետևն է փակւած.

Կուզեր նա թռչել ու անցնել ծովեր,
Բայց, աւա՜ղ, խեղճի խուզած են թևեր։
Իր անզօրութիւնը նա լաւ է զգում,
Եւ թևերի տակ գլուխն է ծածկում,
Կըցանկար առաջ նայել նա սիրով,
Բայց փակւած է նա ամուր պատերով։

Կարող չէ տեսնել նա երկնակամար
Իր մութ, նեղ բանտից,—բայց ինչու համար.
Այնտեղ թռչում է ազատ կարաւան,
Իսկ նա մատնւած է չար գերութեան...
Եւ նա անհամբեր սպասում է վշտով,
Որ մէջքին բուսնին թևերը շուտով.
Նա այն ժամանակ չար գերութիւնից,
Կըթռչի ազատ աշխարհ յուսալից։

Եւ ահա սառըն աշունն է փչում,
Արագիլները տաք տեղ են թռչում.
Թշւառ, ինչպէս սորուկ, նա անհամարձակ,
Վշտագին ու որբ, շրջում է մենակ։
Լսում է ահա վերից կռնչիւն,—
Գնում է բարձրից կռունկների չուն,
Ականջ է դնում չարատանջ գերին,
Ազատ երամի ուրախ երգերին։

Կամենում է նա նորից փորձ փորձել,
Խուզած թևերը բարձր տարածել,
Բայց այլոց նման, աւա՜ղ, նա ազատ
Կարող չէ սլանալ, երկիրն հարազատ։
Անբախտ արագիլ, խեղճ կալանաւոր,
Էլ այն յաղթական դու չես թևաւոր,
Թէ զօրանան էլ թևերդ ուժգին,
Զո՛հ պիտի լինին անգութ դժնակին։

Յովհաննէս Յովհաննիսեան.

ԵՐԿՈՒ ԵՐԳԻՉ

(Զրոյց)

Ամբողջ անտառում հռչակւած էր մի սոխակ իր սքանչելի երգով։ Գարնանային տաք գիշերներին, վայրի վարդենու հինաւուրց թփի վրայ, նա երգեր էր յօրինում։ Ձայները տարածւում էին հեռուն,—կամ ախորժ մարելով, կամ գեղգեղ դայլայլով... Թռչնակները երամներով թռչում, գալիս էին ուխտեալ թփի մօտ, իսկ մարդիկ լսում էին սոխակի երգը և ասում էին միմեանց· «Ահա՛ մեր պարծանք սոխակ»... Համեստ մասրենին հպարտանում էր, որ իր վրայ բոյն է հիւսել նշանաւոր երգիչը... Անտառային թռչնակներն աշխատում էին սովորել սոխակի եղանակները, բայց նրանց երգը վատ նմանողութիւն էր միայն...

Սոխակը ծերացաւ... Նրա ընկերուհին վաղուց մեռել էր, ձագերը թռել էին զանազան կողմեր... Ոմանց բռնել էին մարդիկ, ուրիշներն իրենց համար բներ էին շինել հեռաւոր անտառակներում և միայն երբեմն նրանց մասին անորոշ լուրեր էին հասնում ծերունուն... Երիտասարդ սոխակներից ոչ ոք չունէր հօր տաղանդը։ Եւ նստել էր ծերունի մենաւոր երգիչը, վշտով նայելով դատարկւած բնիկին... Արեգակը մայր մտաւ, մոխրագոյն ամպերը կախւեցին անտառի վրայ, երկինքը լալիս էր. Նրա մենաւոր սիրտն էլ էր լալիս... Յանկարծ ներքեւում, խոտի մէջ, սոխակը լսեց մի թոյլ, հազիւ լսելի հնչիւն։ Խոտի կանաչ և թաց ցօղունների ետևից նայում էր սոխակի մի թոյլ և փոքրիկ ձագուկ։ Նա կորցրել էր իր հարազատ բնիկը և հիմա երկչոտութեամբ նայում էր տերևներից հոսող ջրերին... Նրա շուրջն այնպէս էր որ կասենաս ծով լինէր... Մի ինչ որ ջերմագին զգացմունք շարժւեց ծերունի երգչի հոգու խորքում. Նա օգնեց անօգնական թռչնակին ճիւղի վրայ բարձրանալու։ Այստեղ կարելի էր պատսպարւել անձրևից։

Հեղեղն անցաւ։ Ցիրուցան եղած ամպի տակից

գգւանքով նայեց արեգակը և իր ոսկեայ ճառագայթները տարածեց շողակնեայ կաթիլների վրայ… Բունիկներից դուրս նայեցին թռչնակները և ցնծագին ճռւողեցին… Իսկ մատղաշ սոխակը դեռ այնպէս անշարժ նըստել էր վայրի վարդենու ոստի վրայ։

—Ինձանից չըհեռանաս, ասաց ծերունին։ Միասին բաժանենք մեր ուրախութիւնն ու վիշտը։

Սոխակը մնաց։ Եւ միայնակութիւնը կապեց նրանց անյողդողդ բարեկամութեամբ։

Սիրով էր սովորեցնում ծերունին իր երիտասարդ բարեկամին։ Խաղաղ երեկոներին նա հանդիսաւոր օրհներգ էր երգում բնութեանը… երգում էր աստղերի և գիշերային մանուշակների բուրմունքի մասին, երգում էր հինաւուրց մասրենու մասին, որի վրայ իր համար բոյն էր շինել… Իսկ թռչունները ասում էին։

—Լսեցէք, ձագուկներ, և սովորեցէք,—երբ մեռնի մեր մեծ երգիչը, ոչ ոք չըպիտի կարողանայ փոխարինել նրան։

Լսում էր մատղաշ սոխակը և սովորում էր, բայց որքա՜ն ողորմելի էր նրա երգը։

—Թիւյ՜, թիւյ՜… Հիանալի է,—ծաղրական կերպով ճռւողում էին թռչնակները։—Դու իսկ և իսկ ծերունի սոխակի նման ես երգում։ Ծերունին բարկանում էր։ Սա էլ յուսախաբ արաւ իրան։ Նա զգում էր, որ երկար չըպիտի ապրէ աշխարհումս։ Այս առաջիկայ աշնան նա էլ չըպիտի կարողանայ թռչել դէպի տաք երկիրները… Եւ նա իրան յաջորդող չըպիտի ունենայ…

Իսկ երիտասարդ սոխակը տխրութեամբ մտածում էր.

—Միթէ, իրաւի, ո՛չ մի խելացի, բարի բան չըկա՛յ, որի մասին արժանի լինէր երգել, որ կարելի լինէր ամբողջ հոգով սիրել։ Ճոխ գալար… ծաղիկներ… արև… հարազատ անտառ… Միթէ այս է ամբողջ կեանքը։

Իր ամբողջ կեանքում ծերունի սոխակը երգել էր բնութիւնը։ Հարազատ անտառից լաւ նա ոչինչ չէր կարող երևակայել։

Մի անգամ երիտասարդ սոխակը թռչում էր գիւ-

ղական գերեզմանոցի մօտով և տեսաւ մի կոյր մուրացկան աղջիկ։ Ողորմելի ցնցոտների մէջ՝ շօշափելով անցնում էր նա գերեզմանների մօտով և շալակին տանում էր հացի չոր փշրանքներով լի պարկը։ Մի թարմ գերեզմանի մօտ, որտեղ հանգչում էր նրա մայրը, կանգ առաւ փոքրիկ կոյրը, դաշտային ծաղիկներից համեստ պսակ հիւսեց, ծունկ չոքեց, համբուրեց բլրակը և նրա վրայ դրաւ իր ծաղիկները։ Մի քիչ լաց եղաւ նա, յետոյ սրբեց արցունքները և պարկի բերանը բանալով՝ պատրաստւում էր ճաշել։

Գերեզմանոցի մօտով անցնում էին երկու երեխաներ՝ մի ահագին շուն հետները։ Նրանք կանգ առան և սկսեցին ծիծաղել խեղճ մուրացկանուհու վրայ։ Կոյրը բարձրացաւ տեղից, իր հեզ դէմքը դարձրեց դէպի մանուկները ու գլուխ տւաւ նրանց։ Բայց նրանք սկսեցին կանչել շանը և քըս տալ նրան դէպի աղջիկը։ Մի րոպէում շունը՝ հաչելով՝ յարձակւեց պարսպի վրայ։ Աղջիկը վախեց, պարկը նրա ձեռքից ընկաւ, հացի կտորտանքները թափւեցին, և շունը կատաղի մռմռոցով գըզգըզում էր նրանց գետնի վրայ… Կոյրը կամացուկ լաց էր լինում, իսկ մանուկներից մէկը հրեց աղջկայ մէջքին… Երկուսն էլ քըքջացին, շւացրին շանը և վազեցին…

Իսկ կոյրը անշարժ ընկած էր գերեզմանի վրայ, արտասւաթոր երեսով սեղմելով պաղ գետնին… Նա ոչ ոք չունէր, որի մօտ կարողանար պաշտպանութիւն որոնել…

Սոխակը սարսուռ զգաց, սարսափեց և վշտից վեր սլացաւ բարձր-բարձր և աներևոյթացաւ երկնքի կապոյտի վրայ… Թռաւ եկաւ նա հարազատ թփի վրայ և բոլորը պատմեց ուսուցչին։

—Դրանք կոպիտ և չար մարդիկ են,—անբաւական ասաց ծերունին։—Նրանք բռնում են մեզ ծուղակներով և փակում են վանդակներում։ Զգուշացիր, նրանց մօտ չըթռչես։ Բայց ուրիշ կերպ էր մտածում երիտասարդ սոխակը. Նա ուզում էր մօտիկից ճանաչել մարդկային

կեանքը, հասկանալ նրանց վիշտն ու տանջանքները։

Երկիրը՝ ամարային բաղցր նիրհի մէջ ընկած՝ հեզ ու նազ էր անում։ Երիտասարդ սոխակը թրպրտաց թփի վրայից և թռաւ մի գիւղական տան մօտ, որը գտնւում էր անտառի մօտ, ճանապարհի վրայ։ Այնտեղ թառեց նա մի սղնու վրայ և սկսեց հետևել պատուհանում փայլփլող կրակին։ Պատկերի առաջ մեղմ վառւում էր բիւրեղի կանթեղը· լոյսը ընկնում էր երիտասարդ կնոջ հեզ դէմքին։ Նա ձեռքերի վրայ բռնած ունէր հիւանդ մանուկին սրտայոյզ նայում էր նրա յոգնած աչիկներին... Բայց ինչպէս առաջ զանգակի պէս զրնգում էր մանուկի արծաթահնչիւն ծիծաղը...

Եւ վշտի նոր զեղումով մայրը իր շուրթերը հպում էր մանուկի այրւող ճակատին։

Մի ինչ որ նոր, անծանօթ բան սկսեց սեղմել սոխակի սիրտը... Նա սկսեց երգել... Նրա դողդոջուն, երկչոտ ձայնը տարածւեց թփերի մէջ... Դրանք արցունքի ձայներ էին... Սոխակը մոռացաւ այն բոլորը, ինչ որ սովորեցրել էր ծերունի վարպետը, և երգում էր այնպէս, ինչպէս իր սիրտն էր թելադրում... Նրա ուժերը կազդուրւում էին, ձայնը ազատ տարածւում էր և մարում, ինչպէս հանդարտ լացի աղեկտուր գլգլանք... Թւում էր, թէ նրա ձայնն ասում էր·

—Դո՛ւրս թափիր քո վիշտը ջերմ արցունքներով, և թո՛ղ այդ արցունքները հեռու վազեն՝ գարնան ջրերի նման... Դու թեթևութիւն կըզգաս... Դու կըհաւատաս, որ քո մաքուր արցունքները երկինք կըհասնին...

Սակայն մայրը չէր կարողանում լալ։ Բորբոքւած աչքերով նայում էր նա իր հիւանդ մանուկի դէմքին։

—Լաց եղի՛ր,—զրնգուն գեղգեղանքով հնչում էր սոխակի երգը,—ազատութիւն տուր արցունքներիդ։

Եւ յանկարծ ցանկալի արցունքները անզուսպ կերպով հոսեցին մօր աչքերից... Հրեշտակները տարան այդ արցունքները Արարչի աթոռի մօտ, և Աստւած տեսաւ մայրական վիշտը... Մանուկը բաց արաւ աչքերը, նայեց մօրը և ժպտաց.

—Ա՜խ, մայրիկ,—շշնջաց նա,—ինչպիսի՜ վատ երազ եմ տեսել։ Սա ինչ թռչուն է, որ այսպէս լաւ երգում է պարտիզում։ Դու լալիս ես, մայրիկ։

Բայց նա ուրախութիւնից էր լալիս։ Սոխակի երգը հասաւ նաև մասրենուն... Ծեր սոխակը չէր հասկանում այդ նոր ձայները, չէր հասկանում մարդկային վիշտը և յուզւած լսում էր իր աշակերտի երգը։ Եւ ծերունին աղօտ կերպով հասկացաւ, որ իր երգը արդէն երգւած է։ Նրան փոխարինելու համար երևացել է մի ուրիշ, անըմբռնելի, բայց հզօր երգիչ։ Նրա համար օտար է այդ նոր երգը, օտար է երիտասարդ սոխակը, որին նա պատրաստել էր մի ժամանակ իր հարազատ բնի մէջ· բայց նա պէտք է նրա առաջ խոնարհեցնէ իր ալեոր գլուխը... Նա ցնցւեց, գլուխը կախեց և աչքերը փակեց...

Յոգնած, բայց անհուն երջանիկ՝ երիտասարդ երգիչը դարձաւ դէպի իր հարազատ թուփը։

Երկնքի վրայ բոցավառւեցին ալ շերտերը... Հինաւուրց թուփը լալիս էր և մեռած թռչնակի վրայ վարդագոյն թերթիկներ էր թափում,—դրանք յուղարկաւորութեան ծաղիկներ էին։

Տիկին Բիւրեղ Տէր-Գրիգորեան։

ՎԵՐՋԻՆ ԱՊԱՒԷՆ

(Օ ր օ ր)

Ալէտանջ հոգոյս միակ մխիթար.
Ծաղկի՛ր վարդի պէս փթթի՛ր անդադար,
Օրօր, իմ հոգեակ, թանգագին զաւակ,
Դու կեանքիս միակ հզօր աշտարակ։

Գալիս է գարուն, ծաղկում են դաշտեր,
Այրի մայրիկիդ շատանում վշտեր.
Օրօր, իմ հոգեակ, թանգագին զաւակ.
Դու սիրոյս միակ անգին յիշատակ։

Արցունքից խաւրած աչքերս են լալիս,
Երբ անցած օրերս իմ միտս են գալիս.
Օրօր, իմ հոգեակ, թանգագին զաւակ,
Դու աչքիս միակ լուսոյ աշտարակ։

Մահու բաժակից քամում եմ մրուր,
Կեանքովդ կեանք տուր մայրիկիդ տխուր,
Օրօր, իմ հոգեակ, թանգագին զաւակ,
Դու հոգւոյս միակ բարի հրեշտակ։

Աշխատիր՝ լինիս դու բարի պարծանք,
Հայրենի տանըդ արժանի ժառանգ.
Թէ մեռնիմ, հոգ չէ, և այն ժամանակ
Անբախտ մայրիկիդ եղիր յիշատակ։

Ս. Փիլօեան։

ՎԱՐԴ ՀՈՄԵՐՈՍԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՑ

(Անդերսէնից)



Արևելքի բոլոր ազգերի երգերի մէջ երգւում է սոխակի սէրը դէպի վարդը։ Խաղաղ և աստղալից պայծառ գիշերը թևաւոր ողբերգակ երգիչը երգում է իր սիրելի և հոտաւէտ հրապուրչին իր քաղցր երգերը։

Զմիւռնիայից ոչ հեռու, այնտեղ, որտեղ վաճառականը բարձր չինարների տակ քշում է իր երկայնավիզ ուղտերին դանդաղ քայլերով, ես տեսայ մի դալար վարդենի։ Վայրենի աղաւնիները թռչում էին բարձր ծառերի ճիւղերի վրայ, և երբ նրանց վրայ ընկնում էին արևի ճառագայթները, նրանց թևերը փայլում էին ինչպէս գոհարներ։ Վարդենու վրայ բացւել էր մի վարդ, որ գերազանցում էր միւս վարդերին իր գեղեցկութեամբ և հոտաւէտութեամբ, հէնց նրան էր երգում սոխակն իր վշտերը։ Բայց վարդը լռում էր. նրա թերթիկների վրայ

չէր շողշողում ոչ մի կաթիլ շող, գոնեա ցոյց տալու համար կարեկցութիւն կամ ցաւակցութիւն։

Վարդը ոստով միասին խոնարհւած էր մի մեծ քարի։—Այստեղ ննջում է աշխարհիս ամենաերևելի երգիչը, ասաց վարդը, ես կամենում եմ բուրել նրա գերեզմանի վրայ և երբ մրրիկը կըցրէ իմ թերթիկները—կամենում եմ նրանցով սփռւիլ այս գերեզմանի վրայ։

Իլիականի երգիչը դարձաւ հող, իսկ այդ հողից ես բուսայ։ Ես վարդն եմ Հոմերոսի գերեզմանից, չափազանց կըլինի ծաղկել և բուրել մի որ և է սոխակի համար։

Եւ խեղճ սոխակն այնքան երգեց, մինչև որ յաւիտեան փակեց իր աչքերը։

Եկաւ կարաւանը, բարձած թանգագին գանձով և հանգիստ առաւ այդտեղ։ Ուղտապանի փոքրիկ տղան գտաւ մեռած թռչնիկին և թաղեց նրան Հոմերոսի գերեզմանի մէջ։

Քամին շարժում էր վարդը։

Գիշերը եկաւ։ Վարդը մոտեցրեց իր թերթիկները և տեսաւ մի այսպիսի երազ.

Պայծառ և տաք օր էր։ Եկաւ խուռն բազմութիւն օտարազգիների, որոնք եկել էին Հոմերոսի գերեզմանը տեսնելու։ Այդ օտարականների թւումն էր և հիւսիսից եկած մի երգիչ, հէնց այն տեղից, որտեղ տարւայ մեծ մասը մառախուղ է և լուսաւորւում է հիւսիսափայլով։ Նա պոկելով վարդը՝ դրաւ գրքի մէջ եւ պինդ սեղմելով տարաւ իր հետ աշխարհի միւս մասը,—իր հեռաւոր հայրենիքը։

Վարդը վշտից թառամեց, որ դրած էր անձուկ գրքի մէջ՝ բաժանւած գերեզմանից։

Բանաստեղծը բաց արաւ գիրքը իր հայրենիքում և ասաց.

—Ահա վարդը Հոմերոսի գերեզմանից։

Այս էր ահա վարդի տեսած երազը։

Քամուց ցնցւելով նա զարթեց. նրա թերթիկների վրայով գլորւեցին արտասուքի կաթիլներ ու ընկան

հռչակաւոր երգչի գերեզմանի վրայ։ Արեւը բարձրացաւ և վարդը առաջւանից աւելի հոտաւէտ և գեղեցիկ էր։ Անտանելի շոգ օր էր։ Նա դարձեալ իր տաք Ասիայումն էր։ Բայց ահա լսեցին քայլերի ձայներ. եկան օտար երկրացի ֆրանկներ, որոնց վարդը տեսել էր երազումը, նրանց հետ էլ եկաւ և հիւսիսային երկիրներից իր տեսած բանաստեղծը։ Բանաստեղծը քաղեց վարդը, համբուրեց նրա թարմ թերթիկները և իր հետ տարաւ այն հեռաւոր աշխարհը, որտեղ թագաւորում է մէգն ու հիւսիսափայլը։ Այժմ վարդը պահւում է այդ բանաստեղծի մօտ, նրա Իլիականի մէջ, և լսում է նա, իբր երազում, թէ ինչպէս երբեմն բանաստեղծը ասում է, բանալով գիրքը—Ահա վարդը Հոմերոսի գերեզմանից։

Օնիկ։

ՍՈԽԱԿԻ ԵՐԳԸ

(Անդերսոնից)

I.

Վենդրիական մի մեծ քաղաքում՝ նեղ և ամրաշէն բանտի մէջ՝ նստած էր մի խեղճ բանտարկեալ։ Չար մարդիկ կապել էին նրան շղթայով և ձգել էին բանտի մէջ։ Բանտը խոնաւ, ցուրտ և մութն էր։ Մահճի տեղ նրա տակ ձգած էր չոր ծղնոտ. նրան տալիս էին միայն հաց և ջուր։ Շատ տարիներ նստած էր նա այնտեղ—գունաթափ, հիւանդ և տխուր։ Արեւը շատ սակաւ էր լուսաւորում բանտի նեղ պատուհանից և թարմ օդը երբէք չէր թափանցում նրա մէջ։ Տխուր նստած մտածում էր նա իր սիրելի ազգականների, իր փոքրիկ մանուկների մասին, մտածում էր թէ կարելի է նրանք բոլորովին մոռացել են և արդէն մեռած են համարում իրան։

Ի՞նչ է լինում այժմ երկրի վրայ. ինչ է կատարւում նրա հայրենիքում։

Նա մօտեցաւ պատուհանին. ամառնային հիանալի երեկոյ էր։

Արեւը խոնարհւում էր անտառի ետեւում, կարմրագոյն լուսով լուսաւորելով ծառերի գագաթները։

Մարդիկ անդադար անցուդարձ էին անում փողոցներում։ Բանտը շատ բարձր էր և մարդիկ շատ մանր էին երեւում ցածում։

Նա կանչում էր, բայց ոչ ոք չէր լսում նրա ձայնը. միայն կապոյտ երկնքում թռչում էին թռչունները։

II.

Պատուհանի մօտով կամաց անցկացաւ արծիւը։

—Արծիւ, արծիւ, կանչեց նրան բանտարկեալը, նստիր պատուհանիս մօտ, պատմիր ինձ, թէ ինչ է լինում երկրի վրայ, երգիր ինձ քո երգդ։

—Ոչ, պատասխանեց արծիւը, քո պատուհանը շատ փոքր է, ինձ տեղ չըկայ այնտեղ նստելու։ Ես չըգիտեմ, թէ ինչ է լինում երկրի վրայ, որովհետև ես շատ սակաւ եմ ցած գալիս գետնի վրայ։ Ես շինում եմ իմ բունը ամենաբարձր քարափների և դարաւոր կաղնիների վրայ, հեռու չար մարդերից, որ նրանք չաւերեն իմ բոյնս։ Ես չեմ երգիլ, որովհետև ես երբէք չեմ երգում երկրի վրայ։ Ես բարձրանում եմ շատ բարձր և իմ երգերը լսում է միայն յաւիտենական արեւը…

Այս ասելով թափ տըւաւ արծիւն իր հզօր թեւերն և հպարտութեամբ սլանալով դէպի երկինք, անհետացաւ կալանաւորի աչքերից։

—Կարմպ, կարմպ, պատմիր ինձ՝ ինչ է լինում երկրի վրայ, երգիր ինձ քո երգդ։

—Ոչ, պատասխանեց կարապը, ես չեմ կարող պատմել քեզ, թէ ինչ է լինում երկրի վրայ, որովհետև լողում եմ միշտ ջրումը—ջինջ և հով ջրումը, կանաչ եղեգնուտի մէջ։ Առաւօտը արշալոյսի ժամանակ՝ երբ ջուրը դառնում է վարդագոյն, ես բարձր կանչում եմ արշալոյսին—բարև

քեզ։ Ես չեմ երգիլ քեզ երգս, վասն-զի ես երգում եմ միայն մեռնելուս ժամանակ…

Եւ կարապը սլացաւ օդի մէջ՝ Թափ տալով իր արծաթափայլ Թեւերը։

—Ճնճղուկներ, ճնճղուկներ, նստեցէք պատուհանիս մօտ և պատմեցէք Թէ ինչ է լինում երկրի վրայ, երգեցէք ինձ ձեր երգը։

—Չը՜Թ, չը՜Թ, ժամանակ չունինք, մենք Թռչում ենք հատիկներ հաւաքելու, որ ջրաղացպանը պատահմամբ շաղ է տուել…

III.

Բայց ահա յանկարծ Թռաւ մի գորշ Թռչնակ, սաւառնեց պատուհանի առաջ և նստեց երկաԹեայ վանդակի վրայ։

—Բարև քեզ, սոխակ։ Շնորհակալ եմ սիրելի Թռչնակ, որ ինձ այցելեցիր. պատմիր ինձ, Թէ ինչ է լինում երկրի վրայ, երգիր ինձ քո երգը։

—Ես կըպատմեմ քեզ Թէ ինչ է լինում երկրի վրայ, ես կերգեմ քեզ համար, և սոխակն սկսեց երգել այնքան քաղցր, որ խեղճ կալանաւորը ուրախուԹիւնից լաց էլաւ։ Յարդի վրայ ընկած՝ նա լալիս էր և ականջ էր դնում…

—Երէկ առաւօտ՝ արշալոյսի ժամանակ, երգեց սոխակը, օդը Թարմ էր և հով։ Ես Թռչում էի քո տան կտուրի վրայ, բաց պատուհանի մօտով. նստեցի դալար ընկուզենու վրայ, բաց պատուհանի առջև՝ և անդադար երգում էի ու երգում… Օրօրոցի մէջ պառկած էր քո փոքր որդիդ և հարցնում էր. ո՞ւր է հայրիկս, և ականջ էր դնում իմ երգերիս… Քո ազգականները լաց են լինում քեզ յիշելով։ Նրանք քեզ շատ են սիրում և շատ են ուզում քեզ տեսնել։ Մի յուսահատուիր. Աստուած տեսնում է, որ դու անմեղ ես—չար մարդիկ դարձեալ քեզ կարձակեն և դու ազատ դուրս կըգաս լոյս աշխարհ, մաքուր օդի մէջ։ Քո մանկիկները կըշոյեն և կըհամբուրեն քեզ։ Ամառուայ հանդարտ երեկոյին, երբ երկայն ստուերները կընկնին ծառերից և արեգակը կըշողշողայ պատուհանների ապակիների մէջ, պատշգամբի վրայ նստած՝ կըպատմես քո երեխաներին, Թէ ինչպէս էիր չարչարւում դու հայրենիքի համար… Կըսովորեցնես նրանց, որ մեծանան, չըԹողնեն չար մարդկանց չար գործեր անելու, որ նրանք չընեղանան վատ մարդկանց վրայ, այլ խնդրեն Աստծուն, որ բոլոր մարդիկ մէկ-մէկու սիրեն որպէս հարազատ եղբայրներ… Եւ քո երեխաները քեզ կըհնազանդեն։ Երբ նրանք կըմեծանան, կըդառնան բարի և ազնիւ, և դու կըտեսնես Թէ ինչպէս կօգնեն նրանք աղքատներին։ Դու շատ երկա՜ր, երկա՜ր կապրես—դու կըդառնաս ալեւոր, բայց սիրտդ միշտ հրճուանքով կըզարկի։ Եւ երբ դու կըմեռնիս, բոլորը լաց կըլինին և կաղօԹեն քեզ համար։ Մի պայծառ արև օր կըտանեն քեզ դալար հանգստարան։

Քո գամբարանի վրայ կըտնկեն վարդի Թուփ, և ամեն արշալոյսի ես կըգամ երգելու քո շիրմի վրայ…

Օր. Ե. Պ.

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳ

(Գեօթէից)

Մանուկը մէկ վարդիկ տեսաւ,
Սիրուն վարդը դաշտի միջին,

Եւ սրտաթունդ շուտ մօտեցաւ,
Որ լաւ նայէ սիրուն վարդին։
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

Մանուկն ասաց.—Քեզ կըքաղեմ,
Ա՜յ իմ վարդիկ դաշտի միջին.
Վարդիկն ասաց.—Փշեր ունիմ,
Դու ձեռ չես տալ կարմիր վարդին.
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

Չար երեխան վարդը քաղեց,
Սիրուն վարդը դաշտի միջին,
Վարդը նրան խիստ ծակծըկեց,
Բայց մնաց գերի նըրա ձեռին։
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

Յ. Յովհաննիսեան։

ՎԱՐԴԸ ԲԱՑԻԵԼ Ա...

Վարդը բացւել ա ծաղկոցին,
Ամպի ցօղը շողայ ծոցին.
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դըրախտին։

Թերթիկները զուգ փռել ա,
Նազուք գլուխը ծռել ա,
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դըրախտին։

Կըթառամիս, կըչորանաս,
Մինչ մայիս թէ՝ չի դիմանաս,
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դըրախտին։

Տաժան քամուն չես համբերի,
Զագիր ճիճւին կըլիս գերի.
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դըրախտին։

Չես տեսնելու թիթեռնակին,
Ոչ աւետման ծիծեռնակին.
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին,
Դաստա դըրախտին։

Կըգայ բըլբուլը թեմանէն [1]),
Քեզ կըկանչէ գերեզմանէն,
Ա՜յ իմ վարդին, կարմիր վարդին.
Դաստա դըրախտին։

Կըզանգատէ իր սև բախտէն,
Թէ որբ մնաց կարմիր վարդէն.
Ա՜յ իմ վարդին, որբուկ վարդին,
Դաստա դըրախտին։

Ռ. Պատկանեան։

ՍՈԽԱԿԸ ԵՒ ՎԱՐԴԸ

(Զրոյց)

Մշտադալար գարուն էր տիրապետում դըրախտում, երբ դեռ առաջին մարդը չէր աքսորւած այնտեղից։ Սոխակը այնտեղ չէր լռում երգելուց և նրա զմայլելի ձայնի ելևէջի մէջ լսւում էր աշխարհի անարատ, սուրբ աղօթքը։ Վարդը ևս այն ժամանակ անթառամ ծաղկում էր դըրախտում և զինւած չէր նա ծակոտող փշերով։ Վարդը և սոխակը սիրում էին իրար. սիրում էին փոխադարձ կուսական անարատ սիրով։ Մեղանչեց առաջին մարդը և արդարադատ Աստւածը արտաքսեց նրան դըրախտից։ Նրա հետ միասին և անմեղ սիրալիր սոխակը թողեց պայծառ, լուսաւոր դըրախտը և թռաւ աշխարհ։

1) Թեմանէն=հարաւէն։

Վշտալի աշխարհի տեսքը լցրեց նրա փափուկ սիրտ
դառնութեամբ և նա լռեց երգելուց։ Նա նստեց հանգս-
տանալու այն տերևախիտ ծառի ոստի վրայ, որից շա
դարեր յետոյ Քրիստոսի խաչափայտը կտրւեց։

Երբ Աստուծոյ հրեշտակապետը հրեղէն սուրը ձեռի
արտաքսում էր առաջին մարդոցը դրախտից, նախամայ
Եւան, իբրև յիշատակ իր դրախտում անցկացրած անհոգ
երջանիկ օրերի, կտրեց վարդի թփից մի բարակ ոստի
և սեղմեց նրան իր կրծքին, բայց ոստիկի վրայ բացւա
վարդերը թառամեցին ալեկոծող սրտի ջերմութիւնից
Դառնութեամբ կծկւեց նախամօր վշտալի սիրտը, նկատե
լով թառամեալ ծաղիկը և արտասուքի խոշոր կաթիլնե
դուրս ցայտեցին նրա աչքերից։ Նա դրաւ ոստիկը սրբա
զան ծառի հովանու տակ և այնուհետև շատ օրեր ու գի
շերներ նա թրջում էր նրան իր ջերմ արտասուքով։ Ոս
տը կրկին ծլեց և նրա վրայ բացւեց վարդը, բայց եր
նային այդ վարդը այլ ևս չէր նմանում դրախտի վարդին
նա կորցրեց առաւօտեան արշալոյսի սքանչելի գոյնը
զինւեց փշերով։ Սոխակը, նկատելով այդ նոր ծաղիկը
յիշեց իր նազելի վարդը դրախտում և առաջին անգամ
աշխարհ մտնելուց յետոյ, սկսեց երգել. վիշտ և անյոյ
տխրութիւն էր արտայայտում միայն այժմ նրա երգը

Մի առաւօտ Ադամը և Եւան եկան այն հովիտը
ուր առաջին անգամ նրանք ոտք դրին դրախտից աքսոր
ւելուց յետոյ։ Նրանք նստեցին այն սրբազան ծառի հո
վանու տակ, որից շատ դարեր յետոյ Քրիստոսի խաչա
փայտը կտրւեց։ Նրանց ոտքի տակ ծաղկում էր վարդ
և նրանց գլխի վրայ սրբազան ծառի ոստի վրայ թառա
սոխակը նւագում էր իր ցաւալի մեղեդին։ Յիշեցին այ
րոպէին նրանք իրանց երջանիկ օրերը դրախտի մէջ
արտասուքի խոշոր կաթիլներ սկսեցին թորալ նրանց աչ
քերից։ Ծնկան վրայ ընկած՝ սկսեցին երգել։ Դառն զղ
ջում և քաղցր յոյս էր արտայայտում նրանց սրտից բղ
խած երգը։ Լռեց սոխակը, լռեցին և աշխարհի միւս բո
լոր արարածները. լուռ հոգեզմայլութեան մէջ նրանց

սկսեցին ականջ դնել նախահարց զղջման երգին, որ մեծ յոյս էր արտայայտում նրանց համար։

Զգացւած յուսոյ քաղցր ձայնից, վարդը և սոխակը նայեցին այդ րոպէին իրար և ճանաչեցին մէկ մէկու։ Սոխակն սկսեց երգել, և այժմ նրա վշտալի ձայնի ելևէջի մէջ յուսոյ քաղցր աւետիս էր լսւում։

Եւ այն օրից մինչև այսօր մայիսեան պարզ գեղեցիկ գիշերներին, սրբազան լռութիւնը խզելով, թնդում է սոխակի երբեմն քաղցր, երբեմն վշտալից մեղեդին։ Նա երգում է և նրա երգը դառն զղջում և քաղցր յոյս է արտայայտում։

Այսպէս և վարդը լուռ ու մնջիկ աղօթում է գիշերային պահուն և նրա աղօթքը նրա անուշահոտ բուրմունքն է։ Զղջում եւ մեծ յոյս է արտայայտում նոյնպէս նրա մնջիկ աղօթքը։

Ա. Զաքարեան։

ԱՂՋԻԿՆ ՈՒ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

(Անգլերէնից)

I.

Սաստիկ ցուրտ էր։ Ձիւնը քուլա քուլա թափւելով՝ ծածկում էր գետինը։ Արդէն սկսում էր մթնանալ. այդ գիշեր հին տարին հրաժարական ողջոյն էր տալիս ամբողջ աշխարհին, իսկ վաղը նոր տարի էր—բերկրանքի և ուրախութեան օր։ Այդ միջոցին ձիւնապատ փողոցով անցնում էր գլխաբաց և ոտաբոբիկ մի խեղճ աղջիկ։ Իրաւ է, տանից դուրս գալիս նա հագել էր մօր մաշիկները, բայց փողոցի մի ափից միւս ափն անցնելիս՝ նա ընկաւ երկու միմեանց հանդէպ ընթացող կառքերի մէջ տեղը և շտապելուց ու շփոթւելուց՝ մաշիկները կորցրեց։ Մաշիկներից մէկը իսկապէս կորաւ, իսկ միւսը թռցրեց

մի փոքրիկ չարաճճի տղայ, որ նաւակ շինի նրանից ու զւարճանայ։

Աղջիկը գնում էր ոտաբոբիկ. նրա փոքրիկ ոտները կարմրատակել էին ցրտից և փէտացել։ Նա իր կրծքի վրայ ամրացրած փոքրիկ արկղիկում դարսած ունէր լուցկիների մի քանի կապոց, իսկ մի կապոց բռնած էր ձեռքին։ Վատ եղանակը շատ էր վնասում նրան. փողոցի անցուդարձը համարեա կտրուած էր, չըկային գնողներ, այդ պատճառով նրա գրպանում ևս չըկար ոչ մի կոպէկ։ Հա՛մ մրսում էր, հա՛մ քաղցած էր ողորմելին, և հէնց երեսից էլ երևում էր, թէ որքան չարաչար տանջւում էր նա։ Անբա՜խտ արարած։ Ձիւնը քուլաներով թափւում էր նրա բաց-խարտեաշ մազերի վրայ, որոնք գեղեցիկ գանգուրներով շրջապատում էին նրա փոքրիկ, չքնաղ վիզը։ Բայց ամենևին ուշք չէր դարձնում իր գանգուրների վրայ. նրանց մասին չէր էլ մտածում։ Պատուհանները վառւում են բազմաթիւ ճրագներով, խորովածի հոտը բռնել է ամբողջ փողոցը, ամենքը պատրաստւում են դիմաւորելու նոր տարուն, ամեն տեղ եռում է կեանք—ահա՛ ինչով էր զբաղուած նրա միտքը։

Վերջապէս մի խուլ անկիւն գտաւ երկու տների մէջ տեղում և, ոզնու պէս կուչ գալով, նստեց այնտեղ։ Սառնամանիքը փէտացնում էր նրա ամբողջ մարմինը, բայց նա չէր համարձակւում տուն գնալ. և ի՞նչպէս վերադառնար, երբ մէկ հատիկ լուցկի անգամ չէր ծախած և գրպանումն էլ կոպէկ չունէր։ Առաջինը որ հայրը նրան կըթակէր՝ տեսնելով աղջկանը դատարկաձեռն տուն վերադարձած, և երկրորդն էլ—մի՞թէ միևնոյն չէր՝ տուն գնա՞լ թէ փողոցում մնալ. չէ՞ որ նրանց տանն էլ նոյնքան ցուրտ էր, որքան և դուրսը, բաց երկնքի տակ։ Նրանք ապրում էին չարդախում և քամին չորս կողմից ազատ ներս ու դուրս էր անում, չընայելով որ ամենամեծ անցքերն ու ճեղքերը խցուած էին յարդով ու զանազան փալաս-փուլաններով։ Խեղճ աղջկայ ձեռքերը կապտել, լեղակի գոյն էին ստացել։—Ա՜խ, ի՞նչ կըլինէր դէթ լուցկու աղօտ բոցով տաքանալ։ Բայց ինչո՞ւ չըհանել մի լուցկի,

չըքսել պատին և չըտաքացնել սառած մատներս։ Նա հանեց լուցկին և ծկը՛րպ՝ քսեց պատին. ճ, ինչպէս բոցավառւեց։ Աղջիկը ձեռքով ծածկեց աղօտ բոցը և լուցկին սկսեց այրուել, ինչպէս փոքրիկ ճրագ։ Եւ խղճուկին թւում էր՝ թէ նա նստած է երկաթէ մեծ վառարանի առաջ և փէտացած մարմինը տաքացնում է նրա հրաշալի բոցով։ Օ՜, ինչ գեղեցիկ վառվռում է կրակն այդ հսկայ վառարանում՝ տարածելով շուրջը ախորժելի տաքութիւն։ Ողորմելին ձեռքերը մեկնեց, որ տաքացնի. բայց յանկարծ բոցը հանգաւ, վառարանը չքացաւ և ինքը դարձեալ նստած էր փողոցի մութ անկիւնում, այրուած լուցկին ձեռքում։

Նա հանեց երկրորդ լուցկին և քսեց պատին։ Լուցկին վառւեց, լուսաւորեց պատը և լուսաւորուած տեղը պատի վրայ դարձաւ թափանցիկ, կարծես լուսաւորութիւնը գազային էր։ Աղջիկը տեսաւ մի շքեղազարդ սենեակ, որի մէջ տեղը դրուած էր սպիտակ սփռոցով ծածկած սեղան։ Սեղանի վրայ կարգով շարուած էին փայլուն ճենապակեայ ափսէներ. իսկ մէջ տեղը՝ մեծ սկուտեղի վրայ դրուած էր սալորով և խնձորով գեղեցիկ համեմած ու տապակած սագ, որից այնպիսի մի անուշ հոտ էր բուրում, որ ամենակուշտ մարդու ախորժակն անգամ կըշարժէր։ Օ՜, երջանկութիւն. յանկարծ սագը վեր կացաւ սկուտեղի վրայից և գլորւեց յատակի վրայ։ Նրա մէջքի մէջ ցցուած էին դանակ և պատառաքաղ։ Նա գլորւելով մօտեցաւ մանուկ աղջկանը։ Բայց լուցկին այդ միջոցին հանգաւ, և նրա առաջ կանգնած էր դարձեալ նոյն սառն ու հաստ պատը իր դաժան կերպարանքով։

Բայց ահա վառւեց երրորդ լուցկին. և աղջիկը տեսաւ, որպէս թէ ինքը կանգնած էր մի շքեղազարդ տօնածառի առաջ։ Այս տօնածառն անհամեմատ հարուստ ու բարձր էր այն տօնածառից, որ նա անցեալ ծննդեան տօնին տեսել էր ապակեայ դռների միջով մի հարուստ վաճառականի տանը։ Տօնածառի կանաչ ճիւղերի վրայ վառւում էին հազարաւոր մոմեր, իսկ սենեակի պատերի վրայ կախկխուած բազմաթիւ գեղագրական պատկերները, որպիսիք նա յաճախ տեսել էր խանութների պատուհան-

ներում պուրս դրած, կարծես ժպտում էին նրան։ Նա վեր բարձրացրեց իր փոքրիկ ձեռքերը, բայց, աւաղ, լուցկին հանգաւ. տօնածառի մոմերն սկսեցին սլանալ բարձր, շա՜տ բարձր,—և աղջիկը տեսաւ, որ այդ աստղեր էին... Այդ միջոցին մի աստղ վայր ընկաւ և երկնքի երեսին գծագրեց մի երկայն հրային շերտ։

II.

«Մեռնող եղաւ»,—մտածեց աղջիկն ինքն իրան։ Նրա հանգուցեալ տատը, որից միայն վայելում էր նա փաղաքշանք ու գուրգուրանք, յաճախ ասում էր նրան՝ «երբ աստղ է վայր ընկնում, այդ նշանակում է, որ մէկի հոգին արդէն թռաւ դէպի Արարչի օթեւանը»։

Նա պատին քսեց դարձեալ մի լուցկի։ Շուրջը տարածուեց շքեղ լոյս և հրաշալի լոյսի մէջ երեւաց նրա պառաւ տատը՝ հեզ և փայլուն ժպիտը երեսին։

«Տատի ջա՜ն,—գոչեց աղջիկը՝ փէտացած կռները տարածելով առաջ,—տա՛ր ինձ քեզ մօտ։ Ես գիտեմ, որ երբ լուցկին կը հանգչի, դու էլ չես լինիլ. դու կը չքանաս, ինչպէս չքացան երկաթէ վառարանը, տապակած սագը և շքեղ տօնածառը»։

Նա շտապով վառեց կապոցում մնացած միւս բոլոր լուցկիները, որովհետև սրտով ցանկանում էր, որ տատիկը չը հեռանայ։ Լուցկիները մի ակնթարթում բոցավառուեցին և չորս կողմը տարածեցին այնպիսի մի զօրեղ լոյս, որ կարծես թէ ցերեկ լինէր։ Ոչ մի ժամանակ այնքան գեղեցիկ չէր եղած նրա տատը, որքան այդ րոպէին. Նա վերցրեց թոռնիկին իր ձեռքերի վրայ և երկուսն էլ ուրախ ու զւարթ պայծառ լուսի շերտը ճեղքելով՝ սլացան բա՛րձր, բա՛րձր—այնտեղ, ուր չկան ո՛չ ցուրտ, ո՛չ քաղց, ո՛չ տանջանք...

Երբ վրայ հասաւ ցուրտ առաւօտը, աղջկանը գտան երկու տների մէջ տեղը, խուլ անկիւնում նստած։ Նրա այտերը կարմիր էին. շրթունքները ժպտում էին։

Խեղճ ողորմելին մեռել էր։

Նա փէտացաւ նոր տարւայ նախընթաց գիշերը։ Նոր տարւայ առաջին օրը լուսաւորեց թշւառութեան մի անմեղ և անպաշտպան զոհի դիակ, որ մի քանի ժամ առաջ սրտագրաւ պատկերներ տեսնելով լուցկու փայլուն լուսի մէջ՝ ժպտում ու հրճւում էր, ինչպէս ճրագի շուրջը ճախրող թիթեռ։ Լուցկիների մի կապոցը բոլորովին այրւած էր։ «Երևի նա ուզեցել է տաքանալ»—ասաց մէկը։ Եւ ոչ ոքի մտքովն անգամ չանցաւ, թէ ինչպիսի հրաշալի տեսիլներ էին նկարել փոքրիկ աղջկայ չքնաղ աչիկներին, ոչ ոք չիմացաւ, թէ ո՛րպիսի փառքով և շքեղութեամբ դիմաւորեց նա նոր տարուն իր սիրելի տատիկի հետ միասին...

Ալէքսանդր Ծատուրեան։

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

«Հայրիկ, ասաց դուստրը հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Որքա՜ն աստղեր փայլում են վառ,
Ասես համար, թիւ չըկայ։
Ասում են որ ամենայն մարդ
Մի աստղ ունի երկնքում,
Ճշմարի՞տ է, ասա, հայրիկ,
Իմը ո՞րտեղ է փայլում»։
—Այո՛, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար,
Եւ մեզանից ամեն մէկը
Մի աստղ ունի իր համար։
«Հայրի՛կ տես, տես, աստղը թռաւ
Յետքից պայծառ գիծ ցոլաց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ էլ չերևաց»։
—Ով իմ դստրիկ,
    հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իր օրում, իր կեանքումը
Խեղճ ասածը չըգիտէր։
Աղքատները նրա դռնից
Գիշեր ցերեկ հալածւած,
Մի մարդ չըկար
    նըրան ծանօթ,
Որ չըլինէր վշտացած։
«Հայրի՛կ, դարձեալ
    աստղիկ թըռաւ,
Վայր ընկաւ նա երկնքից
Արդեօք դա ի՞նչ
    մարդու աստղ էր
Որ զրկեցաւ իր տեղից։
—Ո՜հ, դստրիկս,
    հանգիստ կացիր,
Կեղծաւորի դա աստղ էր,
Որ իր օրում ուղիղ մի խօսք
Մարդու երբէք ասած չէր։
Փարիսական իր ձևերով
Աշխարհք խաբեց, զարմացրեց,
Այդ պատճառով Աստւած նըրա

Աստղի լոյսը խաւարցրեց։
«Հայրիկ, կրկին
մի աստղ թռաւ
Եւ գիծ անգամ, չըցոլաց,
Աստղը թռաւ երկնքիցը
Միւս անգամ էլ չերևաց։
—Ո՛հ, դստրիկս, խաղաղ մնա,
Բռնակալի դա աստղ էր,
Որ աշխարհը իրան գերի
Ծնած օրից կարծել էր։
Շատ հալածանք, շատ նեղութիւն
Պատճառեց նա իր կեանքում,
Շատ տուն քանդեց,
շատ մարդ զրկեց,
Գութ չունեցաւ իր սրտում։
«Ապա այն ի՞նչ աստղ է, հայրիկ
Որ այնպէս պարզ վառուել է,
Նրա մաքուր, պայծառ լոյսը
Զորս կողմը բակ բռնել է։
—Ո՛հ, իմ դստրիկ, աղօթք արա,
Դա ծերունու մի աստղ է,
Որ իր կեանքում ոչ մի մարդու
Ոչինչ վնաս տըւած չէ։
Այն լուսաւոր բակն է նըրա
Առաքինի գործքերը,
Աղօթք արա, որ երկարին
Նրա կեանքի թելերը։

—

Շատ օր չանցաւ, երկնքիցը
Մի այլ վառ աստղ պակսեցաւ,
Ո՞ւմն էր արդեօք այդ աստղիկը,
Բան հարցնող չերևցաւ։
Մինչդեռ լուսինն արծաթափայլ
Լոյս էր տալիս գիշերին,
Խորհրդաւոր մինչ տիրել էր
Անվրդով խոր լռութիւն,
Մի սրտաբեկ, մազերն արձակ,
Վազեց աղջիկ սգաւոր,
Դէպի գիւղի հանգստարան,
Ծունկ չոքեց մի շիրմի մօտ։
«Հայրիկ, աստղիկդ
չի փայլում,
Դու յաւիտեան քնեցիր,
Առ ինձ քեզ մօտ,
քո ծոց, քո գիրկ,
Ինչո՞ւ անտէր թողեցիր։
Իմ աստղիկը թող քոնի պէս
Էլ չըփայլի, թող մթնի,
Ես առանց քեզ
այս աշխարհում
Ոչ մի սփոփանք չեմ գտնի։

—

Մի մարդ չըկար. որ նկատէր,
Որ հետևեալ գիշերին
Պակասեցաւ երկնքիցը
Մի պայծառ աստղ խնդագին։
Երրորդ օրը շատ սգաւորք
Փորեցին մի գերեզման,
Ուր թաղւեցաւ իր հօր կողքին
Մարմինը խեղճ աղջըկան։

—

Հայրիկ, տես, տես,
աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ ցոլաց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ էլ չերևաց...

Միքայէլ Նալբանդեան։

«ԴՈՒ ԿԸ ՀԱՆԳՑՆԵՍ, ԻՍԿ ԵՍ ԿԸ ՎԱՌԵՄ»

(Շվեդերէնից)

Մութն էր։ Ձմեռնային գիշերը տիրում էր երկրի վրայ։ Արևը վաղուց անհետացել էր, և ցածրիկ խրճիթներում արդէն լամպաներն արձակում էին իրանց սպիտակ լոյսը։ Մարդիկ ուրախ էին, որ ունին այդ լոյսը մինչև որ արշալոյսը կըծագի։

Բայց խաւար ցրող այդ լոյսը մթութեան Զար Ոգին չէր սիրում, որովհետև սա զօրութիւն էր ձեռք բերել մութ աշխարհում։

Հէնց որ մթութեան Զար Ոգին նկատում էր որ խըրճիթների պատուհաններից լոյս է երևում, նա իսկոյն բաց էր անում դուռը և ներս վազում. փո՛ւհ էր անում և առանց բացառութեան հանգցնում լամպան։

Եւ ոչ ոք քաջութիւն չունէր լամպան նորից վառելու Զար Ոգու հանգցնելուց յետոյ։

—Ի՞նչ պէտք է անել հիմա,—հարցնում էին միմեանց ցածրիկ խրճիթների խաւարում նստած բնակիչները։

Հազիւ մթութեան Զար Ոգին հեռացել էր, երբ Լոյսի Հանճարը թռաւ և դռնից ներս մտաւ։

—Դու կը հանգցնես, իսկ ես կը վառեմ,—ասաց նա և վառեց սեղանի վրայ դրած մոմը։

Եւ այսպէս վառելուց յետոյ, նա շտապեց Զար Ոգու ետևից, որ ուրիշ խրճիթների մոմերը նոյնպէս հանգցնում էր և մարդկանց խաւար մթութեան մէջ թողնում։ Բայց Լոյսի Բարի Հանճարը գնում էր նրա հետքերով և վառում մոմը։

Երբ Զար Ոգին իր շուրջը նայեց, տեսաւ որ խրճիթներում դարձեալ լոյս կայ, նորից վազեց առաջին խրճիթը։

—Փո՛ւհ, փո՛ւհ, արաւ նա ու հանգցրեց լոյսը, և ոչ ոք քաջութիւն չունէր լոյսը վառելու։

—Հիմա նա մոմն էլ հանգցրեց, ի՞նչ պէտք է անել, —հարցրին միմեանց մթութեան մէջ նստած մարդիկը։

Բայց հազիւ էր մթութեան Ոգին շէմքից դուրս եկել, երբ Լոյսի Հանճարը շտապեց մտնել բաց դռնից և շշնջալով հարցրեց, արդեօք տանը ծղաններ (մարխ, лучина) կա՞ն։

Այո, ծղաններ շատ կային. մեծ պապիկը փայտ էր ծղանել և նրանցից մեծ պաշար պատրաստել։

—Դու կըհանգցնես, իսկ ես դարձեալ կըվառեմ,—ասաց Լոյսի Հանճարը, վերցրեց ծղաններից մէկը և օջախի կրակից կպցրեց։

Եւ ամեն տեղ, ուր մտնում էր Լոյսի Հանճարը, այնտեղ վառւում էին ծղանները։

Չար Ոգին դարձեալ տեսաւ, որ ամենուրեք, ուր նա հանգցրել էր, լոյս կար։ Այժմ երրորդ անգամ շտապով մտաւ նա խրճիթի դռնից·

—Փո՛ւհ, արաւ նա. իսկ ծղանը չէր ուզում հանգչիլ։

—Փո՛ւհ, փուհ, և միայն երբ նա փչեց երրորդ անգամ, փայտից արձակւող լոյսը հանգաւ։

Հիմա էլ ոչ ոք քաջութիւն չունէր վառելու լոյսը, որ մթութեան Չար Ոգին բարկութեամբ հանգցրել էր։

—Ի՞նչ անենք այժմ,—հարցրին միմեանց մթութեան մէջ նստած մարդիկը, երբ Լոյսի Հանճարը մտաւ դռնից։

—Օջախը վառէք, կանչեց նա, և իսկոյն բոլոր խրճիթներում մեծ լոյս երևաց։ Բարի Հանճարի աչքերը փայլատակում էին այդ լոյսի առաջ, երբ նա բացականչեց·

—Դու կըհանգցնես, իսկ ես կըվառեմ։

Եւ ամեն տեղ, ուր մթութեան Չար Ոգին հանգցրել էր ծղանները և մարդկանց մեծ վիշտ պատճառել, Լոյսի Հանճարը վառում էր օջախի մէջ ուրախաբեր կրակ, որից ճանապարհները լուսաւորւում էին և եղևնիների գագաթները կարմրում։

Մթութեան Չար Ոգու բարկութեանը չափ չկար. աչքերը չռած, թշերը սաստիկ փքած՝ նա քամու արագութեամբ ներս մտաւ սենեակը։

—Փո՛ւհ, փո՛ւհ, փո՛ւհ,—փչում էր նա,—փո՛ւհ, փո՛ւհ, փո՛ւհ,—տնքում և հևում էր նա. բայց որքան շատ էր փչում, այնքան աւելի պայծառ էր բոցբոքւում կրակը օ-

ջախում, և այժմ լոյսը ընկնում էր ո՛չ միայն ճանապարհների վրայ և ո՛չ միայն եղևնիների գագաթներն էին կարմրում լոյսից, այլ և բարձրանում էր ծխնելոյզով դէպի երկինքը և հեռու գիւղերից նոյն իսկ օտար երկիրներից նկատում էին այդ լոյսը։

Չար Ոգին շատ աշխատեց, գործ դրեց իր բոլոր ոյժը... Բայց մինչև նա փչում էր, մինչև նա չարչարւում էր առանց որ և է յաջողութեան, գիշերն արդէն անցել էր, արևը ծագել, այլ ևս արհեստական լոյսի կարիք չըկար և մթութեան Չար Ոգին ի զուր էր աշխատել։

Այսպէս՝ ցերեկով Չար Ոգին անզօր էր, իսկ գիշերը Լոյսի Հանճարը արթուն է և պաշտպանում է երկիրը։

Տիկին Մարիամ Մէլիք-Բէգլարեան-Օհանեան։

ԱՐԵՒ ՈՒ ԼՈՒՍԻՆ

(Հին զրոյց)

Ասում են՝ իբրև կապոյտ երկնքում
Կայ մի լուսեղէն ապարանք սիրուն.
Այնտեղ եթերքում, ամպերի վրայ
Ամուր, անսասան միշտ կանգնած է նա։
Նրա դռներին չըկայ պահապան,
Ոչ մօտից անցնող, ոչ լսւում է ձայն.
Եւ այդ դիւթական ամրոցի միջին
Տաշտը առաջին չոքած է մի կին.
Խմոր է հունցում, և բազուկները
Վերև են քաշած մինչ արմունկները։
Խմոր է հունցում և անուշ երգում,
Անօսր այերը թեթև տատանում։
Ահա յամրընթաց, ձիւնափայլ, ճերմակ
Ամպերը կտրած մէկմէկու քամակ,
Ինչպէս գնայուն լեռներ ահագին,
Ունկնդիր են այն քաղցրալուր երգին։

Այն հրաշագեղ կինն երկնաբնակ
Ունի երկու հատ գեղեցիկ զաւակ.
Եւ ահա կանչեց իր սիրուն զոյգին,
Ձայն տւաւ թէ չէ՝ դուրս եկան կողքին.
Աղջիկ է մեծը, անունն Արեգակ,
Նմանը չըկայ երկնքում հրեշտակ.
Աչքերը կրակ, մազերը նոյնպէս,
Յօնքերը կամար, աղեղ է կասես.
Իսկ փոքր տղայ, անունը Լուսնեակ,
Ձարմաղ, ինչպէս ձիւն, նրա պէս սիպտակ.
Ապա թէ խօսեց մայրը լուսածին.—
«Գնացէք, որդիք, Արեգակ, Լուսին,
Մէկդ գիշերը, միւսդ ցերեկը,
Լուսաւորեցէք խաւար աշխարհքը։
—Ցերեկն ես կերթամ, ասաց Լուսնեակը,
Լուսաւորելու խաւար աշխարհքը,
Եւ այնտեղ ինչ որ տեսնեմ, նկատեմ,
Կըգամ քեզ, մայրիկ, մէկմէկ կըպատմեմ։
—Վա՜հ, չէ, ես պիտի գնամ ցերեկը,
Ասաց վրդովւած սիրուն Արեգը.—
Աղջիկը գիշերն ինչպէս կըշրջէ,
Այդ բնաւ նրան վայելուչ բան չէ։
—Լսիր, իմ Լուսին, չէ, խելօք ես դուն,
Յորդորեց մայրը իր յամառ որդուն,—
Արեգն աղջիկ է, նա կըվախենայ,
Դու քաջ տղայ ես, գիշերը գնա։
Սակայն Լուսինը շատ էր յամառել,
Սիրուն քրոջը չուզեց զիջանել.
Եւ այդ ժամանակ մայրը լուսածին
Բարկացած՝ դարձաւ յամառ զաւակին.
—Հէրիք է, տղա՛ս, յամառիս այդպէս,
Գնա՛ քո գործին, հեռացիր աչքէս.
Ասաց Լուսնեակին և բարկանալով,
Զարկեց մի ապտակ խմորոտ ձեռքով։
Խռովեց Լուսինն ու լացակումած,
Դուրս եկաւ իսկոյն իր գործին գնաց...

Բայց ապտակ կերած օրւանից դէմը
Խմորոտ մնաց քիթն ու երեսը։
Սակայն գեղեցիկ Արեգակն այժմ էլ
Ամօթ էր քաշում ցերեկով շրջել.
Եւ մայրիկն ահա տալիս է աղջկան
Մի բուռ լիքն ասեղ, և ասում նրան.
—Սրանցով ահա, եթէ նայեն քեզ,
Նրանց աչքերը դու կըծակծկես.
Արեը շիկնած, մեծ ապարանքից
Դուրս եկաւ երկինք ամպի արանքից
Եւ իր լուսովը ջինջ, ճաճանչափայլ,
Նա լուսաւորեց երկիրը մռայլ.
Եւ զւարթացաւ բնութիւնն ամեն,
Բայց մինչև այսօր ոչ մի հողեղէն
Չի կարող նայել լուսատու դէմքին—
Աչք է ծակծկում, ասեղ կայ ձեռքին...

***

Մէկը ցերեկով, միւսը գիշերով,
Քոյրն ու եղբայրը շրջան առնելով,
Երկար ժամանակ իրար չըտեսան,
Սաստիկ կարօտից տանջւել սկսան.
Մայրը որոշեց, որ երբեմնապէս
Իր զաւակները գնան միմեանց տես.
Այդ տեսակցութեան ժամին կարօտած,
Քոյրն ու եղբայրը գրկում են միմեանց։
Իսկ քոյր ու եղբայր երբ որ գրկում են,
Մարդիկ մի առ ժամ լուսից զրկւում են։

Յովհաննէս Թումանեան։

ԱՄԵՆԱԳԷՏՔԱԿԱՆ ԲԱՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ժամանակով՝ հեռաւոր և ոսկի արևելքում մի խելացի և արդարամիտ թագաւոր է եղել։ Նա ունեցել է երեք որդի։

Եղաւ որ այդ թագաւորը ծերացաւ և կառավարութեան սանձը ուզեց դեռ կենդանի օրով յանձնել իր ժառանգներից նրան, որն աւելի ընդունակ կլինի այդ մեծ գործին։

Եւ դրա համար նա մի օր կանչեց իր երեք որդիներին և ասաց.

—Սիրելի որդիք, տեսնում էք՝ որ ձեր հայրը ծերացել է ու էլ չի կարողանում երկիրը կառավարել։ Ես վաղուց իջած կլինէի իմ գահից, եթէ կատարուած տեսնէի այն մեծ միտքը, որ երկար տարիներ պաշարել է հոգիս։ Եւ հիմա ձեզանից նա, ով որ իմաստուն կերպով կը լուծէ այդ իմ միտքը, նա կըստանայ իմ թագաւորութիւնը, նա կըկառավարէ իմ ժողովուրդը։

—Ապրած կենայ մեր սիրելի հայրը, սուրբ է մեզ համար նրա վեհ կամքը։ Այդ ի՞նչ մեծ միտք է, որ չի կարողացել լուծել նրա իմաստուն հոգին։

Ահա տեսնո՞ւմ էք այն ահագին և մեծածաւալ շտեմարանը, որ վաղուց շինել եմ։ Իմ միտքս էր՝ լցնել մի այնպիսի բանով, որ ամենապէտքականը լինի աշխարհիս երեսին և որով կարողանում բախտաւորեցնել իմ ժողովուրդը։ Այդ շտեմարանը դեռ մնում է դատարկ։ Եւ հիմա ձեզանից նա, ով որ կըկարողանայ այդ շտեմարանը, իր բոլոր անկիւններով, ծայրէ-ծայր լցնել աշխարհի այդ ամենապէտքական բանովը, նա թող լինի իմ ժառանգը։ Առէք գանձերիցս ինչքան որ կուզէք և առանձին-առանձին ճանապարհ ընկէք քաղաքէ-քաղաք, աշխարհէ-աշխարհ, գտէք այդ բանը և լցրէք իմ շտեմարանը։ Ձեզ եօթն անգամ քառասուն օր միջոց եմ տալիս։

Որդիները համբուրեցին հօր ձեռքը ու ճանապարհ ընկան։

—

Ամբողջ եօթն անգամ քառասուն օր նրանք շրջեցին քաղաքէ-քաղաք, աշխարհէ-աշխարհ, տեսան ուրիշ-ուրիշ մարդիկ, ուրիշ-ուրիշ սովորութիւններ ու ժամանակին կանգնեցին հօր առաջ։

—Բարով էք եկել, անգին որդիներ։ Գտե՞լ էք բերել՝ ինչ որ ամենապէտքական բանն է աշխարհում։

—Այո, գտել ենք։

Եւ հայրը իսկոյն վերցրեց իր որդիներին և նրանց հետ գնաց շտեմարանի առաջ։ Այնտեղ հաւաքուած էին բոլոր պալատականները և ժողովուրդը։

Թագաւորը մօտեցաւ շտեմարանի դռանը, բացեց և կանչեց մեծ որդուն.

—Ինչո՞վ կըլցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակ, ինչ բանով, որ աշխարհում ամենապէտքականը լինի։

Եւ մեծ որդին հանեց գրպանից մի բուռն հացահատիկ և պարզելով դէպի հայրը՝ ասաց.

—Հացով կըլցնեմ այս ահագին շտեմարանը, թանգագին հայր։ Ի՞նչն է աշխարհում ամենապէտքական բանը քանց հացը։ Ո՞վ կարող է առանց հացի ապրել։ Շատ թափառեցի, շատ բան տեսայ—բայց հացից պէտքական ոչինչ չըգտայ։

Այն ժամանակ հայրը կանչեց միջնակ որդուն.

—Ինչո՞վ կըլցնես այս ահագին շտեմարանը, սիրելի, որդեակ, ինչ բանով, որ աշխարհում ամենապէտքականը լինի։

Եւ միջնակ որդին հանեց գրպանից մի բուռն հող և պարզելով դէպի հայրը՝ ասաց.

—Հողով կըլցնեմ այս ահագին շտեմարանը, թանգագին հայր։ Ի՞նչն է աշխարհում ամենապէտքական բանը քան հողը։ Առանց հողի հաց չըկայ, առանց հողի ո՞վ կարող է ապրել։ Շատ թափառեցի, շատ բան տեսայ,—բայց հողից պէտքական ոչինչ չըգտայ։

Այն ժամանակ հայրը կանչեց կրտսեր որդուն։

—Ինչո՞վ կըլցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակս, ինչ բանով, որ աշխարհում ամենապէտքականը լինի։

Այդ միջոցին կրտսեր որդին հաստատ քայլերով մօտեցաւ շտեմարանին, անցաւ շէմքը և գննեց ահագին մե-

ծածաւալ և մութն ու խաւար շտեմարանը։ Բոլորը հետաքրքիր նայում էին նրան։

Եւ ապա նա գրպանից հանեց մի փոքրիկ մոմ, կայծաքարին խփեց հրահանը, կայծ հանեց և վառեց մոմը։ Բոլորը կարծում էին թէ նա ուզում է լոյսի լուսով լաւ զննել շտեմարանը, նրա ահագնութիւնը։

—Դէհ ասա, որդի, ինչո՞վ կլցնես,—անհամբեր ձայնով նորից հարցրեց Թագաւորը։

—Լոյսով կլցնեմ այս ահագին շտեմարանը, իմաստուն հայր, լոյսով միայն։ Շատ թափառեցի, շատ աշխարհներ տեսայ, շատ բան սովորեցի բայց լոյսից պէտքական ոչ մի բան չըգտայ։ Լոյսն է ամենապէտքական բանը աշխարհում։ Առանց լոյսի հողը հաց չի ծնիլ, առանց լոյսի հողի վրայ մարդ չէր լինիլ։ Շատ թափառեցի, շատ աշխարհներ տեսայ, շատ բան սովորեցի և գտայ որ լուսաւորութիւնն ու գիտութիւնն են ամենապէտքական բանը աշխարհում։ Եւ լոյսով կարելի է լցնել ոչ միայն այս ահագին և մեծածաւալ քո շտեմարանը, այլ և ամբողջ աշխարհը՝ իր բոլոր անկիւններով, ծայրէ-ծայր։

—Ապրիս,—գոչեց ուրախացած հայրը.—քեզ է արժանի իմ գահն ու իշխանութիւնը, քանի որ լոյսով և գիտութեամբ պէտք է լցնես թագաւորութիւնդ և մարդկանց հոգիները։

—Ապրած կենայ մեր եղբայր Թագաւորը,—գոչեցին ուրախացած եղբայրները։—Ուղիղ որ նա գտաւ ամենապէտքական բանը աշխարհում։

—Ապրած կենայ մեր երիտասարդ լուսաւոր Թագաւորը,—գոչեցին ուրախացած պալատականներն ու ժողովուրդը։

Եւ հայրը գրկեց կրտսեր որդուն, փռեց նրա ուսերի վրայ շողշողուն ծիրանին, տարաւ նստեցրեց գահի վրայ։

Ամբողջ ժողովուրդը ընկաւ մեծ ուրախութեան մէջ, երգեց ու պարեց քառասուն օր, քառասուն գիշեր—որ ունեցաւ նորից մի խելօք և լուսամիտ Թագաւոր։

Աւետիս Իսահակեան։

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Կէս գիշերին կանթեղը վառ
Կախ է ընկած երկընքից,
Լուսաւորչի կանթեղն անմար
Հայոց մթնած երկընքից։

Կախ է ընկած առանց պարան
Արագածի կատարին,
Ու սեղանից հրսկայական
Լոյս է տալիս աշխարհին։

Լոյս է տալիս երկա՜ր դարեր,
Ու վառւում են միշտ անշէջ
Սուրբի մաքուր արցունքները
Իւղի տեղակ նորա մէջ։

Ոչ մարդկային ձեռ կըհասնի
Էն ահաւոր բարձունքին,
Եւ ոչ քամին կըհանգցընի՝
Վիշապ-քամին ահագին։

Յովհաննէս Թումանեան

ՔԻ՞Չ ԷԼ, ՔԻ՞Չ ԷԼ

ԱՌԱՍՊԵԼՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԸ

(Երկու հակապատկեր)

Մէկ աղքատ մարդ մի որդի ունէր մինուճար՝ Բաջիկ անունով։ Բաջիկը շատ սրամիտ էր և շատ խելօք, միայն շատ դիւրագրգիռ էր և շուտ բարկացող։ Նա չէր վերցնում ոչ մի դառը խօսք, ոչ մի կոպիտ վարմունք, և այս պատճառով էլ՝ ոչ մի վարպետի մօտ երկար չէր մնում մի արհեստ սովորելու համար։ Հայրը մի վարպետից միւսի մօտ էր տանում, մի արհեստից հանում, միւս արհեստի էր տալիս, բայց որովհետև բոլոր ար-

հեստաւորներն էլ միատեսակ կոպիտ վարուեցողութիւն ունէին, այդ պատճառով էլ Բաջիկը ոչ մէկի մօտ երկար չէր մնում։

Մէկ օր էլ հայրն ասաց.—Ես ո՞րտեղ գտնեմ քեզ համար այնպիսի վարպետ, որ քո բնութեանը յարմար լինի։ Մեր աշխարհի օրէնքն այնպէս է, որ վարպետը պէտք է աշակերտին խրատէ, յանդիմանէ, ծեծէ, որ նա մարդ դառնայ։

—Այդ շատ լաւ ես ասում, հայր, պատասխանեց Բաջիկը, բայց ի՞նչ անեմ, ես չեմ կարողանում վերցնել։ Երբ որ ինձ հետ մարդավարի չեն վարւում, գլուխս շըշմում է, աչքերս մթնում, էլ ոչինչ չեմ տեսնում, ոչինչ չեմ լսում։ Իմ կոպիտ վարպետներս կարծում են, թէ ես գիտութեամբ եմ կուրանում ու խլանում և աւելի են բարկանում ու աւելի ծեծում։ Այս ասաց Բաջիկը և սկսեց լաց լինել։

Հայրը խելօք մարդ էր. գիտէր որ Բաջիկի ասածն ուղիղ է, բայց ինչ անէր խեղճը, կոպիտ վարպետներին բարեկրթել չէր կարող, մնացել էր տարակուսած և չըգիտէր ուր տանէր իր որդին։ Վերջը մտածեց որ տանէ մի ուրիշ քաղաք, գուցէ կարողանայ որդու բնութեանը յարմար մի վարպետ գտնել։ Այսպէս մտածելուց յետոյ՝ հայր ու որդի վճռեցին, պատրաստութիւն տեսան և ճանապարհ ընկան դէպի մի ուրիշ քաղաք։ Շատ գնացին թէ քիչ, Աստուած գիտէ, մինչև հասան մի աղբիւրի. նստեցին աղբիւրի մօտ, որ ճաշեն, հանգստանան և յետոյ շարունակեն իրանց ճանապարհը։ Մի փոքր որ հանգստացան, հայրը բերանքսիվայր ընկաւ աղբիւրի վրայ, մի կուշտ խմեց և ասաց.—Ուխա՜յ... Այս խօսքի վրայ յանկարծ մի մարդ դուրս եկաւ աղբիւրից՝ երկար հասակով ու մօրուքով և ասաց.—

—Ե՛ս եմ Ուխայը. ի՞նչ էք ուզում ինձանից։

Այս որ տեսան հայր ու որդի՝ մնացին իրար երեսի մտիկ տալիս, զարմացան, ապշեցին և չիմացան ինչ պատասխան տան։ Վերջը հայրն ասաց.

—Ուխա՛յ ապէր, մենք քեզ չըկանչեցինք և ոչինչ չենք ուզում քեզանից։ Մենք ճանապարհորդ ենք. սա իմ որդին է. տանում եմ մի վարպետի տամ, որ մի արհեստ սովորի։

Ուխայն ասաց.—Տուր ինձ, ես դրան լաւ արհեստ կըսովորեցնեմ և լաւ կըպահեմ։ Ես գիտեմ դրա բնութիւնը, դա ամեն մարդու մօտ չի կենալ, ամեն արհեստ չի սովորիլ, բայց դա ինձ մօտ կըմնայ։

Հայրը չիմացաւ ինչ պատասխան տար խորհրդաւոր Ուխային, որովհետև կարծում էր, թէ գուցէ նա մարդ չէ, այլ սատանայ է կամ հրեշտակ, բայց Բաջիկն ասաց.—Հայր, ես կերթամ սրա մօտ. երևում է, որ սա մի հնարագէտ մարդ պիտի լինի. ես սրա արհեստը կըսովորեմ։ Հայրն ասաց.—Թող քո կամքը լինի։ Եւ որդին տուաւ Ուխայ ապօրը։ Ուխայ ապէրը մի քսակ ոսկի տուաւ հօրը և ասաց.—Մի տարուց յետոյ կըգաս էլի այս աղբիւրի մօտ, կըխմես և կասես՝ ուխա՜յ, ես էլի դուրս կըգամ և քո որդին քեզ կըյանձնեմ։ Այս ասելուց յետոյ Բաջիկի ձեռքից բռնեց և անյայտացաւ աղբիւրի մէջ...

2.

Ուխայը մի ճարպիկ ձեռնածու էր, այսինքն՝ աչքակապ, ֆոկուսնիկ, և մի և նոյն ժամանակ մի չըլսուած և չըտեսնուած կախարդ։ Նրա բնակարանը մի առանձնացած տեղ էր. երկրի երեսի՞ն էր արդեօք, թէ գետնի տակին՝ յայտնի չէ. և այնքան հրաշալի մի շէնք էր, որ լեզւով պատմել չի լինիլ։ Բոլոր պատերը, սիւները, յատակը, առաստաղը, վերնածածկը, գաւիթը, պարիսպը, մի խօսքով ամբողջ շինութիւնը իր բոլոր մասներով շինուած էր արծաթից, ոսկուց, ադամանդից, եաղութից, զմրուխտից, և ամեն գոյնի գոհարներից ու անգին քարերից, և շինուած էր այնպիսի վարպետութեամբ և ճաշակով, որ արեգակի ճառագայթները վրան ընկնելով՝ ամբողջ տունը ամեն մի րոպէից յետոյ մի նոր ձև, մի նոր պատկեր էր ստանում, որ մարդ նայելից չըձանձրանայ, չըկշտանայ։

Նա ունէր և ընդարձակ այգի, ամեն տեսակ ծառ ու ծաղկով զարդարուած, միշտ փթըթած, միշտ դալար՝ թէ ամառ և թէ ձմեռ, բայց ոչ մի խոտ, ոչ մի թուփ, ոչ մի ծառ կամ ծաղիկ բուսեղէն չէր, իսկական, բնական բոյս չէր, այլ ով գիտէ ինչից էին շինուած և ինչպէս։ Աւազաններ կային տեղ-տեղ, հրաշալի աւազաններ, մարջանից շինած խողովակներով և մարմարից շինած հիւրիների չքնաղ անդրիներով, որոնց գլխների վրայ դըրած ոսկէ սափորներով ականակիտ շատրւանները մինչև յիսուն կանգուն վեր էին խփում և ցնցղուած վայր թափւում ծիածանի բոլոր գոյներովը զարդարուած։ Բայց... ջուր չէր այդ թափւածը, այլ ով գիտէ, գուցէ ադամանդի, այսինքն՝ բրլեանտի ու ալմաստի հալուածք էր, կամ մի այլ զարմանալի հեղուկ։

Թռչուններ կային տեսակ-տեսակ, ամեն ցեղի և ամեն գոյնի, որոնք թևերը շարժելով՝ երգում էին հազար ձայնով, բայց... չէին թռչում, որովհետև նրանց թևերը փետուրից չէին, նրանք իսկական թռչուններ չէին, բայց այնպէս էին շինուած, որ մի մեղմ հով փչելիս՝ նրանց մէջ սարքած մեքենան շարժել էր տալիս նրանց թևերը և նրանց կտուցից դուրս էր գալիս մի զմայլելի երգ, և թէպէտ ամեն մէկը մի ջոկ ձայնով ու եղանակով էր երգում, բայց բոլորի ձայնը մէկ տեղ խառնուելով՝ մի զարմանալի ներդաշնակութիւն էր առաջ գալիս, դառնում էր մի սքանչելի մեղեդի, որ մարդ լսելուց չէր կշտանում։ Այդ մեղե-

դին եղանակը փոխում էր փչած քամու կամ հովի փոխուելու հետ…

Այսպէս Ուխայը ամեն ինչ ունէր, բայց բոլորն էլ ճարտարութեան գործ էր և ոչ բնութեան։ Մի կին ունէր միայն, որ ճշմարիտ, իսկական կին էր, շատ գեղեցիկ և խելօք, և հմուտ իր մարդու բոլոր գիտութեանը և արուեստին։ Նրանք չունէին ոչ խոհանոց, ոչ խոհարար և ոչ ծառայ։ Ճաշելու ժամանակ սեղան էին նստում և ինչ որ ուզում էին, իսկոյն դրւում էր սեղանի վրայ ոսկեղէն ամաններով։ Բաջիկը ոչ տեսած և ոչ լսած էր, այնպիսի համադամ կերակուրներ կային։ Եթէ նրա սիրտը երբեմն իր թանապուրն էր ուզում կամ մախոխը, իսկոյն դրւում էր նրա առաջին։ Երբ որ ծարաւում էին, վերցնում էին դատարկ բաժակը և նա իսկոյն լցւում էր պարզ ու զովարար ջրով։ Հագնել էին ուզում, իսկոյն պատրաստ էր լինում հագուստը ինչ ձևի և ինչ կտորից որ ուզենային։ Եւ այսպէս ամեն ցանկութիւն, ամեն փափագ կատարւում էր իսկոյն ևեթ։ Բաջիկին սկզբումը շատ տարօրինակ էր թւում այս ամենը, բայց հետզհետէ ընտելացաւ և հաշտուեց այս զարմանալի վիճակի հետ։

Այսպէս մի քանի օր որ անցաւ, Ուխայն ասաց Բաջիկին։

—Տես ահա մենք որդի չունինք, եթէ դու լաւ սովորես իմ արհեստը, ես քեզ կը որդեգրեմ, դու կըդառնաս իմ որդին և կըպահպանես ինձ և իմ կնոջը մեր ծերութեան ժամանակ։

Այս յուսով Ուխայն սկսեց սովորեցնել Բաջիկին իր կախարդութեան արհեստը։ Նա սովորեցնում էր կերպարանափոխուելու հնարքը, թէ ինչպէս պէտք է մարդ իր ուզած բանը դառնայ, օրինակ՝ ձի, թռչուն, քար ծառ, և ուրիշ բան, ինչ որ ուզենայ։

Ամեն մի ջոկ բան դառնալու համար մի ջոկ ասելիք կար, այն ասելիքը որ սովորէր և ասէր, իսկոյն կըդառնար իր ուզած բանը։

Բաջիկն սկսեց սովորել և վարժութեան համար ինչ ասես՝ դառնում էր—ձի էր դառնում և չափ ընկնում դէս ու դէն. մուկն էր դառնում, ծակ ու ծուկ մտնում. կատու էր դառնում, մլաւում. շուն էր դառնում, հաչում. թռչուն էր դառնում, թռչում. ծառ էր դառնում, ճղները տարածում դէս ու դէն. քար էր դառնում, մի տեղ ցցւում կամ վայր ընկնում. դէրւիշ էր դառնում, և չանաղը ձեռքն առած երգում, փայ ուզում. աշըղ էր դառնում, սազ ածում և խաղ ասում կամ մի նոր մարաքա սարքում…

Ուխայի կինն աւելի շատ բան էր սովորեցնում Բաջիկին, և շատ սիրում էր նրան։ Նա սկսեց այնպիսի բաներ էլ սովորեցնել, որ մարդուն հաճելի չէր։ Թէպէտ այդ բաները նա ծածուկ էր սովորեցնում, բայց սատանայ և խորամանկ Ուխայից ինչ կըծածկուէր։ Ուխայն ամեն գաղտնիք չէր ուզում յայտնել Բաջի-

կին, այդ բանը դեռ վաղ էր համարում. չէր ուզում իր հացը բոլորովին կտրել և տալ ուրիշին։ Երբ որ գլխի ընկաւ, որ Բաջիկն աւելի է առաջ գնացել, քան թէ պէտք էր, սկսեց խէթ աչքով նայել նրա վրայ և վերջը բանը մինչև այնտեղը հասաւ, որ ուզեց սպանել նրան։

Բայց կինն էլ պակաս խորամանկ չէր։ Նա էլ երբ որ իմացաւ մարդու միտքը, ուզեց ազատել Բաջիկին, և ասաց նրան, որ խելագար ձևանայ և այնպէս ցոյց տայ, որ իբր թէ էլ ոչինչ չի կարողանում սովորել, և ինչ որ սովորել էլ բոլորն է մոռացել է։

Բաջիկը ձևացրեց իրան իբրև խելագար՝ իր սովորած արուեստի բոլոր ճարտարութեամբ՝ դեղնեց, սփրթնեց, և սկսեց խենթ ու խելառ, ինչ ասես, դուրս տալ գլխից և այնպիսի վտանգաւոր բաներ անել, որ միայն խելագարը և գլխից ձեռք վերցրած մարդը կանէր։

—Խեղճ տղայ, ասաց մէկ օր էլ կինը մարդուն—շատ բան սովորելուց գժուեց…

Խորամանկ Ուխայը հեշտ և շուտ խաբուող չէր։ Նա ամեն հնար գործ դրաւ, որ իմանայ, թէ արդեօք Բաջիկն ստոյգ խելագար է, թէ ձևանում է միայն, բայց ի վերջոյ բոլորովին համոզուեց, որ Բաջիկի խելագարութեան մէջ ոչինչ կեղծիք չըկայ…

Հէնց այդ ժամանակները Բաջիկի հայրը եկաւ աղբիւրից խմեց, ուխա՜յ ասեց. Ուխայն իմացաւ իսկոյն և Բաջիկին տարաւ տըւաւ հօրը և ասաց.—Որդիդ հիւանդացաւ, և ինչ որ սովորել էր, մոռացաւ։ Տար տուն, երբ որ լաւանայ, էլի բեր ինձ մօտ։ Այս ասելուց յետոյ նրան մի քսակ ոսկի տըւաւ և ինքն անյայտացաւ։

3.

Ուխայը չասաց, թէ քո որդին խելագարուել է, և լաւ էր, որ չասաց. եթէ ասէր, շատ վատ կըլինէր Բաջիկի համար. Նա այնուհետև ինչ խելօք բան էլ որ անէր, հօրը խենթութիւն պիտի թըւար։ Ճանապարհին հայրն սկսեց յանդիմանել որդուն և ասել, որ նա կարողանալու չէ մարդ դառնալ։

—Մարդ որ չըդառնամ, պատասխանեց որդին, մի՞թէ մի ուրիշ կենդանի էլ չեմ կարող դառնալ, օրինակ՝ ձի, էշ, ուղտ…

—Ի՞նչ ասել կուզի որ կարող ես. ի՜նչ կայ աւելի հեշտ, քան թէ էշ դառնալը, դժուարը մարդ դառնալն է…

—Այդպէս չէ, հայր. մարդ դառնալու համար ոչինչ դժուարութիւն չըկայ. մենք մարդ ենք ու մարդ, էլ ինչ հարկ կայ մարդ դառնալ. բայց ուրիշ բան է, եթէ մարդը կարողանայ էշ դառնալ, ձի դառնալ, քար դառնալ, ծառ դառնալ…

—Այդպէս չէ, որդի. ով որ օրինաւոր մարդ չէ, նա մի որ և իցէ կենդանու է նման. հապա չե՞ս լսել, որ ասում ենք՝ այս ինչ մարդը յիմար էշ է, փլանը կոպիտ արջ է, փստանը անզգայ խոզ է, այս ինչը խաբեբայ աղուէս է, այն ինչը գիժ գոմէշ է, մարկոսը մի խորամանկ օձ է, կիրակոսը վախկոտ նապաստակ է, մաթոսը մի կատաղած շուն է...

—Ո՛չ, հայրիկ, ես ուրիշ բան եմ ասում, դու ուրիշ: Ախըր ես ուսում եմ առել, շատ բան եմ սովորել, դու իմ ասածը, իմ լեզուն չես կարող հասկանալ:

—Ինչո՞ւ չեմ հասկանալ, որդի, եթէ մարդավարի խօսես: Ես ասում եմ՝ մարդ դառնալն է դժւար, դու ասում ես՝ էշ դառնալն է դժւար. այստեղ ի՞նչ կայ չըհասկանալու. այդ ի՞նչ ուսում է...

—Այս այն ուսումն է, որ ես կարող եմ ուղտ դառնալ, բայց դու չես կարող...

—Աստուած մի արասցէ. ես չեմ էլ ուզիլ ուղտ դառնալ: Ինչո՞ւ մարդ դառնալը թողած՝ ուղտ դառնալը սովորեցիր, մի՞թէ մեզանում քիչ ուղտեր կան... Ով որ լսի, մեզ ի՞նչ կասի. չի՞ ասի՝ փլանը իր տղին տարել է տուել ուսումի, որ մարդ դառնայ, բայց նա ուղտ է դառել...

Այսպէս հայր ու որդի վիճելով շարունակեցին իրանց ճանապարհը, մինչև հասան մի մացառուտ տեղ: Այնտեղ Բաջիկը յետ ընկաւ և մի թուփի քամակ անցնելով՝ դառաւ մի եղնիկ, և վազելով գնաց հօր առաջը: Հայրն ուզեց բռնել, չըկարողացաւ: Եղնիկը չէր փախչում, այլ մինչև անգամ բռնել էր տալիս, և մէկ էլ յանկարծ դուրս պրծնում: Հայրը կանչեց Բաջիկին, որ հասնի օգնէ, բայց Բաջիկը չերևաց, մինչև եղնիկը փախաւ ընկաւ մացառուտը, նոր այնտեղից դուրս եկաւ Բաջիկը: Հայրը բարկացաւ որդու վրայ, թէ ինչո՞ւ շուտ չեկաւ և սիրուն եղնիկը ձեռքից փախցնել տուաւ: Բաջիկը ծիծաղեց միայն և ոչինչ չասեց. մի քիչ որ առաջ գնացին, նա էլի յետ մնաց, դառաւ մի ձիու քուռակ և գնաց հօր առաջին կանգնեց: Հայրն ուզեց բռնել, բայց քուռակը բռնել չէր տալիս: Կանչեց որդուն, որդին չերևաց, մինչև քուռակը փախաւ անյայտացաւ, նոր երևաց որդին, բայց ուշ էր: Հայրը դարձեալ յանդիմանեց որդուն, թէ ինչու ուշացաւ, և սկսեց պատմել, թէ ինչքան գեղեցիկ էր քուռակը, կասէիր մի քաշած պատկեր էր, և անպատճառ մի հրեղէն կամ ծովաձիու քուռակ էր:

Այսպէս՝ մինչև տուն հասնելը որդին շատ չարչարեց հօրը՝ զանազան բաներ դառնալով: Հէնց որ հայրը յոգնում էր և ուզում էր նստել, Բաջիկը մի առիթ էր գտնում, ծածկւում և ծածուկ մի բան դառնալով՝ հօր առաջն ընկնում վազում. հայրն

ընկնում էր ետևից և բաւական տեղ վազում էր. և մինչև տուն համարեա վազելով գնաց խեղճը:

Երբ որ տուն հասան, միւս օրը որդին պատմեց հօրը, որ ճանապարհին պատահած բոլոր բաներն ինքն էր: Յետոյ ասեց.

—Ես հիմա մի լաւ ձի կըդառնամ, դու ինձ տար ծախիր, միայն իմ սանձը չըծախես: Այս ասելուց յետոյ՝ մտաւ գոմը և այնտեղ դառաւ մի կարմիր ձի և այնքան գեղեցիկ, որ տեսնողը կասէր՝ ոչ ուտեմ, ոչ խմեմ, միայն սրա շէնք ու շնորհքին մտիկ տամ: Հայրը տարաւ բազար, և բոլոր տեսնողները մնացին հիացած: Հազար մանէթ գին դրաւ և մէկը՝ առանց խօսելու՝ հանեց տուաւ փողը և ձին առաւ տարաւ: Հայրը սանձը չըտուաւ և փողի հետ տարաւ տուն: Առնողը տարաւ ձին և սկսեց խաղացնել, բայց չըկարողացաւ սանձահարել և հրաշալի կենդանին հրեղէն ձիու նման թև առած՝ թռաւ անյայտացաւ: Մի ժամից յետոյ նա իրանց տանն էր և առաջւան Բաջիկն էր: Այսպէս մեր Բաջիկը մի քանի անգամ ձի դառնալով և ամեն անգամ ուրիշ գոյնով, և աւելի թանգ գնով ծախւեց:

Մէկ օր էլ, երբ որ հայրը նրան բազար էր դուրս բերել, մի քօսակ մարդ մօտեցաւ, ձեռքը քսեց ձիու բաշին, աչքերին, շատ հաւանեց, գովեց և հարցրեց գինը: Հայրն ասեց, որ գինը տասը հազար մանէթ է, առանց սանձի:

—Իսկ սանձն ի՞նչ արժէ, հարցրեց քօսակը:

—Սանձը ծախու չէ, պատասխանեց հայրը:

—Սուտ ես ասում, կըծախես, ժպտալով ասեց քօսակը. երևի ուզում ես մի բան էլ սանձի համար գլխես: Ես առանց սանձի չեմ առնիլ, որովհետև այս սանձն ինձ աւելի է դուր գալիս քան թէ ձին, և այս պատճառով ես մի հազար մանէթ էլ սանձի համար կաւելացնեմ...

—Չեմ կարող տալ, թէկուզ երկու հազար մանէթ տաս...

—Ի՞նչ անխելք մարդ ես... դէ լաւ, տասը հազար էլ սանձի համար կըտամ:

Այս որ ասեց քօսակը, բոլորի բերանը բաց մնաց, թէ գիժ չէ՞ այս մարդը, որ վեց շահանոց սանձին տասը հազար մանէթ է տալիս:—Գիժն աւելի չըտուողն է, ասացին շատերը և սկսեցին մեղադրել ձիավաճառին, թէ ինչու այդպիսի մի առասպելական գնով չի ծախում սանձը: Ինքը հայրը մնաց զարմացած սիրտ գլխից և շշկլւելով՝ սանձն էլ հետը ծախեց: Քօսակը քսան հազար մանէթը համրեց տուաւ հօրը և ձիու սանձն առաւ ձեռքը:

Երբ որ քօսակը ձիու սանձը ձեռքն առաւ, ամենքն էլ նկատեցին, որ ձիու աչքերից արտասուքի խոշոր կաթիլներ թափեցին: Հայրն էլ տեսաւ և զղջաց. ուզեց յետ առնել ձին, բայց

քօսակը ժամանակ չըտւաւ. նա հեծաւ ձին և մի ակնթարթի մէջ անյայտացաւ։

Այս քօսակը Ուխայն էր, և ճանաչել էր Բաջիկին։

4.

Ուխայը ձին տարաւ իր դռանը կապեց, ինքը մտաւ տուն, առաւ մեծ դանակը և սկսեց սրել, որ նրանով Բաջիկին մորթէ. Կինը նայեց պատուհանից և ճանաչեց Բաջիկին։ Մինչև մարդը դանակը կըսրէր, կինը թաքուն վայր իջաւ և սանձը վէր առաւ ձիու գլխից։ Բաջիկն իսկոյն մի աղաւնի դառաւ և թռաւ դէպի տուն։ Ուխայը դուրս եկաւ և տեսաւ որ ձին չըկայ, աչքովն ընկաւ աղաւնին և իսկոյն ինքն էլ մի բազէ դառաւ և ընկաւ աղաւնու ետևից։ Աղաւնին տեսաւ, որ բազէն ետևիցն է ընկել, իսկոյն իմացաւ որ Ուխայն է. իր ուժը կրկնապատկեց, որ նրա ճանկը չընկնի։ Այսպէս աղաւնին փախաւ, բազէն էլ նրա ետևից, մինչև հասան մի գիւղ և հէնց այն էր՝ քիչ էր մնում, որ բազէն բռնէր աղաւնուն և քըքրէր, աղաւնին իսկոյն մի կարմիր խնձոր դառաւ և վայր ընկաւ մի տան հերթից։ Այդ տանը հարսանիք կար։ Նորափեսան իր մակառներով սեղան էին նստած և ուրախութիւն էին անում։ Նորափեսի առաջին, ինչպէս սովորութիւն է, շատ մրգեղէն կար, որ բերել էին բարեկամները իբրև թագաւորի մ ա զ ա։ Հերթից վայր ընկած կարմիր խնձորն էլ դրին թագաւորի առաջին, կարծելով թէ բարեկամներից մէկը կըլինի վայր ձգած զւարճութեան համար։ Բայց շուտով ամենքի ուշադրութիւնը դարձաւ այդ խնձորի վրայ, ամենքը նկատեցին որ այդ խնձորը հասարակ խնձոր չէ։ Ամենքն էլ ձեռքներն առան խնձորը հոտոտեցին, հիացան և գովեցին, ամեն մէկը մի բան ասեց, և վերջումը մէկն էլ ասեց, որ այս խնձորը հասարակ խնձոր չէ. սրան մարդ չի վայր գցել հերթիցը և ինչ հարկ կար. սա անպատճառ երկնքից է վայր ընկել և այն խնձորներիցն է, որ հեքիաթների մէջ հարսանիքի վերջին երկնքից վայր է ընկնում։—

Բազէ դառած Ուխայը Բաջիկի խնձոր դառնալը որ տեսաւ, և իմացաւ, որ նոյն տանը հարսանիք կայ, ինքն էլ մի աշըղ դառաւ և սազը ձեռքին մտաւ հարսնըքատուն։ Աշըղին պատւով ընդունեցին և նստեցրին փեսայի դէմուդէմը։ Աշըղը լարեց սազը և սկսեց այնպիսի երգեր երգել և այնպիսի եղանակներ ածել, որ բոլորովին մոռացնել տըւաւ խնձորի ներկայութիւնը, միայն ինքը աչքը խնձորից չէր հեռացնում։ Վերջը երբ որ ուզում էին նրան մի լաւ պարգև տալ, այսինքն նորահարսի գործած մի ջուխտ նախշուն գուլբա և մի ջուխտ կարմիր տըխատան, աշըղը

վեր չառաւ, և խաղով հասկացրեց, որ իր ուզածը միայն կարմիր խնձորն է...

Նորափեսան չուզեց աշըղի խաթրը կոտրել, վեր առաւ խնձորը որ տայ նրան, բայց խնձորը վայր ընկաւ ձեռքիցը և մի բուռը կորեկ դառնալով՝ փռւեց յատակի վրայ։ Ամենքը յետ յետ քաշւեցին, որ տեսնեն այդ ինչ հրաշք էր, արդեօք խնձորն էր, որ կորեկ դառաւ, թէ՞ խնձորը մի աման էր կորկով լիքը, այդ միջոցին յանկարծ մի հաւ լուս ընկաւ և սկսեց կտկտալով հաւաքել կորեկը։ Հէնց որ բոլորն արդէն վերջացնելու վրայ էր, կորկի մէկն ասեղ դառաւ և թռաւ ցըցւեց նորահարսի կրծկալի մէջ. հաւն էլ իսկոյն մի բարակ թել դառաւ և թռաւ անցաւ ասղի ծակը և ուզեց ասեղը իր հետ թռցնել, բայց ասեղը յաղթեց թելին և թռաւ ընկաւ կրակի չեղջի մէջ։ Թելը կրակումն այրւեց իսկոյն, իսկ ասեղը դուրս թռաւ և դարձաւ մեր Բաջիկը և զարմացրեց հանդիսականներին։

Թէպէտ Բաջիկն էլի Բաջիկ դառաւ և ազատւեց Ուխայից, որ արդէն մոխիր էր դարձել, բայց ինքն էլ այրւեց բաւականին և ոչ միայն իր առաջւան գեղեցկութիւնն ու թարմութիւնը կորցրեց, այլ և իր ձեռք բերած շնորհքը, իր սովորած արհեստը։ Էլ չըկարողացաւ մի ուրիշ բան դառնալ. Նրա բոլոր ասելիքները, բոլոր աղօթքներն ու թալիսմանները կորցրին իրանց զօրութիւնը Ուխայի այրւելու հետ...

5.

Շատ ցաւում է մարդ, երբ որ մի բան է կորցնում, թէկուզ այդ բանը շատ փոքր լինի։ Երեխան երբ որ երազումը դանակ է գտնում և միւս օրը տեսնում է, որ գտած դանակը չըկայ, սկսում է լաց լինել։ Ուրեմն ինչքան կըցաւէր Բաջիկը, որ ոչ թէ երազումը գտած դանակ էր կորցրել, այլ իր շնորհքը, իր բոլոր ուսումը, այն էլ այնպիսի ուսում, որ ոչ ոք չըգիտէր բացի իրանից։ Նա շատ դարդ արաւ, և վերջը մտածեց, որ գնայ Ուխայի կնոջ մօտ պատմէ եղելութիւնը և նորից ձեռք բերէ իր գիտութիւնը։ Այս մտքով ճանապարհ ընկաւ դէպի Ուխայի բնակարանը, բայց... էլ ոչինչ չըկար... ամեն ինչ ցնդել էր օդի մէջ. ոչ մի հետք, ոչ մի նշան անգամ չէր մնացել։ Բաջիկին թւում էր, թէ ուրեմն ամեն ինչ երազումն էր տեսել, դանակ գտնող երեխայի նման, բայց չէ, նա աշկարա տեսնում էր իր այրւած կաշին, իր չեչոտւած և այլանդակւած կերպն ու կերպարանքը։

Այսպէս դարդ անելով՝ մեր Բաջիկը ճանապարհ ընկաւ դէպի ուրիշ երկիր, որ գուցէ կարողանայ մի նոր արհեստ սովորել և իր այրւած կաշին առողջացնել։ Շատ գնաց թէ քիչ, Աստուած գիտէ, վերջը հասաւ մի ծովեզրեայ քաղաք։ Այդ քաղաքումը նա

լսեց, որ ծովումը մի կղզու վրայ մի երևելի բժիշկ է կենում և նա ամեն ցաւի դեղ գիտէ, ամեն ցաւ բժշկում է։ Նա շաբաթը երկու անգամ դուրս է գալիս իր նաւակով և ամեն հիւանդի ասում է, թէ ինչով պիտի բժշկւի. շատ անգամ դեղերն էլ ինքն է տալիս և ոչինչ չի առնում ոչ դեղի և ոչ բժշկութեան համար։

Այս լուրը շատ ուրախացրեց Բաջիկին։ Միւս օրը բժշկի դուրս գալու օրն էր։ Բաջիկը գնաց ծովափ և միւս հիւանդների հետ կանգնեց։ Անթիւ հիւանդներ կային ոչ միայն մօտիկ տեղերից, այլև շատ հեռաւոր երկրներից։ Շատերը մերձիմահ ընկած էին մահիճների մէջ, նրանց բերել էին պատգարակներով։ Բժիշկը դուրս եկաւ ափը և ամենից առաջ դժւար հիւանդների մօտ գնաց, նրանց ամենքին էլ դեղ տալով, իսկոյն ոտքի կանգնեցրեց և մի քանի խորհուրդ տալով ճանապարհ գցեց. պատգարակով բերածները վերադարձան իրանց ոտքով։ Յետոյ մօտեցաւ աւելի թեթև հիւանդներին և որին դեղ տըւաւ, որին խորհուրդ. ամենից վերջը մօտեցաւ Բաջիկին և ասաց.—Դու կըգաս ինձ հետ, քեզ ինձ մօտ կըբժշկեմ։ Այս խօսքն այնպէս քաղցրութեամբ և մտերմաբար ասաց, որ կարծես նրա մօտիկ բարեկամը և ծանօթը լինէր։ Բաջիկը բժշկի հետ նստեց նրա նաւակի մէջ և թիավարելով՝ գնացին բժշկի բնակարանը։

Բժշկի կղզին մի փոքր կղզի էր, և բացի իրանից ոչ ոք չէր կենում այնտեղ։ Նա էլ ունէր Ուխայի նման լաւ տուն ու տեղ, լաւ այգի, բայց բոլորն էլ հասարակ, բնական, ինչպէս սովորաբար լինում են աշխարհի լաւ տներն ու այգիները. միայն աւելի գեղեցիկ, աւելի ճաշակով էր շինւած։ Նրա պարտիզի մէջ ամեն տեսակ խոտ ու ծաղիկ կար. այդ բոյսերը աճում, ծաղկում էին և անուշահոտութեամբ լցնում ամբողջ պարտէզը։ Նրանք ամենքն էլ պէտքական էին, ամեն մինը մի քանի ցաւի դեղ էր։ Նրա տունը զարդարած էր գեղեցիկ կահ-կարասիքով։ Մի մեծ սենեակ գրքերով էր լիքը. մի քանիսը՝ հազար ու մէկ տեսակ բաներով։ Այդտեղ կային զանազան հանքեր, չորցրած բոյսեր, հեղուկ և չորցրած դեղեր։

Բժիշկն սկսեց Բաջիկին հարց ու փորձ անել, և երբ որ իմացաւ նրա գլխի անցքը, ասաց.—Ուրեմն դու կըմնաս ինձ մօտ, ես քեզ այն բաները կըսովորեցնեմ, ինչ որ վայել է մարդուն գիտենալ. քո առաջւան սովորածդ մի անբնական և ցնորական բան է եղել, և ցնորքի պէս էլ ցնդել է օդի մէջ։ Ես քեզ կըսովորեցնեմ բժշկութիւն, բայց առաջ քեզ կըբժշկեմ, որ դու հաւատաս իմ դեղերի զօրութեանը։ Այս ասելուց յետոյ Բաջիկին մերկացրեց և մի տեսակ իւղ քսեց նրա բոլոր մարմնին և երեսին։ Միւս օրը մեր Բաջիկն այնպէս էր, ինչպէս մօրից նոր

ծնած. նա ոչ միայն բոլորովին լաւացաւ, առողջացաւ, այլ և աւելի թարմացաւ, գեղեցկացաւ, քան թէ առաջ էր։

Բժիշկը, որքան որ նշանաւոր բժիշկ էր, մի այնքան էլ շնորհալի դաստիարակ էր։ Ինչ որ ուրիշը մի տարումը հազիւ կարող էր սովորեցնել, նա մի քանի օրումն էր սովորեցնում։ Բաջիկն էլ լաւ աշակերտ էր, և նրա ուշիմութիւնն էր, որ գրաւում էր բժշկին, եթէ ոչ՝ նա ի զուր տեղը իր անցաւ գլուխը ցաւի մէջ չէր գցիլ։ Տեսաւ որ մի շատ շնորհալի տղայ է Բաջիկը, ուզեց մի յիշատակ թողնել իրանից յետոյ, որ իր տեղը բռնող մէկը լինի։ Քիչ ժամանակից յետոյ մեր Բաջիկը դարձաւ բժշկի քաջ օգնականը, և ամեն անգամ, երբ բժիշկը դուրս էր գալիս ցամաք՝ հիւանդներին բժշկելու, Բաջիկին էլ հետն էր տանում, որ տեսնի, թէ ո՛ր տեսակ հիւանդին ինչ տեսակ դեղով է բժըշկում։ Դժւար հիւանդներին բերում էին կղզին և իրանց մօտ էին բժշկում։ Դրանք այնպիսի հիւանդներ էին լինում, որոնց պէտք էր լինում վիրահատութիւն։ Պատահում էր, որ շատերի փորը կտրում էին, ներսի վէրքերը մաքրում, վրան դեղ ածում, փորը նորմէկանց կարում, առողջացնում։ Այսպէս անցաւ մի ժամանակ, շատն ու քիչը Աստւած գիտէ, և Բաջիկը շատ բան սովորեց, բայց որքան շատ սովորեց, այնքան շատացաւ սովորելու փափագը և նրան այնպէս էր թւում, թէ դեռ ոչինչ չըգիտէ, որովհետև սկսեց իմանալ, թէ ինչքան բաներ կան գիտենալու, որ ինքը դեռ չըգիտէ։

Բժիշկը որքան որ բարի մարդ էր և ամեն բան սովորեցնում էր Բաջիկին, բայց Բաջիկը կասկածում էր միշտ, թէ նա էլի շատ բան պիտի գիտենայ, բայց իրան չի յայտնում. ճշմարիտ որ բժիշկը շատ բան ծածկում էր նրանից և հէնց իր անձը, իր կեանքը, իր ով լինելը նրանից ծածկած էր պահում, ոչ ոք չըգիտէր նրա ով լինելը։ Նրա մի քանի սենեակները միշտ կողպւած էին, և Բաջիկը չըգիտէր ինչ կան նրանցում և ինչու է ծածկած պահում։ Բաջիկը իր տարակոյսները չէր յայտնում վարպետին, բայց ինքն էլ չէր բաւականանում իր սովորածով, միշտ փորձեր էր անում և շատ բժշկական գիւտեր էլ արաւ, որոնց մասին հաշիւ չէր տալիս իր վարպետին։ Վարժապետի ու աշակերտի այս անյարմար յարաբերութիւնը վերջ ստացաւ հետևեալ դէպքով։

Մէկ անգամ մի հիւանդ բերին իրանց հետ կղզի։ Բժիշկն այդ հիւանդին տարաւ մի ջոկ տուն, դուռը ներսից կողպեց, որ Բաջիկը ներս չըգնայ։ Սրանով արդէն երևացրեց, որ շատ բան ծածկում է Բաջիկից։ Բաջիկն այս տեսնելով, շատ նեղացաւ, բայց և ուզեց տեսնել, թէ ինչ է անում հիւանդին։ Թաքուն բարձրացաւ տանիքի վրայ, նայեց լուսամուտից և տեսաւ որ

հիւանդի գլխի սկաւառակը վերցրել է, ուղեղի վրայ մի ինչ որ բղոճ կայ, ուզում է մաշով վերցնել, բայց բղոճը չանգերը մեկնում է ուղեղի փառի վրայ, բժիշկը յետ է քաշում մաշան։ Յետ քաշելու պատճառն այն էր, որ բժիշկն ուզում էր բղոճն այնպէս վերցնել, որ նա իր չանգերով ուղեղի փառը չըպատռէ։ Բաջիկը երբ որ տեսաւ, թէ շատ է չարչարւում բժիշկը, և ճնար չունի անվնաս վերցնելու բղոճը, էլ չըդիմացաւ և բղաւեց տան հերթիկից.

—Մաշան տաքացրու, վարպետ, մաշան տաքացրու...

Այս որ լսեց բժիշկը, ունելին (մաշան) դէն գցեց և դուրս եկաւ։ Բաջիկն էլ տանիքից իջաւ և փախաւ, կարծելով, թէ վարպետը դուրս եկաւ որ բարկանայ վրան կամ ծեծէ։ Մի ժամու չափ թաք կացած մնաց Բաջիկը, յետոյ կրկին սրտապնդեց և բարձրացաւ տանիքի վրայ, որ տեսնէ, ինչ արաւ վարպետը։ Նայեց տեսաւ, որ վարպետը չըկայ, իսկ հիւանդը միևնոյն դրութեան մէջ թմրած ընկած է։ Այս որ տեսաւ, իջաւ տանիքից և ներս գնաց, մաշան տաքացրեց և բղոճի մէջքին դրաւ թէ չէ՝ բղոճը չանչերը ներս քաշեց, կուչ եկաւ, և Բաջիկը վեր առաւ դէն ձգեց։ Սկաւառակը դրաւ տեղը, դեղ քսեց, փաթաթեց, հոտ տըւաւ հիւանդի քթին, և նա իսկոյն փռշտաց, վեր կացաւ և ինքն իրան բոլորովին առողջ զգաց։

Հիւանդին բժշկելուց յետոյ՝ Բաջիկը գնաց իր վարպետին փնտրելու։ Շատ ման եկաւ, և ամբողջ կղզին տակն ու վրայ արաւ, բայց վարպետին չըգտաւ։ Յետ դառնալիս Բաջիկը տեսաւ մի արձանի վրայ գրած հետևեալ ոտանաւորը—

Մարդս ինչքան էլ լինի գիտնական,
Նրա ուղեղը մաղի է նման,
Մի չնչին բանից մաղը կըկտրի,
Եւ իմաստունը կըդառնայ անբան։

Այս ոտանաւորը կարդալուց յետոյ, Բաջիկը մտածեց, թէ չըլինի՞ իր վարպետը խելագարուել է և ինքն իրան ծովն է ձգել։ Եւ ով գիտէ, գուցէ հէնց այդպէս էլ էր։

6.

Բժշկի անյայտանալուց յետոյ Բաջիկն ընկաւ խոր տխրութեան մէջ։ Ի՞նչ չարաբախտ աշակերտ եմ ես, ասում էր ինքն իրան. առաջին վարպետս կրակն ընկաւ, սա էլ ընկաւ ջուրը. ով գիտէ ինչպէս կըլինի իմ էլ վախճանս։ Ես էլ մահկանացու եմ, ես էլ պէտք է մեռնիմ, բայց ինձանից յետոյ՝ էլ ո՞վ կիմանայ, թէ ո՞ր ցաւն ինչպէս էին բժշկում։ Եւ ինչ հարկ կայ թաքցնելու։ Գիտութիւն թաքցնելը լաւ բան չէ։ Արի ես աշակերտներ կըհաւաքեմ ամեն երկրից և ամենքին էլ բժշկութիւն կըսովորեցնեմ...

Ճշմարիտ որ՝ Բաջիկի ժամանակ ով որ մի օգտակար բան գիտէր, ուրիշին չէր յայտնում, չէր սովորեցնում։ Ամեն մի բան գիտցող հայր իր որդուն էր սովորեցնում իր գիտցածը, նրան էր յայտնում իր արհեստի գաղտնիքը և այն էլ այն ժամանակ, երբ որ մեռնելիս էր լինում։ Յանկարծ մեռնողներն ու ժառանգ չունեցողները իրանց գիտութիւնն էլ հետները տանում էին միւս աշխարհք...

Բաջիկը մնաց նոյն կղզու վրայ և շարունակեց իր վարպետի գործը։ Նա բաց արաւ կողպած սնտուկները և նրանցում գտաւ շատ բժշկարաններ և այն գրքերից սովորեց բոլոր այն բաները, ինչ որ չէր սովորեցրել նրան իր վարպետը։ Յետոյ իր մօտ ժողովեց ամեն կողմից շատ աշակերտներ և ամենքին էլ սովորեցրեց բժշկութեան արւեստը։ Նրա աշակերտներն էլ աշակերտներ ունեցան և այսպէսով բժշկութեան արւեստը տարածւեց ամեն տեղ։ Բաջիկի աշակերտները ամեն տեղ գովում էին իրանց վարպետին և ասում էին, որ նա կարող է մեռածներին էլ կենդանութիւն տալ, բայց այդ բանը չի անում, որովհետև Աստուծոյ հրամանին ընդդէմ է համարում։

Ճշմարիտ որ Բաջիկը գտել էր և մեռածին կենդանութիւն տալու դեղը, բայց երկար ժամանակ գործ չէր դնում։ Վերջը, ասած է՝ «Մեծ մարդիկների սխալն էլ մեծ կըլինի», նա սկսեց մի քանի փորձեր անել։ Դրա համար բարկացաւ Գաբրիէլ հրեշտակը և մտքումը դրաւ պատժել Բաջիկին։

Մէկ անգամ Բաջիկը ժողովեց իր աշակերտներից աւելի հմուտներին և ասեց նրանց.—Ես շատ եմ ծերացել, էլ առաջւան ուժը չունիմ։ Ուզում եմ վերանորոգւիլ, ջահիլանալ, բայց առանց ձեր օգնութեան կարող չեմ։ Ես մի դեղ կըխմեմ և կըթմրեմ կամ կըմեռնիմ. դուք կըկտրէք իմ փորս ու կուրծքս, այս ինչ դեղերով կըլւանաք բոլոր փորոտիքս ու թոքերս, կըվերցնէք և գլխիս սկաւառակը, ուղեղիս խորշերը կըմաքրէք այս ինչ դեղերով և կըսրսկէք այս ինչ դեղերը, յետոյ կըմիացնէք ամեն բան ինչպէս գիտէք։ Երբ ամեն բան կըվերջացնէք, ահա այս շիշի դեղը կածէք բերանս. սա մի կենարար հեղուկ է և իմ սեփական գիւտս է։ Երբ որ կըկատարէք ճշտութեամբ բոլոր իմ ասածներս, ես կըյայտնեմ ձեզ այս հեղուկի ձեռք բերելու հնարը։

Աշակերտները պատրաստակամութիւն յայտնեցին և պատրաստեցին իրանց վիրահատութեան սուր-սուր դանակները։ Բաջիկը մի դեղ խմեց, թմրեց, աշակերտները ճարտարութեամբ կատարեցին ամեն բան։ Մնաց վերջին կենարար հեղուկը, որ

պիտի ածէին բերանը: Գաբրիէլ հրեշտակը աներևութապէս կանգնած էր նրանց մօտ և նրանց արածը մի տեսակ օյինբազութիւն համարելով՝ ծիծաղում էր: Վերջին հեղուկը որ ուզեցին ածել Քաջիկի բերանը, հրեշտակը խփեց թևովը և շիշը վայր ընկաւ աշակերտի ձեռքիցը և բոլոր հեղուկը վայր թափւեց ցնդեց, մի կաթիլ միայն ընկաւ Քաջիկի բերանը: Այդ մի կաթիլը կէս շունչ և կէս կեանք տըւաւ Քաջիկին, և նա կանչեց—

—Քիչ էլ, քիչ էլ...

Ուզում էր ասել «էլի մի քանի կաթիլ կաթեցրէք», չիմանալով, թէ ինչ փորձանք է պատահել շիշի գլխին:

Այսպէս անա խեղճ Քաջիկը մինչև այսօր էլ կայ, ոչ մեռած է և ոչ կենդանի, և անդադար կանչում է—Քիչ էլ, քիչ էլ...

Այսպիսի մի փախճան է ունեցել և երևելի Լօխման հէքիմը: Նա էլ իր կեանքի վերջումը Քաջիկի նման մի փորձ է արել և մինչև այսօր էլ կանչում է բարակ ձայնով—Բիր ուզ... բիր ուզ: Բերանն այնքան բաց չի լինում, որ կարենայ ասել—**բիր ազ**, որ նշանակում է՝ մի քիչ, մի քիչ, այսինքն՝ մի քիչ մի քիչ էլ...

ԲԱՅԱԹԻՔ

Հրեշտակ ջան, քիչ էլ, քիչ էլ,
Խնդրում եմ քիչ էլ, քիչ էլ,
Կեանքիս թելը մի կտրիլ,
Թող ապրիմ քիչ էլ, քիչ էլ...
Ասում եմ՝ քիչ էլ, քիչ էլ,
Խնդրում եմ, քիչ էլ, քիչ էլ,
Քաջիկի օրն եմ ընկել,
Կանչում եմ՝ քիչ էլ, քիչ էլ...

Ղ. Աղայեանց

ԳԵՏԱԿ

Քիչ էլ լացիր, գետակ վճիտ, կարկաջիւն,
Անկեանք ձմրան ցուրտ կապանքը կրելով.
Քիչ էլ սպա... և ուր որ է՝ վառ գարուն
Քեզ կըժպտայ՝ քո լաց սուգին վերջ տալով:
Եւ ազատուած սառցէ ծանըր կապանքից,
Նորից, գետակ, կըթռչկոտես համարձակ,
Եւ կարկաջըդ՝ ազատ ելած քո կրծքից,
Խոր անտառում կըտայ քաղցր արձագանք:

Քեզ վերևից կըփայփայէ ժպտալով
Գարնան անամպ, պարզ երկինքը կապուտակ,
Եւ դիւթական, հրապուրիչ գոյներով
Քո ջրերում կըշողշողայ արեգակ:
Եւ վաղորդեան հով զեփիւռը գարնային
Մեղմ կըյուզէ մաքուր կուրծքդ կուսական.
Դալար ափիդ, պարզ ժպիտը երեսին՝
Քեզ ամօթխած կըողջունէ հեզ շուշան:
Քիչ էլ լացիր, գետակ վճիտ, կարկաջիւն,
Դաժան ձըմրան ցուրտ կապանքը կըրելով.
Քիչ էլ, քիչ էլ... և ուր որ է՝ վառ գարուն
Քեզ կըժպտայ՝ քո լաց-սուգին վերջ տալով...

Ալ. Ծատուրեան

ՅՕՊՕՊԻ ԾԱԳՈՒՄԸ

(Առասպել)

Վաղ ժամանակ մի հայ շէնում
Մի յարգևոր հարսն է լինում:
Նըրա բերնից՝ կեսուր-կեսրա
Չէին լըսել մի շունչ, մի բառ,
Չէին տեսել շուրթը մի օր...
Էսպէս խոնարհ ու յարգևոր:
Մի օր մենակ տանը նստած,
Իր ճոխ մազերն արձակ թափած,
Ազատ, անփոյթ սանրում, հիւսում,
Հետն էլ ձէնով երգ էր ասում:
«Աշխարհքը բանտ, մէջը անբախտ
Ես մի գերի անխնդում.
Սիրուն շորեր, ջահիլ օրեր
Ի՞նչ եմ անում էս բանտում:
Երնէ՜կ ծըտին, ճիւղքի միջին
Ծըլըլում է թըրթըռում,
Թռչում՝ սիրած ընկերն առած,
Ազա՜տ, կանաչ արտերում:
Ա՜խ, սև՛ ըլի, չըքւի, փըլի
Ծընւած օրը աղջկայ
Ցաւ ու խընդում փակւած սըրտում,
Ծիծաղ չըկայ, «ախ» չըկայ...»

Մին էլ յանկարծ բացւեց դուռը
Ու ներս մըտաւ ծեր կեսուրը․
—Հճ, պճ, պճ, պճ, կանչեց խեղճը,
Գետին, պատին, մըտնիմ մէջը…
—Յճպօպ դառնաս, անամօթ հարս։
—Մի տես, մի տես, թէ լըրբի պէս
Գըլուխը բաց, ազատ նըստած՝
Ո՞նց է կանչում, չի ամանչում…
Լեզուդ լալկի, մազըդ թաղքի,
Սանրը միջի, գըլխիդ կպչի։

Սաւ-չասաւ,
Մին էլ տեսաւ՝
Հարսն առաջին,
Սանրը գլխին,
Յօպօպ դառաւ,
Երդկից թըռաւ,
Ու վերացաւ,
Վե՛ր, հեռացաւ։

Էն էր ու էն,
Խեղճն էն օրէն
Հանդերն ընկած՝
Յօպօպ մընաց․
Միշտ էլ էն հին
Սանրը գըլխին,
Ձալե՛կ-մալե՛կ,
Լեզուն լալիկ,
Անխօս ու լուռ,
Մոլոր, տըխուր։

Բայց երբ յանկած
Միտն է գալիս,
Որ գըլխաբաց
Երդ ասելիս՝
Իր կեսուրը
Բացեց դուռը,
Վեր է թըռչում
Սըրտատըրոփ
Ու դեռ ճըչում․
Յճ-պճպ… Յճ-պճպ…՛

Յովհաննէս Թումանեան

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

(Հայկական առասպել)

Ա․

Արշալոյսը ոսկեզօծեց Մասիսի ձիւնապատ գագաթները։ Աշխարհն արթնացաւ հայր Արամազդի հետ։

Ազատ Մասիսը կեանք առաւ։ Արամազդն աչքերը բացաւ, նստեց իր քարեայ գահի վրայ, աչքը յածեց քարեայ քնարանի չորս կողմը։ Յաւերժական ծաղիկները շարեշար բարձրացրին իրանց չքնաղ գլուխները և ժպտացին ու ողջունեցին․ «Բարի լո՛յս, մեծ Արամազդ»։ Գեղամայ ծովակի ալիքները խնդալով, խոխոջելով, միմեանց հրելով՝ ծառացան, գլուխ իջեցրին արի Արամազդին ու գոչեցին․ «Քո՛ւնդ անոյշ, աստուածների հայր»։ Բացօթեայ թռչնակները հանեցին իրանց փոքրիկ նախշուն գլուխները թեւերի տակից, քնաթաթախ աչքների մէկը բաց, մէկը փակ, բաց արին փոքրիկ մաքուր կտուցներն ու գեղգեղեցին բիւրաւոր դայլայլիկներ․ «Բարի ճր, բարի տեսութի՛ւն, հա՛յր», ասացին ամենքը։

Աստուածների հայրը գւարթ դէմքով ողջունեց բովանդակ աշխարհին՝ շոյելով իր սպիտակափառ երկայն միրուքը, աւետեց ուրախ օր։ Փափուկ մամուռը, որ թաւիշի պէս բռնել էր գահը, աւելի եւս բարձրացաւ, խտացաւ, փափկացաւ․ կաթնորակ աղբիւրը, որ նազով, շնորհքով ծորում էր այրի աջ կողմից, նոր-նոր անուշիկ ձայներ հանեց․ նրա մաքուր ակունքից դուրս եկաւ մի յաւերժահարս ու, լցնելով խեցեղէն փոքրիկ դոյլը արշալոյսի կարմրացրած ջրով, մօտեցաւ Արամազդի սպասին։ Հայոց աշխարհի պաշտպանը լւացւեց, սրբւեց յաւերժահարսի մազերով ու նստեց։

Մինչ այս, մինչ այն, աղօթարանը բոցավառւեց։ Երկինք և երկիր բռնւեցին ծննդական ցաւերով։ Գեղամայ ծիրանի ծովն էլ տանջւում էր երկնքի և երկրի ցաւերով՝ նոյնպէս երկնում էր։ Սար ու ձոր, հովիտ ու անտառ պլշած նայում էին անհեղ ծննդականներին։ Բայց եր-

կար չէին նրանց ցաւերը։ Գեղամայ ծովի վրայ կա
մրիկ եղէգնիկն սկսեց ծխախառն բոց ծխել․ բոցի միջ
վազեց մի խարտեաշ պատանեկիկ։ Նրա մազերը հրեղ
էին, մօրուքը բոցավառ, երկու աչքը երկու արեգակ։
բարած աշխարհը լուսաւորւեց, տաքացաւ։ Վահագն
դա, հայր Արամազդի սիրելի որդեակը։ Նա գինավառ
խրոխտապանծ կտրեց անցաւ օդի տարածութիւնը, մա
հայրենական այրը։

Հայր ու որդի փաղաքշանքով գրկախառնւեցին։
աստւածների օրինակով Մասիսի լանջերում և ստոր
ներում որքան եղնիկներ ու տատրակներ կային, բեր
բերանի դրին, միմեանց համբուրեցին։

Բ.

Անմահների ընտանիքը հետզհետէ ժողովւեց գեղ
զարդ այրի մէջ։

Եկաւ Աստղիկ դիցուհին։ Անմահական շուշաններ
անթառամ վարդերը՝ շարեշար թագ կապած՝ նստած էլ
հրաշագեղ գլխի վրայ։ Հայոց աշխարհի լուսինն էր դ
ցուհին․ ամառնային լուսնի պէս նազելի, հեզահամբո
գեղեցիկ։ Նա մի գեղեցիկ եղնիկ էր հեծած և երկու յ
ւերժահարս, բամբիռները ձեռներին, երգում էին ն
առաջ աստւածային երգեր։ Եկաւ, գուրգուրալով փ
թաթւեց Արամազդ հօր և Վահագն ամուսնու վզով։

Ապա եկաւ ոսկեմայր Անահիտը։ Թէև նրան ոս
արձան էին կանգնեցրել Աշտիշատում, բայց նա ուն
պարզ, անպաճոյճ կերպարանք․ նման էր մի աշխատա
և ժրաջլուխ գեղջկուհու, որ աշխատելիս, քրտինք
վաստակ անտես է անում։ Իմաստութիւնը և գգաստ
թիւնը, որի հեղինակն էր դիցուհին, այն ժամանակնե
շրջում էին գծուծ հագուստների մէջ։ Այսպէս և աստ
ծուհին։ Բայց նրան որդիական յարգանքով գլուխ է
տալիս Մասիսի քաջերը և բոլոր անմահների սպասաւ
ները։

Միմեանց ետևից հասան Նանէ դիցուհին և Մի
աստւածը Բագայառինճ աւանից։ Ամենից յետոյ եկաւ

մանոր աստւածը, բերելով իր հետ հայ երկրագործի աշխատութեան պտուղներից պարգև անմահներին։ Այդ տարին երկրագործ թէ այգեպան շատ գոհ էին նրանից և նա ուրախ էր։ Նոր էին վերջացրել Նաւասարդի տօները, որ Հայոց աշխարհը յատկացրել էր իր առատաձեռն աստուծուն․ ուրախ-ուրախ տօնում էր, գոհ և երկրպագութիւն էր անում։ Այդպիսի պատիւ ունէր նա, որ երկիրը դառն քրտինքով հերկել էր տալիս և փշի ու մացառի տեղ ոսկի ցորեն էր բուսցնում։

Գ.

Տրտունջ բարձրացաւ անմահների շրջանում առ հայրն Արամազդ, տրտո՜ւնջ Արշակունի Արտաւազդ թագաւորի դէմ։ Քաջ և աշխարհաշէն հօր այդ չար զաւակը, ընդհանուր զայրոյթ էր պատճառել։

Այսպէս տրտնջաց Վահագն.

«Արտաշէս մեռաւ և դեռ գերեզմանի մէջ հանգիստ չառած, որդին նախանձելով նրան արած պատւին և համայնական սուգին, չարախօսեց անմահների վրայ, որոնց սիրելի էր թագաւորը․ դառնութեան լեղի թափելով ասեց, թէ հայրը բոլոր աշխարհն իր հետ տարաւ և այժմ ինչի՞ վրայ պիտի թագաւորէ ինքը։ Արտաշէսը պատանութին եկաւ ինձ մօտ, դառնապէս անիծում էր որդուն։ Յիշեցրեց՝ թէ ինչեր էր արել Արտաւազդը, քանի ինքը կենդանի էր։ Ի՞նչ կլինէր մանուկ Արտաշէսը, եթէ Սմբատ Բագրատունին չխնայէր նրան, փտարանգի լինելով նրա հետ Պարսից երկիրը։ Սմբատը պահեց, մեծացրեց նրան, մտցրեց Հայաստան, տարաւ նրան հօր գահի մօտ։ Բայց անարժան արքայորդին կամենում էր իրանց բարեբարին սպանել։ Բաւական չէր այդ, մեր Մուրացան ցեղին վերջին պատուհասը հասցրեց․ արքայապատիւ Արգաւանի ապարանքը կործանեց, պատճառ դառաւ նրա և նրա որդու մահւան։ Սակայն Արգաւանը Արտաշէսի սիրելին էր։ Արգաւանն էր, որ թողելով իր բարձն ու պատիւը Երւանդի մօտ, գնաց միացաւ մանուկ Արտաշէսի զօրքին, երբ սա գալիս էր Պարսկաստանից՝ վրէժ լուծելու և

իր գահն առնելու։ Բարերար էր Արգաւանը, փառաւոր. բայց Արտաւազդ նախանձեց և, ապերախտութիւնից կուրացած, կարճեց նրա կեանքը»։

Զօրաւոր էր ոսկեմայր Անահիտի տրտունջը.

—Երէկ, ասեց նա թախծալի ձայնով, ես տեսայ այն սուգն ու վայնասունը, որ ընկել էր Արտաշէս թագաւորի ընտանիքի մէջ։ Արտաւազդը քշել էր տալիս նրանց, ուղարկում էր հեռու աշխարհ, որպէս զի Արարատեան երկիրը իրան մնայ։ Արքայազուն մանուկները լալիս էին անպաշտպան. կանայք ամօթահար ծածկում էին իրանց դէմքերը խռնուած ամբոխի մէջ. վայրագ զինուորները քշում էին... Նրանց հեռացրին և Արտաւազդ հանգիստ նստեց իր սովորական մոլութիւնների մէջ։ Օրեր է անցկացնում մոլի թագաւորը. երկիրն անտէր է մնացել. մարդկանց դատը չեն լսում. հզօրն անզօրի ուսերին է նստում։ Դեռ պատանի էր Արտաւազդը, երբ սկսեց անպատիւ անել իր հարազատ մօրը, չարախօսելով նրա մասին։ Արգաւան Մուրացան Արտաշէսի աչքում վատաբանելու և նրա պատիւը խլելու համար, անպատկառ որդին խօսք բարձրացրեց Սաթենիկ տիկնոջ մասին, իբրև թէ Արգաւանին պատւում է իր ամուսնուց շատ։

Աստղիկ դիցուհին էլ իր գանգատն արաւ, ասելով որ Արտաւազդը սպանել է իր քրմապետին, որ նրա հարազատ եղբայրն էր, որպէս զի մենակ մնայ։ Խօսեցին և միւս աստուածները։ Ամենից յետոյ խօսեց առատաձեռն Ամանորը.

—Անմահների հրամանով Արտաշէսը մտաւ մահուան անկողինը։ Ես թագաւորի մօտն էի, երբ նա, տանջուած ու յուսակտուր, յիշեց Նաւասարդի տօները։ Գլուխը բարձրացրեց, անձկութեամբ աչքերը դէս ու դէն դարձրեց, թառանչ քաշեց։ «Ո՜վ, ասեց, կըտար ինձ ծխանի ծուխը և Նաւասարդի առաւօտը, եղնիկների ու եղջերուների արարշաւ վազելը. մենք փող էինք ածում և թմբուկ էին զարնում»։ Արտաւազդը լսում էր այդ խօսքերը, տրտնջում, որ հայրը չի մեռնում, որպէս զի ինքը թագաւորէ։ Աստուածների դէմ գանգատւում էր, որ այդքան սիրում

են նրան և քառասուն տարի նրա արած թագաւորութիւն բաւական չեն համարում։

Տիրեց լռութիւն։ Այրի աղբիւրը սկսեց իր բարակ ու անույշ կարկաչիւնը. հողմերը դադարեցին. աստուածները լուռ սպասում էին։

Հայր Արամազդը լսեց այս բոլորը, լսեց լուռ կերպով։ Յօնքերը կիտեց, աչքերից բարկութեան շանթեր հանեց։ Գաւազանը խփեց քարին և Մասիսի հիմունքները որոտացին։ Ապա ասեց բարկացած.

—Կարճւի՛ Արտաւազդի թագաւորութիւնը. անիծւի՛ նա և նրա պէս զաւակը։ Նա որսի գայ Մասիսի ստորոտները, Մասիսի քաջերը բռնեն, ձգեն նրան խոր վիհի մէջ. այնտեղ չըմեռնի նա, լոյս չտեսնի։ Շղթայակապ տանջւի, միշտ տապակւի լոյս աշխարհ տեսնելու տենչանքով։ Դժոխքից երկու շուն սպասաւորեն նրան, օր ու գիշեր լիզեն, կրծեն շղթաները. նա կարծէ, թէ իր շղթաները ահա կըկտրատւին, բայց դարբինները մուրճով ծեծեն իրանց սալերը, շղթաներն ամրապնդւին։ Յաւիտեան ազատութիւն չըտեսնի Արտաւազդը, իր ականջներով լսի դարբնոցների ձայնը, զայրանայ, բայց ի զո՜ւր...

Աստուածները այս հրամանը հասցրին իրանց քուրմերին։

Անցան դարեր։ Հայր Արամազդը իր փառաւոր ընտանիքի հետ հալածւեց Մասիսի այրից՝ Հայաստանից։ Ազատ Մասիսը, ձիւնով և սառնամանիքով շղթայուած, մնաց անբնակ, մենակ։ Միայն ալևոր արծիւը պտոյտներ էր անում նրա կողերով։

Մոռացւեցին հեթանոսական աստուածները... բայց Հայ դարբինը, ուշադիր մնալով պապենական խրատին, չըմոռացաւ իր գործը. ամեն կիրակի օր ձեռքն է առնում ծանր մուրճը, երկու-երեք անգամ ծեծում է սալը։ Արտաւազդի շղթաները հաստանում են, պնդանում...

Մո՜ւթ աշխարհումն է մնում հօրից անիծւած անառակ որդին...

ԼԷՕ

ԱՐՏԱՒԱԶԴ

Զարկեցէ՛ք, դարբիններ, կռանը սալին,
Զարկեցէ՛ք կռանը, շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան.
Զարկեցէ՛ք, դարբիններ, կռանը սալին։
Ահարկու ամպերը եկան ժողուեցան,
Ծեր Մասեաց ճակատին սև քող փաթթեցին.
Գոռում է փոթորիկ գազանի նման,
Հառաչում, սուլում է կատաղած քամին։
Զարկեցէ՛ք կռանը։—Խորունկ քարայրից
Ահա՛ չար հողմի հետ հասնում են ձայներ...
Ցոլացաւ փայլակը, արքայի աչքից
Դէպի վեր թռչում են բարկութեան կայծեր։
Կամի նա ելնել վրէժխնդիր հոգւով՝
Իր անվերջ տանջանքի թոյնը մահաբեր
Աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով.
Բայց ամուր են նըրա ծանր շղթաներ։
Մտերիմ գամփռներ կրծում են կապանք,
Կրծում են անդադար կապանքն արքայի...
Արտաւա՛զդ, վերջ չունի հոգուդ տառապանք,
Եւ դեռ շա՛տ հեռու է վախճանն աշխարհի։
Եւ անզօր չարութեան քո կուռ հարուածներ
Դեռ պիտի փշրուին մեր մուրճի տակին.
Կունենանք մենք դեռ ևս գեղեցիկ օրեր,
Դեռ հաշտ է երկինքը մեղսոտ աշխարհին։
Բայց եթէ՝ քարացած, մենք չենք լսելու
Բարբառը սուրբ սիրոյ, և վերածնութեան,
Նոր կեանքի աւազան մեզ չէ փրկելու,—
Արտաւա՛զդ, փշրուի թո՛ղ մեր կուռ կռան։
Մենք այլ ևս չենք զարկել երկաթի սալին.
Թո՛ղ կրծեն գամփռներդ ոտքիդ շղթաներ,
Արձակուին բազուկներդ. և դու աշխարհին
Դո՛ւրս արի բերելու կոտորած, աւեր...

Բայց ո՛չ, մենք փրկութեան դեռ հաւատում ենք·
Մեզ մի նոր երկնքից նոր լոյս կբացուի·
Եւ ահա ծիածանն արդէն տեսնում ենք
Մենք ազատ, լուսաւոր մի նոր վիճակի...
Զարկեցէ՛ք, դարբիններ, կռանը սալին,
Զարկեցէ՛ք կռանը, շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան·
Զարկեցէ՛ք, դարբիններ, կռանը սալին։

Յովհաննէս Յովհաննիսեան

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԲԱԺԻՆԸ

(Շիլլերից)

«Առէ՛ք աշխարհը, տիրեցէ՛ք նրան», լսեցաւ մի ազդ,
Որ բարձր երկնքից, մարդկային սեռին տուաւ Արամազդ·
«Ձեզ եմ պարգևում բոլոր աշխարհը, ձեր մէջ բաժնեցէ՛ք,
Բայց երբե՛ք մի նոր հաւասար՝ ժառանգ, իրար չզրկէ՛ք»...

Հէնց այս լսելն էր,—իսկոյն ամենքը դէս ու դէն ընկան,
Որ ամենից շուտ իրանց ցանկացած բաժինն ստանան։
Հողագործն իսկոյն դաշտ ու արօտներ իր ձեռքը ձգեց,
Որսորդն անտառում վայրենիների ետևից վազեց·

Վաճառականը լցրեց ապրանքով ամբար ու տներ,
Քուրմն աստուածների գինով լիք բաժակն առաւ իր ընկեր,
Երկրի իշխողը փակեց մուտքերը, որ չանցնի ճանպորդ,
Մինչև՝ օրէնքով՝ նա իր տարածից չտայ տասանորդ։

Երբ բաժանմունքը վերջացաւ իսպառ, մէկ էլ ո՛րտեղից՝
Բանաստեղծն եկաւ, եկաւ նա հեռո՜ւ, հեռո՜ւ աշխարհից—
Եւ տիրեց նրան—մեր բանաստեղծին—թախիծ սաստկագին,
Եւ տեսաւ՝ իրան զրկել են մարդիկ, չեն թողել բաժին։

«Աւա՛ղ թշուառիս, ես եմ մնացած միայն անբաժին,
«Բոլոր մարդկանց մէջ զրկուել է միայն քո հլու որդին»։
Այսպէս սրբելին մեծ Ապոլոնի սրտով վշտացած,
Գոչեց Զևսին՝ նրա աթոռի ոտքի տակն ընկած։

«Դու ինքդ չէ՞ր, որ կախարդական աշխարհներն ընկած,
Սաւառնում էիր քաղցր երազներում, հոգւով վերացած,

Էլ աստուածներին ի՞նչ ես մեղադրում, ինչի՞ ես լալիս.—
Ասաց Արամազդ,—դու ո՞րտեղ էիր աշխարհք բաժնելիս»։

—Քեզ հետ էի, Տէր,—բանաստեղծն ասաց,—քեզ հետ էի ես,
Աչքերս յառած՝ միշտ դիտում էի քո պայծառ երես,
Քո աշխարհների ներդաշնակութիւնն ականջս էր գրաւել,
Նրանց անսահման, անհուն լինելը ուշքըս վերացրել.
Հոգիս ու միտքըս յափշտակել էր քո լոյսն երկնային,
Դորա համար էլ, ների՛ր ինձ, կորցրի բաժինս երկրային»։

«Հիմա ի՞նչ անեմ,—ասաց Արամազդ,—էլ բաժին չըկայ,
Ես չունիմ այլ ևս ոչ ջուր, ոչ ցամաք այս երկրիս վըրայ.
Բայց եթէ կուզես երկնքումս ապրել ինձ հետ միատեղ,
Երկինքն ամեն ժամ բաց է քեզ համար, հրամեցէք այնտեղ»։

Ղ. Աղայեանց

ԱՆԲԱԺԻՆՆԵՐ

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չըտեսանք,
Վա՜խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չիմացանք։
Հարուստ մարդիկ կուտեն, կըխմեն
Աշխարհի ճոխ սեղանից,
Մենք աշխարհի խորթ զաւակն ենք,
Մեզ փայ չըկայ աշխարհից։
Խեղճ աղքատի հոգին դուրս գայ,
Քարից, հողից հաց քամէ,
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ, վայելէ։
Խեղճ աղքատը դառը դատի,
Դատարկ նստի... Է՜յ, աշխա՜րհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վրայ, քա՜ր-աշխարհ...

Աւետիս Իսահակեան

ԵՐԳԻՉՆԵՐ

(Լոնգֆէլլօից)

Երեք երգիչ շնորհեց երկինք մեր երկրին,
Որ վշտերի և հիացման տաղերով
Նորա այրեն ու բորբոքեն մեր հոգին,
Մեր սրտերը յուզեն խօսուն լարերով։
Մէկը մատղաշ պատանի էր սիրավառ,
Նա մտախոհ թափառում էր դաշտերում.
Նա երգում էր՝ սիրոյն ձօնած իր քնար,
Մեզ ցնորքի վառ եդեմն էր նկարում։
Միւսը առոյգ, հասուն այր մարդ, քաջի պէս,
Իր քա՜ջ երգերն ամբոխին էր նա երգում.
Շուկաներում միշտ բաց արած մեծ հանդէս,
Նա ամբոխին նոր կեանքի էր պատրաստում։
Իսկ երրորդը—ալևորած մի ծերուկ,
Ջերմ հաւատով սուրբ տաճարն էր յաճախում.
Այնտեղ, ուր միշտ ջերմ ծխում են խունկ, կնդրուկ,
Նա իր երգով մեր սրտերն էր սփոփում։
Եւ վէճ բացւեց—անվերջ մի վէճ մարդկանցում,
Թէ երեքից ո՞րն է, իրաւ, մեծ տաղանդ.
Վիճում էին—արդեօք նոցա երգերում
Չէ՞ զգացւում անհաւասար ոյժ ու խանդ...
—Օ՜, ո՛չ... Նորա երգիչներ են համազօր,
Երեքն էլ մեծ, հանճարաւոր ընտրեալներ,
Միայն ունին երեք ուրոյն ձիրք ու շնորհ—
Դիւթե՜լ, կրթե՜լ և սփոփե՜լ մեր սրտեր...

Ալէքսանդր Ծատուրեան

Ա Ղ Բ Ի Ւ Ր

Գաղթականների խումբը, թշնամուց փախչելով՝ մէկ ամայի տեղ հաստատեց իր բնակութիւնը։ Ժամանակը գարնանային էր. շուտ-շուտ տեղացող անձրեւների պատճառով գաղթականները ուշադրութիւն չըդարձրին այն հանգամանքի վրայ, որ նրանց բնակութեան մօտերքը ոչ գետ կար, ոչ աղբիւր։ Գաղթականներից մէկը, որ աւելի հեռատես էր, առաջինը ուշ դարձրեց այդ ձախողակ բանին եւ իր բռնած տեղի վրայ սկսեց ջրհոր փորել. Նրա միամիտ ընկերները, որովհետեւ ազատ ժամանակ ունէին, սրտանց օգնում էին նրան։ Հազիւ թէ բահը մի քանի անգամ գետնին զարկեցին, ո՜վ հրաշք, խցւած աղբիւրի ակը բացւեց եւ միջից սկսեց ջուրը առատօրէն բղխել։ Տէրը—նրա անունը Հագա էր—շատ ուրախացաւ. Նրա հետ միասին ուրախ էին նրա միամիտ ընկերները՝ Աստուծոյ այս անակնկալ ողորմութեանը, որ շնորհել էր նա իրենց դրացուն. նրանք վստահ էին, որ երկնքի անձրեւը տարին տասներկու ամիս նոյնից անպակաս պիտի լինի, բայց եթէ երբեմն ջրի պակասութիւն էլ լինէր, նրանք երկիւղ ունենալու չէին, որովհետեւ նրանց դրացին ունէր առատ աղբիւր, որի ջրից անշուշտ նա մասն պիտի հանէր կարօտեալներին, մանաւանդ որ նրանք այդպէս էին կարծում—այդքան ջուր նա երբէք չի կարողանալու սպառեցնել եւ նրա պէտքից միշտ պիտի աւելանար։ Թէեւ նրանց առողջ դատողութիւնը այդպէս էր կարծել տալիս նրանց, բայց Հագայի կարծիքը բոլորովին ուրիշ տեսակ էր։ Իսկ աղբիւրի ջուրը շարունակ վազում էր գնում։

Դաշտերը վարւեցին եւ ցանւեցին. անձրեւները շարունակ գալով եւ արեգակն էլ իր ջերմութիւնը տարածելով դաշտերի երեսին՝ սերմերը ծլեցին եւ բոյսերը կանաչեցին ու մի քանի ժամանակից ցորենի ցօղունները մէկ թիզ բարձրացան գետնից։ Եղանակը փոխւեց, առաւօտից մինչեւ երեկոյ անընդհատ պարզ էր երկինքը։ Արեւը աւելի էր սաստկացնում իր ջերմութիւնը. արեւելքից չոր քամիները

փչելով՝ սկսան դեղնացնել ցորենի բոյսը։ Աղբիւրի տէրը անհոգ էր. նա ջուրը տարաւ ջրեց իր արտը եւ նրա ցորենը առատով մնաց երաշտից։ Միւս գաղթականները՝ տեսնելով ջրի այդպիսի բարերար զօրութիւնը, նոյնպէս ուզում էին ջրել իրենց արտերը, բայց Հագան նրանց առջեւ պայման դրաւ, ասելով. «Եթէ ինձ օգնէք ջրաղաց շինելու, այն ժամանակ ո՛չ միայն կըտամ ձեզ ջուր, այլ եւ շինելիք ջրաղացս ամառւայ մէջ ձեր ցորենը կաղայ եւ ալիւր կանի»։

Գաղթականները տեսան, որ իրաւ է նրա ասածը, որ ջրաղաց պէտք է. ուստի ուրախ ուրախ սկսան ջրաղաց շինել, եւ նրանց աշխատանքի փոխարէն Հագան թոյլ տւաւ նրանց արտերը ջրելու։ Ամառւայ մէջն էր. հասան ցորենները։ Երբ գաղթականները արտերը հնձեցին, կալ տարան, կամնեցին ու ցորեն ստացան, եկան Հագային ասացին. «Տուր ջրաղացդ ցորեններս աղանք»։ Հագան ասաց. «Իմ բնակարանիս շուրջը շինեցէք քարէ ամուր պատ, այն ժամանակ ես կըթողնեմ ջրաղացիս մէջ ձեր ցորենը աղաք»։ Նրա տան չորս կողմը հաստ ու բարձր քարէ պատեր ու ամուր դռներ շինւեցին, եւ գաղթականները աղացին իրենց առաջին հունձի ցորենը։ Ձմեռը անցաւ. գարունը եկաւ, գաղթականները նորից վարուցանք արին։ Հագան նրանց ասաց. «Վարեցէք, ցանեցէք, հնձեցէք իմ արտերը, ապա թէ ո՛չ՝ չեմ տալ ձեզ ոչ արտերդ ջրելու ջուրս եւ ոչ ցորեններդ աղալու ջրաղացս»։ Գաղթականները միտք արին, եւ յօժարեցան նրա պահանջը կատարելու. վարեցին, ցանեցին եւ հնձեցին նրա արտերը, իսկ ինքը Հագան ոչ միայն անաշխատ էր, այլ եւ գլխների վրայ պտոյտ գալով՝ սաստիկ հրամաններ էր տալիս նրանց, առանց թագի թագաւոր էր նրանց վրայ։ Փոքր ինչ ժամանակ անցնելուց յետոյ ասաց Հագան. «Արտերիս վրայ աշխատելու համար ամառները աղբիւրիցս ջուր էք առնում, բայց ինչ վարձատրութիւն պիտի տաք ինձ տարւայ ուրիշ եղանակներին ջուրս առնելու համար։ Ահա ձեզ վրայ հարկ եմ դնում. ամեն մէկ կուժ ջրին այսքա՛ն բուռ (ափ) ցորեն պիտի հատուցանէք ինձ. ապա թէ ո՛չ՝ ջուր

չըկայ ձեզ»։ Եւ փորեց իր բակի մէջ ահագին պրգայ (ջրամբար) և աղբիւրի ջուրն այնտեղ վազեցրեց։

Գաղթականները անջուր մնացին։ Ջուրը մարդուս ամեն օր պէտք է խմելու, լուացւելու, կերակուր եփելու, ձի ու տաւար ջրելու. գիւղացիները ամեն օր իրենց պէտք ջրի համար տանում էին իրենց ցորենը և տալիս Հագային, լցնում էին նրա ամբարները և բերաններից հացը կտրում էին։ Քանի որ Հագայի տունը լիանում էր, նրա դրացիները աղքատանում էին, և որքան դրացիների վիճակը դառնանում էր, այնքան Հագան իրան երջանիկ էր համարում, որովհետև նա այն անգութ մարդկանցից էր, որոնց սրտի ուրախութիւնը բազմանում է ընկերների տխրութիւնից և թշւառութիւնից։

«Ո՛վ մարդ, ասում էին նրան դրացիները, Աստուած իր առատ աջովը օրհնել է. ո՛չ հացդ է պակաս, ո՛չ ջուրդ և ոչ մեր պատիւն ու ծառայութիւնը քեզանից։ Այդ անըսպառ ջուրը, որ ժողովում ես անյատակ պրգայիդ մէջ, դու երբէք չես կարողանալու սպառեցնել ոչ քո և ոչ գաւակներիդ պէտքի համար. ժամանակ-ժամանակ մեզ էլ տուր նրանից. մեր բերանները պապակեցին, մեր անասունները տանջւում են, մեր մարմինը կեղտի մէջ փտեց, մեր արտերը չորանում են, խնայիր մեզ, մեր կուշտ լինելովդ դու երբէք չես սովելու. ինչո՞ւ անգութ սրտով նայում ես մեր տանջանքներին։ Աղքատութիւնը մաշում է մեր կեանքը. մեղքացի՛ր»։

Հագան առանց շահի և տոկոսի ոչ մի կաթիլ ջուր չէր տալիս իր պրգայից և ո՛չ մի բուռ ցորեն իր ամբարից. իր շուրջը կեցած մարդոց լացը, տրտասունքը և լալագին աղաչանքը ուրախացնում էին նրան, բայց նրա սրտի գութը չէին շարժում։ Նա այն ժամանակ միայն ուրախ էր և ցնծում, երբ քովի կեցողները լացի ու սըգի մէջ էին։

Մէկ գարնան գիշեր, երբ Հագայի պըգան արդէն բերնէ-բերան լիքն էր և նրա բակի երկաթապատ դռները ամուր փակւած ու նիգերը վրաները դրւած էին,— յանկարծ գոռացին ամպերը, փայլատակեց երկինքը և

սկսեց յորդ անձրև թափել, կարծես թէ կաթիլների տեղ երկնքից փարչեր էին պարպում։ Ջուրն սկսեց պրգայից վայր թափել, և որովհետև քարէ ամուր պատերը և փակած դռները ջրի ճամփան փակել էին, ջուրն սկսեց բակի մէջ բարձրանալ։ Անձրևը քանի գնում էր՝ սաստկանում էր և բակի ջուրը աւելի ու աւելի էր բարձրանում։ Տան դռները չըդիմացան ջրի ուժին, ծըխնիները թռան տախտակներից, դռները բացւեցին և ջուրը այնտեղ էլ հասաւ նրանց։ Բայց անձրևը չէր դադարել, աղբիւրը առատ-առատ բղխում էր գետնից, ջուրը մտաւ ամբարները, թրջեց ցորենը, ապականեց ամեն կերակուրների պաշար և խեղդեց տարաւ Հագայի անասունները։ Անձրևը անընդհատ գալիս էր, ամպերը կատաղի գոռում էին. ջուրը հասաւ Հագայի կրունկին, ծնկին, ապա և վզին... «Ա՛խ, միտք արաւ Հագան, ինչո՞ւ մէկ հրաշքով չի բացւում բակիս դուռը, որ ջուրը ազատ ելք գտնէր և ինձ խեղդելուց ազատէր...» Բայց բակի դուռը ինքը իր ձեռքով ամուր փակել էր և կողպել, որ դրացիները գաղտուկ ներս չըմտնէին և պապակած բերանները թաց չանէին։ Ջուրը ճանպայ գըտաւ, աւելի բարձրացաւ և խեղդեց նրան, որ խեղճերից մէկ կաթիլ էր խնայում։ Այսպէս պատժւեց ագահ Հագան։

Ռ. Պատկանեան

ՈՍԿԵՋՕԾ ԼԱՊՏԵՐ

(Մորից Հարտմանից)

Շատ հին ժամանակ Պրագա քաղաքում
Մի ծեր իմաստուն ռաբբի էր ապրում.
Նա սուրբ գրքերին անձնատուր եղած՝
Նրանց իմաստը պատմում էր մարդկանց։
Աղքա՛տ էր ռաբբին... Բայց խաղաղ, անվիշտ
Իր աղքատ ապրուստն օրհնում էր նա միշտ.
Եւ թէպէտ յաճախ քաղցած էր մընում—
Քաղցը ռաբբիին ցընորք էր թւում...

Ռաբբին կին ունէր, բայց ուրիշ խելքի.
Սա ջերմ սիրահար փառաշուք կեանքի,
Տանջւում էր դարդից, լալիս դառնագին,
Երբ հին հագուստ էր տեսնում իր հագին.
Զզւում էր անշուք սեղան նստելուց,
Դժգոհ էր կեանքից, դժգոհ էր մարդուց.
Իսկ մի օր (այդ օրը տօն էր հրրէից)
Կինը քիչ մնաց, թէ փախչէր տանից...

Աչքերը փայլուն արցունքով լցւած,
Նա դարձաւ մարդուն սաստիկ զայրացած.
—«Ո՛չ գինի ունինք այսօր մենք ճաշին,
Կարօտ մնացի ես ձըկան համին.
Ձորներս մաշւած, նորն էլ չենք կարում,
Մի՞թէ սա կեանք է, որ մենք ենք վարում...»
Ռաբբին բան չասաց... Եւ լուռ իր կնկան
Նա տարաւ դէպի ճրագավառ սեղան։

Այնտեղ աստղի պէս սփռելով շողեր,
Վառւում էր մի մեծ, ոսկեզօծ լապտեր.
Ռաբբին շըշընջաց կամացուկ ձայնով.
«Մի՛ տրտմիլ, ո՛վ կին, եղի՛ր անվրդով,
Չէ՞ որ այս լապտերն ոսկուց է ձուլած.
Ի՞նչ էլ ուզենամ—լաւ իմացած կաց—
Իսկոյն կըստանամ—և այն լիուլի,
Թէ՛ շոր, թէ՛ զարդեր, թէ՛ ձուկ, թէ՛ գինի...

—«Օ՜, մի՞թէ...—գոչեց կինն ուրախացած
Եւ կարծես իրան երազում զգաց.
Եւ ահա նրանք սեղան նստելով,
Ըղքատիկ ճաշը կերան անխըռով.
Եւ այդ րոպէից, երբ դարձեալ մի բան,
Մի հոգս էր նեղում ռաբբիի կնկան,
Նա իսկոյն դէպի սեղանն էր վազում,
Նայում լապտերին ու գանձ երազում...

Այդպէս ամիսներ, շաբաթներ, օրեր
Գըրգւելով կրծքում վարդաշող յոյսեր,

Ռաբբիի կինը հրճւում էր, ժըպտում,
Որ այնքա՜ն գանձ կայ փայլուն լապտերում...
Եւ նա ժպտալով աւանդեց հոգին...
Ռաբբին տեսնելով կընոջ անշունչ դին,
Ասեց. «Օ՜, նոր եմ քեզնից իմանում,
Ո՛վ կին, թէ հաւատն ինչե՜ր է անում»։

Ալ. Ծատուրեան

ՍՊԻՏԱԿ ԶԳԵՍՏ

(Հունգարական աւանդութիւն)

Անարգ, խայտառակ մահւան մատնըւած,
Հունգարացի կոմսը շղթայակապ էր,
Նա օգնել ուզեց իր խեղճ հայրենեաց,
Հպարտութիւնը խիստ վրդովւած էր։
Նա ստրուկներին՝ հոգով ատըրացած,
Վաղուց անողորմ թշնամի դարձաւ
Եւ միշտ կռւելով ընդդէմ այդ չարեաց,
Կոմսը կախւելու դատապարտւեցաւ.
Հազիւ նա եղաւ քսան տարեկան,
Բայց պիտի մեռնէր։ Մահը չարիք չէ,
Այլ սփոփիչ է վշտին հոգեկան։
Բայց մեռնել անարգ, խայտառակ մահով,
Կախաղան ելած, ծաղր ու ծանակով,
Դառնալ կերակուր սև ագռաւների՝
Ահա՛ նախատինք, չարիք սոսկալի։
Առաւօտը նա մօրը գըրկելով,
Ասում էր տրտում. «Մա՛յր, միա՛ս բարով,
Ահաւասիկ ես միակ որդիդ եմ,
Մատաղ հասակիս դատապարտւած եմ
Կարճօրեայ կեանքիցս ես անջատւելուն.
Անհետ պիտ կորչին ինձ հետ իմ անուն
Եւ իմ պատիւս։ Խնդրում է որդիդ,
Մա՛յր, որ դու փրկես քո խեղճ զաւակիդ։

Ո՛չ, պատերազմի փոթորիկներում
Ահ չեմ զգացել, ոչ ծըխում, հըրում.
Բայց վաղուան օրը՝ ելած կախաղան,
Ես պիտի դողամ տերեւի նըման»։
Մայրը ասում էր, մխիթարելով՝
«Դէհ, չըվախենաս, սիրած զաւակս,
Ես պալատ կերթամ և, աղերսելով,
Արցունք կըթափեմ. ես իմ լացովը
Արքայի սիրտը, գութը կըշարժեմ.
Եւ առաւօտը, երբ կըտանեն քեզ
Դէպի կախաղան, պատշգամբի վըրան
Թէ սև զգեստով կանգնած լինիմ ես,
Գիտցի՛ր, զաւակս, անխուսափելի
Քեզ մահ կըլինի։
Ոչ ապաքէն դու, հըսկայի նըման,
Յառաջ պիտ գընաս մահիդ յանդիման.
Հօ քո արիւնը հունգարական է։
Իսկ թէ սպիտակ շոր վըրաս տեսնես,
Գիտցիր, որ մայրդ իր արցունքներով
Զաւակի կեանքը դարձրեց ապահով։
Թո՛ղ դահիճներից դու բռնած լինիս,
Բայց երբէք, որդեակ, չըդողաս—սարսիս»։
Կոմսը այն օրը հանգիստ է լինում,
Եւ ամբողջ գիշեր մնում է քնած.
Իր երազներում նա մօրն է տեսնում,
Պատշգամբի վրայ՝ սպիտակ շոր հագած։
Գուժկան զանգակի ձայնն է ղօղանջում.
Վազում են մարդիկ... հանդարտ քայլերով
Եւ շրջապատուած պահապաններով,
Շղթայած կոմսը առաջ է գընում։
Քանի՜-քանի աչք պատուհաններից
Արցունք են թափում կոմսի յետևից,
Ինչքա՜ն ձըգում են կանացի ձեռքեր
Վերջին բարևի նորան ծաղիկներ.
Բայց կոմսը ոչինչ բան չի նկատում,
Դէպի հրապարակ է միայն նայում.

Այնտեղ պատշգամբում մայրըն է կանգնած,
Հանգիստ, անվըրդով, սպիտակ շոր հագած.
Ո՜հ, կոմսի սիրտը թընդաց խիստ ուժգին.
Դէպի հրապարակ համարձակ քայլով
Ընթացաւ կոմսը, ժպիտն երեսին,
Անտըրտում վերև բարձրացաւ փութով,
Զըւարթ և ուրախ դահճի մօտ գընաց
Ու մինչև անգամ կախուելիս ժըպտաց։
Բայց ինչո՞ւ մայրը սպիտակ էր հագել։
Ո՜հ, խաբէութի՛ւն։ Այսպէս կարող էր
Սուտ խօսիլ մի մայր, սոսկ բեկւած ահից,
Որ իր զաւակը չըսարսէ մահից։

Յովհաննէս Յովհաննիսեան

ԵՐԱԽՏԱԳԷՏ ԱՌԻՒԾԸ

Հռոմի ծերակոյտի անդամներից մէկի ստրուկը՝ Անդրօկլէս անունով՝ մի շատ ծանր յանցանք գործեց, և պատժից ազատուելու համար փախաւ Աֆրիկա։ Այդ երկրում սարսափելի շոգ է լինում։ Անդրօկլէս անտանելի շոգերից պատսպարուեց մի քարանձաւում, բայց ինչպէս սփրթնեց նա, երբ նոյն քարանձաւը մի քանի վայրկեանից յետ մտաւ մի ահռելի առիւծ։ Առիւծը իր բնակարանում հիւր տեսնելով, անմիջապէս մօտեցաւ նրան, և իր ահագին թաթը դրաւ նրա գոգում։

Անդրօկլէսը հասկացաւ ա-

ռիւծի ցանկութիւնը, զննեց նրա թաթը և նրանից մի երկայն սուր փուշ դուրս հանեց։ Առիւծը թեթևութիւն զգալով, ի նշան շնորհակալութեան՝ սկսեց լիզել Անդրօկլէսին։ Այդ վայրկեանից սկսւեց մտերմութիւն առիւծի և Անդրօկլէսի մէջ։ Առիւծն ամենայն օր իր հետ բերում էր որսի մի մասը Անդրօկլէսին կերակրելու, շարունակ լիզում էր նրա ձեռքերն ու ոտները, փայփայում նրան։ Անցնում է ամբողջ երեք ամիս։ Անդրօկլէսը երեք ամիս մարդու երես չըտեսնելով, վերջ ի վերջոյ սաստիկ ձանձրանում է քարանձաւից և վճռում է լոյս աշխարհ դուրս գալ։ Բայց նրա այնտեղից դուրս գալն ու բռնւիլը մէկ է լինում։ Անդրօկլէսին կապկապած ուղարկում են Հռոմ իր պատիժը կրելու։ Առիւծը նոյնպէս բռնւում է և ուղարկւում Հռոմ։

Այն ժամանակները Հռոմում սովորութիւն կար, որ մահւան դատապարտւած ստրուկներին, մերկ և մի փայտ ձեռին, կռւացնում էին քաղցած գազանների հետ մի հրապարակի մէջ։ Իսկ ժողովուրդը՝ նստած մի բարձր տեղ՝ մտիկ էր տալիս այդ սարսափելի կռւին, ինչտեղ քաղցած գազանը պատառոտում էր խեղճ ստրուկներին և նրանցով կշտանում։ Ահա մի այդպիսի պատիժ էլ ընկաւ խեղճ Անդրօկլին։ Սա պէտք է կռւէր քաղցած առիւծի հետ։ Շուտով գազանների վանդակի դուռը բաց եղաւ և մի սարսափելի ու ահագին տեսքով առիւծ դուրս թռաւ նրա միջից։ Սա սկսեց օդ ծծել և նայել չորս կողմը և յետոյ սկսեց ահալի ձայնով գոռալ։ Այնպէս էր գոռում, որ բոլոր ժողովուրդը դողում էր նրա ձայնից։ Առիւծը կամաց կամաց, ծանր քայլերով և ամպի պէս գոռալով մօտեցաւ Անդրօկլին։ Անդրօկլը այնպէս վախեցաւ, որ ձեռքի փայտն էլ վայր ձգեց ահիցը։ Խեղճը սպիտակ կտաւի գոյն էր բռնել։ Բայց առիւծը մօտ գալով Անդրօկլին, պառկեց նրա ոտների մօտ, առանց մի վնաս պատճառելու նրան։

Յետոյ բաց արին միւս վանդակները և դուս թողեցին միւս գազանները։ Բոլոր գազաններն իրանց որսը ճարեցին և սկսեցին ուտել ստրուկներին պատառոտելով. իսկ Անդրօկլը դեռ մնացել էր անվնաս կանգնած առիւծի

մօտ։ Այդ ժամանակ գազաններից մէկը, որ չէր ճարել իր համար որս, մօտեցաւ Անդրօկլին՝ նրան պատառոտելու, բայց առիւծը վրայ թռչելով՝ այդ գազանին պատառոտեց և նրանով կշտացաւ։

Ամենքը զարմացած նայում էին Անդրօկլին և առիւծին։ Սրանք իրանց օրումը երբէք չէին տեսել այդպիսի բան։ Բայց Անդրօկլը ճանաչել էր արդէն իր ընկեր առիւծին. նա պատմեց, թէ ինչպէս ինքը այրի մէջ պատահել էր նրան։ Անդրօկլին ներեցին և առիւծն իրան ընծայեցին։ Նա սկսեց Հռոմի փողոցներով ման ածել առիւծը։ Ժողովուրդը նրանց սիրալիր ողջունում էր և առիւծի առաջը ծաղիկներ էր թափում։

ՎԻՇԱՊԻ ՅԱՂԹՈՂԸ

(Դիւցազնական աշխարհից)

1.

Ինչ որ ձեզ ասելու եմ, սիրելի մանուկներ, պատահել է մեզանից՝ ով գիտէ՝ քանի՜-քանի հազար տարի առաջ…

Եւ առհասարակ բոլոր հրաշալիքները, որ ես ձեզ պատմե եմ, պատահել են շատ վաղւանից, ո՛վ գիտէ՝ ո՛ր ժամանակ։

Ելլադայի հրաշալի աշխարհում, մի բարձր սարի տակից՝ բղխում էր մի պատւական աղբիւր։ Որքա՜ն տարի է անցկացել, բայց այն աղբիւրը դեռ մինչև այսօր էլ կայ, և բղխում է մի և նոյն տեղից։

Օրը մթնելու վրայ էր, արեգակն անց էր կենում սարերի քամակը և իր վերջին ճառագայթներով ոսկեզօծում էր մեր ասած լեռնային աղբիւրը, երբ մի երիտասարդ՝ Բելլերօֆոն անունով՝ մօտեցաւ նրան։ Երիտասարդը մի սանձ ունէր ձեռքին, մի սանձ, անգին գոհարներ հագցրած և ոսկենըկար փորագրութիւններով զարդարած։ Նա աղբիւրի մօտ տեսաւ մի ծերունի, նրա մօտ միջահասակ մի գիւղացի, մի սիրուն գանգուրիկ տղայ և մի մատաղահաս աղջիկ, որ ուզում էր ջուր տանել աղբիւրից։ Երիտասարդը կանգ առաւ այդտեղ և խմելու ջուր ուզեց աղջկանից։

—Ի՜նչ հրաշալի ջուր է, ասաց նա, երբ որ խմեց և յետ դարձրեց փարչը։ Աղջիկը փարչը ողողեց և նորից լցրեց։

—Սիրուն աղջիկ,—ասաց երիտասարդը,—խնդրեմ ասես ինձ, այս աղբիւրը չունի՞ արդեօք մի որ և իցէ անուն։

—Ինչպէ՞ս չէ, պատասխանեց ջահել աղջիկը,—սա Պիրենայի աղբիւրն է։ Ես իմ տատիկիցս լսել եմ, որ Պիրենան մի սիրուն կնիկ է եղել։ Երբ որ նրա որդուն նետով սպանել է որսորդուհի Անահիտը, Պիրենան այնքան է լաց եղել, այնքան ողբացել, արտասուել, որ ինքը տեղնուտեղը աղբիւր է կտրուել (դառել է աղբիւր)։ Սրանից է, որ այսքան պաղ, այսքան անուշ է այս աղբիւրը. սրա կաթիլները որդեսէր մօր սրտի կաթիլներն են։

—Ես չէի կարծիլ երբէք, որ այսպիսի մի պայծառ, ուրախ և խաղացկուն աղբիւրը արտասուքի՜ց լինէր առած իր ծագումը։ Սրա կարկաչիւնն այնքան ուրախ է և այնքան գեղեցիկ է փայլում արևի տակ։ Ուրեմն սա ի՞նքն է Պիրենայի աղբիւրը։ Սիրուն աղջիկ, շատ շնորհակալ եմ քո տուած տեղեկութեանդ համար։ Ես շատ հեռու տեղից եմ գալիս, և հէնց սրան էի ման գալիս, սրան էի փնտրում։

Միջահասակ գիւղացին, որ իր կովը բերել էր ջուր տալու աղբիւրից, աչքերը յառած՝ բոլոր ժամանակ Բելլերոֆոնին էր մտիկ տալիս և նրա ձեռքում եղած հրաշալի սանձին։

—Բարեկամ, երևում է, որ ձեր կողմերում լեռնային աղբիւրները մի չըտեսնուած զարմանալի բաներ են,—ասեց նա երիտասարդին և դրա համար է, որ ալարըդ չի եկել, և այնքան հեռու տեղից եկել ես Պիրենայի աղբիւրը գտնելու։ Եւ այդ ի՞նչ է պատահել քեզ, բարեկամ, երևի ձիդ կորցրել ես։ Սանձն ինչի՞ համար ես բռնել ձեռիդ։ Եւ ի՜նչ սիրուն զուքս ունի, ի՜նչ սիրուն զարդարանք։ Երկու շարք, բոլորն էլ անգին քարեր։ Եթէ ձիդ էլ սանձիդ նման է եղել, դրան յարմար, ուրեմն շատ ափսոս, եթէ կորել է։

—Իմ ձին չի կորել, ասաց երիտասարդը ժպտելով։ Ես դեռ նոր պիտի գտնեմ այն երևելի ձին, որ իմաստուն մարդկանց ասելով՝ պէտք է որ ձեր կողմերումը լինի անպատճառ։ Բարեկամ, դու ինքդ լսած չըկա՞ս, Պեգաս անունով թևաւոր ձին հիմա էլ գալի՞ս է արդեօք Պիրենայի աղբիւրից ջուր խմելու, ինչպէս որ սովորութիւն է ունեցել այն հին ժամանակները, երբ դեռ կենդանի է եղել քո պապուպապը։

Գիւղացին ուրախ-ուրախ խնդմնդաց երիտասարդի այս ասածի վրայ։

Իսկ դուք, իմ սիրելի ընթերցողներ, լսած կա՞ք արդեօք, որ Պեգաս անունով մի ձի է եղել, հրեղէն ձի, ձիւնի նման սպիտակ, արծաթափայլ շքեղ թևերով։ Նա կենալիս է եղել Հելիկոն

սարի գագաթի վրայ։ Պեգասը եղել է շատ կայտառ և աշխոյժ, արագընթաց և թեթևագնաց. նա բարձրանալիս է եղել մինչև ամպերը և այնքան բարձր, ուր արծիւն անգամ չէր կարող հասնիլ։ Նրա նման էլի մի ուրիշ ձի չի եղել բոլոր աշխարհքում, նա չի ունեցել իրա հատը։ Ոչ ոք նրան չի թամքած, ոչ ոք չի սանձած, չի պայտած, և նա շատ և շատ տարիներ ապրել է Հելիկոն սարի գագաթին մեն-մենակ, ազատ և բախտաւոր։

Եւ ինչքա՜ն ուրախ էր անցկացնում իր կեանքը թևաւոր ձին։ Գիշերները քնում էր անուշ քնով, բաց-բացահար, ուր և իցէ մի լեռնային հարթ տափարակի վրայ, իսկ ցերեկուայ մեծ մասն անց էր կացնում այս և այն կողմ թռչելով։ Պեգասը ոչ մի բանով նման էլ չէր մեր ձիանոց։ Մէկ էլ էիր տեսնում, անց էր կենում ահա մարդկանց գլխներով, թռած բա՜րձր, բարձր, և արևը պսպղում էր նրա արծաթափայլ թևերի վրայ. այնպէս էր թւում, թէ նա մի մեծ սպիտակ թռչուն է, մոլորուել է ամպերի մէջ, և ճանապարհ է փնտրում դէպի պարզ և կապուտակ երկինքը։ Մարդ չէր ուզում աչքերը հեռացնել, երբ մտիկ էր տալիս և տեսնում, թէ ինչպէս է սուզւում նա բամբակի նման բարդ-բարդ կուտակուած սպիտակ ամպերի մէջ։ Սուզւում է, անհետանում մի երկու րոպէ, մէկ էլ տեսնում ես, որ ահա թռչում է նա ամպերի միւս կողմով։ Հաւաքւում, կուտակւում են մրրկալից ամպեր, երկինքը սևանում է, գետնքի վրայ, շաչում-շառաչում է փոթորիկը, բայց Պեգասն իսկի այնումը չի գցում—նրա հոգը չէ բնաւ,—սլանում, սաւառնում է մի ամպից դէպի միւսը և հրաշէկ թէժ փայլակը լուսաւորում էր նրան ծիրանեգոյն լուսով։ Թաքչում էր փայլակը, և Պեգասն անհետանում էր թանձր խաւարի մէջ։ Մարդկանց մէջ այսպիսի մի հաւատ կար, որ իբրև թէ՝ ով որ արժանանար մէկ անգամ նայելու այս հրաշալի տեսարանին, այնուհետև ամբողջ օրերով նա կըզգար մի առանձին հոգեկան ուրախ տրամադրութիւն։

Ամառը՝ լաւ եղանակ ունեցող օրերին, Պեգասն իջնում էր ամուր գետնի վրայ և իր արծաթափայլ թևերը ծալելով՝ չափ ընկնում դէս ու դէն և սար ու ձոր ոտքի տակ տալիս, և այդ անում էր հէնց այնպէս, միայն իր զւարճութեան համար։ Ամենից շատ տեսել են նրան Պիրենայի աղբիւրի մօտ, ուր նա անյագութեամբ խմելիս է եղել նոյն աղբիւրի ջրից կամ թաւալելիս փափուկ կանաչկոտի վրայ։ Պատահել է և այնպէս, որ Պեգասը գզլում է եղել մի քանի ծաղիկ սպիտակ կամ կարմիր առուոյտից, նրանցից էլ ընտրելով աւելի քաղցրերը։ (Նա շատ զգոյշ է եղել արածելիս, շատ չմահաւան, ամեն խոտից չէր արածիլ)։

Մեզանից մի քանի հարիւր տարի առաջ, շատ մարդիկ էին գնում Պիրենայի աղբիւրի մօտ և շատ անգամ, այն յուսով,

որ ինչպէս լինի՝ գոնէ մէկ անգամ նայեն Պեգասի վրայ։ Իսկ գնացողներն աւելի ջահիլ մարդիկ էին լինում՝ երիտասարդ և պատանի, որոնք ամենից շատ էին հաւատում, թէ կան թևաւոր և հրեղէն ձիաներ։ Բայց վերջին ժամանակները Պեգասը շատ հազիւ էր երևում։ Աղբիւրից մի կէս ժամու չափ հեռու եղած գիւղացիք իրանց օրումը տեսած չէին Պեգասին և ոչ էլ հաւատում էին, թէ կարող է լինել այնպիսի մի հրաշալի ձի։ Այժմ Բելլերոֆոնի հետ խօսող գիւղացին նոյն չըհաւատացողներից էր, սրա համար էլ շատ խնդաց, երբ ասացին, որ իբր թէ Պեգասը գալիս է և Պիրենայի աղբիւրից ջուր խմում։

—Ա՛յ քեզ բա՜ն... ինչե՜ր են հնարել,—բացականչեց նա, տափակ քիթը վեր ցըցելով և սկսեց քրքըջալ։—Պեգա՜ս ձի, և այն էլ թևաւո՜ր... Բարեկամ, երևում է որ խելքդ կորցրել ես,—ասեց նա երիտասարդին։—Թևերն ի՞նչ հարկաւոր են ձիուն։ Մի՞թէ թևաւոր ձին աւելի լաւ բեռը կըկրէ։ Ճշմարիտ, էլ պայտելու ծախս չէր ունենալ նրա տէրը, բայց ի՜նչ օգուտ դրանից։ Կերթար գոմը, որ Պեգասին դուրս քաշէր այնտեղից, բայց մէկ էլ տեսար քո Պեգասըդ... Թռա՜ւ... այսօր ես կորել, թէ էգուց։ Դէ հիմա ետևիցն ընկիր, տեսնեմ որտեղ պիտի գտնես նրան։ Մի օր կըհեծնի, որ երթայ ջաղաց, մէկ էլ տեսար քո Պեգասըդ թը՛ռ-թը՛ռ-թը՛ռ... դէպի երկինք, և այնտեղից իր տէրոջը—թը՛րրրմխկ... դէպի գետինք, այն էլ գլխիվայր, կլորպո՜ւզ, գըլխկոնձի... Չէ՛, չէ՛, եղբայր, մի հաւատար, պեգաս-մեգաս չըկայ։ Աշխարհքումս թռչնաձի չի եղել և չի էլ լինիլ երբէք։

—Ես պատճառ ունիմ բոլորովին ուրիշ կերպ մտածելու,—ասե՛ց երիտասարդը առանց վրդովվելու, և իսկոյն երեսը դարձրեց դէպի ծերունին, որ կանգնած էր նրանից երկու քայլաչափ հեռու և իր գաւազանի վրայ յենւած, ուշադրութեամբ ականջ էր դնում նրանց ասածներին. նա մինչև անգամ դրա համար գլուխը փոքր ինչ թեքել էր դէպի նրանց և ձեռքով ականջի մի կողմը ծածկել վահանի պէս, որ լսել կարողանայ։ Վերջին քանի տարին ծերունին համարեա թէ խլացել էր բոլորովին։

—Դու ի՞նչ կասես, պա՛պի, հարցրեց երիտասարդը. դու քո ջահիլ ժամանակդ անպատճառ տեսած կըլինիս թևաւոր ձին և շատ անգամ։

—Ես, հոգի ջան, յիշողութիւնս կորցրել եմ բոլորովին։ Միտս է գալիս միայն, որ ջահիլ ժամանակս հաւատում էի, որ կայ թևաւոր ձի. այսպէս հաւատում էին և նոյն ժամանակի բոլոր ջահիլները։ Իսկ հիմա միտք էլ չի մնացել գլխումս, էլ ի՞նչ ժամանակն է թևաւոր ձիու մասին մտածելը։ Եթէ պատահած էլ լինիմ Պեգասին, այդ հիմա՝ ով գիտէ՝ քանի՜ ժամանակ-ւան բան կըլինի, վաղո՜ւց, շատ վաղուց կըլինիմ մոռացած։

Իսկ հիմա, ուղիղն ասեմ, դժւարանում եմ հաւատալ, որ երբ և իցէ տեսած էլ լինիմ Պեգասին։ Միտս է գալիս երազի նման, որ երեխայ ժամանակս, ահա այստեղ՝ աղբիւրի մօտ՝ մէկ անգամ՝ կարծես թէ՝ նկատեցի ձիու հետք։ Կարելի է թէ Պեգասի հետքը լինէր, կամ՝ ով գիտէ՝ գուցէ նրա հետքը չէր, այլ մի ուրիշ ձիու։

—Իսկ դո՞ւ, սիրուն աղջիկ,—հարցրեց ջահիլ աղջկանը, որ կուժն ուսին՝ կանգնած էր նրանց կշտին և ականջ էր դնում ծերունու ասածներին,—դու անպատճառ տեսած կըլինիս Պեգասին, ես հաւատացած եմ։ Դու տեսած կըլինիս, այո՛, դու այդպիսի սուր-սուր աչքեր ունիս։

—Ինձ այնպէս է թւում, որ մէկ անգամ տեսած պիտի լինիմ նրան, պատասխանեց ջահիլ աղջիկը՝ ժպտալով և կարմրելով։—Ուղիղ իմ գլխի վրայով՝ բա՜րձր, շատ բարձր՝ օդի մէջ՝ սաւառնում էր մի բան. թէ ասեմ Պեգասն էր,—Պեգասը չէր, թէ ասեմ մի ահագին սպիտակ թռչուն էր,—թռչուն չէր։ Բայց մի ուրիշ անգամ էլի եկայ այստեղ՝ կուժն ուսիս, և յանկարծ ձիու վրնջիւն (խրխինջ) լսեցի։ Սիրտս այնպէս ուրախացաւ, որ չեմ կարող ասել. այնպէս մի քա՜ղցր, այնպէս մի աշխոյժ վրնջիւն էր։ Բայց այսու ամենայնիւ ես վախեցայ, չըգիտեմ ինչից, և վազեցի տուն՝ առանց ջրի, դատարկ կժով։

—Ափսո՜ս, ասաց պատանին և երեսը դարձրեց դէպի փոքրիկ տղան, որ նրա մօտ կանգնած էր և նայում էր Բելլերոֆոնի վրայ վարդանման բերանը լայն բաց արած։ Մանուկները միշտ այսպէս են նայում անծանօթ մարդկանց վրայ։

—Դու ի՞նչ կասես, սիրուն մանկիկ, հարցրեց Բելլերոֆոնը ծիծաղելով և շոյելով երեխայի գանգրիկ մազերը։ Դու շատ անգամ տեսած կըլինիս այստեղ թևաւոր ձին։

—Շա՜տ անգամ, այո՛, վստահաբար պատասխանեց մանուկը։ —Հեռու չէ, հէնց երէկ ես տեսայ նրան. առաջ էլ ես միշտ տեսել եմ նրան։

—Ապրե՛ս, ապրե՛ս, բացագանչեց երիտասարդը, մօտ քաշելով երեխային։ Հապա՜, եղբայր, մէկ լաւ մտաբերիր և պատմիր ինձ, տեսնեմ ի՞նչպէս ես տեսել։

—Ահա թէ ինչպէս։ Մէկ անգամ գալիս եմ այստեղ, աղբիւրը, որ նաւիկներ ձգեմ ջրի վրայ և նախշուն քարեր հաւաքեմ։ Շատ անգամ աչքս ջրի մէջն եմ գցում, մտիկ տալիս և տեսնում եմ նրանում, որ երկնքովը թռչում է մէկ սպիտակ թևաւոր ձի։ Սիրտս միշտ ուզում է, որ նա իջնի երկրի վրայ, ինձ վերցնի հետը և տանէ լուսնի վրայ դնէ։ Բայց հէնց որ վեր եմ կենում կանգնում, որ ուղղակի ձիուն մտիկ տամ, մէկ էլ տեսնում եմ՝ էլ չի երևում, անհետանում է իսկոյն ամպերի մէջ.

—Բելլերոֆոնն աւելի երեխային հաւատաց, որ թևաւոր Պեգասի պատկերը տեսել էր աղբիւրի մէջ անդրադարձած, մէկ էլ մատաղահաս աղջկանը, որ լսել էր Պեգասի քաղցր ձայնով վրնջալը, ու մէկ էլ ծերունուն, բայց ոչ գիւղացի ռամկին, որ միայն լծկան ու բեռնակիր ձիաների գոյութեանն էր հաւատում և ոչ թևաւոր:

2.

Բելլերոֆոնը մի քանի օր շարունակ թափառեց Պիրենայի աղբիւրի մօտերքում և թևաւոր ձիու բուսունը պահեց: Նայում էր փոփոխակի՝ երբեմն երկինքին և երբեմն ջրին, միշտ յուսալով, որ մէկնումէկում կըտեսնի կամ իրան Պեգասին և կամ նրա անդրադարձութիւնը: Թանգագին սանձը միշտ պատրաստ ունէր ձեռին: Մօտակայ գիւղացիք շատ անգամ իրանց տաւարը ջուր տալու բերելիս, ծիծաղում էին երիտասարդի վրայ և երբեմն նաև խրատ էին տալիս, ասելով. «Այդ ի՞նչ դատարկաշրջիկ տղայ ես դու. զուր ժամանակ ես անց կացնում միայն. աւելի լաւ չէ՞ր լինիլ, որ մի որ և իցէ գործով զբաղուէիր: Ձի՞ ես ուզում առնել, —առ, մենք ծախու ձիան շատ ունինք»: Երբ որ Բելլերոֆոնը չէր ընդունում նրանց ասածը, նրանք առաջարկում էին, որ ծախէր իր սանձը:

Գիւղի մանուկները նրան խենթ էին համարում, ծաղրում էին, փէշերքից ձգձգում էին, ծամածռութիւններ էին անում, զանազան փուտ անուններ էին կպցնում: Եւ երեխայքը իրանց ծաղրածութիւնը մինչև այնտեղը հասցրին, որ նրանցից մէկը, հինգ տարեկան մի լակոտ, ինքն իրան Պեգաս ձևացրեց, սկսեց լօք-լօք անել, ոստոստալ, վազվզել, այս ու այն կողմը չափ ընկնիլ, տրտինգ տալ, ծառս կենալ, կռները թափահարելով, իբր թէ իր կռներն էլ Պեգասի թևերն են. իսկ նրանից մեծ մի ուրիշ երեխայ մի փունջ խոտ ձեռին՝ մօտենում էր նրան և անասնական բացագանչութիւններով մօտ կանչում Պեգասին: Բոլոր այս ծաղրածութիւնները սարքել էին, որ տնազ անեն Բելլերոֆոնին և ջղայնացնեն նրան: Բայց նրանց հակառակ՝ այն զանգուրիկ և կապտաչ մանուկը, որին առաջին օրը հանդիպեց Բելլերոֆոնը, չէր հետևում նրանց օրինակին և շատ սիրում էր Բելլերոֆոնին: Նա լուռ ու մունջ նստում էր Բելլերոֆոնի մօտ, լուռ ու մունջ նայում ջրի վրայ անընդհատ, սրտանց հաւատալով, որ իր տեսածն ուղիղ էր: Երեխայի այս հաստատուն հաւատը մեծ յոյս էր տալիս և խրախուսում Բելլերոֆոնին:

Բայց դուք, սիրելի ընթերցողներս, գուցէ կըհարցնէք ինձ,

թէ Բելլերոֆոնն ինչո՞ւ համար էր ման գալիս Պեգասին, ի՞նչ առիթ ունէր, ո՞վ էր ստիպում նրան: Այս մի երկար պատմութիւն է, և ես կաշխատեմ պատմել ձեզ՝ մինչև Պեգասի երևալը:

Եթէ Բելլերոֆոնի բոլոր արկածները պատմեմ նրա մանկութիւնից սկսած, այդ շատ երկար կըլինի և ձեզ ձանձրալի. մեր քաջ երիտասարդի կեանքից ես կըպատմեմ ձեզ միայն մի կտոր:

Աշխարհի այն մասը, ուր որ կենում ենք մենք հայերս, ասւում է Ասիա: Ահա այս Ասիայումը մի զարհուրելի հրէշ է լոյս ընկնում, որ ասւում է Քիմեռ կամ Խիմերա, որ հայերէն չէ. մենք կասենք Օշափ, որ լաւ կըլինի շատ անգամ: Բայց այս հրէշը մի ուրիշ տեսակ վիշապ է լինում: Թէ որքան վնաս է հասցնում մարդկանց Օշափը, անկարելի է հաշուել: Նա մի այնպիսի զարհուրելի բան է լինում, որ նրա նման մի ուրիշ բան չենք կարող ցոյց տալ աշխարհիս երեսին: Նա լինում է օձի մարմնով, մեծ վիշապ-օձի նման. ունենում է երեք գլուխ՝ մէկն առիւծի, մէկն այծի և մէկն էլ օձի: Նրա բաց ըռէխներից՝ երեքից էլ, կրակ էր դուրս թափւում: Այս հրէշը թէպէտ թևեր չունէր, բայց վազում էր առիւծի նման, ցատկում էր այծի նման և սողում օձի նման, ուրեմն նա շարժւում էր միանգամից երեք կենդանու արագութեամբ, որ ասել է՝ աւելի արագ քան թէ թռչունը:

Թէ որքան վնաս էր հասցնում այս զզւելի արարածը, ինչպէս ասացի, անկարելի է հաշուել: Երեք ըռէխներից (երախ, գազանի բերան) կրակ էր դուրս շնչում և բոլոր անտառները խանձխնձում, արտերն այրում, ամբողջ գիւղեր՝ իրանց պարտէզներով, այգիներով, ամբարներով, կալ ու մարագով, մի խօսքով՝ բոլոր ունեցած չունեցածով մոխիր էր դարձնում: Բաց էր անում երեք երախները և սկսում էր լափել ամեն պատահած բան —մարդ, կենդանի և թռչուն: Լափելուց յետոյ շնթկում, մրափում էր, մինչև ողջ-ողջ կուլ տուած ողորմելի կենդանիքը կըմարսուէին նրա թոնրանման ստամոքսում:

Մէկ անգամ պատահմամբ, Բելլերոֆոնը գալիս է Ասիա, այնտեղի թագաւորին տեսնելու հէնց այն ժամանակ, երբ որ ամբողջ թագաւորութիւնը հեծում, տնքում էր Օշափի հասցրած վնասներից: Թագաւորի անունը Յօբաթ էր, նա կենում էր Հայաստանի սահմանակից մի երկրում, որ ասւում էր Լիկիա: Բելլերոֆոնը մի շատ անվեհեր երիտասարդ էր: Նա իրան անձը նուիրել էր քաջագործութեան և այնպիսի մեծագործութիւնների, որոնցով կարող էր օգուտ բերել մարդկութեանը, ծառայել մարդկանց բախտաւորութեանը: Այն ժամանակներում երիտասարդ մարդկանց միակ փառք ու պատիւն այն էր, որ մասնակցեն բոլոր պատերազմներին. կամ կռուելով հայրենիքի թշնամու-

դէմ, կամ չար դեւերի, զարհուրելի վիշապների և վերջապէս վայրենի գազանների դէմ, այս էլ այն ժամանակ, երբ ուրիշ աւելի չար բան չէր լինում, որի դէմ կռուէին։ Յօբաթ թագաւորը, երբ որ Բելլերոֆոնին տեսաւ, իսկոյն նշմարեց, որ իր հիւրն անվեհեր երիտասարդ է, սրա համար էլ ահա առաջարկեց նրան, որ գտնի չար Օշափին և սպանէ։ Ոչ ոք սիրտ չէր անում ձեռք զարկել այսպիսի մի քաջագործութեան, որովհետև ամենքն էլ նրա միայն անունը լսելով՝ դողում էին, իսկ եթէ չսպանէին, նա պիտի ամբողջ Լիկիան անշէն անապատ դարձնէր։ Բելլերոֆոնը թագաւորի այս առաջարկութեան վրայ մի րոպէ մտածութեան մէջ ընկաւ, բայց յետոյ վճռական խօսք տուաւ թագաւորին, որ կերթայ կըսպանէ Օշափին, իսկ եթէ չըկարողանայ, իր ոսկորները նրա մօտ կըթողնէ։

Լսած լինելով, որ երեքգլխեան Օշափը շատ արագաշարժ և ճարպիկ է, այն մտքին եկաւ, որ անկարելի է այնպիսի մի հրէշի դէմ հետևակ կռուել, այլ դրա համար հարկաւոր է անպատճառ ձեռք բերել ամենաքաջ և ամենազօրեղ ձի։ Իսկ այս կողմանէ աշխարհքիս երեսին ի՞նչ ձի կարող էր հաւասարուիլ Պեգասին, որ համ ոտքեր ունէր, համ թևեր, և օդի մէջ աւելի ևս արագ էր թռչում, քան վազում երկրի երեսին։ Ինչ ասել կուզի, որ Բելլերոֆոնին ամեն կողմից սկսեցին հաւատացնել, որ թևաւոր ձի չըկայ ոչ մի ասպաստանում (իլխի), և ինչ որ պատմում են թևաւոր ձիների մասին, բոլորն էլ դատարկ զառանցանքներ են միայն և անմիտ ցնորքներ։

Բայց այսուամենայնիւ, Բելլերոֆոնը հաստատ հաւատացած էր, որ Պեգասը հնարովի բան չէ, այլ նա կայ և ուշ թէ վաղ՝ իր ձեռքը կընկնի, որ նրան կըսանձէ ինքը և վրան հեծնելով՝ կերթայ Օշափի հետ կռուելու։

Այս նպատակով ահա նա Լիկիայից ճանապարհ ընկաւ դէպի Ելլադա, ուր և ձեռք բերաւ իր ձեռքում եղած թանգագին սանձը։ Այդ սանձը աղօթած էր, այսինքն՝ կախարդած, դիւթած էր։ Հէնց որ կարողանար սանձի ոսկեզօծ երեսանը Պեգասի բերանը դնել, թևաւոր ձին իսկոյն կըհպատակէր նրան, նա էլ իսկոյն կըթռչէր, վրան կընստէր և ուր կողմ ուզենար, այն կողմը կըքշէր։

Ինչ ասել կուզի, որ քաջ երիտասարդը յուզուած սրտով սպասում ու մնում էր, թէ երբ կըգայ արդեօք Պեգասը Պիրենայի աղբիւրից ջուր խմելու։ Նա շատ էր մտատանջւում, թէ մի գուցէ Յօբաթ թագաւորը կարծիք տանէր, թէ նա փախել է՝ վախենալով Օշափից։ Շատ էր վշտանում, երբ որ միտն էր բերում, թէ ինչ ահագին վնասներ է հասցնում Լիկիային այն զազրելի հրէշը, իսկ ինքը՝ փոխանակ նրա դէմ պատերազմելու,

ձեռները ծոցին՝ նստել է սառնորակ աղբիւրի մօտ և նայում է թէ ինչպէս է բղխում նա սարից, թափւում աւազանի մէջ և նրա յատակը ծածկում պսպղուն աւազի շերտով։ Լսում էր, որ իբր թէ վերջին տարիներում Պեգասը շատ հազիւ էր երևում աղբիւրի մօտ, և թէ նա իր բոլոր կեանքում միայն մէկ անգամ է երևացել մարդու։ Նա շատ էր վախենում, թէ մի գուցէ այստեղ սպասելով, մինչև ծերութեան հասնի, երբ այլ ևս չի կարողանալ տիրել թևաւոր ձիուն, եթէ գալու էլ լինի, որովհետև ծերութիւնից իր ձեռքերն արդէն թուլացած կըլինին, քաջութիւնը կորած։ Աւա՜ղ, ինչքա՜ն տխուր ու դատարկ է անցնում ժամանակը, երբ որ եռանդալից երիտասարդութիւնը ձգտում է հասնել իր ցանկացած նպատակին, երևակայած փառք ու պատուին։ Համբերել և սպասել՝ շա՜տ ծանր է։ Մեր կեանքը՝ առանց այս էլ՝ այնքան կարճ է, բայց էլի ինչքա՜ն դատարկ տարիներ ենք անց կացնում՝ համբերութեան շնորհիւ։

Բելլերոֆոնի բախտից՝ աղբիւրի մօտ եղած գանգուրիկ երեխան այնպէս կպել էր նրան, որ մօտից չէր հեռանում համարեա։ Ամեն բարիլուսի Բելլերոֆոնին ասում էր ուրախ-ուրախ.—Ի՞նչ ես կարծում, Բելլերոֆոն, շա՜տ կարելի է որ այսօր մենք Պեգասին տեսնենք։

Եւ այս «շատ կարելին» էր, որ յուսադրում էր Բելլերոֆոնին։ Եթէ այս յոյսը չըլինէր, նա վաղուց արդէն վերադարձած կըլինէր Լիկիա և գնացած կռուելու Օշափի հետ առանց թևաւոր ձիու օգնութեան։ Ինչ ասել կուզի, որ հրէշը մի շնչով կայրէր և մի քանի վայրկեանի մէջ կըլափէր նրան։ (Ես ձեզ, սիրելի մանուկներ, խորհուրդ չեմ տալ կռուելու այս երկրային զզուելի արարածների հետ, մինչև ձեռք բերած չըլինիք օդեղէն թևաւոր ձին)։

3.

Մի առաւօտ գանգուրիկ տղան սկսեց Պեգասի մասին խօսել սովորականից դուրս անկասկած սրտով։

—Չըգիտեմ ինչու, ասաց նա, ուրախութիւնից թռչկոտելով, ինձ այնպէս է թւում, որ այսօր մենք անպատճառ կըտեսնենք Պեգասին։

Ամբողջ օրը մանուկը չըհեռացաւ Բելլերոֆոնից։ Նրանք միասին հաց կերան, միասին խմեցին աղբիւրից և կէսօրից յետոյ նստեցին շւաքումը, Ջրի ափին։ Բելլերոֆոնը մի ձեռքն իր փոքրիկ բարեկամի ուսին դրած, իսկ միւսն իր ծնօտին տակ դիմհար տըւած, խորասուզուած, մտքով՝ մոլոր էր տալիս ջրի

վրայ կռացած պառաւած ծառերին և նրանց ճղների վրայ կախուած վայրենի խաղողի ճութերին։ Իսկ մանուկն անընդհատ նայում էր միայն ջրին, բայց շատ տխուր, որովհետև շատ էր ցաւում, որ Բելլերոֆոնի երկար օրերով սպասելն ապարդիւն է անցնում։ Սրա վրայ շատ տխրեց երեխան, մինչև այն աստիճան, որ յանկարծ լաց եղաւ հեկեկալով։ Նրա արտասուքներից մի քանի կաթիլ գլորւելով՝ ընկան աղբիւրի մէջ և խառնւեցին Պիրենայի արտասուքների հետ։

Յանկարծ Բելլերոֆոնն զգաց, որ երեխայի թաթիկը, որ իր ձեռքումն էր, դողդողում է։ Եւ տղան շշնջաց յանկարծ մանկական շշնջիւնով․

—Բելլերոֆոն, Բելլերոֆոն, նայիր, մէկ նայիր ջրի վրայ…

Բելլերոֆոնը կռացաւ շուտով, նայեց հայելու նման պարզ աղբիւրի երեսին, և այնպէս թւաց, որ տեսնում է նրանում պատկերացած մի ահագին, սպիտակ թռչնի կերպարանք․ թռչում է բա՛րձր, շատ բարձր, և արեգակը շողշողում է նրա արծաթափայլ թևերի վրայ։

—Ի՜նչ հրաշալի, ի՜նչ փառաւոր թռչուն է, բացականչեց նա։ Եւ ինչքա՜ն մեծ է։ Եւ գիտե՞ս, շատ էլ հեռու չըպէտք է լինի․ սաւառնում է ամպերից ցած։

—Ես դողում եմ ամբողջ մարմնովս, ասեց մանուկը։ Վախում եմ դէպի վեր նայել։ Ինչքա՜ն հրաշալի է։ Բայց ես չեմ վստահանում ուղղակի նրա վրայ նայել, այլ միայն ջրի միջնորդութեամբ։ Մի՞թէ չես տեսնում, Բելլերոֆոն, որ սա թռչուն չէ, այլ թևաւոր ձի, նոյն ինքը Պեգասն է սա։

Բելլերոֆոնի սիրտը գնաց։ Նայեց դէպի վեր, բայց չըկարողացաւ լաւ նշմարել, թէ նա ինչ էր արդեօք, թռչո՞ւն թէ ձի, որովհետև նա անյայտացաւ բարդ-բարդ կուտակւած սպիտակ ամպերի մէջ։ Մի րոպէ չանցած՝ թռչողի կերպարանքը կրկին երևաց․ նա իջնում էր դէպի գետին ալեծածան թուիչքով։ Այս միջոցին Բելլերոֆոնն իսկոյն ճանկը ձգեց տղային և նրա հետ թաք կացաւ խիտ թփերի մէջ, որոնցով՝ պարսպի պէս՝ շրջապատուած էր աղբիւրը։ Նա Պեգասից երկիւղ չունէր, այլ վախենում էր միայն, թէ մի գուցէ իրանց նկատէ և սկսէ աւելի բարձրանալ դէպի վեր։ Այս թռչողը ճշմարիտ որ թևաւոր ձին էր։ Երկար սպասեցին նրան, և ահա վերջապէս նա ուզեց իր ծարաւը յագեցնել Պիրենայի աղբիւրից։

Օդեղէն հիւրն սկսեց իջնել աւելի ցածր և ցածր։ Թռչելիս աւելի մեծ շրջաններ և պտոյտներ էր անում, ինչպէս աղաւնին է անում թռչելու պատրաստւելիս։ Որքան ցածրանում էր, այնքան փոքրացնում էր իր շրջանները, մինչև վերջապէս շփւեց գետնին՝ փափուկ բմբլի պէս։ Նա իր չորս ոտները դրաւ աւազի վրայ

այնքան մեղմ և անըզգալի կերպով, որ ոչ մի խոտ չըխշխշաց։ Հրաշալի թևաւոր ձին մեկնեց իր վեհապանծ գլուխը և սկսեց խմել։ Նա մեծ զմայլմունքով էր ներս ծծում բերանով պայծառ հեղուկը, ուրախ փռնչում ու գլուխը թափահարում․ խմում է խմում, մէկ էլ յանկարծ կանգ առնում։ Ոչ գետնի վրայ, ոչ ամպերում և ոչ մի ուրիշ տեղ Պեգասը չէր սիրում այնպէս յագեցնել իր ծարաւը, ինչպէս Պիրենայի աղբիւրից։ Կուշտ խմելուց յետոյ, թևաւոր ձին հոտաւէտ առւոյտներից մի քանի ծաղիկ գզլեց, բայց միայն գզլեց ու ծաղծամեց և ոչ թէ արածեց կամ կերաւ․ Նրա արածելիքը Հելիկոն սարի բուն գագաթի վրայ եղած անուշահոտ խոտերն էին։

Վերջապէս երբ որ աղբիւրի պարզ ջրիցն այնքան խմեց, որ կշտացաւ, մի քիչ խաղ արաւ եօնջի ծաղիկների հետ, (առւոյտին եօնջա էլ ենք ասում) այնուհետև խայտալ սկսեց կշտացած երեխայի նման։ Սկսեց վազվզել յետ ու առաջ, տրտինգ տալ, կամացուկ վրնջել (խրխնջալ)։ Մէկ այս կողմն էր չափ ընկնում, մէկ այն, մէկ էլ թռչում էր դէպի վեր, մի քիչ պտըտւում և նորից իջնում ու վազվզում փափուկ կանաչկուտի վրայ։ Բելլերոֆոնը՝ տղայի ձեռքից բռնած՝ թփուտի միջից նայում էր այս տեսարանի վրայ, որի պէս գեղեցիկ բան նա իր կեանքումը տեսած չէր։ Պեգասի ողջ կազմւածքը, նրա բարակ-բարակ ոտները, նրա բարեկազմ գլուխը, թաւամազ պոչը, ալէծածան բաշը, ձիւնի նման սպիտակ, արծաթի պէս փայլուն, այս բոլորը հիացրել, զարմացրել էին Բելլերոֆոնին։ Իսկ նրա խելօք և վառվռուն աչքերի նման ոչ մի ձիում տեսած չէր։ Նրան յանցանք էր թւում այսպիսի մի հիանալի ձիու վրայ թամբ դնելը, և առաւել ևս՝ նրա վրայ ցատկել նստելը։

Մէկ թէ երկու անգամ Պեգասը կարծես թէ թալկացաւ, թուլացաւ․ կանգնում էր յանկարծ, ականջները խըլշում, հոտ քաշում, գլուխն այս ու այն կողմ ձըգում, կարծես զգալով, որ իր մօտ դարանամուտ եղած մարդիկ կան։ Բայց երբ որ չըտեսաւ և չըլսեց ոչինչ վտանգաւոր բան, նորից սկսեց իր առաջւան խաղերը։

Բայց ահա որպէս թէ յոգնեց վերջապէս, թևերը ծալեց և նստեց փափուկ կանաչկուտի վրայ։ Թեթև օդի զաւակ լինելով՝ նա չէր կարողանում քիչ ժամանակ հանգիստ կենալ, շրջւեց քամակի վրայ և ոտները վեր ցցած՝ սկսեց սահել մէջքի վրայ։ Ինքը թևաւոր, մենմենակ ամբողջ աշխարհում․ անյիշելի ժամանակներից ի վեր ապրած, ոչ մի ընկեր չունեցած երբէք, այժմ զւարճանում էր ինչպէս բոլոր էակներից ամենաբախտաւորը։ Սա մի հետաքրքրական տեսարան չէ՞ր միթէ։ Բելլերոֆոնն ու մանուկը չէին կարողանում աչքները Պեգասից հեռացնել։ Նրանք

մասամբ հաճոյքից և մասամբ երկիւղից շունչները փորըներն էին գցել, ըստ որում աննշան մի շըշուկից և շըշունջից կըխրտնէր Պեգասը և նետի պէս կըսլանար դէպի երկինք։ Բաւականաչափ թաւալ-գլոր գալուց յետոյ՝ վերջապէս Պեգասը շտկուեց և հասարակ ձիու պէս դանդաղ կերպով առաջի ոտները ձըգեց, որ վեր կենայ, Բելլերոֆոնն իսկոյն գլխի ընկաւ, որ ձին վեր կենալուն պէս՝ պիտի ճանապարհ ընկնի՝ նա մի ակնթարթում դուրս ընկաւ թփուտից և մի ճարպիկ ոստիւնով թռաւ նստեց ձիու քամակին։

Այո՛, նստեց թևաւոր ձիու վրայ…

Երևակայել պէտք է, թէ ինչպէս վեր թռաւ Պեգասը, իր կեանքումն առաջին անգամն զգալով իր վրայ հողեղէն մարդու ծանրութիւն։ Վեր թռչել եմ ասում, բայց չըկարծէք, որ մի հա-

սարակ ոստիւն էր որ արաւ Պեգասը։ Բելլերոֆոնը դեռ խելքը գլուխ չէր հաւաքել, որ Պեգասի հետ արդէն գետնքից բարձրացել էին մինչև հինգ հարիւր ոտնաչափ և սլանում էին նետի արագութեամբ։ Թևաւոր ձին նրա տակին փռնչում էր և երկիւղից ու զայրոյթից դողում, սարսափում։ Թռան գնացին միշտ բարձր ու բարձր, մինչև հասան ամպալից օդի ցուրտ շերտերը, որոնց վրայ մի քանի րոպէ առաջ Բելլերոֆոնը, գետնին պառ-

կած, նայում էր և սքանչանում։ Այդ բարձրութիւնից ձին ուղղակի ցած նետեց ինքը զինքը, որ մի ժայռի կամ ուրիշ բանի դիպչելով՝ ջարդուխուրդ անի իր հեծեալին։ Բայց այսպիսի բան չըպատահեց. Բելլերոֆոնն այնպէս չէր կպել նրան, որ բաց թողնէր կամ վայր ընկնէր. բայց սրա վրայ ինչ բաներ արաւ չարացած թևաւոր ձին, ինչ ճարպիկութիւններ բանացրեց. ցիրկում խաղացող ակռաբատներն այն չեն անում, ինչ որ մեր Պեգասն արաւ օդի մէջ. ինչ վեր-վեր թռչել, ինչ օրօրուել, ինչ աքացիք շպրտոտել դէս ու դէն, ի՜նչ տրտինգներ տալ։ Գլուխը գցում էր առաջի ոտների արանքը, թևերը վեր ցըցում և սկսում, մէկ թէ երկու, գլուխկոնձի տալ կապիկի նման։ Շուռ էր գալիս մէջքի վրայ և ոտները վեր ցըցելով՝ թափահարում ինքը զինքը, կամ գլուխը դէպի պոչն արած՝ երկուտակուում էր և սկսում պըտուել չարխի պէս։ Վերջապէս շատ բաներ արաւ, տեսաւ որ հնար չի լինում, չի կարողանում վայր գլորել Բելլերոֆոնին, վիզը թեքեց և կրակոտ աչքերը վրան ձգելով, դունչը մեկնեց որ կծէ։ Նա այնքան թափ տուաւ իր թևերը, որ նրանցից մի արծաթագոյն փետուր գջլուեց և ընկաւ հէնց այնտեղ, ուր կանգնած էր գանգուրիկ տղան։ Նա իսկոյն վեր առաւ պահեց՝ իբրև Պեգասից և Բելլերոֆոնից մնացած յիշատակ։

Երբ որ Պեգասը, ինչպէս ասացինք, ատամները սրած, դունչը մեկնեց որ մէկ լաւ կծէ, Բելլերոֆոնը նրա այս դրութիւնից օգուտ քաղեց և աղօթած սանձի երասանակը ձգեց իսկոյն թևաւոր ձիու բերանը։ Եւ, ո՜վ հրաշք, Պեգասն իսկոյն հանդարտուեց և դարձաւ բոլորովին ձեռնասուն մի ձի։ Ուղիղն ասեմ, ես շատ կափսոսայի և կըցաւէի, տեսնելով մարդուն հպատակած այնպիսի մի ազատ թռչնաձին, ինչպիսին Պեգասն էր։ Այս յանկարծական փոփոխութիւնը, ազատութիւնից դէպի ստըրկութիւնը, անըզգալի չէր Պեգասի համար։ Նրա դէպի Բելլերոֆոնն ուղղած խելօք աչքերի մէջ արտասուքի պէս բան երևացին։ Բայց երբ որ երիտասարդն սկսեց փաղաքշելով շփել նրա գլուխը և մի քանի քաղցր ու խաղաղացնող խօսքեր ասել, թէև տիրոջի եղանակով,—այն ժամանակ թևաւոր ձին ուրախութեան վրնջիւն բարձրացրեց։ Նա կարծես բաւական մնաց իր ներկայ վիճակից, որ նա, այնքան դարերից յետոյ վերջապէս մի ընկեր ու հրամայող ունեցաւ։ Երևի այսպէս է որոշուած բոլոր թևաւոր ձիաների ճակատագիրը, և առհասարակ բոլոր վայրենի կենդանիների։ Հէնց որ մի անգամ նուաճեցիր նրանց և տէրը դարձար, նրանք այնուհետև կըհպատակուեն քեզ և կընտանենան քեզ հետ։

Պեգասն ու Բելլերոֆոնը՝ իրար հետ կուելիս՝ աննկատելի կերպով շատ հեռու էին թռել, մինչև հասել էին մի բարձր սարի։ Բելլերոֆոնն առաջ էլ էր տեսել այն սարը, գիտէր, որ նրա

անունը Հելիկոն էր, գիտէր նմանապէս, որ Պեգասը սովորաբար նրա գագաթի վրայ էր արածում։ Բայց ձեռնասուն դարձած թևաւոր ձին այժմ զրկուած էր իր ազատ կամքից. նա չէր համարձակւում թռչել դէպի իր ուզած կողմերը, և շարունակ յետ էր մտիկ տալիս, կարծես կանգ առնելու համար լինէր ուզելիս։ Վերջապէս նա հանդարտ կերպով իր թռիչքն ուղղեց դէպի գետինը, անհամբեր սպասելով, թէ երբ կիջնի արդեօք իրանից հեծեալը։ Բելլերոֆոնը ցած թռաւ նրա մէջքից, բայց ձեռքից չըթողեց նրա սանձը, որ պինդ փաթաթել էր ձախ ձեռքի դաստակին։ Պեգասն անընդհատ նայում էր իր նոր տիրոջ վրայ. նրա սիրուն և ազդու աչքերի մէջ երևում էր այնպիսի հեզութիւն, որ Բելլերոֆոնի խելքը տանում էր։ Նա սկսեց խղճալ գերի ընկած Պեգասին, որ դարերով ազատ էր ապրել, և վճռեց արձակել նրան և ազատ թողել։ Մեծահոգութեան զգացմունքով սաստիկ ոգևորուած, նա կախարդական սանձը ձգեց նրա վզովը և բերանից հանեց երասանը։

—Գնա, Պեգաս, ասեց նա։—Դու ինձ հարկաւոր չես, եթէ ես սիրելի և հաճելի չեմ քեզ։

Թևաւոր ձին մի ակնթարթում անյայտացաւ նրա աչքից։ Նա Հելիկոնի գագաթից դէպի վեր սլացաւ բաղէի նման շեշտակի։ Արևն արդէն վաղուց էր մայր մտել, ներքևում, երկրի վրայ մութն էր, իսկ սարի վրայ՝ դեռ ժամաժանք—վերջալոյս։ Պեգասը թռաւ ամպերից էլ բարձր և կարծես դողում էր այնտեղ արևի վերջին ճառագայթներից անդրադարձած ծիրանեգոյն լոյսի անաղօտ ալիքների մէջ։ Դէպի վերև ու վերև թռչելով՝ ներքևից երևում էր նա մի պսպղուն կէտի չափ և վերջապէս բոլորովին անհետացաւ երկնքի անյատակ կապտութեան մէջ։ Բելլերոֆոնն ընկաւ երկիւղի մէջ. նա շատ վախեցաւ, թէ չըլինի, յիրաւի՝ թևաւոր ձին այլ ևս չերևայ ոչ մի անգամ։ Նա արդէն սկսեց զղջալ իր արարմունքի վրայ. «այս ինչ խելք էր, որ ես բանեցրի», ասում էր նա ինքն իրան. բայց մէկ էլ տեսաւ, որ պսպղուն կէտը նորից երևաց երկնքի վրայ և սկսեց կամաց-կամաց իջնել դէպի ցած և ցած մինչև վերջապէս իջաւ իր տիրոջ առաջը։ Այս փորձից յետոյ այլ ևս տեղիք չըկար կարծելու, որ թևաւոր ձին կըփախչի երբ և իցէ։ Ձին և իր տէրը մտերմացան իրար և այնուհետև հաւատում էին միմեանց առանց կասկածելու։

Այս գիշեր մեր երկուքին բարեկամները տեղաւորուեցին մի ժայռի խոռոչում և քնեցին իրար կողքի, Բելլերոֆոնը բոլոր գիշերը ձեռքը չըհեռացրեց Պեգասի վզից, ոչ թէ ուշադրութեան, այլ շատ սիրելուն համար։ Վաղ առաւօտեայ բարիլուսին վեր կացան և միմեանց ողջունեցին ամեն մէկն իր սեփական լեզուով։

4.

Բելլերոֆոնը մի քանի օր կացաւ Հելիկոնի վրայ Պեգասի հետ. այս միջոցին նրանք աւելի մօտեցան միմեանց և աւելի մտերմացան։ Շատ անգամ միասին օդային ճանապարհորդութիւն էին անում և երբեմն այնքան էին բարձրանում, որ գետինքը նրանց աչքում լուսնի չափ էր երևում։ Նրանք գնացին մի քանի երկիրներ. ամեն տեղ նրանց տեսնող մարդիկը զարմանում էին և կարծում էին, որ թևաւոր ձիով ճանապարհորդող սիրուն երիտասարդը Ոլիմպոսից կըլինի իրանց մօտ հիւր եկած։ Պեգասի համար մեծ բան չէր օրական մի քանի հազար մղոն տեղ թռչելը։ Բելլերոֆոնը յափշտակւել էր այս տեսակ կեանք վարելուց. նա բոլոր կեանքն ուրախութեամբ անց կըկացնէր մթնոլորտի վերին խաւերում, ուր ամեն ժամանակ, ինչ տեսակ եղանակ էլ լինէր երկրիս վրայ, միշտ պարզ էր և տաք։ Բայց նա չէր կարող մոռանալ իր տըւած խոստումը Յօբաթ թագաւորին—Քիմեռ Օշափի սպանելու մասին։ Երբ որ փոքր ինչ ընտելացաւ օդային արշաւանքներին և սովորեց Պեգասի հետ վարւել այնպէս, որ նա իր տիրոջ ձեռքի աննշան շարժմունքից և հազիւ լսելի ձայնից հասկանում էր նրա միտքը, այն ժամանակ մտքումը վճռեց ձեռնարկել մտադրուած վտանգաւոր քաջագործութեանը։

Եւ ահա մի առաւօտ վաղ զարթնելով՝ թեթև կերպով կմըրթեց Պեգասի ականջից, որ զարթեցնի նրան։ Սրա վրայ Պեգասն իսկոյն վեր կացաւ տեղից և քառորդ մղոնաչափ մի ոստիւն առաւ դէպի վեր. մի ակնթարթում պտըտեց Հելիկոնի ամբողջ գագաթը, որ ցոյց տայ տիրոջը թէ ինքը բոլորովին սթափած է, թարմ է և պատրաստ՝ ուր ուզես՝ թռչելու։ Այսպէս ահա առաւել ևս թարմանալով՝ և ուրախ-ուրախ խրխնջալով եկաւ իր տիրոջ մօտ, բայց այնքան թեթև, որ կարծես ճնճղուկ լինի ոստից ոստ թռչկոտելիս։

—Շատ լաւ ես չափ ընկնում, սիրելի Պեգաս, հիանալի են թռիչքներըդ, գոչեց Բելլերոֆոնը և գուրգուրելով շփեց թևաւոր ձիու գեղեցիկ պարանոցը։—Ժամանակ է կարծեմ, որ քեզ հետ գնանք մեր գործին։ Այսօր ևեթ գնանք պատերազմելու Քիմեռ Օշափի հետ։

Նախաճաշելուց և Իպօկրենայի պաղ աղբիւրի ջրից խմելուց յետոյ՝ Պեգասն ինքը մեկնեց իր գլուխը սանձելու համար։ Մինչև Բելլերոֆոնը կըզրահաւորւէր, թուրը կըկապէր կողքից, վահանը կըկախէր, առհասարակ կըզինաւորւէր կռւի համար, Պեգասն անհամբերութիւնից ոտքով դոփում էր գետինը, խայտում, խաղում և ոստոստում։ Երբ որ ամեն ինչ պատրաստ էր,

Բելլերոփոնը հեծաւ ձին՝ ըստ սովորութեան՝ շեշտակի դէպի վեր սլացաւ մինչև հինգ մղոնաչափ, որ բարձրից մէկ լաւ նայէ ամէն կողմ, որոշէ գնալու տեղը և դէպի նոյն կողմն ուղղէ իր թռիչքը։ Նա Պեգասի գլուխը թեքեց դէպի արևելք և սլացաւ ուղղակի դէպի Լիկիա։ Ճանապարհին նրանք հասան մի արծուի, որ քիչ էր մնում Պեգասի ոտքի տակն ընկնէր, եթէ շուտով մի կողմ չըքաշուէր. Բելլերոփոնը կարող էր բռնել նրան, բայց չուզեց ժամանակ կորցնել։ Նրանք թռչում էին թունդ մրրկի արագութեամբ, և հէնց նոյն առաւօտը տեսան Լիկիայի բարձր լեռներն ու խոր-խոր ձորերը, որոնք հազիւ էին նշմարւում իրանց պատող թանձր մառախուղի միջից։ Բելլերոփոնը լսած էր, որ զազրելի Օշափը այդ խաւար ձորերից մէկումն էր բոյն դրել։

Երբ որ հասան իրանց մտադրեալ տեղը, թևաւոր ձին սկսեց իջնել դէպի ներքև, օգուտ քաղելով լեռների վրայ եղած մի քանի կտոր ամպերից, որոնք մեր ճանապարհորդներին ծածկելով, անտեսանելի էին կացուցանում նրանց գետնի երեսից։ Մի խիտ ամպի վրայ կանգնած՝ Բելլերոփոնը քիչ առաջ թեքուելով՝ կարողացաւ պարզ տնտղել Լիկիայի լեռնային մասը և նրա մութ հովիտները։ Առաջ առանձին մի բան չընշմարեց. նրա տակ երկարումէկ ձգուած էին չոր պառակներ և փլփլուած ապառաժներ, բայց ահա նրանց ետևից սևին էին տալիս նոր այրուած տնատեղեր, սպիտակին էին տալիս շատ տեղեր կոյտ-կոյտ ոսկորներ, կարծես այս տեղերում արածող տաւարների կմախքներ լինէին։

«Այս ամենը Օշափի թողած հետքերը պէտք է լինին, մտածեց Բելլերոփոնը։—Բայց այդ զազրելին ինքը որտե՞ղ պէտք է լինի թաք կացած արդեօք»։

Նա սկսեց աւելի ուշի ուշով նայել լեռների մէջ սևին տուող ծերպերը, խոռոչներն ու անտառները, բայց ուր որ նայում է, ամէն կողմ տեսնում է մեռելութիւն, չոր անապատ. միայն մի քարայրից դուրս է բղխում երեք զոյլ սև ծուխ, և կեռումեռ գալարուելով օձի պէս՝ սողում է դէպի վեր, և դեռ լեռան գագաթին չըհասած՝ սև ծուխի այդ երեք զոյլերը միանում են և դառնում մի կէնդ սիւն։ Քարայրը գտնւում էր ուղիղ իրանց ոտքի տակին, միայն մի հազար ոտնաչափ հեռաւորութեան վրայ։ Գարշոտ և թանձր ծծմբային ծուխը արդէն հասնում էր մինչև Պեգասի ու Բելլերոփոնի ռունգները։ Պեգասը փռնչում էր զզուանքից և գլուխը այս ու այն կողմ թեքում. այդ օդի զաւակին, որ սովոր էր ծծել միայն լեռնագագաթների մաքուր օդը, գարշելի էր թւում երկրային հոտը։ Իսկ Բելլերոփոնը ժնգռնում էր ու փռշտում խեղդուելով այդ ծանր և հեղձուցիչ ծծմբային հոտից՝

Զայրացած Պեգասը սաստիկ թափ տուաւ թևերը և մղոն ու կէս յետ թռաւ այդ գարշահոտ տեղից։

Բայց Բելլերոփոնը յանկարծ յետ մտիկ տուաւ և մի այնպիսի բան ընկաւ աչքովը, որ իսկոյն սանձը դրդեց և յետ շրջեց ձիու գլուխը։ Պեգասն այս նշանից իսկոյն իմացաւ տիրոջ միտքը և սկսեց կամաց-կամաց ցած իջնել մինչև մօտեցաւ նոյն քարայրին, որտեղից որ դուրս էր գալիս երեք զոյլ ծուխը։ Եւ ինչ տեսնի այնտեղ Բելլերոփոնը։—Մի տարօրինակ դէզ՝ իրար վրայ կուտակուած հրէշների։

Հրէշի իրար վրայ բսած մարմինները միմեանց այնքան մօտիկ էին ընկած՝ որ միայն գլուխներից կարելի էր ճանաչել, թէ ինչ կենդանիք են նրանք։ Թւով երեք էին նրանք՝ մի ահռելի վիշապ—օձ, մի ահարկու զօրեղ առիւծ և մի գարշելի այծ։ Այծն ու առիւծը քնած էին, իսկ օձը՝ ոչ. նա իր կարմիր աչքերը չըռել էր Բելլերոփոնի վրայ։ Բայց զարմանալին այս էր, որ գարշահոտ սև ծուխը ոչ մի րոպէ չէր կտրւում, այլ անընդհատ դուրս էր գալիս երեքի էլ ռունգներից։ Այս տեսակ մի հրէշի տեսիլը այնքան նոր և անակնկալ էր Բելլերոփոնի համար, որ նա իսկոյն ևեթ գլխի ընկաւ, որ նա ինքն էր Քիմեռ—Օշափը և այդ էր նրա որջը։ Առիւծը, օձը և այծը մի և նոյն սարսափելի հրէշի լրացուցիչ մասերն էին։ Զզուելի Օշափ…

Կիսամրափ Օշափը (որովհետև նրա միայն երկու գլուխներն էին մրափած) իր ճանկերից բաց չէր թողնում նոր որսած զոհի արիւնոտ մնացորդները. բայց ինչ բանի մնացորդներն էին, լաւ չէր նշմարւում. գառնի՞ մնացորդ էին արդեօք, թէ՞… ուզում էի ասել՝ մի փոքրիկ երեխայի… բայց ո՛վ գիտէ, գուցէ հէնց այդպէս էլ լինէր, թէև այսպէս մտածելը սարսափ է բերում մեզ վրայ։ Երևում էր, նոր էր վերջացրել իր ընթրիքը։

Բելլերոփոնը վերջապէս ուշքի եկաւ և գլխի ընկաւ, թէ ինչ բան էր իր տեսածը։ Պեգասն աւելի շուտ իմացաւ բանի էութիւնը, և մի այնպիսի ահեղագոչ վրնջիւն բարձրացրեց, որ սար ու ձոր դըմբդըմբաց։ Սրա վրայ մրափած գլուխներն էլ զարթեցին և երեքն ի միասին կրակի ահեղ ալիքներ վիժեցին։ Բելլերոփոնը դեռ իր պատրաստութիւնը չէր տեսել կռուի համար, որ հրէշը դուրս պրծաւ իր որջից և իր թանթուների ահագին ճիրաններն արձակելով՝ վրայ վազեց ուղղակի խիզախ երիտասարդի վրայ՝ աւազ ու հող բարձրացնելով։ Եթէ Պեգասը թևաշարժ չըլինէր թռչնի պէս, հրէշն իր այդ յանկարծական յարձակմունքով կուլ կտար երկուսին էլ և դրանով կվերջանար կռիւը՝ առանց սկսուելու։ Բայց անկարելի էր թևաւոր ձիուն անզգոյշ և անպատրաստ գտնել։

Մի ակնթարթում Պեգասն ու իր հեծեալը սաւառնում էին

արդէն բարձր երկնքում։ Բարկութիւնից խռմփում էր Պեգասը և բոլոր մարմնով դողում էր, ի հարկէ ոչ երկիւղից, այլ եռագլխեան գարշելի սողունից զզւելով։

Օշափի կատաղութեանն էլ չափ չըկար։ Նա ձգւել էր իր բոլոր երկարութեամբ, և կռնթնելով իր օձային պոչի վրայ, ճիրանաւոր թաթերը օդի մէջ այս ու այն կողմ էր յածում և յետ ձգելով իր երեքին գլուխները՝ կրակի հեղեղ էր վիժում դէպի վեր, որ այրէ Պեգասին և նրա հեծեալին։ Ողորմած Աստուած, ինչպէս մռնչում էր, ինչպէս վըսսում ու մկըկում։ Մինչ այս մինչ այն, Բելլերոֆոնը ձախ ձեռքն առաւ վահանը և աջով թուրը հանեց պատեանից։

—Հմ՛պա, քե՛զ տեսնեմ, Պեգաս ջան, շըշնջաց նա թեւաւոր ձիու ականջին,—ինձ չամաչեցնես. օգնի՛ր ինձ՝ որ չքացնենք այս երկրային հրէշը, եթէ ոչ՝ դու կըթռչիս դէպի Հելիկոն՝ առանց յետ նայելու և առանց քո մտերիմ բարեկամիդ։ Կամ կըկործանւի Օշափը, կամ նրա բոլոր երեք ըռեխները կըլափեն ինձ մի քանի րոպէի մէջ։

Պեգասը սիրով վրնջաց, և գլուխը թեքելով՝ իր վարդագոյն ռունգները տիրոջ թշերին քսեց։ Սրանով ուզեց ասել նա, որ թէպէտ ինքը թևեր ունի և մինչև այսօր անմահ է եղել, բայց այսու ամենայնիւ աւելի յօժար կըլինի ինքը մեռնել, քան թէ թոյլ կըտայ, որ Բելլերոֆոնն ընկնի հրէշի ճանկը։

—Շնորհակալ եմ քեզանից, հոգեակս, ասեց Բելլերոֆոնը, պարզ իմանալով իր բարեկամի համր խօսակցութիւնը։—Հիմա եկ յարձակւենք Օշափի վրայ. դու վրայ թռիր, ինչպէս գիտես…

Այս խօսքերով նա շարժեց սանձը. Պեգասը նետի պէս սլացաւ ուղղակի դէպի եռագլուխ Քիմերը, որ բոլոր ժամանակ գալարւելով՝ ձգւում էր դէպի նրանց։ Բելլերոֆոնը հասնելն ու թրով զարկելը մէկ արաւ. Նա միայն մէկ անգամ զարկեց ինչքան որ կռնումն ուժ ունէր, բայց Պեգասը նրան այնպէս շուտ թռցրեց դէպի երկինք, որ էլ հնար չունեցաւ նայելու, թէ հարւածը յաջո՞ղ էր արդեօք, թէ՞ ոչ։ Պեգասի օդային արշաւանքը երկար չըտեւեց. նա կրկնեց իր յարձակմունքը։ Այս անգամ միայն համոզւեց Բելլերոֆոնը, որ առաջին զարկով թռցրել էր հրէշի այծային գլուխը, որ արդէն մի բարակ մորթով կախւած՝ ճօճում էր հրէշի վրայ։

Բայց հէնց սրա համար էլ ողջ մնացած երկու գլուխները՝ օձինն ու առիւծինը՝ կրկնապատկեցին իրանց կատաղութիւնը և ճիգն էին թափում, որ իրանց երրորդ գլխի վրէժն առնեն։ Նրանց անհեղադուչ մռնչիւնից և վսսոցից մարդու ականջ էր խլանում։

—Զըվախենաս, Պեգաս, աղաղակեց Բելլերոֆոնը. էլի մէկ

հարւած, և մենք կըկտրենք երկրորդ գլուխը։ Յառա՛ջ, բարեկամ, սիրտդ պինդ պահիր…

Նա կրկին շարժեց սանձը։ Թեւաւոր ձին նորից սլացաւ նետի պէս դէպի վայր, և Բելլերոֆոնը իր բոլոր ուժով նորից հասցրեց թուրը ողջ մնացած գլուխներին։ Բայց այս անգամ թէ նրան և թէ Պեգասին ձրի չընստեց այդ։ Օշափն իր թանթուլների ճանկերով մի քիչ չանգռեց Պեգասի ձախ թեը և բաւական խոր վիրաւորեց Բելլերոֆոնի ուսը։ Բայց Բելլերոֆոնն էլ փոքր հարւած չէր տըւել։ Այս անգամ նա կտրել էր հրէշի առիւծային գլուխը, որ արդէն կախ էր ընկել վրան և ըռեխը բաց ու խուփ անելով՝ թանձր ծուխ էր դուրս վիժում։ Միայն սոսկալի դարձաւ այժմ Օշափի ողջ մնացած միակ օձային գլուխը։ Նա հիմա հրահեղեղ էր դուրս վիժում և մինչև հինգ հարիւր գրկաչափ հեռաւորութեան հասցնում։ Եւ սկսեց այնքան ահեղ գոռինով ոռնալ, ֆշշըստալ, սուլել ու վսսալ, որ Յօբաթ թագաւորը լսեց այդ գոչիւնը հինգ հարիւր մղոնաչափ հեռաւորութիւնից և երկիւղից սկսեց այնպէս դողդողալ, որ գահն իր տակին սկսեց երերալ և տատանել։

«Վայն եկել մեզ տարել է, ասեց նա.—այս Օշափի ձայնն է, նա երևի գալիս է մեզ լափելու»։

Այս միջոցին Պեգասը մի կողմ թռչելով՝ սկսեց բարկութիւնից վրնջալ, իսկ նրա աչքերը կայծեր էին ցայտում։

—Պեգա՛ս, վիրաւորւա՞ծ ես,—բացականչեց Բելլերոֆոնը, նկատելով, որ իր սիրական ձիու արծաթափայլ թևից արիւն է հոսում։—Նզովեալ Օշափը իր այս չարագործութեան համար իր վերջին գլուխը պէտք է տայ ինձ. ինչպէս. նա համարձակւե՜ց վիրաւորել հրեղէն և անմահ ձիո՜ւն…

Պեգասն էլ այդ էր ուզում. նա մի ակնթարթում շըջեց գլուխը և կայծակի արագութեամբ սլացաւ դէպի ցած։ Քիմերը կատաղութիւնից կաս կարմիր կտրած, մէկ գալարւում, կծկւում էր քարայրի արիւնաթաթախ աւազի վրայ, մէկ ձգւում ցցւում էր սիւնի պէս և կրճտում բաց ըռէխը։ Իսկ այդ գարշելու ըռէխն էլ այնքան մեծ էր, որ Պեգասն իր տիրոջ հետ միասին, առանց իր երկար թևերը ծալելու, կարող էր ներս թռչել նրա միջով և անցնել կոկորդովը դէպի նրա անյագ և անյատակ որկորը։

Երբ որ նկատեց հրէշը, որ իր թշնամին յարձակւելու վրայ է, սկսեց բառանչել և գետաչափ հրահեղեղ վիժել, որով խանձխըրնձեց Պեգասի քնքոյշ թևերը և Բելլերոֆոնի բոլոր ձախ կողմի ոսկեմազ գանգուրները։ Բայց սրանով դեռ չանցաւ վտանգը։

Առաջ թոյլ տըւաւ, որ թևաւոր ձին իր հեծեալով մի քիչ իրան մօտենայ, ու յետոյ՝ մի յանկարծական ոստիւնով ընկաւ Պեգասի գաւակը և իր բոլոր անճոռնի կազմւածքով կպաւ նրա-

նից ու սկսեց իր ճապուկ ու ջղային պոչը չըւանի պէս բոլորիշուրջ փաթաթել Պեգասին։ Այս գարշելի բեռնով բարձւած՝ ձին և ձիաւորը թռան դէպի վեր և վեր. Նրանց ներքևում պսպղում էին արդէն լեռներն ու ամպերը, բայց նրանք էլի շարունակում էին իրենց թռիչքը։ Օշափը նրանցից չէր գըլւում և աւելի խոր էր ցըցում իր գարշելի ճիրանները խեղճ Պեգասի մէջքին։ Այս միջոցին Բելլերոֆոնը շրջւեց և իր կուրծքն ու երեսի կէսը վահանով պատսպարելով՝ աչքն անակնթարթ ձգեց հրէշի աչքը։ Մարդկային աչքի հայեացքը կարող չէր տանել Օշափը. նա խըփեց աչքերը և առաջի թաթերը մեկնեց, որ վահանի վրայից բռնէ Բելլերոֆոնի գլուխը, բայց՝ բաց արաւ իր կուրծքը և Բելլերոֆոնը ներս ցըցեց իր սուրը նրա կուրծքի մէջ մինչև կոթը։ Հէնց որ այս մահացու վէրքն ստացաւ Օշափը, նրա պոչն արձակւեց, և գարշելի հրէշը իր բոլոր թեփամորթ ջամդաքով վայր կործանւելով՝ ընկաւ մի բարձր ժայռի վրայ. Նրա փորոտիքից մի նոր կրակ բորբոքւեց և Քեմեռի բոլոր մարմինն սկսեց այրուիլ։ Երկրի վրայից՝ արևի մայր մտնելուց յետոյ՝ շատ մարդիկ նայեցին և տեսան, որ երկնքից գալարւելով՝ ներքև է թռչում մի գունդուկծիկ եղած ահռելի հրեղէն բան՝ երկար պոչով, շատ վախեցին, և կարծեցին, թէ մի գուցէ մի օդերևոյթ կըլինի կամ պոչաւոր աստղ, բայց միւս օրը՝ վաղ առաւօտուն՝ մի քանի երկրագործ գնացին աշխատելու իրանց ագարակում և այնտեղ սարսափելով տեսան, որ իրանց բոլոր արտերը սև մոխրով են ծածկւել, իսկ արտերի մէջ տեղը ոսկորների մի կոյտ կայ, մեծութեամբ մի ահագին դէզի չափ։ Այդ օրւանից մինչև օրս ոչ մի մարդ այլ ևս տեսած չէ Օշափին։

Այս փայլուն և փառաւոր յաղթանակը տանելուց յետոյ՝ Բելլերոֆոնը քնքոյշ սիրով համբուրեց Պեգասի գլուխը։ Ուրախութիւնից նրա աչքերը ջրակալեցին։

—Յետ գնանք, սիրելիդ իմ, ասեց նա,—գնանք Պիրենայի աղբիւրը։ Շնորհակալ եմ կատարած քաջագործութեանդ համար։

Պեգասը՝ օդի մէջ ծածանւելով՝ սկսեց թեւավարել, և մի քանի րոպէ հազիւ անցած՝ նա արդէն մեզ ծանօթ Պիրենայի աղբիւրի ափին էր։ Այնտեղ ամեն ինչ մնացել էր անփոփոխ.—յիշողութիւնը կորցրած ծերունին եկաւ վայրի պտուղներով. տաւարած գիւղացին կովեր բերաւ ջուր տալու. Ջահիլ աղջիկը՝ կուժն ուսին՝ եկաւ ջրի։

—Հիմա միտս է գալիս, ասեց ծերունին, նայելով Պեգասի վրայ, որ այս թեւաւոր ձին ես տեսել եմ մէկ անգամ երեխայ ժամանակս։ Բայց այն ժամանակները սա տասը հազար անգամ աւելի գեղեցիկ էր, քան թէ հիմա։

—Սրա նման երեք հատը ես ուրախութեամբ կըփոխէի մի

հատ բեռնակիր ձիու հետ,—ասեց կովարածը։—Այս թեւաւոր ձին եթէ իմս լինէր, ես նախ և առաջ արմատից կըխուզէի սրա թևերը։

Իսկ ջահիլ աղջիկը ոչինչ չասեց. նա միշտ վախենում էր անտեղի, հիմա էլ նոյնպէս։ Նա Պեգասին տեսաւ թէ չէ՝ յետ փախաւ դէպի տուն։ Վազելիս էլ ոտքը սահեց, կուժը վայր ձըգեց կոտրեց։

—Հապա ո՞ւր է մեր գանգուրիկ տղան, հարցրեց Բելլերոֆոնը, ձին մօտ քշելով դէպի գիւղացիները։—Նա իմ մշտական ընկերս էր այստեղ. Նա հաստատ հաւատացած էր, որ Պեգասը կըգայ, և միշտ նայում էր ջրին՝ սպասելով նրա գալուն։

—Ես այստեղ եմ, սիրելի Բելլերոֆոն—կամացուկ կանչեց տղան։

Այս աշխոյժ, կայտառ երեխան օրերով սպասել էր Պիրենայի աղբիւրի մօտ, յուսալով, թէ ահա ուր որ է՝ կըգայ իր կարեկամը. բայց հէնց որ տեսաւ Բելլերոֆոնին Պեգասի վրայ նստած ամպերից վայր է իջնում դէպի աղբիւրը, նա թաքկացաւ թուփերի մէջ, որ ալևորն ու տաւարածը չըտեսնեն նրա ուրախութեան արտասուքը։

—Դու տարար յաղթութիւնը, բացականչեց նա, վազելով Բելլերոֆոնի մօտ, որ դեռ նստած էր Պեգասի վրայ։—Ես հաւատացած էի, որ դու կըյաղթես անպատճառ։

—Այո, մանկիկս, ես յաղթեցի Քիմեռ Օշափին,—պատասխանեց Բելլերոֆոնը։—Բայց եթէ քո հաւատալըդ չըլինէր, ես երբէք չէի սպասիլ Պեգասին, երբէք չէի թռչիլ ամպերում և երբէք չէի վերցնիլ Օշափին։ Այս բոլորի համար ես միայն քեզ եմ պարտական։ Բա՛ց թողնենք այժմ Պեգասին և ազատութիւն տանք իրան. Թող երթայ իր համար, ինչպէս եղել է միշտ։

Այս ասելով՝ Բելլերոֆոնը աղօթած սանձը վեր առաւ Պեգասի գլխից։

—Գնա՛, իմ Պեգաս, դու այժմ ազատ ես միշտ և յաւիտեան, ասեց նա տխուր ձայնով։

Արծաթափայլ թևերով ձին գլուխը դրեց իր տիրոջ ուսին և չըշարժւեց տեղիցը։

—Դու չե՞ս ուզում ինձանից հեռանալ,—հարցրեց Բելլերոֆոնը, շփելով նրա վիզը.—ուրեմն կա՛ց, որքան ժամանակ որ կամենաս։ Հիմա գնանք ուրեմն Յօբաթ թագաւորի մօտ՝ նրան աչքալոյս, որ Քեմեռ Օշափն այլ ևս գոյութիւն չունի։

Բելլերոֆոնը համբուրեց գանգուրիկ տղային, նրան մնաս բարով ասեց, խօսք տըւաւ, որ էլի շուտ յետ կըդառնայ, և գնաց։

Անցան շատ և շատ տարիներ. գանգուրիկ տղան մեծացաւ

և սկսեց թռչել ամպերից վերև, աւելի և աւելի բարձր, քան թէ Բելլերոֆոնը, և իր յաղթութիւնների համար աւելի մեծ փառքի հասաւ, քան թէ Օշափի յաղթողը։

Այս փոքրիկ տղան դառաւ մեծ բանաստեղծ…

Ղ. Աղայեանց

ԱՄՐՈՑՆԵՐ ՇԻՆՈՂ

(Լօնգֆելլօից)

Իմ գանգրահեր մանկիկ սիրուն ու կայտառ,
Սիրում եմ քո հայեացքն անմեղ ու պայծառ․
Փայտիկներից դու կանգնում ես ահագին
Բուրգ ու ամրոց որ նայում են երկնքին։
Քաջ ձիաւոր, խրոխտ հեծնող հօր ծնկան,
Որ սիրում ես և դայեակի հէքիաթներ,
Թէ ինչ գործեր, ինչ արկածներ յաղթական,
Հէքիաթներում կատարել են հերոսներ։
Կըգայ ժամը, դու այլ շէնքեր կըշինես,
Այլ նժոյգներ դու կըհեծնես քաջ ու վարժ,
Կեանքից առած դու այլ զրոյց կըլսես,
Ե՛ւ բազմազան, և՛ աւելի սրտաշարժ։
Բայց դեռ շինիր, շատ ամրոցներ դեռ շինիր,
Մտքով նրանց երկինք հասցուր, թէ կուզես,
Եւ երկնային վեհ ձայներին ունկնդիր
Քո մանկական վառ հաւատդ չըկորցնես։

Ալ. Ծատուրեան

Դ Ր Ա Խ Տ

(Պարսկական զրոյց)

Կարմիր սարի ստորոտում, պարսկական մի քաղաքի մօտ էր բնակւում Աբդիւլ աղան․ երկրի տէրն էր նա։

Չար Ոգին տուել էր նրան իր բոլոր չարութիւնները, Աստուած վերցրել էր նրանից խիղճը և Ահրիմանի [1]) չար հրեշտակները օրը մինչև երեկոյ շշնջում էին նրա ականջին այնպիսի չարութիւններ, որոնցից ինքն Ահրիմանը սոսկում էր շատ անգամ։

Աբդիւլ աղան հարուստ էր թագաւորի պէս․ Նրա պալատը աշխարհիս ամենագեղեցիկ շէնքն էր, նրան էին գովասանում երգիչները, նրա պալատի գեղեցկութիւններից յաճախ իր «Էրժէնք» գրքի երեսներն էր լցնում Մանի նկարիչը [2])։ Նրա ձիերը արաբ նժոյգներ էին, տաւարները հաշուել չէր կարելի․ տուն ու տեղը և ամբարները այնչափ լիքն էին, որ շատ անգամ աւելորդ փտած պաշարներ էին դուրս թափում պալատից։

Եւ եղաւ մի օր, որ հեռու Հնդստանից Կարմիր սարերի մօտ եկաւ մի դէրւիշ, նստեց Աբդիւլ աղայի դռան առաջ, սպասեց որ իր բաժինը տան և խնդրեց՝ պալատի տիրոջը տեսնել։

Աբդիւլ աղան իր հարեմումն էր, նա ծիծաղեց, երբ ասացին իրան, որ մի դէրւիշ կամենում էր տեսնուել նրա հետ․ հրամայեց ներս կանչել դէրւիշին հարեմը և մտքումը դրաւ՝ նրան երգել-պարել տալով՝ զւարճանալ և զւարճացնել իր կանանց։

Եւ եկաւ դէրւիշը, պատմեց Հնդստանի մասին, նկարագրեց ռաջաների փառքը, նրանց զւարճութիւնները, երգեց աղօթքներ և նստելով գետնի վրայ՝ սկսեց վայրենի մի պար։

Աբդիւլ աղան շատ ծիծաղեց, շատ զւարճացաւ, հրամայեց դէրւիշին կերակրել և յետոյ ասեց նրան.—Դէրւիշ բաբա, դու երկիրներ ես տեսել, շատ ման ես եկել, առածն ասում է, որ «շատ ապրողը չի շատ բան իմանալ, այլ շատ ման եկողը», արի—քեզ իմ պալատս ցոյց տամ, տեսնենք կըհաւանե՞ս։

Եւ տարաւ նրան իր հետ․ ցոյց տւաւ հայելապատ

---

1. Կրակապաշտների չարի աստուածը․
2. Մի առասպելական նշանաւոր նկարիչ էր․

պատերով, գեղեցիկ ծաղիկներով և գոյնզգոյն քարերով յատակած սրահները, ցոյց տւաւ իր Թաւշապատ օթոցներով դիւանխանէն, շքեղ պատկերներով զարդարած քաղախանան, առաջնորդեց իր հարեմի ներսը, ցոյց տւաւ կանանց. տարաւ գոմը՝ հիացրեց իր տաւարների քանակութիւնով և գեղեցիկ նժոյգներով... ցոյց տւաւ ցորենով և արմտիքով լիքը հսկայական ամբարները, անհամար կարասներով լիքը մառանը, յետոյ տարաւ պարտէզը որ ցոյց տար այդ աւազաններով լիքը պերճ այգին, ուր անհամար էին հովանաւորող նոճիներ, պտղատու ծառեր, ձկներով լիքը շադրւաններ և երփներանգ ծաղիկներով անուշահոտ ծաղկանոցներ...

Դէրւիշը տեսաւ բոլորը, սառնութեամբ նայեց պարտէզին, կանգ առաւ Աբդիւլ աղայի առաջ, նայեց նրան մի հեգնական ժպիտով և ասեց.

—Աբդի՛ւլ, որդի՛ս, այս բոլորը լաւ են. լիքն է ամբարըդ, հիւրի-փերիներ են կանայքդ. շքեղ է պարտէզդ և պերճ պալատդ... այս բոլորի կէսը չունի հնդկական ռաջան. բայց արի՛ ինձ հետ, և ես քեզ մի քանի հարցեր ունիմ անելու։

Յետոյ արագութեամբ մօտ տարաւ պարտիզի ցանկապատին, ցոյց տւաւ դրսում—ո՛չ շատ հեռու երևցող տների աւերակներ և հարցրեց.

—Ի՞նչ են սրանք։

—Ա՜խ, սրա՞նք, ծիծաղեց Աբդիւլը—սրանք այն տներն են, որ ես քանդել տւի. որովհետև մտադիր եմ պարտէզս այս կողմից լայնացնել։

—Ի՞նչ եղան սրանց միջի բնակիչները։

—Վռնդեցի, ասեց աղան—այդ հողը բոլորը իմն է, վռնդեցի նրանց հեռու։

—Ո՞ւր գնացին։

—Զգիտեմ։

—Լաւ ուրեմն, ասեց դէրւիշը—ես գիտեմ. երեկ անցնում էի մի գետի ափով, տեսայ մի խումբ խեղճ մարդիկներ, որոնք մերկ, քաղցած և կեղտոտ էին... երեքը նրանցից մեռել էին ցրտից, երկուսը քաղցածութիւնից

մեռնում էին, և միւսներն էլ խենթացածի պէս վրաս թափւեցին և խլեցին մօտիս ամենավերջին կտոր հացը... քաղցած էին սոված գայլերի պէս...

—Ա՜խ, գոչեց ծիծաղելով Աբդիւլը—ինչ գողեր են դրանք...

Դէրւիշը տարաւ նրան պարտիզից դուրս, ցոյց տըւաւ հեռւում երևցող գիւղերը և հարցրեց.

—Ո՞ւմն են դրանք։

—Իմն են։

—Ես անցայ այդ գիւղերից, ասեց դառնութեամբ դէրւիշը—գիւղերի մէջ դեռ ևս մի քանի կով և 3—4 ոչխարներ մնացել էին...

—Իրա՛ւ, բացականչեց Աբդիւլ աղան—ուրեմն վերադառնալիս պիտի ուղարկել, որ գնայ այդ գիւղացիներից հարկը ժողովի.

—Այո՛, աւելացրեց դէրւիշը—յայտնիր վերակացուիդ, որ կար գիւղերի մէջ մէկը, որ մի կտոր չոր հաց դեռ ևս ունէր կծելու...

Յետոյ դէրւիշը լռութեամբ գնաց դէպի աւազանը, մտածեց խորապէս և ասեց.

—Աբդի՛ւլ, պալատդ և պարտէզդ լաւ են, պակասում է ամենագլխաւորը... ռայաթը (և նա ցոյց տւաւ գիւղերը) դրախտ պիտի շինես և այն ժամանակ միայն դու կըլինիս, որ կունենաս մի պալատ, կեանք և դրախտ աշխարհիս վրայ, որոնցից զուրկ է Հնդկաստանի ամենամեծ ռաջան իսկ...

Ասեց, օրհնեց Աբդիւլին, մի կտոր հաց դրաւ կողքի տոպրակի մէջ և առանց ետ նայելու՝ հեռացաւ պալատից և երկրից...

Աբդիւլ աղան երկար մտածեց, թէ ի՛նչ ասեց դէրւիշը, մի՞թէ այս երկրի վրայ էլ կարելի է դրախտ շինել։

Հրամայեց կանչել իր ծերունի լալային [1]), պատմեց նրան դէրւիշի ասածը, հրամայեց շուտով ձի հեծնել վա-

1) Դաստիարակ.

գել դէրւիշի ետևից և հարցնել իր կողմից թէ այդ «դրախտը» ի՞նչպէս պիտի շինել։

Լալէն ձի հեծաւ, վազեց դէրւիշի ետևից, հասաւ նրան մի գիւղում և յայտնեց նրան Աբդիւլ աղայի հրամանը։

Դէրւիշը ժպտեց, ձեռքն առաւ իր փշոտ գաւազանը, կանգնեց լալէի առաջ և երգեց.

Որդի՛, անհաց սեղան չե՞ս տեսել։

Կանանց, մարդկանց, մանկանց արցունք չե՞ս տեսել…

Երգեց, յետոյ մի խոր ակնարկ ձգեց ծերունու վրայ և հեռացաւ։ Ծառան այդ խօսքերը միտը պահեց, արշաւանօք եկաւ իր տիրոջ մօտ և լսածը պատմեց նրան։

Աբդիւլը նախ զարմացաւ, իսկ յետոյ ծիծաղեց.

—Խենթ է այդ դէրւիշը, ասեց նա—իսկ ես արդէն մտածեցի թէ այդ դրախտը ինչպէս պիտի շինել։

Եւ նա ձեռնարկեց դրախտ շինելու.

Քանդել տուաւ բոլոր գիւղացոց տները, դուրս արաւ նրանց իրանց չիւլ-փալասի հետ, թողեց նրանց բաց օդում, ուր մեռնել սկսեցին, խլեց նրանց հողերը, իսկ իրանց՝ մտրակների տակ առնելով՝ բերաւ և ձրիապէս աշխատեցնել սկսեց մի մեծ և չքեղ պարտէզ շինելու, որ նա մտադիր էր դրախտի նման գեղեցկացնելու…

Շինեց նրա մէջ պալատներ, շադրւաններ, ծառուղիներ. տնկեց հազւագիւտ բոյսեր, տնկեց անմահական անուշահոտ ծաղկանոցներ… և ժողովուրդը լցւած այդ չքեղ պարտիզի շուրջը՝ մեռնում էր և գոչում.

—Հա՜ց հա՜ց…

Անցան ամիսներ, դրախտն սկսում էր վերջանալ, ժողովրդի կէսը կոտորւել էր, իսկ կէսի ձայնը կտրւել «հա՜ց» գոռալուց։

Վերջապէս, մի գեղեցիկ օր, Աբդիւլ աղան իր բարեկամներով և կանանցով եկաւ մտնելու պարտէզը, ուր պատրաստւած էր մի խնջոյք գինիներով և համեղ կերակուրներով։

Եկաւ նա պարտէզի մօտ, հրամայեց մտրակելով հեռու քշել «հաց» գոռացող ամբոխին և ոտքը կոխեց իր այն պարտիզի շէմքի վրայ, որ շաղախւած էր իր ժողովրդի արիւնով…

Եւ հազիւ թէ նա կամենում էր ներս մտնել, որ յանկարծ մթնեց երկինքը և սկսեց սաստիկ որոտալ. երկիրը շարժւեց, մի թանձր մշուշ իսկոյն ծածկեց ամեն կողմ, լսւեցան որոտումներ, աղաղակներ և թնդիւն…

Ամեն ինչ խառնւեց միմեանց։

Եւ երբ մշուշը ցրւեց, հողի հետ հաւասարւել էին Աբդիւլի պալատը, պարտէզը և «դրախտ» կոչւող այգին…

Ոչ մի հետք իսկ չէր մնացել այդ բոլոր արիւնաշաղաղ պերճութիւնից…

Մի ընդարձակ քարալից դաշտ միայն գոյացել էր նրա տեղը և այդ դաշտը շրջապատել էր զարմացած ժողովուրդը։

Անհետացել էին ինքը Աբդիւլը և իրա բոլոր հարեմը, ծառաները, համհարզը և իր բոլոր բարեկամները…

Այսպէս պատժեց Եազդանը 1) Աբդիւլին. իսկ ժողովուրդը վարեց այն հողը, ցորեն ցանեց, տներ շինեց և սկսեց խաղաղութեամբ բնակւել այնտեղ։

Եւ երբ անցան օրեր, նոյն դէրւիշը եկաւ անցնելու այդ կողմերից։ Երբ ամեն ինչ տեսաւ, ծիծաղեց և ասեց.

—Աբդիւլը դրախտ շինելու փոխարէն մի դժոխք շինեց, որի կրակի մէջ այրւեց ինքը. իսկ երբ մեռաւ՝ այն ժամանակ միայն գոյացաւ դրախտը…

Տաշեց մի տախտակ, տնկեց մի սիւն, տախտակը գամեց նրա վրայ և գրեց այնտեղ—

Դրախտը ո՛չ թէ Աբդիւլը շինեց,
Որ ժողովրդին կոտորեց,
Այլ արդար Եազդանը շինեց,
Որ ժողովրդին Աբդիւլից ազատեց…

Վ. Փափազեան

---

1) Կրակապաշտների բարւոյ Աստւածը։

ԲՈՅՆ ՔԱՆԴՈՂԻ ՏՈՒՆԸ ԱՍՏՈՒԱԾ Է ՔԱՆԴՈՒՄ

Մեծատան շքեղ տանիքի տակին
Ծիծեռնակն իրան մի բոյն էր հիւսել,
Շատ ու շատ տարի այդ բընի միջին
Ձագեր էր հանել, պահել, թռցրել։
Ծիծառն երջանիկ իր ձագերի հետ,
Մեծատան համար միշտ կեանք էր խնդրում.
Մեր մեծատունն էլ շատ երջանկաւէտ
Կեանք էր անցնում ու բարիք դիզում։
Զզիտեմ ինչպէս, և ինչից դրդւած՝
Ծիծեռնակի բոյնն հարուստը քանդեց,
Նրա ձագերին բնից վայր առած՝
Ոտքի տակ առաւ ու սատկացրեց։
Բնաւեր ծիծառն երբ որ այս տեսաւ,
Դառն կսկիծով մեծատանն ասաւ.
«Ա՜յ դու անօրէն, քանդեցիր իմ բոյն,
Թող որ Աստուած էլ քանդի քո շէն տուն»։
Ասաւ ծիծառը, թռաւ դէպի ժամ,
Այնտեղից բերաւ մի ծեղ այս անգամ,
Զգեց հարուստի գոյքերի վըրայ,
Այսպէս իր դատը Աստծուն յանձնեց նա։
Մեծատան արտերն ժանգահար եղան,
Անասունները ժանտախտից մեռան,
Ցարդի ու խոտի դէզերի հետ էլ՝
Ցորենն ու գարին կրակին զոհ դարձան։
Կրակը լափեց հարուստի տունը,
Խորտակեց նրա գոյութեան սիւնը…
Եկաւ նոր գարուն, ծիծառն էլ եկաւ,
Այլ տանիքի տակ նորից բոյն դրաւ։
Իսկ մեծատունը ձեռները ծոցին,
Իր տուն ու տեղի փլւածքի միջին՝
Թափառում էր միշտ, անդադար կրկնում.
«Բոյն քանդողի տունն Աստուած է քանդում»։

ՀԱՍՕ

ՀԱԿԱՊԱՏԿԵՐ

(Օմուլեվսկուց)

Ո՜հ, որքա՜ն չքնաղ է այս աշխարհում
Ամեն ինչ.—չքնա՜ղ նաև բնութիւն.
Եւ որչա՜փ նոցա շքեղ խնջոյքում
Պիտ խնդար հոգին, զգար քաղցրութիւն։
Բայց ընդհակառակն՝ կապոյտ երկնի տակ,
Ուր պատրաստւում է այդ մեծ խնջոյքը,
Մարդկանց ծովացած դառն արցունքներում
Ողողւել կարէ ամբողջ աշխարհքը…
Ե՛ւ մաղձ, և՛ թոյն, և՛ քաղց, և՛ կական,
Ե՛ւ սոսկ աշխատանք՝ անվերջ ու դաժան,
Ճնշում են մարդկանց, որպէս ծանր մուրճ,
Եւ խնդում, հրճւում այստեղ մշտական…
Միայն երբեմն շատ երկչոտ կերպով,
Որպէս սուերը պարզ ու ջինջ օրւայ,
Շողում է բախտը արագ թռչելով
Ոմանց քուն մտած դէմքերի վըրայ…

Ալէք. Ծատուրեան

ԻՆՉՈ՞Վ Է ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆՈՒՄ ՄԱՐԴ

(Հնդկական զրոյց)

Հարաւային Հնդկաստանում ապրում էր մի մեծատուն։ Նա այնքան հարուստ էր, որ նրա միայն պալատը արժէր հարիւր հազար ոսկի։ Այդ պալատն ամբողջապէս շինւած էր սև մարմարիոնից, նրա ներքնատան նկուղների մէջ ամբարւած գանձերի արժէքը մարդկային երևակայութիւնից բարձր էր։

Մէկ անգամ այդ մեծատունը կանչեց իր երեք որդիներին և ասեց.

—Զաւակներս... Աշխարհումս ինձանից էլ հարուստ չըկայ, և որպէս զի հարստութիւնս մաս-մաս չըլինի, որոշել եմ ձեզանից մէկին ինձ ժառանգ նշանակել։ Ահա ձեզ երեք փղոսկրեայ արկղներ։ Նրանց ամեն մէկում տասը հազարական ոսկի կայ։ Վեր առէք այդ ոսկիները և երեք տարով հեռացէք, որտեղ կամենաք։ Ես որոշել եմ ժառանգութիւնս թողնել նրան, ով կարողանայ իր կեանքը ամենից շատ երջանիկ անց կացնել։

Երեք տարիները անցան ինչպէս մի օր։

Հասաւ ժամը, երբ նրանք պէտք է վերադառնային։ Ծերունի հայրը խրախճան սարքեց և բազմաթիւ հիւրեր հրաւիրեց։ Կոչունքը դեռ նոր էր սկսւած, երբ դռան բեհեզեայ վարագոյրները բացւեցին և ծանրագին հագուստներով մի վաճառական ներս մտաւ։ Նա գլուխ տըւաւ տանտիրոջը և ասեց.

—Ես Լախմանն եմ, քո աւագ որդին։ Երեք տարի առաջ ես դուրս եկայ այս տանից, որ ինքս իմ կեանքս երջանկացնեմ։ Տեսայ որ բոլոր մարդիկ զւարճութեան ետևից են ընկնում. հասկացայ, որ այս աշխարհի մէջ երջանկութիւն ձեռք ձգելու միջոցը՝ ոսկին է։ Սրա համար ես գնեցի անուշահոտ իւղեր և համեմներ, ձեռք բերի ուղտեր, բարձեցի նրանց փղոսկրով և մետաքսեղէնով, և գնացի հեռաւոր երկիրներ առուտուր անելու։ Ես բերանս պատառ չէի դնում, աչքիս քուն չէր գալիս, անդադար աշխատում էի։ Այժմ ես ձեռք եմ բերել մեծ հարըստութիւն, որով կարող եմ ամեն բան ունենալ։

Հիւրերը պատկառանքով նայեցին Լախմանին։

—Եւ դու երջանի՞կ ես, հարցրեց հայրը։

Երբ ես Քաֆրիստանի լեռներումն էի,—պատասխանեց Լախմանը,—մէկ անգամ, վրանիս տակ պառկած ժամանակս լսեցի իմ ուղտապանի երգելը։ Նրա երգը լիքն էր ազատութեան և երջանկութեան արտայայտութիւնով, և շատ յուզեց սիրտս։ Ես այդ ժամանակ առաջին անգամ զգացի, որ՝ «Կարելի է երջանիկ լինել և ուղտապանի քուրձերի մէջ»։

—Լա՛ւ, բայց դու, դու ինքդ երջանի՞կ ես,—նորից հարցրեց հայրը Լախմանին։

Լախմանը չը պատասխանեց. նա դրական պատասխան տալ չէր կարող հօրը։

Այդ միջոցին դռան առջև աղմուկ ու աղաղակ էին բարձրացրել։ Ծառաներն էին, որոնք չէին թողնում մի աղքատի ներս մտնել, բայց նա դէս ու դէն հրելով ծառաներին, սրարշաւ ներս ընկաւ հիւրասենակը։

—Ես Դոսրատն եմ, գոռաց նա տան տիրոջ վրայ։ Ես քո միջնակ որդին եմ։

—Ամենքն էլ ա՜խ քաշեցին։

—Թող իմ աղքատութիւնս և ցնցոտիներս ձեզ չըզարմացնեն... Ես Դոսրատն եմ, ասում եմ ձեզ։

Հայրը ճանաչեց որդուն, նա ուղիղ որ Դոսրատն էր, իր միջնակ որդին։

—Փողերս տւի աղքատներին,—ասեց Դոսրատը,—ես ապրում էի քաղաքներում, մարդկանց մէջ, և տեսնում էի, թէ ինչպէս չարութիւնն ու թշւառութիւնը թագաւորում են ամեն տեղ։ Ձեր զօրքերը կոտորում են ժողովրդին։ Դուք հարստահարում էք անմեղներին։ Շռայլութիւնը, քաղցը և հիւանդութիւնները կործանում են ձեզ։ Դուք, ողորմելի՛ որդներ, մոռացել էք առաքինութիւնը և Բրահմային։ Ես չէի կարող ապրել ձեր մէջ, որտեղ ամեն բան ունայնութիւն է, որտեղ չըկայ արդարութիւն, ես առանձնացայ անապատումը։ Եւ այնտեղ՝ առանձնութեան մէջ՝ հոգով վերանում էի դէպի Նիրւանան, դէպի յաւիտենական խաղաղութիւնը։ Հաւատս բոցբոջ արձակեց սըրտիս մէջ՝ ինչպէս լոտոսի ծաղիկը, և ես դարձայ ճգնաւոր, և պաշտելի դարձայ նոյն իսկ Բրամիններին։

—Բայց երջանի՞կ ես դու, որդեակ իմ, հարցրեց ծերունին։

Դոսրատը նայեց հօրը, ձեռքը դրաւ ճակատին և մըտածութեան մէջ ընկաւ։

—Յիշում եմ՝ մի գիշեր,—շըշնջաց նա մեղմիկ,—ամպերը որոտում էին անապատի վրայ, կայծակը ճեղքում էր երկինքը։ Բարձր արմաւենիները կռացնում էին

ճյները մինչև գետին։ Նոյն իսկ քարերը՝ կարծես՝ մրրկի նման բարձրանում էին։ Եւ ես մրրկի բերանն ընկած՝ սկսեցի ապաստարան որոնել։ Յանկարծ հեռւում մի լոյս փայլեց. այդ մի պարիայի հիւղ էր։ Մօտեցայ և տեսայ, թէ ինչպէս էր վառւում կրակը օջախի մէջ։ Պարիան նստած էր խարոյկի մօտ և երեխաները կշտին։ Նրանք ընթրիք էին անում։ Նրա կինը օրօրում էր երեխային։ Փոքր խարոյկի ճայթող տաշեղները երևում է լաւ տաքացնում էին նրանց և այդ կրակի մէջ մի ինչ որ խաղաղ, գրաւիչ և ուրախ բան կար, ինձ համար անծանօթ։ Ես չուզեցի մտնել պիղծ պարիայի հիւղը և հեռացայ, բայց այդ ժամանակից անդադար հալածում է ինձ այն միտքը, թէ ես ևս կարող էի նոյնպէս նստել, շրջապատւած ընտանիքով, ճաշակելով նրա քաղցրութիւնը, մինչ ես միայնակ եմ և ոչոքի պէտքական չեմ... Չունիմ ոչ ոք սիրելու և ոչ ոք, որ սիրէր ինձ։

Եւ արտասուքը ողողեցին Դոսրատի աչքերը։ Հազիւ նա մի կողմը քաշւեց, նրա տեղը բռնեց երիտասարդների մի խումբ, որ նոր էր եկել կոչունքին։ Նրանք ամենքն էլ ուրախ ու զւարթ էին։ Նրանց մէջ մի բարձրահասակ և սպիտակազգեստ մարդ կար։ Նա աչք ածեց հիւրերին և գլուխ տուաւ։

—Ռմմախ, զաւակս, բացականչեց տան տէրը, ճանաչելով նրան։

—Ես եմ, հայրիկ, պատասխանեց նա հանդարտ։ Ինչպէս խաղաղ աստղերի աղօտ լոյսը ցօղի կաթիլների մէջ, ինչպէս սոխակի երգի արձագանգը անտառի մէջ, ինչպէս կապուտակ երկնքի ցոլացումը սուրբի աչքերի մէջ,—այսպէս և իմ օրհնութիւնը թող անդրադառնայ ձեր սրտերի մէջ... Թէ ով եմ ես, հարցրէք ինձ շրջապատողներին. սրանք իմ բարեկամներս են, իմ աշակերտներս։ Կեանքը հանելուկ է, երջանկութիւնը՝ իմացողութիւն. բայց իմացողութիւնը առանց սիրոյ՝ այդ ժայռ է՝ առանց անտառի։ Նրա վրայ չեն շրշնջում գետակները, միայն սև ամպերը՝ իբրև սև մտքեր, երբեմն կախ են ընկնում։ Ես սիրեցի մարդկանց և ձգտեցի դէպի ճշմարտութիւնը։ Այժմ

պալատում և խրճիթում ինձ հանդիպում են ուրախութեան ժպիտով։ Ամբողջ Հնդկաստանը երգում է իմ երգերը և աշակերտներս համախմբւում են ինձ մօտ։ Ուրախ եմ, որ կարող եմ հաղորդել մարդկանց մի վայրկեան ուրախութիւն։

—Դու երջանի՞կ ես, Ռմմախ, միաձայն հարցրին նրան եղբայրները։

—Չգիտեմ, պատասխանեց նա,—բայց կարծեմ, ես աւելի քիչ դժբախտ եմ քան միւսները։

Հայրը գրկեց կրտսեր որդուն, իսկ Լախմանը և Դոսրատը գլուխները քաշ գցեցին։

Հ. Առաքելեան

Լ Ո Ւ Ղ Ո Ր Դ

(Շիլլերից)

«Ո՞վ արդեօք, ասպետ կամ թէ մանկլաւիկ
Սիրտ կանէ մտնել այս անդունդի մէջ.
Ձգում եմ մէջն իմ ոսկէ գաւաթիկ,
Որ շուտ կուլ կըտայ այս վիհը անվերջ։
Ով ինձ գաւաթը կրկին ցոյց կըտայ,
Իր սեփականն է, թող իրան մնայ»։
    Ասում է արքան և ժայռի գլխից,
    Որ անհուն ծովի վըրայ է կախւած,
    Ոսկէ գաւաթը ձգում է բարձրից
    Անյատակ ծովի յորձանքը կատղած։
    «Ո՞վ է սրտոտը, հարցնում եմ կրկին,
    Որ վստահ իջնի այս փոսը մթին»։
Եւ ասպետները, մանկլաւիկները,
Ձուրջը լուռ կանգնած՝ լսում են ահով,
Կատաղի ծովին ուղղած աչքերը,
Գաւաթն ստանալ չէ ուզում ոչով.
Եւ երրորդ անգամ հարցնում է արքան.
«Միթէ ոչ մէկը սիրտ չունի այնքան»։
    Չկայ պատասխան ոչ ոքի բերնից.—
    Բայց մի մանկլաւիկ հեզ և անվեհեր,

Ահա դուրս եկաւ թուլասիրտ խմբից
Եւ իսկոյն հանեց գօտին ու շորեր.
Եւ սարսափելով, բոլոր այր ու կին
Նայում են չքնաղ երիտասարդին։
Երբ նա բարձրացաւ քարափի վըրայ
Եւ աչքը ուղղեց այն մութ անդունդին,
Ջրերը, որոնց կուլ էր տալիս նա,
Յորձանքը թնդմամբ վիժում էր կրկին.
Եւ փրփրում էր, և կատաղում էր
Սև ծոցը, ինչպէս սև ամպ գոռում էր։
Շփոթւում է, եռում, սուլում, մռնչում,
Կարծես հուր ու ջուր միախառնւում են,
Փրփուրը մինչև երկինքն է թռչում,
Ալիքներն անվերջ իրար ճնշում են.
Եւ չի վերջանում և չի դադարում,
Կարծես ծովն էլի նոր ծով է ծնում։
Յանկարծ կատաղի ոյժը թուլացաւ,
Եւ փրփուրի մէջ, ձիւնի պէս սիպտակ,
Սոսկալի և մութ մի ճեղք բացւեցաւ,
Կարծես հասնում էր դժոխքի յատակ.
Եւ սարսափելի ուժով քաշում էր
Սև խորխորատը իր մէջ ալիքներ։
Հիմա շուտ, քանի հանդարտ է ծովը,
Պատանին Աստծուն ապաւինեցաւ,
Եւ աղաղակեց, սոսկաց ժողովը,
Եւ յորձանքի մէջ նա անյայտացաւ.
Անդունդը փակեց իր բերանը սև,
Նա էլ չի տեսնի երկինք ու արև։
Ջրի երեսին տիրեց լռութիւն,
Բայց տակը դարձեալ գոռոց ու վրդով,
Եւ շշնջում է ապշած բազմութիւն.
«Քա՜ջ երիտասարդ, երթա՜ս դու բարով»։
Եւ անդունդի մէջ խուլ գոռգոռում է,
Ամենքի սիրտը հեծում, դողում է։
Եթէ ձգէիր նոյն իսկ քո թագը,
Ասելով, ով այն կը հանէ կրկին,

Է ինձ հաւասար, է իմ ժառանգը,
Ինձ չէր հրապուրիլ վարձը թանգագին։
Ո՞ր մահկանացուն կարող էր պատմել,
Անդունդը ինչ է իր տակը ծածկել։
Որքան շատ նաւեր ուժով բռնել է
Յորձանքը, նետել սև անդունդի տակ,
Նոցա տաշեղը միայն վիժել է
Այս ամենակուլ որկորը անյագ։—
Եւ աւելի պարզ, և աւելի մօտ
Լսւում է, ինչպէս մօտեցող որոտ։
Շփոթւում է, եռում, սուլում, մռնչում,
Կարծես հուր ու ջուր միախառնւում են,
Փրփուրը մինչև երկինքն է թռչում,
Ալիքներն անվերջ իրար ճնշում են.
Եւ փրփրում է, և կատաղում է
Սև ծոցը, ինչպէս սև ամպ գոռում է։
Բայց տես, այն խաւար փոսից դժոխքի
Ահա՛, բարձրացաւ սիպտակ, ինչպէս ձիւն,
Մի թև, մի ծոծրակ, և դէմ հոսանքի
Կռւում է, որքան ունի զօրութիւն։
Այդ նա է, նա է աջ ձեռով լողում,
Ոսկէ գաւաթը փայլում է ձախում։
Եւ նա շատ երկար խորը շունչ առաւ,
Ուրախ ողջունեց երկնքի լոյսը,
Ամենքի բերնից յանկարծ դուրս թռաւ.
«Նա կենդանի՛ է, զուր չէր իր յոյսը.
Թաց գերեզմանից, անդունդից մթին
Քաջը ազատեց իր անմահ հոգին»։
Եկաւ։ Ամենքը դիմաւորեցին,
Եւ նա իր տիրոջ ոտներն ընկնելով,
Ծնկաչոք յանձնեց գաւաթն արքային,
Որ իր աղջկան արեց նշանով.
Կոյսն անոյշ գինով լցրեց գաւաթը,
Եւ այսպէս խօսեց երիտասարդը.
«Շա՜տ ապրի արքան։ Թող կեանք վայելէ.
Ով որ ապրում է արևում փայլուն.

Բայց այնտեղ՝ ցածում սարսափելի է,
Աստուծուն չըփորձէ թոյլ մահկանացուն.
Թող չը ցանկանայ երբէք նա տեսնել,
Ինչ որ Ստեղծողը մութով է ծածկել»։
«Ինձ ներքև քաշեց, արագ ինչպէս նետ,
Բայց այնտեղ ցածում մի մութ քարայրից
Յարձակւեց իմ դէմ կատաղի մի գետ,
Եւ ես բռնւեցայ կրկին հոսանքից.
Եւ ինձ դարձնում էր պտուտակի պէս,
Նորա դէմ կռւել կարող չէի ես»։
«Տեսնելով, որ ես կորած եմ անճար,
Խնդրեցի Աստծուն, որ օգնէ նա ինձ,
Եւ նա ցոյց տըւաւ դուրս ցցւած մի ժայռ,
Որ պինդ գրկեցի և պրծայ մահից.
Եւ կօրալիօնի վըրայ կախւած էր
Այնտեղ գաւաթը, թէ չէ կորած էր»։
«Դեռ մի լեռնաչափ անդունդ կար իմ տակ,
Թոյլ լուսաւորւած կարմրափայլ լուսով,
Որ համր էր, ինչպէս գերեզման մի փակ.
Բայց տեսնում էի ես սարսափելով
Ցածում մողէսներ, անթիւ վիշապներ
Եւ ամեն տեսակ ծովային հրէշներ»։
«Եւ եռում էին, ոլորւում էին,
Իրար խառնըւած անդնդում անտակ.
Նարկէզ, ձողաձուկ, ուռն ծովային
Եւ ծովի բորեան, շնաձուկն անյագ,
Որ իր բերանը լայն բաց անելով,
Ինձ մահ էր սպառնում սուր ատամներով»։
«Ես կախւած էի այնտեղ սոսկալով,
Հեռու մարդկային օգնող բազուկից,
Հեռու և մենակ սիրազգաց սրտով,
Եւ հրէշներով պատած չորս կողմից։
Էլ ինձ մարդկային մի ձայն չէր հասնում
Այն դժոխային մութ անապատում»։
«Յանկարծ սարսափած, տեսնեմ սողում է
Դէպ՝ ինձ մի հրէշ հարիւրոտանի.

Նա արդէն բռնել ինձ պատրաստւում է,
Ձուտ թողի ժայռը կօրալիօնի.
Ինձ սաստիկ ուժով բռնեց հոսանքը,
Վերև նետեց և—փրկեց իմ կեանքը»։
Երբան լսելով նըրան զարմացած,
Ասաց. «Գաւաթը քեզ է պատկանում,
Եւ այս մատանին առ, զարդարած
Մեծ ադամանդով, քեզ եմ խոստանում,
Եթէ կըփորձես սուզել դու կրկին,
Եւ պատմել, ինչ կայ ծովի յատակին»։
Արքայի դուստրը այս խօսքի վըրայ
Դարձաւ իր հօրը սրտաշարժ ձայնով.
«Բաւական է, հա՛յր, թո՛ղ փորձը մնայ.
Նա արաւ, ինչոր կարող չէ ոչով.
Բայց թէ անպատճառ ուզում ես կրկնել,
Թո՛ղ սրան, փորձիր մի ասպետ կանչել»։
Բայց արքան ձգեց գաւաթը նորից
Պըտըտան զուպի մէջ և ասեց այսպէս.
«Թէ էլի բերես գաւաթը դու ինձ,
Անշուշտ առաջին ասպետս դու ես.
Եւ իմ աղջկան, որ թախանձագին
Բարեխօսում է, կըստանաս քեզ կին»։
Երիտասարդի հոգին բորբոքւեց,
Նըրա աչքերը ուրախ փայլեցին,
Սիրուն աղջիկը կարմրեց ու դեղնեց
Եւ ուշաթափւած փռւեցաւ գետնին.
Եւ մանկլաւիկը թանգագին վարձով
Հրապուրւած, վստահ ձգեց իրան ծով։
Դարձեալ բարձրանում, դարձեալ իջնում է
Կատղած հոսանքը սաստիկ թնդալով,
Աղջիկը առաջ թեքւած նայում է
Անդունդի վըրայ, սիրտը դողալով.
Բայց ալիքները իջնում են ելնում,
Երիտասարդին էլ չեն դուրս հանում։

Գէորգ Բարխուդարեան

ՎԻՇԱՊԱՁՈՐԸ

(Հայկական աւանդութիւն)

Մութ գիշեր էր, ճանապարհս խորդ ու բորդ։ Կառապանս, մի բարի դէմքով խելացի ծերուկ՝ ամբողջ ճանապարհին ինձ զւարճացրել էր իր սրամիտ խօսակցութիւնով։ Մութն ընկնելուն պէս նա կամաց-կամաց լռեց և այժմ հանգիստ նիրհում էր իր տեղում երասանակները բաց թողած։ Վերջին հանգամանքը խիստ անհանգստացնում էր ինձ, որովհետև ձիերը մի անօրինակ յամառութեամբ անդադար դուրս էին քաշում կառքը ճանապարհի մէջ տեղից մերթ դէպի մէկ՝ մերթ դէպի միւս կողմի ձորամուտը։

—Ծերուկ, քնեցի՞ր...

—Հը՞... չէ, պարոն, չեմ քնել, ո՞նց կքնեմ, էհ, ըշ՛շ, հա՛յդա։

Ձիերը կառապանի ձայնից զգաստացած, վինչացնելով փոխում էին վտանգաւոր ուղին, կառքը մի առժամանակ, առանց կասկածելի երերումների, ընթանում էր ապահով տեղով։ Սակայն այդ երկար չէր տեւում, շուտով կառապանի ծեր գլուխը կրկին կախւում էր կրծքին, ձիերը վերստին քաշում էին մեզ ճանապարհից դուրս, կառքը ցատկոտում էր վտանգաւոր դարուվերներով և քիչ էր մնում շուռ գայ, փշուր-փշուր լինի։

—Ծե՛րուկ, դու դարձեալ քնեցիր, նայի՛ր, կառքը շուռ է գալիս։

Պատասխանը նոյնն էր, հետևանքը նոյնը։ Յորդորներս նպատակին չէին հասնում։ Ես լուրջ կերպով մտահոգ էի, ելք էի փնտրում, որ թէ ծերունուն չըվշտացնեմ և թէ վտանգի առաջն առնեմ։

Ճանապարհն անցնում էր մի մռայլ ու խոր ձորի միջով, որի երկու կողմերում բարձրանում էին քարերի ահագին շեղջակոյտեր, սև ու այլանդակ գծերով։ Խաւարի մէջ թւում էր, թէ այնտեղ մի բանակ էր ջարդւած և

գոռոզ յաղթողը դիակներից արիւնոտ փառքի ամբարդակ է կանգնեցրել։

—Լսի՛ր, ծերո՛ւկ, այս ի՞նչ ձոր է։

—Հը՞... չէ՛, չեմ քնել պարոն, էհ՛, ըշ՛շ, հայդա։

—Գիտեմ չես քնել. դրա համար էլ հարցնում եմ, թէ այս ի՞նչ ձոր է ու այս քարերն ինչո՞ւ են այսպէս իրար վրայ շարւած։

—Էս ձո՞րը... օ՜օ, սա ուրիշ ձոր է, պա՛րոն, սրան Վիշապաձոր կասեն։

—Վիշապաձո՞ր... ինչո՞ւ, վիշապնե՞ր են եղել այստեղ։

—Հալբաթ եղել են, ասեց նա յօրանջելով ու լռեց։ Գլուխը կրկին քաշ ընկաւ կրծքին։ Անիծած ծերուկը կարծես միտքս հասկացաւ, դիտմամբ չէր ուզում խօսել քունը չըխանգարելու համար։ Իսկ ես մտածում էի նրան անդադար խօսեցնել, որ քունը չըտանի։ Ես յամառեցի։

—Այդ քարերը իրանք իրա՞նց են այդպէս կուտակւել, թէ՞ մարդիկ են շարել։

—Ուզում ես խօսեմ հա՞... ասեց նա ծիծաղելով։ Չէ՛, չեմ քնի, պա՛րոն, բայց դէ որ ուզում ես, քո խաթրը ո՞նց կոտրեմ, լսի՛ր՝ պատմեմ Վիշապաձորի պատմութիւնը։

Մեզանից շատ, շատ տարի առաջ, ասում են, էս տեղ մի մեծ գիւղ կար։ Աստծու աչքը վրան քաղցր էր, տները հազար բարիքով լի, ամենքը երջանիկ էին։ Միշտ էդպէս է, Աստւած որ տւաւ՝ կտայ, որ առաւ՝ միանգամից կա՛ռնի։

Գիւղի մօտով անցնում էր մի մեծ ճանապարհ, կարաւաններ էին գնում գալիս դէպի հեռու աշխարհներ, օտարականներ էին անցնում, հազար ու մի ճանապարհորդներ, և ամենքը գիտէին էդ գիւղը, ամենքը էնտեղ հանգստանում, սառը ջուր խմում, ողորմի տալիս ու անցնում էին։

Մի օր էլ հեռու ճանապարհի վրայ փոշի բարձրացաւ և ամպերի պէս պատեց երկինքը. մի չըտեսնւած կարաւան էր գալիս։ Գիւղացիք նայում էին զարմացած. կարաւանը եկաւ, եկաւ և ի՜նչ, փոշու մէջ կորած անտէրանտիրական, խեղճ ու մոլորւած մարդկանց ահագին բազ-

մութիւն, իրար ետևից խումբ-խումբ, շարան-շարան։ Գլուխները կախ, ձեռները ծոցը, լուռ, իրարից կախկխուած, ուժասպառ, յոգնած, գալիս են փոշու միջից։ Հասան, գիւղի առաջ կանգ առան ու ասում են.

«Մենք գալիս ենք հեռո՜ւ, հեռո՜ւ տեղերից, օխտը սարից օխտը ձորից էն կողմն էր մեր վաթանը, նա էլ չկայ։ Մի չար քամի զարկեց, սրբեց ու տարաւ ամեն ինչ։ Տուն ու տեղ ունէինք՝ հիմա բնաւեր ենք. արտ ու արօտ ունէինք՝ հիմա քաղցած ենք. աշխատող ձեռքեր ունէինք՝ տեսէք՝ փշրուած են. մարդ էինք՝ անասունից էլ վատ ենք. չէն դռներս՝ փակ, մենք՝ մուրացիկ, մեր մէջքը՝ կոտրած, մի կտոր հաց, մի անկիւն, էլի Աստծու արարածներ ենք, թող Աստուած ձեզ մէկ սև օր չտայ»։

Էսպէս խօսեցին խեղճերը ու լուռ սպասում էին։ Երջանիկ գիւղացիք էլ լուռ էին։ Նրանք մտածում էին, ընդունե՞լ, թէ՞ մերժել այս բազմաթիւ քաղցածներին։ Խորհուրդ արին, խօսեցին. վերջ ի վերջոյ գտան, որ ընդունել չեն կարող։ Մեզ ի՞նչ օգուտ, որ էսքան մարդ մեր հացն ուտի։ Մտածում էին նրանք, և դեռ ո՞վ գիտէ՝ կըհեռանա՞ն այնուհետև, թէ ոչ։

Խեղճերը գլխակոր ու լուռ սպասում էին։ Վերջապէս գիւղացիք առանց գլուխները բարձրացնելու, խեղճերի երեսին նայելու՝ ասեցին։

—Աստուած ձեզ հետ, գնացէք, տեղ չունենք, հալբաթ մի մեղք էք գործել, որ էս օրին էք։

Խեղճերը անցան, շարան-շարան։ Գիշեր էր և դեռ նրանք գնում էին. գիւղացիք իրանց տներում փակուած՝ լսում էին նրանց ծանր ոտնաձայնը, նրանց անքոցը, նրանց ախ ու վախը։ Գիւղում այն գիշեր ոչ ոք քնել չկարողացաւ։

Անցան օրեր, հասան խեղճերի նոր խմբեր. նրանց շարքերն ասես էլ վերջ չունէին, հեռու հեռու տեղերից զուլումը թափ առած, սողում, գալիս էր մեծ ճանապարհով, ինչպէս ծփծփան ծովը, որ յանկարծ քամիների ուժով դուրս է ձգւում ափերից ու ծածկում չորս կողմը։

Գիւղը պղնձուած, կռապաշտ դարձաւ։

Ասում են, որ շատ թշուառութիւն տեսնելով, մարդու սիրտը կամաց կամաց քարանում է։ Դրանք էլ մերժում էին ամենքին, մերժում էին, բայց էլի հանգիստ չէին, գիշերները չէին քնում, իրանց տեղաշորը կրծոտում էր մարմինները։ Էսպէս էր, պարո՛ն, մարդ շատ անգամ իր տանը նստած՝ մնում է երկու կրակի մէջ, որ նրան այրում են ներսից։ Ազատ մարդ ես քեզ համար, մի բան չես անում, բայց ներսդ փոթոթւում է։

Գիւղացիք երկար, բարակ մտածեցին, ծանր ու թեթև արին, ճար չըգտան. ուզում էին էնպէս լինի, որ թէ իրանց դռները փակ մնան խեղճերի առաջ, թէ կարողանան հանգիստ քնել գիշերները։

Դէ, պարո՛ն, էդպէս ո՞նց կըլինի. հոգի կայ, չէ՞... բայց նրանք մտածում էին հոգու ձայնը խլացնել։

—Հա՜յ դէ մէկը գար ու մեզ ազատէր մեր հոգուց, ասում էին նրանք իրար։

—Ե՛ս կազատեմ.

Նայեցին, սատանան էր նրանց առաջը ցցուած։

—Ի՞նչպէս կազատես.

—Ծախեցէք ինձ ձեր խիղճը, ձեր կամքը, ձեր ազատութիւնը և դուք հանգիստ կըքնէք։

—Մենք հանգիստ կըքնե՞նք։

—Հա՛, բոլորովին հանգիստ.

—Դիմողներին կըմերժենք ու գիշերները կըքնե՞նք.

—Հա՛. կըմերժէք ու կքնէք հանգիստ։

—Համաձայն ենք։

Եւ ծախեցին սատանային իրենց խիղճը, կամքը, ազատութիւնը։ Քահանան էլ ծախեց...

—Քահանա՛ն, բացականչեցի ես.

—Հա՛, ի՞նչ կայ որ. ռէսն էլ ծախեց, իշխաններն էլ ծախեցին, բոլոր ժողովուրդը՝ մեծ ու փոքր, մարդ ու կին՝ ծախեցին իրանց խիղճը, կամքը, ազատութիւնը։ Գիւղը դարձաւ սատանայի փայ ու բաժին։

Հասաւ գիշերը. առաջին անգամ ամիսներից յետոյ գիւղացիք տները մտան հանգիստ և ուզում էին քնել։

Բայց հագիւ անկողինները փոխեցին, պառկեցին, դրսից, փողոցներից կրկին լսեցին նոյն ծանր, ցաւոտ ոտնաձայները, նոյն տնքոցը, նոյն հեծեծանքը։ Դռներին ձեռք էին տալիս, պատերը չանգռում, ծվ... ոչ ոք չգիտէր, ոչ ոք չէր կարող ասել, բայց քնել չէր լինում։ Այն գիշերն ամենից սարսափելի, ամենից ծանր եղաւ։

Միւս առաւօտ գիւղացիք հաւաքւեցին ու գնացին սատանայի մօտ։

—Տո՛, անիրաւ, ասացին, դու մեզանից առար մեր հոգին, մեր ազատութիւնը, որ մենք գոնէ հանգիստ քընենք և դու մեզ խաբեցիր։

—Ես չեմ խաբել, դուք քնել չէք կարողանում, որովհետև ձեր գիւղից մէկը կայ, որ դեռ ազատ է։

—Ո՞վ է։

—Հովիւը։

Սատանան իրաւունք ունէր, գիւղացիք իրանց հովւին բոլորովին մոռացել էին։ Դէ ինչպէս չըմոռանային. հովիւը մի խեղճ ու կրակ հալեւոր էր, մօտ հարիւր տարեկան. և իր բոլոր կեանքը անց էր կացրել չոլերում, սարերում—ձորերում, գիւղից, աշխարհի բաներից բոլորովին բէխաբար։ Տարին տասներկու ամիս նա գիւղ չէր մտնի. ապրում էր իր անասունների հետ. ունեցած չունեցածը մի հողէ աման էր, որով կաթ էր խմում, մի երկար ու հաստ մահակ, մի մաշուած սրինգ, որ իր մանկութիւնից ածում էր և մէկ էլ թաղիքէ ծածկոց։

Ազատ և արդար մարդ էր, և ապրում էր իր համար անդարդ ու անցաւ։ Գիւղացիք մարդ ուղարկեցին, հովւին կանչելու։ Դէպքը զարմանալի էր. հալեւորը մեծ դժւարութեամբ համաձայնեց սարերից գիւղ իջնել։

Ահագին մահակը ձեռքին, թաղիքէ ծածկոցը թիկունքին, սրինգը գօտին խրած, հովիւը եկաւ ու կանգնեց մէյդանում։ Նրա երկար մազերը թափւել էին ուսին, մօրուքը, ձիւնի պէս ճերմակ՝ փռւում էր մինչև գօտին, և դէմքը, բարի ու արդար, երեխայի պէս նայում էր չորս կողմը և բան չէր հասկանում։

—Ի՞նչ էք ուզում ինձանից, ասեց նա։

—Ազատութիւնդ ծախիր սատանային։

—Չեմ ծախիլ, հոգիս էլ հետն է։

—Մենք բոլորս ծախել ենք, տէրտէրն էլ է ծախել, իշխաններն էլ, ռէսն էլ, երեցփոխն էլ։

—Դուք ծախել էք, էդ ձեր բանն է. ես էլ չեմ ծախում, իմ բանն է։ Իմ ընկերները բոլորը ազատ են, քամիները տէր չունին, գազանները վազվզում են ուզած տեղերը։ Հարիւր տարի է ես ազատ եմ, հիմա էս օրերիս իմ ազատութիւնը իմ կամքը, իմ խիղճը չեմ ծախիլ սատանային։ Հոգիս թէ տալու լինիմ, Աստծուն կտամ։ Դուք սատանայի փայ ու բաժին էք, ես ձեզ հետ գործ չունիմ։

Ասեց, երեսը դարձրեց ու ճանապարհ ընկաւ դէպի սարերը։

—Ի՞նչ անենք, հարցրին սատանային.

—Հալեւորին թաղեցէք, ուրիշ ճար չըկայ։

—Ողջ ո՞ղջ։

—Հա՛, ողջ ողջ թաղեցէք և դուք հանգիստ կըքնէք։

Սատանայի ստրուկներն էին. ազատութիւնն ու հոգիները ծախած, էլ ինչ կարող էին անել. վազեցին հասան ծեր հովւին, բռնեցին, յետ բերին ու կանգնեցրին ա՛յ, էս ձորում։ Մեծ ու փոքր բահ ու թի առած՝ սկսեցին փորել և պատրաստեցին մի մեծ վիհ, խոր, ինչպէս անդունդ։

Ծերունին հանդարտ կանգնած՝ նայում էր փոսին։

—Թաղե՞լ էք ուզում ինձ։

—Հա՛, կամ ազատութիւնդ ծախիր, կամ քեզ կըթաղենք։

—Թաղեցէք, բայց թողէք ինձ վերջին անգամ ածեմ սրինգս։

—Մի՛ թողէք, ասաց սատանան։ Չարը մի բան գիտէր։

Եւ վրայ պրծան ծերունուն. մէկը ոտներից բռնեց, մէկը ձեռներից, մէկը գլխից, մէկն ուսերից, մէկը մէջքից ու գլորեցին խոր փոսի մէջ, հողը թափեցին վրան, ծածկեցին։

Էս սարսափելի թաղումից յետոյ բազմութիւնը գոհ սրտով վերադարձաւ գիւղ։ Հասաւ գիշերը· ներս մտան քնելու։

. . . .

Թըր՛խկ, Թըր՛խկ։

—Ո՞վ ես։

—Ջրվաճառուածը։

—Ի՞նչ ես ուզում։

—Ոչինչ, ես շրջում եմ, ես ազատ եմ։

—Չենք հասկանում, ազատ բան չկայ էս կողմերում, ազատ մարդ չկայ մեր գիւղում։

—Սարերի ծերունին ազատ է։

—Թաղուած է։

—Թաղուած ազատութեան սուգն եմ անում։

Եւ հնչւում էր սրնգի ձայնը, տխուր, հոգեհան, ասես սար ու քար լալիս էին, հեծեծում։

Եւ բոլոր դռների առաջ խօսում էր նոյն ձայնը և ամենքը լսում էին սրնգի ողբը, քամիներն էլ լալիս էին նրա հետ։ Մարդկանց վրայ կարծես երկնքից կրակ էր մաղւում, նրանց մազերը դիզանում էին, նրանք կծկւում, իրար էին կպչում երկիւղից ու ցաւից և քնել չէր լինում։

Առաւօտը դարձեալ բոլորը հաւաքւեցին գնացին սատանայի մօտ։

—Տօ, չա՛ր անիրաւ, ասեցին, դու մեզանից առար մեր խիղճը, մեր կամքը, մեր ազատութիւնը, մեր հոգին, որ մեզ գոնէ հանգիստ տաս. բայց մեր դռները գիշերները ծեծում են, մենք տանջւում ենք, քնել չենք կարողանում։

—Նա՛ է։

—Ո՞վ։

—Հովիւը։

—Ախր երէկ թաղեցինք։

—Քարեր դիզեցէ՞ք վրան։

—Չէ.

—Քարեր պէտք է շարել վրան, հէնց էս գիշեր։

Յուսահատուած, կատաղած գիւղացիք հէնց որ գիշերը վրայ հասաւ, դուրս եկան և բոլորը վազեցին դէպի հովւի գերեզմանը։ Յանկարծ ի՜նչ տեսնեն։ Գերեզմանի բարձր թմբի վրայ, նստել է մի փառահեղ ծերունի, իսկ և իսկ հովւի նման. սրինգն ածում է նա ածում, իսկ նրա չորս կողմը բռնել են անթիւ գազաններ, գայլեր, արջեր, աղուէսներ, առիւծներ, վագրեր, լսում են սրնգի ձայնը և սուգ անում։ Ողջ ձորը թնդում է նրանց ոռնոցից, քարերն էլ նրանց հետ տնքում են։ Ծերունին սրինգը ցած առաւ շրթունքներից, ոտքի կանգնեց, ինչ հասակ. մի հսկայ, մի աժդահայ, աչքերից կրակ էր թափւում, գազանները կծկւեցին նրա ոտների տակ։

Սարսափած բազմութիւնը քարացաւ իր տեղում։ Ծերունին իր ահագին բազուկները տարածեց օդի մէջ և ճչաց զարհուրելի ձայնով.

—Գնացէք, անիծւածնէ՛ր, սատանայի ծնունդներ, ձեր թաղածը՝ գազաններն են սգում. ձեր փոխարէն նրանք են լալիս։ Ձեր արցունքը նրանք են թափում։ Հեռու էս տեղերից, գնացէք կրծոտեցէք ու չանգռեցէք իրար, սատանայի ստրուկներ։

Ասեց ու ծածկւեց գերեզմանում։ Գազաններն ոռնացին սարսափելի ձայներով ու յարձակւեցին բազմութեան վրայ։ Զարզանդ բռնեց ամենքին, նրանք շշկլած սարից քարից գլորւեցին ու իրար վրայ թափւեցին՝ շարան-շարան, շերտ-շերտ։ Մէկը միւսի կրծքին, մէջքին ուսերին, թիկունքին։ Ամեն մէկը բաց աչքով տեսնում էր, թէ ինչպէս իր վրայ ընկածը տրորում, չանգռում, կրծոտում է իր կուրծքը և հասկանալ չէր կարողանում, թէ ինչո՞ւ է էդպէս։

—Ինչո՞ւ ես կրծոտում, տրորում ինձ, մեռա՛յ։

—Չըգիտե՜մ... չըգիտե՜մ... ես ազատ չե՜մ...

—Վերից, վերի՜ց հարցրու...

Եւ բոլոր մարմինները օձերի պէս գալարւած, փաթաթւած իրար, մռմռում, տնքում, հեծեծում, մռնչում էին. և նրանց ոսկորները ճարտատում էին. և նրանց շրթունքները արիւնէ փրփուրով ծածկւում, աչքերը բնից դուրս գալիս, մէջքերը տասը տակ ծալւում և վերից մի

զարհուրելի, մի ծանր բան սղմում, սղմում էր անդադար։ Էլ ելք ու փրկութիւն չկար. նրանք զարզանդից քարացան իրանց տեղերում։ Այ էն ձորի քարերն էին, որ մենք տեսանք։ Մի վիշապ էլ եկաւ, մտաւ էդ քարերի մէջ, մինչև հիմա էլ նա այնտեղ է, ինքը չի երևում, բայց պոչը քաշ է ընկած ժայռի ճեղքից, քանի կտրում ես, էլի երկարում է։ Ասում են, որ սատանան է, որ էն ժամանակ վիշապ է դարձել ու իր փայ ու բաժին դարձած հոգիները պահում է էնտեղ։ Վիշապաձորն է այն։

Անիծած ձոր է. չոր ու պղնձւած։ Ոչ մի ծառ չի բուսնում էնտեղ, ոչ մի ծաղիկ չի ծլում, խոտ չի կանաչում. ոչ մի Թռչուն էնտեղ բուն չի դնում, ոչ մի սողուն չի մօտենում էդ քարերին։

Ձորից վաղուց էինք հեռացել, ծերունին վերջացրեց իր պատմութիւնը, ձիերին շարժեց։

—Հէ՜, ըշ՜շ, հայդա՜։

Կենդանիները փնչացրին ու առաջ սլացան։ Ես մտախոհ էի, իմ աչքից էլ չէր հեռանում գազանների այդ զարմանալի սուգը այդ անօրինակ գերեզմանի վրայ, ես տեսնում էի այն հսկայ ծերունուն. նրա բոցավառ աչքերը, նրա փառահեղ դէմքը, ես լսում էի կարծես նրա սպառնալի ձայնը, որով անիծում էր իր ոտների տակ սողացող բազմութիւնը, որ չըգիտէր, Թէ ինչ է ծախել, ինչ է Թաղել. ինչի՞ց է զրկւել։

—Պա՜րոն.

. . . .

—Պա՜րոն, հիմա էլ դո՞ւ ես քնում, ասեց ծերունին. երևի ես նրա առաջին կանչին չէի պատասխանել մտքերիս մէջ խորասուզւած։

—Չէ՜, ծերուկ, չեմ քնել միտք եմ անում։

—Ես էլ մի բան եմ մտածում։

—Ի՞նչ։

—Ես մտածում եմ, ու ինձ էնպէս է Թւում, որ էն ծեր, արդար հովւի անէծքը դեռ աշխարհի վրայ է։

Ինչո՞ւ ես այդպէս կարծում, ծերուկ։

—Ախր ո՛ր կողմդ նայում ես, աշխարհում մարդիկ իրար կրծոտում, տրորում, չանգռտում են, ու իրանք էլ չըգիտեն ինչի համար։ Ցաւ ու դարդ է չորս կողմներս։ Գազանները մեզ վրայ էլ իրաւունք ունին արցունք Թափելու։

Ես լուռ էի… Ծերուկն էլ չէր քնում։

—Է՜հ, էդ բաների մասին չըմտածելը լաւ է, մռմռաց նա ինքն իրան և երասանակները շարժեց Թափով։

—Հէ՜, ըշ՜շ, հայդա՜։

Ձիերը սլանում էին։

Արշալոյսը մօտ էր*։

Ա. Ահարոնեան

* Վիշապաձորը գտնւում է Երևանի Սուրմալըւի գաւառում։

Ջ Ր Ա Հ Ե Ղ Ձ Ը

Պուշկինից

Ներս վազեցին մանուկները
Ու կանչում են հօրն ըշտապ.
—Ա՛պի, ա՛պի, եկ, մեր Թօռը
Մեռել հանեց գետի ափ։
—Սուտ էք ասում, շան լակոտներ,
Գոռաց հայրը ահաբեկ։
Ըսպասեցէք դուք հալա դեռ,
Մեռելն յետոյ կըտեսնէք։
—Դիւան կըգայ—ջուղաբը տո՛ւր.
Ցաւի միջում կըմընամ…
Հընար չըկայ. բե՛ր, ա՛յ կընիկ,
Ձորերըս տուր, մի գընամ։
—Ո՞ւր է մեռելն։—Ա՛յ ա՛պի, ա՜յ։
Ճիշտ որ՝ գետի եզերքին,
Թաց Թօռի մօտ, գետնի վըրայ
Տարածւած էր մի մարմին։
Զարհուրելի դիակն ուռել,
Կապըտկել էր այլանդակ։

Արդեօք տանջւած մի թշւառ էր
Հանգիստ պըտած ջըրի տակ.
Մի գետակուր ձըկնորս էր այն,
Թէ գինեմոլ մի ջահէլ,
Թէ անըզգոյշ վաճառական
Հարամու էր պատահել...
Ընչի՞ն է պէտք. աչք ածելով
Ըշտապում է գիւղացին,
Ոտից բըռնած, ետ քարշ տալով,
Ջուրն է տանում խեղդւածին։
Ու թիակով գետի եզրից
Ջուրը հըրեց նա նըրան,
Ու դիակը գընաց՝ նորից
Փընտրի խաչ ու գերեզման։
Մեռելն երկար ջըրի միջին
Ցած էր իջնում ճօճելով,
Աչքով ճանպեց մեր գիւղացին
Ու տուն դարձաւ կանչելով.
—Դէսը կորէք, ա՛յ լակոտներ,
Եկէք, բան տամ ձեզ—տանեմ,
Ամա թէ որ ձէն էք հանել,
Հոգիներըդ կըհանեմ։
Գիշերն ուժգին բուք վերկացաւ,
Գետն ելնում է, որոտում...
Մարխը արդէն այրւեց, հանգաւ
Լուռ ու ծըխոտ խըրճիթում։
Ողջ քընած են։ Անքուն պառկած
Միտք է անում գիւղացին...
Բուքն ոռնում է... մին էլ յանկարծ
Լուսամուտը բախեցին...
—Ո՞վ ես։—Ներս թո՛ղ, ա՛յ տանտէր, ներս...
—Ա՛յ ներս ու քեզ չոռ ու ցաւ.
Ի՞նչ ես շըջում հայէնի պէս,
Ո՞ր սատանէն քեզ բերաւ։
Ի՞նչ անեմ քեզ, ասա, հիմի.
Տեղըս նեղ է, տունը մութ,

Ու ծոյլ ձեռքով, տըրտընջալով՝
Բաց է անում լուսամուտ։
Ցոլում է լոյսն ամպի տակից.
Ահա կանգնած... մի մերկ մարդ.
Ջուր է հոսում նըրա միրքից,
Բաց են աչքերն ու անթարթ։
Կախ են ընկած բազուկները,
Ողջ կարմրած սոսկալի,
Ուռած մարմնին քառչանգները
Կըպած սևին են տալի...
Ահից մարեց՝ ճանաչելով
Իր մերկ հիւրին նա յանկարծ.
Փեղկը զարկեց։ Նա դողալով
—Ա՛յ դու ճաքես, քըրթմըջաց։
Ամբոխւեցին մըտքերը մութ.
Մինչև լոյսը նա դողում,
Մինչև լոյսը լուսամուտ
Բախում էին ու բախում...
Ամբոխն ահեղ զըրոյց ունի,
Թէ այս դէպքից գիւղացին
Ըսպասում է ամեն տարի
Միշտ նոյն օրը խեղդւածին։
Խառնւում է օրն առաւօտից,
Գիշեր գալի բուք ու մութ,
Ու խեղդւածը ամբողջ գիշեր
Բախում դուռն ու լուսամուտ։

Յովհաննէս Թումանեան

ԼԵՌՆԱՅԻՆ ՈԳԻՆ

(Իրօնական աւանդութիւն)

Գեղեցիկ է Թիուլէթեան Արագւան. Նրա վճիտ ջրե-րը ժպտում են շրջապատող ջրերի հետ։ Ծիծաղում է Արագւան, նրա ջրերը ցայտում են և ցընցուղները արևի տակ կանաչ-կարմիր են կապում։

Անցնում է նա հանդարտ մամռապատ քարերի վրայից և նրա ջրերը զմրուխտանում են։

Հոսում է նա անտառների միջով և նրա ջրերը տեղ տեղ կանգնում, լճանում են. գեղեցիկ է այդ տեղը մանաւանդ գիշեր ժամանակ. չինարի ծառեր՝ երկու ափից բարձրանալով՝ ճղները մինչև իրար են հասցրել. այդ հովանու տակ հանդարտ հոսում է Արագւան, իսկ տերևների միջից ցած է նայում լուսինը և նրա պատկերը դողդողում է լճացած ջրերում։

Բայց այդպէս չէ Արագւան, երբ նա հոսում է Սատանայի Հովտի միջով. նա նմանում է մի կատաղած գազանի։

Զարհուրելի է Սատանայի Հովիտը. երկու կողմից մռայլ ժայռերը խէթ-խէթ նայում են իրար. նրանց տակը փրփրում, մռնչում է Արագւան, խփում է գորշ ջրերը լեռներից ընկած քարերի ու ժայռերի կտորներին. փշրւում են նրա ջրերը և նա յաղթւած կարեվէր, վայ է տալիս, հեծում իր սրտի խորքերից և նրա խաղից արձագանգ են տալիս մութ ժայռերի խորերը...

Զարհուրելի է Սատանայի Հովիտը. երկինքը մինչև անգամ չի ցոյց տալիս նրան իր պարզ դէմքը. նրան ծածկում են միայն մութ ամպերն ու մառախուղը, իսկ ժայռերի ծոցում թաքնւած են կայծակներն ու մրրիկը...

Զարհուրելի է Սատանայի Հովիտը մանաւանդ փոթորկի ժամանակ. որոտում է ամբողջ հովիտը հիմնիվեր, գոռում է Արագւան, մռնչում է փոթորիկը, թնդում են լեռները... և սարսափած ճանպորդը երեսը շուռ է տալիս այդ տեղից. նրան Իրօն (օս) սայլապանը յիշեցնում է, որ անցնում են Սատանայի Հովտի միջով...

—

Բայց միշտ այդպէս չի եղած Սատանայի Հովիտը՝ Կար ժամանակ, երբ նա կոչւում էր Երանութեան Հովիտ, և, արդարև, գեղեցիկ էր այն ժամանակ հովիտը. նա չէր ներկայացնում բնութեան տարերքների գոռոզ կռիւը. այն ժամանակ չէր ծեծում Արագւան Գուդ լեռան ու քերում նրա կողերը և լեռը չէր փշրում նրա ալիքները և ձիւնի

սիւները ու ժայռերի կտորներ թափում նրա մէջ. նա չէր սպառնում Արագւային իր խորերից. այն ժամանակ չէին փայլատակում կայծակները, չէր մռնչում փոթորիկը...

Գեղեցիկ էր այն ժամանակ Երանութեան Հովիտը։

Գուդ լեռան լանջերը ծածկւած էին շքեղ կանաչով և նրա մէջ տեղ-տեղ սփռւած էին թանգագին ակների նման լեռնային շուշանը, վայրի նարգիզը, մանուշակը. լեռան ծոցից դուրս էր բղխում Անմահական աղբիւրը և հոսում հովտի միջով. աղբիւրի ափին կանգնած էր Իրօնների* աուլը և նրան շրջապատում էր կուսական անտառը։ Անտառի խորքում վխտում էին եղջերուն և եղնիկը. ծառերի վրայ երգում էին բիւլբիւլն ու զարւատիկը**... Արդարև, գեղեցիկ էր այն ժամանակ հովիտը. գեղեցիկ էր, որովհետև նրանց հովանաւորում էր Գուդը՝ Լեռնային Ոգին։

Եւ իրօնները—աուլի բնակիչները չէին պարապում, ինչպէս հիմա՝ աւազակութեամբ ու մարդասպանութեամբ. ուրիշի կայքը չէին յափշտակում. նրանք գոհ էին իրանց վիճակից. որսի միսը խորովում, ուտում էին, իսկ մորթուց ու բրդից՝ նրանց կանայք եափընջիք ու տրեխներ էին պատրաստում. նրանք խմում էին Անմահական Աղբիւրի ջուրը։

Աուլի մէջ ապրում էր Շեթէն իր միակ դուստր Դոսաննայի հետ միասին։

Գեղեցիկ էր ու աննման Դոսաննան։ Ամբողջ Իրօնստանում չէր ծնւած այնպիսի չնաշխարհիկ մի արարած։

---

* Իրօնները կամ օսերը այժմ թւով մօտ 70,000 բնակւում են գլխաւորապէս Կովկասի լեռների հիւսիսային մասում։ Ենթադրութիւն կայ, թէ սրանք մեր պատմութեան մէջ յիշւած Ալաններն են (որոնց Սաթինիկ արքայազնուհին Բ. դարում դարձաւ Արտաշէս երկրորդի կինը), իսկ Իրօնստանը՝ հին Ալանաց աշխարհը։ Իրօնները մեծ մասամբ քրիստոնեաներ են. կան նրանց մէջ և մահմեդականներ և հարիւրի չափ հեթանոսներ։

** Իրօներէն զարւատիկ նշ. ծիծեռնակ։

Նրա աչքերը կապուտակ էին, ինչպէս Երանութեան Հովտին նայող ջինջ երկինքը․ նրա մազերը կարծես ոսկեջրած լինէր․ սպիտակ էր նա, ինչպէս եղնիկի կաթը․ կարմիր, ինչպէս Գիւրջիստանի վարդը․ ման էր գալիս այնպէս թեթև, ինչպէս լեռնային այծեամը․ խօսում էր այնպէս քաղցր, ինչպէս բիւլբիւլ․ գեղեցիկ էր ու աննման Դոսաննան։

Եւ անմահ Գուդը՝ Լեռնային Ոգին շատ էր սիրում Դոսաննային։

Մանուկ էր դեռ Դոսաննան․ նա շատ էր սիրում նախշուն ու փայլփլուն բաներ․ դուրս էր գալիս առաւօտը, գնում աղբիւրի մօտ երեսը լւանալու և Գուդը հանում էր իր ծոցից, դնում աղբիւրի մէջ բոլոր փայլուն բիւրեղներն ու գոյնզգոյն քարերը․ Դոսաննան հաւաքում էր և հրճւում նրանցով։

Գնում է Դոսաննան սարի ստորոտում ծաղիկներ հաւաքելու և Գուդը հաւաքում է ամեն կողմից ամենագեղեցիկ ծաղիկները և սփռում է նրա ոտքերի տակ։

Բարձրանում է Դոսաննան լեռան վրայով և լեռը հարթում է նրա առաջ բոլոր ժայռերն ու զառիվայրերը և արքայական սուրհանդակը՝ անցնելով լեռան մօտիկ՝ մոռանում է առ ժամ իր պարտքը, կանգնեցնում է փրփրաբախ ձին ու նայում է հրճւանքով հրեշտակային մանուկին, որ մագլցում է ժայռերի վրայ այնպէս թեթև, ինչպէս լեռնային այծեամը։

Անցնում են հայ վաճառականները քարւաններով, իջնում են աւլի մօտ, բայց չեն մոռանում իրանց Դոսաննային․ նրան բերում են դէյրացու Շաքի-Շիրւանի մետաքսից, նրան բերում են ընծայ Ֆռանգստանի ամենախորամանկ խաղալիքները…

Մէկ խօսքով՝ Դոսաննան թագուհի էր այն բոլոր տարածութեան վրայ, ուր թագաւորում էր ալևոր Գուդը։

Բայց տարիներն անցնում են ու չքնաղ Դոսաննան մեծանում է, նրա կուրծքը զարգանում, հասակը կազմակերպւում, նրա աչքերը լցւում են մտածմունքներով ու զգացմունքներով։

Իրօնստանի բոլոր ջահէլները և բոլոր աւլներից Շեթէի մօտ հարսնախօսներ են ուղարկում․ մէկը պարծենում էր իր գեղեցկութեամբ, մէկը՝ հարստութեամբ, մէկը՝ ծագումով, մէկը՝ քաջութեամբ․ բայց զոռոզ Շեթէն թանգ է ծախում իր նազը։

Ամբողջ Իրօնստանում լսւում է Դոսաննայի գովքը, ծերունիները ճարտար լեզւով ոգևորում են երիտասարդներին, գրգռում են նրանց՝ իրար դէմ մրցելու՝ Դոսաննային ստանալու համար…

Մնջւում են երիտասարդները՝ նրա անունը լսելով․ նրանց լեզուն կապւում է, սրտերը փլչում․ երբ մտաբերում են, որ Դոսաննան իրանց չի հասնիլ, նրանց աչքերից արտասուք է թափւում։

Արտասւում է և ալևոր Գուդը, և արտասուքի առուքը թափւում են լեռան չորս կողմից․ արտասւում է նրա համար, որ ինքը մահկանացու չի ծնւած, որ կարողանար մրցել բոլոր Իրօնների հետ, որ կարողանար մատչելի լինել Դոսաննային․ արտասւում է նրա համար, որ Դոսաննայի ծնւած օրից ինքն զբաղւում է նրանով, որ այսքան տարւայ տանջանքը զուր պիտի անցնի․ ով գիտէ՝ ում պիտի պատկանի Դոսաննան։

—

Թագաւրեան* Ձորը հետզհետէ նեղանալով կազմում է մի կիրճ․ կիրճի երկու կողմով անցնում են անմատչելի ժայռեր, որոնցից մէկի վրայ դեռ մինչև հիմա երևում են ամրոցի աւերակները։

Այդ ամրոցը կենդանի էր այն ժամանակ, երբ կենդանի էր Երանութեան Հովիտը և ամրոցի իշխանն էր Թագաւրեան Սև-Ձիաւոր երիտասարդ Արագւան։

Քաջ ու համարձակ է Արագւան․ նրա գնդակը ամպերից ցած է գցում արծւին․ նրա խանջալը խրւում է մինչև գազանի լեարդը․ նա ոտի տակն է առել Ղազբեգն

* Թագաւրեան Ձորը (Тагаурское ущелье) հին յոյների և հռոմայեցոց յիշած «Կովկասեան դռներն» է։

ու Եալբուզը. ամենքը ճանաչում են նրան. Կաբարդիայի գոռոզ իշխաններն անգամ քաշւում են նրանից։

Նա ծագում է առել Հայոց Թագաւորներից, ուստի նրան ոչ մի իրօն չի հասնիլ իր ծագումով*։ Ո՛չ մի չարչի, ո՛չ մի խան չեն կարող առանց հարկ տալու անցնել Թագաւորեան ձորից։

Նրա աչքերը սև են, ինչպէս սև սաթը. մօրուքը սև, ինչպէս ածուխը. Նրա հասակը՝ չինարի, խանջալը՝ Խորասանի.—ո՞վ կըմրցի նրա հետ։

Սև է նա ոտից մինչև գլուխը, սև է նրա փափախը, սև է նրա եափնջին, սև է նրա նժոյգը. ախր զուր չեն նրան Սև-Ձիաւոր կոչում։

Եւ ահա Սև-Ձիաւոր իշխանը Շէթէին հարսնախօս է ուղարկում և խոստանում իրադ** տալ տասնութ անգամ տասնութ կով***։

Եւ Արադւան յաղթում էր իր բոլոր ախոյեաններին. ընդունում է ծերունի Շէթէն նրա իրադը և չնաշխարհիկ Դոսաննան նշանւում Սև-Ձիաւորի հետ։

Հարսանիքը Վասկիրկիի տօնին է լինելու****։

—

* Իրօնների մի աւանդութիւն պատմում է թէ՝ Հայոց աշխարհից մի Թագաւորի տղայ «Թագաւոր» անունով՝ իր եղբայրների վրէժխնդրութիւնից ազատւելու համար՝ իր մարդիկներով գաղթում է Իրօնստան և այնտեղ հաստատւում. նա շուտով տիրում է իրօններին և խառնւում նրանց հետ. սրանից առաջանում է Թագաւորեան ցեղը, որ իրօնների չորս նշանաւոր ցեղերից (Դիգորցիք, Ալագերցիք, Կուրտատինցիք և Թագաւորցիք) ամենանշանաւորն և պատկառելին է։ Թագաւորի անունով հին Կովկասեան դռները կոչւում են հիմա Թագաւորեան Ձոր։

** Իրադ՝ նոյն է, ինչ որ մեր բաշլըղը (գլխագին)։

*** Ասում են թէ՝ իրօնները տասնութից աւելի համրել չըգիտեն, ուստի 18×18 նրանց ամենամեծ թիւն է։

**** Վասկիրկին՝ Վաստիրջիի (Սուրբ Գէորգի) տօնն է, որ սկսւում է նոյեմբերի 10-ից և տևում մինչև դեկտեմբերի սկիզբը։ Իրօնները հարսանիքները գլխաւորապէս Վասկիրկին են կատարում։

Թագաւորեան իշխանը սկսեց յաճախ այցելել իր հարսնացուին և չքնաղ ու աննման Դոսաննան գերւեց ահարկու հսկայից. նա առաջին և անհուն սիրով սիրեց Սև-Ձիաւորին...

Եւ կատաղեց Լեռնային Ոգին. Գուդի լանջերի շքեղ կանաչը թառամեց, ծաղիկները չորացան. Նրա ճակատը մռայլւեց, այլ ևս չէին հեռանում նրա վրայից պղտոր ամպերն ու մշուշը...

Կատաղեց նրա համար, որ մի մահկանացու յաղթեց նրան, խլեց նրա Դոսաննային, և ահա գոռոզ Ոգին երդւում է վրէժխնդիր լինել Սև-Ձիաւորին... Նա դաշն է կապում հարևան լեռների բոլոր Ոգիների հետ...

—

Անցաւ ամառը. եկաւ սեպտեմբերը և նրա հետ ցուրտ ձմեռը Կովկասեան լեռներում. շուտով կըգայ և Վասկիրկին...

Զարթեց Արադւան իր ամրոցում, զէնքերն առաւ վրան և թամբեց Սև նժոյգը. նա այսօր գնալու էր կրկին հարսնացուին տեսութեան. աչքը ձգեց շրջապատող բնութեան վրայ և ապշեցաւ հիացմունքից. բայց մի՞թէ առաջին անգամն էր, որ տեսնում էր Կովկասի փառահեղ ու վսեմ բնութիւնը...

Նա ապշած նայում է ու տխուր մտածում, աչքը չի հեռացնում այն բնութիւնից, որին մանկութիւնից սկսած անտարբեր աչքով էր նայում. նա այժմ հիանում է նրանով, նայում է երկար, երկար, կարծես ուզում է կշտանալ նրան տեսնելով, կարծես այս վերջին անգամն է, որ տեսնում է այդ հրաշալի բնութիւնը...

Մի լեռան ետևից՝ ամպը ճեղքելով՝ բարձրացաւ արևը և նրա կարմիր ճառագայթներն ընկան ձիւնապատ գագաթների վրայ. կապուտակ մշուշը բարձրացաւ ձորերից և ովկեանոսի նման սկսեց ալիք-ալիք ծփալ. նա իրան մէջ առաւ բոլոր անսահման տարածութիւնը և թաքցրեց ամեն բան, միայն արշալուսով ներկւած սառցային գագաթներն էին, որ կարծես լողում էին այդ կապուտակ ովկիանոսի վրայով, իսկ ոսկեջրւած ամպերը երբեմն

կանգնում էին հովանու նման այդ լեռների գագաթներին, երբեմն ոլոր-մոլոր գալով՝ իջնում, պատառում էին կապուտակ մշուշը և խառնւում նրա հետ... Հրաշալի՛ էր տեսարանը. նա կարծես չէր կանգնած, այլ շարժւում էր. այդ սառցային լեռները մերթ խորասուզւում էին, մերթ վեր բարձրանում, մերթ շարժւում, իսկ նրանց շուրջը տարածւում էր անսահման մշուշը, որի կապուտակ ալիքները ծփում էին, կարծես շունչ էին քաշում...

Ամրոցի հանդիպակաց ժայռի վրայ կանգնած էր Իրօն հովիւը՝ կռթնած իր ցուպի վրայ. նա անտարբեր էր, ինչպէս երբեմն Արագւան, դէպի փառահեղ բնութիւնը. Նա անշարժ կանգնած՝ աչքերը ձգել էր իր այծերի վրայ, որոնք քարերից քարեր ոստոստելով՝ կրծում էին լեռնային նւազ խոտը...

Արևն սկսեց հետզհետէ բարձրանալ և մշուշն ամպերի հետ խառնւեց. վիթխարի լեռները ներկայացան իրանց բոլոր կազմւածքով։

Արագւան յանձնեց ամրոցը իր մարդիկներին, հեծաւ Սև Նժոյգը և ամրոցից դուրս արշաւեց։

Անցաւ Թագաւորեան Ջորը, և ոտքը դրաւ Գուդի պետութեան սահմանները. և երևաց նրան գոռոզ Ոգին մառախուղով շրջապատւած. սարսռաց Սև-Ջիաւորը. Գուդի աչքերում թաքնւում էր վրէժխնդրութեան կրակը և յաղթանակի հեգնական ժպիտը. Նրա երկար ու ալեոր մազերը, բեխն ու մօրուքը խառնւում էին մառախուղի հետ և անհետանում նրա մէջ...

Եւ սկսւեց Գուդի ու Արագւայի կատաղի կռիւը։

Մառախուղը շերտ-շերտ դուրս էր գալիս երկրի ծալքերից և խտանում էր. և մթնեց ամեն բան. թաքնւեց երկինքն ու երկիրը. մի քայլ տարածութեան վրայ չէր երևում՝ արդեօք անտառն է առաջը թէ թշնամի չէչէնի խանչալը. չէր երևում և Գուդը, միայն զգում էր Արագւան Լեռնային Ոգու. շնչառութիւնը...

Յանկարծ լսեց վագրի մռնչիւն, և կատաղի գազանը մի ոստիւնով թռաւ թամբի վրայ, բայց փայլեց խորասա-

նը և կուրծքը պատառւած գազանը վայր ընկաւ արիւնաթաթախ...

Բայց խելօք նժոյգը չէր կանգնում. նա ականջները կախած՝ զգոյշ քայլերով առաջ էր գնում. և զգաց Սև-Ջիաւորը, որ նժոյգը չի կորցնում ճանապարհը. Գուդի առաջին խաղը ի դերև հանեց իմաստուն նժոյգը։

Մառախուղը փարատւեց և երևաց նորից Լեռնային Ոգին. նա փչեց, և վեր կացան բուքն ու մրրիկը։

Ոռնաց քամին լեռներից և հարւածեց ժայռերն ու անտառները. դղրդացին անտառները և տնքացին իրանց խորերից, իսկ քամին յետ դարձաւ հեծեծալով և խլացրեց ամեն բան. երկինքը կրկին մթնեց։

Տեղաց ձիւնը, որ կտրում էր ապակու փշրանքների նման. արդեօք ո՞րտեղից է գալիս նա—երկնքի՞ց թէ լեռներից—ոչինչ չի երևում։

Մռնչում էր քամին և հետը լսւում էր Լեռնային Ոգու հրհռոցն ու ծիծաղը...

Ճանապարհն անհետացաւ. ձիւնի կոյտերը բլրացան և ծածկեցին ամեն բան։ Սև Նժոյգը խրւում էր նրանց մէջ մինչև փորը և դժւար էր քայլում. վերջապէս քամու մի հարւածից նա չոքեց ուժահատ և ընկաւ գետին. Արագւան իջաւ ձիուց և համբուրեց նրա արտասւալից աչքերը։

Զարհուրելի էր բուքը. ամբողջ տարածութեան վրայ չէր երևում մի շնչաւոր առարկայ, միայն Սև-Ջիաւորն էր, որ կռւում էր Լեռնային Ոգու արհաւիրքների դէմ և Լեռնային Ոգին, որ հրհռում ու ծիծաղում էր զոհի վրայ...

Ձին նորից ոտքի կանգնեց և սկսեց շարունակել ճանապարհը։ Յանկարծ նրանք կանգնեցին մի անդնդի գլխի. այդ անդնդի տակ տարածւում էր Երանութեան Հովիտը, ուր ամեն ինչ խաղաղ էր ու հանգիստ. երևաց մինչև անգամ Շէթէի խրճիթը և Դոստաննան, որ կուժն ուսին՝ աղբիւրից ջուր էր բերում. բայց երկար էր ճանապարհը, երկար էին այն լեռների շաւիղները, որոնք տանում էին դէպի Երանութեան Հովիտը։ Գուդը ցոյց

տրւաւ Արագւային միայն նրա ցանկալի տեղը, իսկ լեռնային շաւիղներում նոր-նոր արհաւիրքներ էր պատրաստում։

Յանկարծ գոռաց Սև-Ջիաւորը, փռնչաց ձին և ցած թռաւ զարհուրելի անդունդից...

—

Կանգնած է Արագւան Երանութեան հովտում և նայում է տխուր իր ձիուն, որ փչում է վերջին շունչը. Նրա ոտքերը փշրւած են, գլուխը պատառւած, արիւնը քրտնքի հետ խառն հոսում է նրա վրայից։ Ջուր է աշխատում ծերունի Շէթէն, ջուր է նրան դեղ ու դարման գնում...

Փչեց շունչը հաւատարիմ կենդանին և արտասուքի երկու կաթիլներ ցոլացին Սև-Ջիաւորի աչքերում...

—

Շէթէի խրճիթում վառւում էր կրակը և ծուխը բարձրանում երդկից։ Խրճիթում աթոռի* վրայ նստած է Սև-Ջիաւորը տխուր և Դոսաննան գուրգուրում է ու ծառայում իր փեսացուին։ Շէթէն տանը չէ. նա գնացել է ուրիշ լեռնականների հետ զրոյց անելու։

—Դոսաննա, ասաց խոժոռւած դէմքով Սև-Ջիաւորը, Գուդը ինձ հանգստութիւն չի տալիս, նա նախանձում է ինձ, բայց ես չեմ զիջանիլ նրան։

Այդ ժամանակ նրա ճակատի վրայ երևաց արեան մի շիթ. Դոսաննան այդ տեսնելով՝ ճչաց և փաթաթւեց իր փեսացուի վզին... Յանկարծ դղրդաց երկիրը և Լեռնային Ոգին ցած գցեց լեռան գագաթից ձիւնի ահագին հիւսը...

Թաղւեց խրճիթը նրա տակ և նշանւածների յարաբերութիւնը բոլորովին կորւեց լոյս աշխարհից...

—

Անցան ժամեր, անցնում են և օրեր և քաղցը գոռում է նրանց. ընդհատւեցին սիրային զրոյցները և երի-

* Կովկասեան ազգերից միայն իրոններն են, որ անյիշատակ ժամանակներից գործ են ածում աթոռ։

տատարգները նստած են իրարից հեռու. Նրանք մտածում են իրանց ապագայի վրայ, բայց լոյս աշխարհից ոչ մէկ օգնութիւն չի գալիս։

Երկրորդ օրը Դոսաննան գտաւ թարեքի վրայ մի չոր բաղարճ և պանրի կտոր. նրանք յագեցրին փոքր ինչ իրանց քաղցը։

Երրորդ օրը Արագւան կռծեց իր տրեխները, իսկ Դոսաննան՝ յատակի վրայ բուսած մամուռը։

Բայց չորրորդ օրը այլ ևս ոչինչ չըմնաց ուտելու. զուր են դրսից օգնութիւն սպասում։

Հինգերորդ օրը ընկած է յատակի վրայ թուլացած Դոսաննան և լաց է լինում, իսկ Արագւան կատաղած բռունցքներով պատերն է քանդում և հայհոյում Լեռնային Ոգուն. յանկարծ նա կանգնում է, նրա աչքն է ընկնում համեղ Դոսաննան և նա մոլացւած՝ յարձակւում է նրա վրայ և ատամները խրում նրա ուսի մէջ...

Այդ ժամանակ լսւում են քլունգի և խօսակցութեան ձայներ և խրճիթի դուռը՝ ազատւած ձիւնի հիւսից՝ բացւում է, մտնում են Շէթէն և ուրիշ լեռնականներ։

Սև-Ջիաւորը սփրթնած դուրս ընկաւ խրճթից և հեռացաւ Երանութեան Հովտից. Դոսաննան արհամարհանքով նայեց նրա ետևից...

Գուդը հասել էր իր նպատակին. նրանք այժմ ատում էին միմեանց...

—

Հրճւեց լեռնային Ոգին և ծիծաղեց ու նրա ծիծաղի հետ թափւեցին լեռան գլխից ահագին քարեր ու ժայռերի կտորներ և կործանեցին ապերախտ իրոնների աուլը։

Ոչ ոք չըմնաց կենդանի այն աուլից, միայն Դոսաննան էր, որին յափշտակեց Լեռնային Ոգին...

—

Յետ նայեց Սև-Ջիաւորը և տեսաւ քարուքանդ եղած աուլը. յանկարծ լսեց նա մի ճիչ և փոշու միջից տեսաւ Լեռնային Ոգուն, որ փախցնում էր Դոսաննային։

—Հէյ կին-Գուդ, գոռաց նա, էլ չես պրծնիլ ինձանից,

էլ չես խաղալ դու ինձ հետ և վազ տուեց Լեռնային Ոգու ետևից:

Մռայլեց երկինքը. սարը շարունակում էր փչել· ծըլում էր Դոսաննան Գուդի գրկում, իսկ Սև-Ձիաւորը վազում էր Գուդի ետևից...

Ոչ ժայռերն են նրան արգելք լինում, ոչ խիտ անտառները, Գուդը վազում է անընդհատ, իսկ նրա ետևից ահագին Սև-Ձիաւորը՝ խորասանը մերկացրած:

—Յետ փախիր, յանդուգն հողեղէն, չես պըծնիլ իմ վրէժխնդրութիւնից, գոռաց Լեռնային Ոգին:

—Լռիր, կին-Գուդ, չեմ թողնիլ քեզ իմ Դոսաննան, պատասխանեց Սև-Ձիաւորը:

—Հեռացիր, մահկանացու, հեռացիր...

—Լռիր, կին, լռիր...

Նրա աչքին բացւեց մի ժայռ. այդ Գուդի բնակարանի դուռն էր. ներս մտաւ Լեռնային Ոգին, բայց դեռ չէր ծածկւել ժայռը, երբ գնդակի նման ներս սլացաւ նրա ետևից Սև-Ձիաւորը...

Դղրդաց լեռը հիմնիվեր, որոտաց երկինքը, ճաքճըքեցին կայծակները... և լեռան խորքում մենամարտում են Լեռնային Ոգին ու Սև-Ձիաւորը...

—

Պատառւեց ժայռը և դուրս ժայթքեց նրա միջից Արագւա-գետակը. նա չըզիջաւ Լեռնային Ոգուն իր Դոսաննան և դուրս բերաւ իր հետ Ջրի-Կոյսին*:

Գոռում էր փրփրած Արագւան և ծեծում Գուդ լեռան, իսկ լեառը փշրում էր նրա ալիքները և սպառնում նրան խորերից...

Կործանեց Արագւան Գուդի շքեղ պետութիւնը, հիմքից տապալեց սիրուն անտառը և անտառից հեռացան բիւլբիւլն ու գարւատիկը, եղնիկն ու եղջերուն...

Եւ մի ժայռի կտորով ծածկւեց Անմահական Աղբիւրի ակը:

Եւ չքացաւ Երանութեան Հովիտը...

* Ջրի-Կոյսը իրօներէն՝ Դօնի-Ծիգջիդու:

Անցան տարիներ ու դարեր, բայց Արագւան ու Գուդ լեառը դեռ չեն հաշտւել իրար հետ, և զարհուրելի է դարձել այդ ժամանակից Սատանայի Հովիտը. երկինքը մինչև անգամ չի ցոյց տալիս նրան իր պարզ դէմքը. նրան ծածկում են միայն մութ ամպերն ու մառախուղը, իսկ ժայռերի ծոցում թաքնըւած են կայծակներն ու մրրիկը...

Եւ Երանութեան Հովիտը կոչւեց Սատանայի Հովիտ...

—

Խաղաղ ու լուսընկայ գիշերներում Արագւայի խոխոջի հետ լսւում է մի աղջկայ լացի ձայն. այդ Դոսաննան է—Ջրի Կոյսը, որ դուրս գալով Արագւայի միջից և նստելով ժայռերի վրայ, լաց է լինում, յիշելով Արագւայի՝ Սև-Ձիաւորի սիրադրուժ վարմունքը:

Ջրի-Կոյսը սարսափելի թշնամի է դարձել նորահարսներին. Արագւայի միջով անցնելիս՝ նա բռնում է նրանց փեշերից, քաշում է գետի խորքը և խեղդում է նրա մէջ...

Երբ ես անցնում էի ռազմա-վրացական ճանապարհով, Սատանայի Հովտում մռնչում էր փոթորիկը, և արդարև, զարհուրելի էր այդ ժամանակ Սատանայի Հովիտը. իմ մազերս փշաքաղւեցին և ես դարձայ իմ սայլորդ ծերունի իրօնին:

—Ի՞նչ տեղ է այս, հարցրի ես:

—Դա Սատանայի Հովիտն է, պատասխանեց նա խորիմաստ ձայնով և պատմեց ինձ ոգևորւած՝ Լեռնային Ոգու աւանդութիւնը:

Գէորգ Աստւածատրեանց

ՖԵՐԴՈՒՍԻ

(Հայնէից)

Ով ինչի վըրայ խօսիլ սկսի,
Աղքատի միտքը Թիւմանը կընկնի,
Այն էլ՝ ի հարկէ՝ արծաթի թիւման,
Չքաւոր մարդուն ո՛վ կըտայ ոսկի։
Բայց շահի բերնից երբ լսւի Թիւման,
Պէտք է գիտենալ որ ոսկի է զուտ,
Նա Թէ ընդունում, Թէ պարգեւում է
Ո՛չ արծաթ Թիւման, այլ ոսկի անշուշտ։
Միշտ այսպէս էին լսել ու տեսել,
Այսպէս էր կարծում Ֆըրդուսին ինքը,
Նա, որ յօրինեց այն հռչակաւոր
«Շահ-Նամէ» ասւած սըբացած գիրքը։
Այս դիւցազնական հագներգուԹիւնը
Նա գրեց նոյն իսկ շահի հրամանով,
Շահը նրա գրքի ամեն մի տողին,
Թիւման գին դրաւ իր իսկ բերանով։
Տասնըեօթներորդ գարնանը արդէն
Փթթել էր վարդը, կըկին թառամել,
Եւ նըրա վըրայ իր սիրականի՝
Սոխակի երգը լսել, դադարել։
Այսքան ժամանակ քերթողը նստած,
Իր յուզւած մտքի ոստայնի վըրան,
Գիշեր ու ցերեկ գործում էր անխոնջ
Հոյակապ գորգը դիւցազներգուԹեան։
Հոյակա՛պ, այո՛,—քերթողն այդ գըքում
Գործում, հիւսում էր հմտուԹեամբ խորին,
ԴիւցազնուԹիւնն իր հայրենիքի
Եւ Փարսիստանի նահապետներին։
Դիւցազուններին նկարում էր նա
Վսեմ գործերովն ու արկածներով,
Ջադուքեարներին, այլեւ դէւերին՝
Հին զրոյցներին յատուկ գծերով։

Ժողովրդական հէքիաթի նման՝
Բոլորն էլ փայլուն ու ծաղկազրած,
Կարծես երկնային ճառագայթներով՝
Իրանի հրեղէն լուսով Թափանցած։
Այն անըսկիզըն անաղօտ լուսով,
Որի առաջև՝ սըբի տաճարում՝
Ղօրան ու մուֆտի խսպառ մոռացած՝
Հրապաշտ քերթողը ծունր էր խոնարհում։
Երգւեցաւ երգը, և ինչքա՜ն յաջող,
Մեծ գործը հասաւ իր կատարածին.
Գիրքն ամբողջ երկու հարիւր հազար տող,
Քերթողն անյապաղ ուղարկեց շահին։
Շահից ուղարկւած սևամորթ մարդիկ՝
Երկար մանգալով Ղազնի քաղաքում,
Դէպքն այնպէս բերաւ, որ մեծ քերթողին
Վերջապէս գտան մի բաղանիքում։
Շալակել էին մի մի պարկ Թիւման—
Շահից ուղարկւած պատւաւոր պարգև,
Սև ստրուկները՝ ինչպէս օրէնքն էր,
Ծնկաչոք դրին Ֆըրդուսու առջև։
Նա էլ բերաններն իսկոյն բաց արաւ,
Որ տեսնի մետաղն իր սրտի ուզած,
Բայց երբ որ տեսաւ, նա զարմանալով
Ցետ ու յետ քաշւեց, յուսախաբ եղած։
Պարկերը Թէև բերնէ-ի-բերան
Լիքն էին շահի զուտ Թիւմաններով,
Բայց՝ աւա՜ղ, նրանք արծաթի էին...
Խնդաց քերթողը դառն ծիծաղով։
Խնդաց դառնապէս, և Թիւմանները
Նա արաւ երեք հաւասար բաժին,
Եւ իսկոյն էսեթ երկու բաժինը
Ընծայեց շահի սև դեսպաններին։
Երկու բաժինը սևերին տըւաւ,
Իբրև մի ընծայ կամ մշակավարձ,
Երրորդն էլ նրան՝ որ բաղանիքում
Նրան լողցրել էր համարեա անվարձ։

Պանդխտականի գաւազան առաւ
Այս անցքից յետոյ քերթող Ֆիրդուսին,
Հեռացաւ քաղքից, և նրա ղըւան
Իր տրեխներից թօթափեց փոշին։

2

«Մէկ ասող լինի՝ էլ ո՞ւր ես քաշւում,
Էլ ինչո՞ւ ես ինձ իզուր վշտացնում.
Խաբէ՛ր ուղղակի իբրև մարդ չնչին,
Հաստատ մի՛ մնար քո տըւած խօսքին։
«Իմ բարկութիւնը էնդուր է գալի,
Որ տւած խօսքն է մութ ու երկդիմի,
Խորամանկութեամբ բանը մութ թողնէլ—
Էլ ինչ կայ անարգ սրանից աւել։
«Ինքը գեղեցիկ, բարձր, փառահեղ,
Մեծերի առջև մի հսկայ ահեղ,
Եւ որի համար գահն արքայական
Բարձրութիւն ունի մատի չափ միայն։
«Այլ արդարամիտ, վեհանձն, հեռատես,
Փայլում էր վրրաս արեգակի պէս,
Այրեց հրավառ ճառագայթներով
Իմ անմեղ սիրտը,—խաբնց մի խօսքով...»

3

Մուհամմէդ մեծ շահը նոր է ճաշ արել,
Եւ՝ փառք մեծ Ալլահին՝ լաւ է կշտացել։
Այգումը վերջնալոյս, ջրմուղը խաղ ընկած,
Ծիրանի գորգի վրայ շահն է ընկողմնած։
Քիչ հեռու կանգնած են ծառայք ըստ կարգին,
Նրանց մօտ Անսարին՝ շահի սիրելին։
Մարմարիոն վազերում, տապ արևի տակ,
Վարդերը բղխում են հոտով ադբիւրակ։
Հարճերի ու տիկնանց հովհարի առաջ,
Ծածկում են արմաւներ դէմքերը կանաչ։
Կիպարիս ծառերը գլխները կախած,
Երկինք են երազում, երկիր մոռացած։

Քնարի հրաշալի ձայնն ալեծածան,
Երգի հետ ներդաշնակ ցնցեց այգեստան։
Նոյն ինքը մեծ շահը քնից վեր ցնցւեց,
«Այդ ո՞ւմ յօրինած երգն է», հարցըրեց։
Դէպի Անսարին էր այս հարցն ուղըղած.
«Քերթող Ֆիրդուսին է յօրինել», ասաց։
«Ներմնն է ուրեմն այդ հրաշալիքը,
Բայց հիմա ո՞րտեղ է բանաստեղծն ինքը.
—«Արդէն շատ տարի է, ասեց Անսարին,
Ապրում է չքաւոր քերթող Ֆիրդուսին։
«Նա հիմա կենում է Թօուս քաղաքում,
Իր փոքրիկ պարտէզն է այնտեղ մշակում»...
Մուհամմէդ մեծ շահը լռեց բաւական,
Ապա թէ Անսարուն տըւաւ հրաման.
«Ի՞նչ պիտի ասեմ քեզ, լսիր, Անսարի,
Զուտ գնա մեր գոմը, բեր հարիւր ջորի.
«Բեր նաև յիսուն ուղտ. դրանց կըբարձես,
Ինչով որ քեզ կասեմ, ինչ որ կըլըսես։
«Առաջ դեռ կըբարձես բոլոր ուղտերին
Մեծամեծ հակներով հագուստ թանգագին.
«Հագւագիտ զարդարանք, մետաղներ այնքան,
Որ շատ ու շատ լինին, քան ոսկր ու մարջան.
«Թասեր ու բաժակներ ազնիւ մետաղից,
Ֆաւլանգի մորթիներ ընտիր տեսակից.
«Ոսկեթել դիպակներ, գորգեր ու շալեր,
Ինչքան որ մէկ տարում տըւել եմ պատւէր։
«Չըմոռնաս վերցընել ձիանց սարք ու սար,
Թանգագին սըթարներ թամբերի համար։
«Չըմոռնաս վերցնել անուշեղէններ,
Պինդ պինդ ամաններում քաղցր խմիչքներ։
«Ուրիշ քաղցրեղէններ, թխւածք զանազան,
Ինչ որ ինքըդ գիտես, ամեն անուշ բան.
«Իմ իսկ ասպատանից կըտանես նըրան
Տասներկու հատ ընտիր արաբի ձիան.
«Կընտրես մի այդքան էլ՝ գործում դիմացկուն՝
Մեր սև ստրուկներից դէմքով պայծառուն։

«Եւ այդ բոլոր բարիք, և ծառայք սև-սև,
Կըտանես ինձանից Փըրղուսուն պարգև»։
Երբ լսեց Անսարին, իսկոյն պատրաստուեց,
Ուղտերն ու ջորիքը գոմից դուրս քաշեց։
Բոլոր ընծաները վերցրեց շուտով,
(Որ մի ամբողջ նահանգ տըւել էր հարկով։
Դեռ արևն երբեք հետ չէր արել շրջան,
Ձահի դեսպանն արդէն ընկել էր ճանպան.
Զոր անապատներով դէպի իջևան,
Ծիրանի դրօշն առջև գնում էր քարւան։
Երեկոյեան պահուն՝ մի շաբաթ անցած,
Հասան Թօուս քաղաք լեռան տակ ընկած։
Փո՛ղ, թմբո՛ւկ, ծնծղաներ, երգ, գոչ, աղաղակ,
Մէկտեղ թնդացնելով՝ ներս մտան քաղաք։
Հէնց ներս մտան թէ չէ՝ լսեց քարաւան՝
«Լա՜յ—ըլա՜հի—ըլըուլլա՜հ», մի երգ տխրաձայն.—
Դագաղի առաջև երգում էր մօլլան,
Տանում էր Փըրղուսուն դէպի գերեզման...

Ղ. Աղայեանց

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՌՕՐԵԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ա՜խ, լեզուն, լեզուն. լեզուն որ չըլինի, ինչի՞ նման կըլինի։ Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն է ու հաւատը։ Լեզուդ փոխիր, հաւատըդ ուրացիր, էլ ինչո՞վ կարես ասել, թէ ո՛ր ազգից ես։ Ինչ քաղցր, պատուական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մօր կաթը նրա համար շաքարից էլ է անուշ, մեղրից էլ...

Ձեզ եմ ասում, ձե՛զ, Հայոց նորահաս երիտասարդներ, ձեր անունին մեռնիմ, ձեր արևին մատաղ, տասը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը ամուր բռնեցէք։ Մէկ դատարկ լեզուն ի՞նչ է, որ մարդ չըկարողանայ սովորել։ Բա չէ՞ք ուզիլ, որ դուք էլ գրքեր գրէք, ազգի մէջ անուն ունենաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը յաւիտեանս յաւիտենից մնայ անմահ։

Ինչքան էլ ֆրանսերէն, գերմաներէն գիտենանք, մենք չենք կարող այնպէս բան գրել, որ նրանց մէջ ա-

նուն ունենայ, որովհետև նրանց միտքը, նրանց սիրտն ուրիշ է, մերն ուրիշ։ Մէկ էլ որ՝ նրանց մէջ այնքան գրողներ կան, որ ոչ թիւ կայ, ոչ հաշիւ։ Ռուսաց լեզուն մեր պետութեանն է, պէտք է միւսներից առաւել համարենք։ Բա ձեր սիրտը չի՞ ուզիլ, որ դուք էլ ոտանաւոր գրէք, ձեր միտքը ձեր խորհուրդը յայտնէք, որ օտար ազգերն իմանան, թէ մեր մէջ էլ են եղել երևելի գրողներ ու մեր լեզուն աւելի և սիրեն։

Խաչատուր Աբովեան

1.

Ա Ղ Ա Ս Ի Ն

Ո՞վ էր Աղասին: Աղասին մէկ ջահել քանաքեռցի քաջ Հայ էր։ Ղզլբաշի ժամանակ սովորութիւն կար, որ աղջիկ էին յափշտակում։ Մէկ օր էսպէս աղջիկ քաշելիս՝ կտրիճ Աղասին դուրս եկաւ մէկ-երկու թուրքի սպանեց ու փախաւ Փամբակ (Լօռի)։ Խեղճի հօրն ու մօրը Երևանի բերդումը չորացրին, ինքն էլ, Ռուսը որ Երևանն առաւ, գնաց որ հօրն ազատի, իրան էլ՝ հօր վրայ՝ տըւին սպանեցին։ Սրա պատմութիւնը շատ երկար է, մէկ մեծ գիրք է, որ գրած՝ մօտս հազիր ունիմ ու նրանով կարելի է իմանալ էն ժամանակուայ մեր աշխարհքի հալը (վիճակը, դրութիւնը, նեղութիւնը)։ Գրքի անունն է—*Վէրք Հայաստանի, Ողբ Հայրենասիրի*:

Խ. Աբովեան

2.

ԱՂԱՍՈՒ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Աղասու բարի խասիաթը, բարի սիրտն ու հոգին քիչերը կունենան։ Էն հասակը հասել էր, քսան տարին անց կացել, նա դեռ հօրն ու մօր առաջին էնպէս էր, ինչպէս մէկ անմեղ գառը։ Մէկ օր նրանց խօսքից չէր դուրս եկել, մէկ օր նրա բերնից մէկ թըթու խօսք չէր լսած. աչքը նրանց աչքն առնելիս՝ նրանց միտքն

իսկոյն իմանում ու գլուխը մահու էր տալիս, որ նրանց կամքը կատարի։ Գեղըցիք բոլորը նրա արևովը էին խնդում, նրա գլխովը օրթում ուտում։ Ամենի աչքը նրա վրայ էր, նրան էր գովում, նրան էր օրհնում։ Մէկին մէկ փորձանք գլպչելիս՝ կամ մէկ դարդ ունենալիս՝ նա իր գլուխը յետ էր դնում, նրան մուրազին հասցնում։ Բերնի թիքէն հանում էր, ուրիշին ուտացնում։ Էնքան իր ապրանքին, իր հանդին ու մալին չէր հսկում, որքան իր հարևանների։ Տանուտէրի որդն էր, ազքատի ու նաչարի (անճարի, խեղճի) ընկեր։ Որբ էր նրա դուռը գալիս՝ սուփրէն էր բաց անում կամ քիսէն (փողի քսակը). ում գութան չունէր, իրանցը բան տալիս. ում եզն ու հօտաղ չունէր, իրանցն ուղարկում. ում փող չունէր՝ որ մշակ բռնի (վարձի), իքին (այգին) էտի, (վազների մատը կտրի), փորի եա թաղի կամ թաղը եա տայ, ինքն էր առաջն ընկնում, գեղի տղէքը հաւաքում ու գնում նրա բանը՝ առանց կանչելու, առանց խնդրելու՝ անում ու իքու տէրը մէջը մտնելիս՝ աչքը մնում էր սառած՝ նրան ումբր ու արև խնդրում. որովհետև եթէ մէկ տարի վազն անթաղ մնայ մեր աշխարհքումը՝ խպառ կըչորանայ։ Շատ հէրն ու մէր երանի էին տալիս նրա հօրն ու մօրը՝ որ էնպէս բարի զաւակ ունէին։ Ինչտեղ մի խնջոյք էր լինում, նա էր նրանց գլխաւորը, նրանց ուրախութիւն ցոյց տըւողը։

Նրա չինարի բոյը, նրա թուխ-թուխ աչքերը, նրա ղալամով քաշած ունքերը, նրա անման, գեղեցիկ պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր ձէնը, նրա լէն թիկունքը, բարձր ճակատն ու ոսկեթել գանգուր մազերը՝ մարդի խելք էին տանում, տեսնողը մնում էր հիացած, նայելուց չէր կըշտանում։ Սազը ձեռն առածին պէս՝ քարին, փէտին շունչ,* հոգի, լեզու էր տալիս։ Ղորդ է, արևն երեսն էրել, գոյնը փախցրել էր, բայց ծիծաղելիս՝ որ աչք-ունքը չէր բաց անում, հէնց իմանաս՝ վարդ է բացւում, երեսից լոյս թափւում։ Նրա հրացանի գնդակը երբէք չէր վրիպում։ Սիրտն էնքան բարի էր, որ գուր տեղը թռչուն չէր սպանիլ, մրջիմը

չէր կոխել, բայց այլազգի աւազակների ձեռքին տապալւելով գիշեր ցերեկ, երբ լսէր, որ նրանք եկել են այգին թալանելու, հարեւանին կամ իրան սպանելու, այդ դէպքում երկնքումն էլ լինէր՝ վէր կըգար, գիւղի միւս ծայրից ձայն տային, իսկոյն ական թօթափել պատրաստ էր, ու թէ խօսքով բանը չէր վերջանում, էն ժամանակը նա իր թրի, հրացանի ու կռան զօրութիւնը էնպէս էր ցոյց տալիս, որ թշնամին մնում էր կատաղած, կամ նրա ձեռին ղուրբան ըլում, որովհետև հազար անգամ փորձել էին, որ աւազակների հետ ուրիշ կերպ կարելի չէր վարւել։

Էնքան ուժով էր, որ ձեռը մէկ տղամարդի գօտիկը որ չէր գցում, հաւի ճուտի պէս բարձրացնում, գլխի ծէրն էր հանում, պտիտ տալիս, էլ ետ վէր բերում։ Ձին հեծնելիս՝ որ ձեռը չէր բարձրացնում, ասլան ձին կզանում էր ու մէջքը դէմ անում։ Հինգ մարդ վրայ թափէին, հազիւ կոլորէին ձեռը։ Գոմշի կամ եզան բուկը՝ մէկ թուր խփելով՝ էնպէս էր դուրս կտրում, որ թրի ծէրը գետինն էր խրւում։ Շատ անգամ քսան հարամի (աւազակ) հէնց թրի քամակովն էր հալածում։ Այլազգիք նրա անունը լսելիս՝ լեղապատառ էին լինում։ Շատ անգամ կռւի ժամանակը՝ հէնց նրա ձէնն իմանում էին թէ չէ՝ ճանճի պէս ցրւըւում, դէս ու դէն էին կորչում, անհետանում։ Աւելի անունը (մականունը) «Ասլան Բալասի» էին դրել (առիւծի ձագ)։

Բայց էսքան զարմանալի յատկութիւններն ունենալով՝ էլի երեխի հետ երեխայ էր, մեծի հետ՝ մեծ։ Խանի, շահի առաջի էնպէս էր կանգնում, պատասխան տալիս, որ հէնց իմանաս թագաւորի որդի լինի։ Ծիծաղն ու խնդութիւնը նրա երեսից պակաս չէր երբէք. էնքան պարզ էր նրա սիրտը, էնքան հանգիստ նրա խղճմտանքը, էնքան արդար նրա հոգին, նրա ամէն մի խօսքը անգին ջաւահիր էր։ Շատ մօր աչք մնացել էր կարօտ, որ նրան իրեն փեսայ շինի, նրա գլխովը պտոյտ գայ, բայց Աղասին վաղուց էր մուրազին հասել։ Սաղ գեղը էնքան էր նրա սիրովը

վառւել, որ մինչև նրա վրայ խաղ էլ էին հանել, որ ասում էին իրանք և երեխանցն էլ սովորցնում.—

Աղասի ջան, գլխիդ ղուրբան,
Դու ես մեր թագն ու պարծանքը,
Աշխարհքս որ բոլոր ման գան,
Ով կլի հասդ, դու մեր կեանքը։
Գլխովըդ միշտ պտոյտ կըգանք,
Առ մեր հոգին, դու մեր հրեշտակ,
Թէ թաղես էլ մեզ՝ ձէն կըտանք,
Էլ քեզ կօրհնենք, քեզ ղուրբան գնանք։
Երկնքին դու լոյս ես տալիս,
Հող, հաւ, հոգի ծաղիկներին,
Դաշտ, սար ու ձոր քեզ տեսնելիս՝
Խոնարհում են քո առաջին։
Բիւլբիւլը մեռած՝ սազիդ ձէնին,
Վարդը թռամած՝ սէրդ յիշելիս,
Ա՛խ են քաշում, տալիս գլխին,
Դու անտարբեր՝ մտիկ չես տալիս։
Քանի ողջ ենք, քեզ ըլինք ղուրբան,
Քո շըւաքիդ տակին մնանք,
Ա՛խ, թէ մեռնենք, մեր գերեզման
Էլ գաս, կոխես, որ դինջանանք։
Արեգակն իր լոյսն երեսիդ,
Ամպերն իրանց թևերը փռած,
Քեզ են նայում, քո արևիդ
Ղուրբան ըլենք, մնում կանգնած։

ԱՂԱՍԻՆ ԻՆՉՊԷՍ Է ԱԶԱՏՈՒՄ ԹԱԳՈՒՀՈՒՆ

1.

Բուն բարեկենդանին էր։

Արեգակը եկել, երկնքի մէջ տեղը բռնել էր, օրւան փուշը մի քիչ կոտրւել, տաքացել էր։ Սար ու ձոր արծաթի պէս պլպլում էին։ Էս ժամանակին ով որ Քանաքեռ մտնէր, հէնց կիմանար, թէ երկնքից մէկ աւե-

տեսաց ձէն է եկել, աշխարհքս արքայութիւն է դառել, մարդի աչքը էլ ցաւ կսկիծ չի պէտք է տեսնի, և Փանաքուի աւերակներն էլ էին թև առել, ծափ տալիս, թէ էլ էնպէս չի մնալ, թէ իրանց մէջն էլ շունչ կըմտնի, չէն կընկնի, էնքան տղամարդ, ջահիլ աղէք, երեխէք էին տներիցը դուրս եկել, քուչէքումն ու կտրներին քէֆ անում։

Օտար մարդը հէնց կիմանար՝ թէ էս գեղըցիք աշխարհքի տէրն են, ոչ դարդ ունին, ոչ ցաւ, ամեն մէկը հազար թումնի տէր են։ Էստեղ զուռնան էր փչում, էնտեղ ճըզալախտի էին խաղում, միւս տեղը փահլեւաններն էին կոխ պըծնում կամ զարաչիքը փալ բաց անում. մանր աղէքն էլ՝ կամ ձնաթօփի էին խաղում կամ աչքակապուկ, կամ սալդաթի պէս կըռւում։ Դափի ու զուռնի ձէնն ու հարայ հրոցը աշխարհք էին վեր կալել։

Աղասին էլ՝ քեֆն արել՝ պըծել՝ իր դաստէն ետևից գցած՝ եկաւ մէկ տասը ձիաւորով գեղի միջումն անց կացաւ, որ գնայ՝ կալերի դուզումը, ջաղացների մօտին իր հունարը նշանց տայ. ջիրիդ խաղայ որովհետև գեղամիջին էնպէս դուզ տեղ չըկայ։ Հէնց իմանաս՝ մէկ թագաւորի որդի է գալիս։ Նարաղ ապաբը կապած, թուանքն ուսին, թուրը կողքիցը կախ, ջուխտ փշտովն ու զամէնգօտկումը, կանաչ մով շալւարը, զառ կաբէն հագին, գիւլբանդի ապլուխը ճտին, նուղայի թուխ գդակը գլխին կոտրել, աջու ականջի վրայ էր գցել, ոսկեթել, թուխթուխ մազերը՝ ձախու կողմիցը քամու հետ խաղում, կամ աղնիւ երեսին էր դիպչում, կամ բկի տակումն ընկնում։ Բեղերն աբրշումի պէս ոլորել, էնպէս էր թշի վրովը դուրս տարել, որ ամեն մէկի ծէրը ականջներին էին դիպչում։ Մտիկ անողի խելքը գնում էր։ Գեղըցիք հէնց նրան տեսան թէ չէ՝ ծափ տուին, պար եկան, ձէն ձէնի տուին ու սկսեցին նրա խաղն ասել, նրա գովքն անել՝ «Աղասի ջան, գլխիդ ղուրբան, էս թասը խմենք քու արսադաղին, արևիդ մեռնիմ, մեր գլխիցը ո՛չ պակասիս, գնա՛, մենք էլ էս ա կըգանք» ամեն կողմից ձէն տուին ու Աղասու թասը խմեցին։ Աղնիւ երիտասարդն էլ՝ ով որ

իրան էդպէս պատիւ էր տալիս, գդակով էր անում, քաղցր երեսով գլուխ տալիս ու անց կենում։

Հեռուանից երևում էր, թէ ինչ ղիամաթ էր անում իգիթը։ Ձիու ականջը մտած՝ էնպէս էր քշում, կրակին տալիս, որ հէնց իմանաս թևաւոր ղուշ ըլի։ Շատ անգամ ջիրիդը հեռու տեղից շպրտում, ձին չափ էր գցում ու գետնիցը ծուլ ըլելիս ձիու վրիցը բռնում էր, էլ ետ գցում։ Շատ անգամ էլ հէնց էնպէս ուղիղ շպրտում էր ու կրակի պէս ետևիցը հասնում, բռնում, էլ ետ շըպըրտում։ Գետնին վէր ընկած տեղիցն էլ՝ էնպէս էր թամքի միջիցը կռանում, բարձրացնում, որ ջիրիդն առաջին դողում էր. ընկերանց վրայ էլ որ վախտ-վախտ ջիրիդ չէր գցո՛ւմ, էնպէս էր նշանում, որ գդակների ծէրին էր դիպչում, կամ գդակը հետը տանում, որ իմանան՝ թէ նրանց խնայում է։ Շատ անգամ թամքի միջին ջուխտ ոտի վրայ կանգնում, էնպէս էր ձին չափ գցում։ Աչք պէտք է լինէր, որ նրա քաջութիւնը, տղամարդութիւնը, հունարը տեսնէր ու զարմանար։

—«Կեցցես, դու, կեցցես, Աղասի, մէրըդ մէկ հատ է քեզանից բերել, հազար տարի անց կենայ, քեզ նման էլ ոչ մէկը չի ծնուիլ»—ասում էին թամաշաւորներն ու խընդում, ուրախանում, ծափ տալիս։

2.

Յանկարծ էս քէֆի միջում՝ կարծես՝ մի ամպ տրաքեց, երկիրը շարժեց, կամ թօփի, թօփխանի ձէն եկաւ, կամ երկինքը փուլ եկաւ.—

«—Տարա՛ն, տարա՛ն, աստուածասէրք, մօտ եկէք. օգնեցէ՛ք, գլուխս լացէ՛ք... տունըս կոխեցի՛ն... օջախըս քանդեցի՛ն... աչքիս լոյսը հանում ե՛ն... սիրտըս դուրս են ճոթո՛ւմ... տօ, մէկ հասէք, ինչ կըլի... Աստուա՛ծ, երկինք, ծո՛վ, ցամա՛ք... էս ինչ կրակ է, էս ինչ պատուհա՛ս... Վա՛յ, օրըս ու կեանքս խաւարի՛... էս ինչ եմ տեսնո՛ւմ... Ձեր թուրը կոտրուի՛... ձեր էկած ճանապարհը փուշ ու տատասկ դառնա՛յ... Վա՛յ իմ կեանքիս, արևի՛ս... ո՞ր ջուրն ընկնի՛մ, ո՞ր դժոխքը գնամ... գետինը պատռի,

ինձ մէջը տանի՜, աչքս հանի... էլ ինչ աչքով իմ սև օրըս լաց ըլիմ... Երեխիս տարմն... օգնեցէք... Աստուած... էս ինչ կրակ է, որ մեր գլխին ես ածում... մեզ էրում, փոթոթում... Ա՜ռ, առ քո տուած հոգին, էլ չի հարկաւոր... հոգի չես տուել, կրակ ես տուել, որ էրւի... Ամա՜ն, հարա՜յ, դա՜դ, մադա՜թ... երկինք, փուլ արի, ինձ տակովըդ արա, ինչ կըլի...

«Ձեր փափախը ձեր գլխին խառն կենայ, ինչ տղամարդիք էք, գոնէ մէկ ձեռք հասցրէք, ինչ էք քարացել փէտացել...

«Թագուհի ջան, գլխիդ մատաղ գնամ, Թագուհի... անունիդ մեռնիմ... երեսըս ոտիդ տակը... Թագուհի ջան... էդ սիրուն աչքերիդ մատաղ ըլիմ, աղիզ ջան... Աչքիս լոյսի պէս մեծացրի, ու էդ տեղն ընկնիս... Թող ինձ սպանեն, էդ Թուրը Թող իմ սիրտը խրեն... Թող քո ոտիդ տակին հոգիս տամ, Թող ես հողը մտնեմ... էն վախտին ուր տանում են քեզ, Թող տանեն... Թող քո նեղ օրը չըտեսնեմ, ո՛ր դժոխքն ուզում է, Թող ինձ ներս տանի»...

Ես կսկծալի ձէնի հետ լաւ պարզ լսում էր, որ մէկ տղամարդ Թուրքերէն ասում, սպառնում էր, որ ձէնը կտրի։—«Ձէնըդ կտրի՛, դա՛նջըղ ղարաչի... հէնց էս սըհաթին փորըդ վէր կածեմ... չինգեանութիւն ինչ պէտք է, սարդարի հրամանն է, պէտք է ձեր աղջիկը քաշենք տանենք, ինչ խօսք ունիք, ինչ կարողութիւն. սարդարի հրամանին սարը չի դիմանալ, դուք ինչ կարաք անիլ»...

Խալխի գլխին ջուր մաղւեց... Ամենքն էլ իմացան, Թէ ինչ մարդիկ էին եկողները։ Սարդարի ֆառաշներն էին (ծառաները), եկել էին որ սիրուն Թագուհուն յափշտակեն իրանց տիրոջ համար, էլ ո՞վ ունէր իրաւունք ձէն-ծպտուն հանելու։

Բարիկենդանը սուգ դառաւ։ Երեխէքը լալով, դողալով տուն փախան։ Կնանիքը դռները կողպեցին ու չիրախանի կարասների տակը մտան, կամ վերնատներումը Թաք կացան, կամ ղարմանի ու խոտի խրձերի մէջը մտան։ Գեղը համարէ Թէ ամբողջովին քանդւեց։ Տղամարդկանց որը վախլուկ էր, գլուխն առաւ կորաւ, որը որ մի քիչ պինդ

սիրտ ունէր, զարզանդելով, դողդողալով, մօտ եկաւ, չէ Թէ օգնութիւն անի, չէ, այլ Թէ տեսնի ինչպէս մարդիկ են եկողները, ինչպէս են տանում խեղճ, ջրատար աղջկանը։ Ռանգ-մռանգները Թռած, սփրթնած, եկան մեռելի պէս ու տան բաշին շարւեցին։ Շատի լեզուն բերնումը շաղւել, փէտացել էր։ Շատի լերդն ու Թոքը ջուր էր կտրել։ Լաւ ուզում էին որ օգնեն, լաւ ուզում էին իրանց էլած-չէլածը տան, որ խեղճերին ազատեն, բայց ո՞ւմ ձեռիցը մէկ բան կըգար։ Սարդարն էր հրամայել, ո՞վ էր կարող որ ձեռք վրա՛բերի։ Թէ մէկ ծպտուն էլ հանել էին, հէնց էն սըհաթը տուն-տեղ կրակ կըտային ու իրանց էլ Թօփի բերնին կըդնէին, կըգցէին։ Աստուած ոչ ցոյց տայ։ Անօրէնի ձեռքը Թշնամիս չընկնի։ Մարդ ո՞ր հողը տայ գլխին, ինչ ուզում են, էն են անում։ Դատաստան չըկայ, իրաւունք չըկայ, ու հայ ազգն էլ էնքան էսպէս ցաւեր տեսել էր, մէկ օր խօսքը մին չէր ըլում, որ իր գլուխն ազատի։ Աղջիկն ասես՝ քաշում էին, տղէն ասես՝ տանում, շատ անգամ Թուրքացնում, հաւատից հանում, շատ անգամ էլ՝ գլուխը կտրում, էրում, նահատակում։ Ոչ տունն էր իրանը, ոչ կայքը, ոչ ապրանքը, ոչ անձը, ոչ ընտանիքը։ Զարմանալուն էս է, որ էսպէս կրակի, պատուհասի մէջը, էլի նրանց աչքը ուրախութիւն, նրանց բերանը ծիծաղ էր գալիս։

3.

Էսպէս, ինչպէս ասեցի, հարիւր մարդից աւելի վրայ էին Թափել, ձեռըները ծոցըներումը դրել ու պատի ծէրիցը մտիկ էին տալիս։ Սուգ ու շիւանն աշխարհքն առել էր։

Ֆառաշները կատաղել, փրփրում էին, շատ անգամ հրացանները դէմ էին անում, որ խալխին խփեն, վէր գցեն, որ գուցէ հեռանան, կորչին, բայց էլի խռոված ոչխարի պէս ետ էին դառնում, էլ ետ ետ փախչում, էլ ետ ետ գալիս, մտիկ տալիս։

Ինչ խեղճ, ողորմելի մէրն էր անում, Աստուած հեռու

տանի։ Քար չէր մնացել, որ գլխին չըխփի, հող չէր մնացել, որ վրէն չածի։ Ջաղը կորած հաւի պէս մէկ դէս էր վազում, մէկ դէն, մէկ գլխին էր տալիս, մէկ ոտին։ Էնքան էր ծնկներին, գլխին խփել, հարայ տըւել, լաց էլել՝ մազերը պըճոկել, երեսը չանգռել, կորատել, որ էլ ո՛չ աչքումը լոյս կար, ոչ ջանումը թաղաթ (ուժ), ոչ բերանումը լեզու։ Էնպէս հէնց ձէնը փորն ընկած, շունչը կըրւած, ոտին, գլխին էր անում, ինքն իրան ջարդում, գլուխը քարէքար տալիս, կամ սողում, գետինը լիզելով՝ փառաշների ոտներն ընկնում, կամ ձեռները բռնում, որ թուրը խլի, իր սիրտը խրի, կամ թէ չէ՝ սրանք էլ որ կուրծքին չէին խփո՛ւմ, կամ քացով տալիս, դէն գցո՛ւմ, ընկնում էր ջուխտ ձեռով աղջըկայ վրայ, կամ ճըտովը՝ ու էլ թէկուզ քացով էին խփում գլխին, թէկուզ բռունցքով, թէկուզ մորակով կամ հրացանի կոթով, — էլ պո՛կ չէր գալիս, էլ չէր իմանում։ Ուզում էր որ փորը ճղի՝ ու իր հոգու սիրելին էլ ետ ներս տանի։

4.

ԹԱԳՈՒՀՈՒ ՄՕՐ ՍՈՒԳԸ

«Թա՛գուհի ջան, էս ի՞նչ ա, քո հարսանիքի պա՛րն եմ գալի՞ս փեսէն ո՞ւր ա, տէրտէրն ինչի՞ համար չի գալիս։ Հինէն ի՞նչ տեղ ա. բերէք, որ աղջկանըս ձեռները կարմրացնեմ։ Դափ ու զուռնէն ինչի՞ չեն ածում։ Այ զօնաղներ, ի՞նչ էք էդպէս պարապ կորի ծէրին կանգնած մնացել, ձեռըներըդ ծոցըներըդ դրել։ Ինձ չէք սիրո՞ւմ... պար էկէք՝ է... հարսանըքաւորն էդպէս դատարկ կըկանգնի ու թամա՛շա կանի՞... Խարջն իմն ա, հօ ձեր քիսէցը չի՞ գընում. կերէք, քէֆ արէք, իմ որդուս արեն օրհնեցէք։ Մէկ աղջիկ ունիմ, որ աչքիս լուսի հետ չեմ փոխիլ. նրա խաթրն էլա չունի՞ք, մէկ ուրախութիւն անէք, սիրտս հովանայ։ Հա՜... քնած եմ, թէ զարթուն. թէ՞ գլուխս վրէս չի՞։ Բաժինքը հազիր ա. չէ՛. չէ՛... փեսէն հօ Թիֆլիս գընաց, էսպէս շուտ չէր կարող ետ դառնալ...

«Սրանք ո՞ւր են էկել... Թուրքը հօ հայի հաց չի ու-

տել. հա՛, հա՛, հիմիկ իմացայ, մեր ճանաչներն են, էկել են, որ երեխիս հարսանըքի ուրախութիւնը տեսնեն...

«Լա՛ց մի՛ ըլիլ, երեսիդ մեռնիմ, Թագուհի ջան... ջանըս ու հոգիս քեզ մատաղ. քանի որ գլխիդ սաղ եմ, ո՞վ կարող է քո մէկ մազին դիպչի...

Մազերըդ ոսկեթել, Թագուհի ջան։
Ունքերըդ վարաղով քա՛շած, որդի ջան.
Օրօրո՛ցիդ մա՛տաղ գնամ, Թագուհի ջան,
Վարդի պէս բաց էլած, մանիշակի պէս փնջւած,
Ի՛մ արև, իմ կեանք, իմ թագ ու պարծանք,
Աչքերըդ բա՛ց արա, աչքերիդ մատաղ գնամ,
Բերանըդ բա՛ց արա, վարդահոտ բերանիդ մեռնիմ,
Քո խեղճ պառաւ մօրն էդպէ՞ս ես սիրում,
Էդպէ՞ս ես իմ սիրտը շահում...

Թէ ամաչում ես, ասեմ որ էս կանգնողները հեռանան։ Ա՛յ մարդիկ, հեռացէք, կորէք, իմ աղջկայ աչքին միք երևալ։ Բան ու գործ չունի՞ք. գնացէք ձեր տները, ի՞նչ էք էստեղ կիտուել։ Ի՞նչ անամօթ մարդիկ էք. տօ ձեզ չե՛մ ասո՞ւմ, խլացել է՞ք։

Արի գնանք բաղը,
Թագուհի ջան, անումիդ մեռնիմ.
Ծառերը ծաղկել են,
Քո ծաղիկ երեսին մատաղ,
Դաշտերը կանաչել են,
Քո կանաչ արևին մատաղ,
Ո՞ւր ենք մնացել էստեղ,
Գնանք, տեսնենք, ուրախանանք...

5.

Ո՞ր մէկն ասեմ ո՞ր մէկը թողամ, մարդի սիրտ կըրակ է ընկնում, երբոր խեղճ մօր արածն ու ասածը միտքն է բերում։ Ով որդի է մեծացրել, նա լաւ կիմանայ մօր սիրտը. տկար լեզուն ի՞նչ կարայ սրտի ամեն մի կսկիծը ամեն մէկ խոցը բառով ետ պատմիլ։ Ողորմելի մէրը էնպէս խելքը կորցրել, չէր իմանում, թէ ինչ էր անում։ Թուրքերն էլ, որ տասը հատ էին թւով, էն անօրէն

տեղըներումն էլ՝ ղորդ է, բարկանում, սպառնում էին, բայց մոր էսպէս մորմոքւիլը տեսնելով՝ սիրտները մի քիչ դութ ընկաւ։ Իրանք էլ գիտէին, որ մոր համար հեշտ չի, որդի մեծացնիլ, յետոյ էսպէս յանկարծ կորցնիլ։ Հաւն իր ձագը կորցնելիս՝ կեանքը հետը տալիս է, ո՜ւր մնաց բանական մարդը. իրանք էլ մնացել էին մոլորւած, բայց սարդարի հրամանն էր, չանէին, չըտանէին, իրանց գլուխը կըթռչէր, կամ աչքը դուրս կըգար։ Ճարըները կտրեց, խօսքը մին արին. որ մօրն էլ աղջըկայ հետ տանեն բերդը, սարդարի դուռը, իրանց պարտքի տակից դուրս գան, յետոյ ինչ կուզենան՝ անեն։

Նօքարներին հրամայեցին, որ ձիաները թամքեն. եարաղ, ասպաբ գցեցին, թուրըները կապեցին ու կամաց-կամաց մօտ եկան, որ մօրն էլ, աղջըկանն էլ վերցնեն, տանեն։

Թագուհի՜ն, Թագուհի՜ն, աշխարհի աչք Թագուհին։

Երկնքի տակին, գետնի երեսին, անթառամ ծաղիկ Թագուհին։

Դրախտ, մանիշակ, անգին, անհատ, աննման Թագուհին։

Ի՞նչ լեզու պէտք է ըլի, որ նրա գովասանութիւնն անի։

Ի՞նչ աչք պէտք է, որ նրա տեսքն ու կերպարանքը մէկ բանի նմանացնի։

Էն շարմաղ, լուսաթաթախ երեսը, որ արեգակի պէս լոյս էր տալիս ու վարդի պէս փայլում, դառել էր սպիտակ քաթան, սառել, սփրթնել։

Էն երկնանման աչքերը, որ տեսնողի հոգին վառում, կրակում էին, ընկել էին խոր, փակւել, կուլ գնացել։

Թագուհի՜ն, ջիւան Թագուհին, մորը մէկ Թագուհին, որ հրեշտակի նման ում որ մտիկ էր տալիս, հոգին անմահական խնդութիւնով լցւում էր,—սառել, փէտացել անշունչ, անլեզու մնացել էր գետնի վրայ ընկած, երեսը երկինքը գցած, հէնց գիտես թէ էլ էս աշխարհքումը չի,

հրեշտակաց մէջն է ամբարձել, դրախտումն ըլի իր անմեղութիւնը վայելում։

Նրա թուխ-թուխ ունքերը, նրա չալ-չալ աչքերը. նրա նռնահատ թշերը, նրա բարակ-բարակ, ղալամ քաշած պռոշները, նրա լուսեղէն ճակատը, նրա մարմառ, նուրբ քիթը, նրա բիւլբիւլի լեզուն, նրա ոսկեցնցուղ բուկը,— բոլորը, բոլորը սառել, քարացել, պապանձել էր։

Հէնց հարամ ձեռը նրան առաւ թէ չէ՝ մէկ ախն էր՝ նրա հոգին։ Էդ ախը քաշեց, թուլացաւ, իրանից գնաց, ու, մինչև դռան շէմքը կըբերէին, հաւի պէս թրպրտաց ու ձէնը փորն ընկաւ...

Շըլինքը ծռւել, թուլացել, գլուխը շէմքի էս կողմն էր մնացել կախ էլած, մարմինը էն կողմն ընկած։

Ոսկեթել մազերի կէսը մնացել էր բարձր, որ նրա անմեղ երեսն ու կուրծքը ծածկի, կէսը էնպէս խըճըճւած, գետնի վրայ փռւել, քաշ էր ընկել։

Նազուք ձեռների մէկը սրտի վրայ էր թուլացած, ընկած, միւսը հողի վրայ չորացած, տարածւած։

Դամարը (երակը) ցամաքել, շունչը կտրւել, հոգին երկինքն էր վերացել...

6.

Փառաշները՝ տեսնելով՝ որ մէր ու աղջիկ վըշտի ձեռից նըւաղեցին ու էլ ձէն, շունչ չէին տալիս, լաւ համարեցին, որ էսպէս թուլացած, վերցնեն, երկուսին էլ տանեն, որ էլ շատ չընեղանան, չըչարչարւին։ Երկուսը ձիու վրայ նստել, տեղ էին բաց անում, որ մէկը մօրը խըտտի, միւսը աղջկանը առաջն առնի, հէնց այդ րոպէին, երբ նրանք կարծում էին, թէ իրանց բանը լաւ գլուխ բերին, յանկարծ մէկ թուր փայլատակեց կայծակի նման որոտալից ձայնի հետ... Փառաշների մէկի գլուխը գետնի վրայ ընկաւ ու սկսեց գլըըլացնել. բըըլացնել ու պար գալ։ Դեռ սա ձէնը չէր կտրել, որ միւս ընկերի գլուխն էլ նրա մօտ գլորւեց...

—Դժո՜խքի որդիք, գոռաց քաջ Աղասին, ձեզ ո՞վ է ուղարկել էստեղ, ո՞ւմ վրայ էք էդպէս կատաղել... Ասենք

թէ՝ Հայը լաւ է, ձէն չի հանում, պէտք է նրան ողջ-ողջ կուլ տանք։ Աչքներիդ լոյսը կլթացնեմ էս բոպէիս, շուտ արէք, կորէք. թէ չէ՝ ամեն մէկդ ճուտի պէս առաջիս կլթրպլրտայ։ Քանի որ էս կուռը վրէս է, դուք էստեղից թել չէք կարող դուրս տանել»։

Էս ասելով՝ մէկի էլ ուսը վէր բերեց, միւսին մէջքը կիսեց, մնացած վեց հոգին տեսան, որ հերթն իրանց պիտի հասնի, շտապով ձի նստեցին ու մինչև Երևանի բերդը մի շնչում փախան…

ԱՂԱՍՈՒ ՈՂԲԸ ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1.

Սար ու ձոր ընկած՝ մէկ չոր թփի տակի,
Գետին նայելով՝ մնացել եմ նստած.
Ձեռըս ծոցումըս, գլուխս մէկ լեռ քարի
Տըւած՝ լալիս եմ, օրըս խաւարած։
  Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
  Քեզ մտիկ տալով՝ ա՜յ իմ քաղցր Մասիս,
  Աղի արցունքով էրւած, խորովւած,
  Երեսիդ նայեմ, մնամ քարացած։
Ծնողք, ազգականք հեռու ինձանից,
Լուսնին նայելով՝ ձեր սէրն յիշելով՝
Արդեօք երբ կըլի, որ ես ձեզանից
Իմ կարօտն առնեմ, ձեզ ջան ասելով։
  Արդեօք՝ ձեր վըզովս մէկ օր էլ կընկնե՞մ,
  Արդեօք՝ ձեր երեսը մէկ էլ կըտեսնե՞մ,
  Արդեօք՝ ծունկ ծնկի տըւած՝ ձեզ կասե՞մ.
  «Ա՛յ իմ խեղճ ծնողք, ձեր ջանին մեռնե՞մ։
Աչքս ծով դարձաւ՝ ճանպին նայելով,
Թռչուն որ գլխիս պտոյտ է գալիս,
Թէ երբ մէկ համբաւ կըհասնի ինձ բարով.
Յոգւոց հանելով՝ ասում եմ, լալիս…

  Արդեօք գետնի վրայ դեռ սո՞ւգ էք անում,
  Ձեր կորած որդուն կարօտ մնալով.
  Թէ՞ հողի տակին հանգիստ էք առնում,
  Ինձ թողիք, տանջւիմ՝ ախ-ուխ քաշելով։
Արդեօք՝ ձեր ամագն ինձ հալալ արի՞ք.
Արդեօք՝ սուրբ բերնով ձեր՝ ինձ օրհնեցի՞ք.
Ծերունի իմ հայր, տարաբախտ իմ մայր,
Էլ իմ օգնութեան երբ կըհասնի աշխարհ։
  Էն սուրբ, անարատ կաթնին ես ղուրբան,
  Ձեր լոյս ձեռներին, ձեր անուշ լեզւին,
  Մէկ բուռն հողի էլ երբ կըլիմ արժան,
  Որ գամ ձեր հողումն, քնիմ ձեր միջին։
Էն ինչ օր էր որ ձեր քաղցր ծոցին,
Գլուխս ձեր կրծքին, աչքս խուփ կամ բաց,
Ձեր սուրբ ձեռի վրայ՝ երեսս բարձին՝
Կամ խաղում էի, կամ մնում քնած։
  Էն ինչ օր էր որ մէկ ծառի տակի
  Ճօճումը ձեռներս ձեր ճըտովը գցած,
  Ձեր սուրբ երեսին ես համբոյր տայի
  Նանիկ ասելով՝ թողէիք քնած։
Ո՞ւր էն շըւաքը, էն կանաչ, ջրի ափը,
Էն խոտն ու ծաղիկը, էն դաշտն ու ռափը,
Որ ձեր առաջին անմեղ խաղայի,
Ու ձեր բարի սիրտը խաղով բանայի։
  Լալիս՝ դուք լացիք՝ ինձ հետ ցաւելով,
  Ծիծաղս տեսնելով, կամ ձէնս լսելով,
  Կանչէիք. «Արի մօտս, Աղասի ջան,
  Երեսիդ մեռնիմ, քո ջանին ղուրբան»։
Ա՜խ, էս խօսքերը ինձ կրակ են դառել,
Լերդս ու թոքս հիմիկ էրւում, խորովւում,
Ի՞նչ կըլինէր՝ ես էն վախտն էի մեռել,
Ձեր շւաքի տակին, ա՜խ, քնել հողում…
  Մէկ բուռն հողի էլ կարօտ եմ մնացել,
  Կամ քարափից ցած, կամ ջուրը ընկնիմ,
  Ձեր սուրբ երեսը դեռ որ չեմ տեսել,
  Ինչպէ՞ս ես հանգարտ էս հողը մտնիմ…

2.

ԻՐ ԱՄՈՒՍՆՈՒՆ

Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ․ աննման Նազլու,
Սիրտս խորովի, անունըդ յիշելով,
Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ, հրաշալի Նազլո՛ւ,
Աղասին քեզ տայ իր յետին բարով։
    Սարերի լանջին, ձորերի միջին,
    Վայ գլխին տալով քո խեղճ Աղասին,
    Երեսիցդ զրկուած, սիրովըդ մաշուած,
    Տատրակի նման փշի վրայ նստած։
Լիզեմ հող, գետին, այրիմ մըղկըտամ,
Կամիմ օր առաջ, ա՜խ, որ հոգիս տամ,
Երբ մահը մօտենայ սառը թևերով,
Հոգիս պահանջէ, որ տանի շուտով։
    Էս դառն աշխարհից մի ինձ ազատի,
    Ոսկերքս գազանաց կերակուր անի,
    Կամ երբ գետափում նստած, շըւարած,
    Աչքերըս նըւաղին՝ թմբրած, սասանած։
Գլորիմ կատաղի գետի փրփրի մօտն,
Յոգւոց քաշելով պարզեմ ես իմ ոտն,
Կամիմ գերեզմանս որ էս ջուրն ըլի,
Էս սառը պատանը ինձ հողը տանի։
    Նազլու իմ, Նազլու, անուշ իմ Նազլու,
    Թեքիմ ու հանդարտ գայ ինձ քուն մահու,
    Երևի աչքիս, թէ անդունդը խոր,
    Մօտ է ինձ զրկել, տանիլ իր լէն ձոր…
Նազլու իմ, Նազլու, մէկ շունչս է մնացել,
Ոսկերքս քրքրուել, աչքս խաւարել,
Թող մէկ շունչդ առնիմ, յետոյ հող մտնիմ,
Դժոխք էլ տանին, ես հանգիստ կըլնիմ։
    Քեզ եմ մնում, քեզ, քո ջանին մեռնիմ,
    Հող ու գերեզման ես վրէս ունիմ,
    Քանց իմ պաղ մարմինը էլ ինչ գերեզման
    Ինձ պէտքը կըգայ, երեսիդ ղուրբան։

Արի, ասածդ արա, ինձ թաղիր,
Բեր իմ երեխէքս ու վրէս կանգնիր,
Մէկ նրանց տեսնիմ աչքս խփելիս,
Մէկ նրանց ասեմ լեզուս լուելիս,
«Մնա՛ք բարով, որդիք, ազիզ, սիրական,
«Էլ չէք տեսնիլ ինձ, ա՜խ, դուք յաւիտեան։
    «Ձեր անբախտ հօրը հոգին յիշեցէք,
    «Մնաք բարով, իմ քաղցր, սիրո՜ւն երեխէք,
    «Ձեր հօր տեղակ՝ ձեր խեղճ մօրը պահեցէք,
    «Ու իմ ողորմին, ժամը կատարեցէք…»

ԱՂԱՍԻՆ ԱՆԻԱՅ ԱՒԵՐԱԿՆԵՐՈՒՄ

1.

Տեսնողի առաջին մէկ տափարակ տեղ է բացւում յանկարծ, մէկ մեծ դաշտ, չորս կողմը սարերով պատած, աջ ու ձախ սևին տալիս, ու քանի գնում է մարդ, ամպ ու մառախուղ քաշւում, պարզւում են, հէնց իմանում ես, թէ առաջիդ մէկ էնպէս քաղաք է բացւում, որ հազար-հազար կենող ունի միջումը, ու ջրի կամ շուքի ձեռից յոգնած, ուզում ես որ շտապիս, գնաս մէկ աստուածասէրի դուռն վէր գաս, հանգստանաս, էլ ետ ճանպէդ բռնես, գնաս։

Մտքումդ ասում ես, թէ էս տեսածդ մէկ մեծ, զօրեղ թագաւորի աթոռ պէտք է լինի։ Էստեղ ոսկին ու արծաթը աղբի հետ պէտք է խառն ընկած լինի, էստեղ օրը հարիւր քարւան ներս մտնի, հարիւրը դուրս գայ։

Հէնց իմանում ես, թէ ցերեկը փոշին ու մառախուղն է աչքդ բռնում, գիշերը, մութն ու խաւարն է քեզ խաբում, որ ինս, ջինս, մարդ, անասուն չես տեսնում, միայն գիշակեր ագռաւներն են աչքիդ սևին տալիս։

Մարդ չըկայ մօտըդ որ հարցնես, գիր չես կարդացել, որ իմանաս. մտքիդ հետ ընկած, տեսածդ հրաշք կարծելով՝ կամ աչքախաբութիւն, որ յանկարծ գլուխդ չես

բարձրացնում, ա՜խ, սիրելի հայազգի, ջանըդ դող է ընկնում, կոներըդ թուլանում, հէնց իմանում ես, թէ մէկ վիշապ, կամ հրսակ հէնց էն սըհաթին է մտել, ու բոլոր կենողներին կամ կուլ տըւել, կամ սուրը քաշել, կամ գերի արել, ինքն էլ փախել, ուզում ես, որ աչքըդ խփես, ետ դառնաս...

Ա՜խ, չէ, չէ, ետ մի՛ դառնար, ծուխն էստեղից՝ հազար տարի աւել է, որ կորել է. կա՛ց, մի՛ վախենար. անշունչ քարերն ու եկեղեցիքը մարդակեր չեն։

Աչքըդ բաց արա, սիրտըդ քեզ հաւաքիր, ու գլխիդ վա՛յ տուր։

Էս սրբատաշ տաճարները, էս ահագին բերդը, էս քարերը քեզ կասեն՝ թէ սա է գոռոզ Անին, քո թագաւորների հզօր մայրաքաղաքը, որ էնքան էր իր հարստութիւնովը, իր փառքովը փարթամացել, ճոխացել, մեծամտել, որ հովւն էլ եկեղեցի էր շինում, խաչնարածն էլ արծաթէ պայտով, կանաչ կօշիկներով էր ման գալիս, մուրացկանն էլ հացի փոխարէն՝ շաքար, սև փողի տեղակ արծաթ ու ոսկի էր պահանջում, որ եկեղեցի մտած ժամանակն էլ՝ իբր թէ՝ էնքան էին Աստուած մոռացել, որ կարճ վարդապետի առջևը բարձր գրքակալ էին դնում, բարձր եպիսկոպոսի առջև՝ ցածր, որ կամ ձըգւին, կամ կռանան, կամ չոգին, կամ գիրքը չըտեսնեն, ու իրանք ծիծաղեն, Աստուծոյ տաճարումը զըւարճանան։

Բայց սուրբ Յովհան Երզնկացին՝ կատակ չըվերցնելով՝ մէկ օր օրհնած բերանը բաց արաւ (անիծեց), երկիրը տրաքեց, տակըվեր էլաւ, ժողովուրդը ցրիւ անցաւ, որը Ղրիմ, որը Լէհաստան։ Էս անշունչ քարերը մնացին ցից-ցից, հազար եկեղեցուցը հինգը մնացին չէն։

Տաճարներ, պալատներ, գանձ, հրստութիւն, անէծքի բաժին դառաւ, հողը մտաւ Հայոց ազգի մնացած փառքն էլ, ու մինչև էսօր էլ երկրի ձէնը գալիս է։ Գող աւազակ են միջումը բուն դնում, նրանց բանն Աստուած յաջողում է, նրանք չեն տակով ըլում, ու Աստուած էնքան իր գութը հայերից պակասացրեց, որ էնքան անմեղ հոգիքը, էնքան միլիոնաւոր մարդիկ մէկ ժամումը մէկ սևա-

գլխի խօսքով ջնջեց, Հայոց Տունը քանդեց, էլած փառքն էլ ձեռիցը խլեց, որ գնայ էսպէս երերեալ տատանեալ մնայ աշխարհքիս երեսին։

2.

Լա՛ց գլուխըդ, անցաւոր, տե՛ս՝ թէ Աստուծոյ դատաստանը ինչպէս արդար է. կարգաւոր տեսածիդ պէս՝ տները ջո՛ւր արա, խմիր, որ էսպէս քաղաքը անէծքով քանդեցին ու էսօր էլ քանդողին եկեղեցումը տօնում են։ Դու չե՞ս իմանում, որ նրա անունը տաս, սուրբ աղօթքն ու բարեխօսութիւնը յիշես, որ քեզ էլ չանիծի, քո որդիքը պահի, մեծացնի։ Ի՞նչ կանես Անի քաղաքի անունը, նա քանդւեց պրծաւ, բայց սուրբը քեզ միշտ օգնական ու բարեխօս կըլինի...

Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ո՛չ... Ոչ թէ անէծքը, այլ թշնամու սուրն է նրանց վերջացրել։ Հիմի հաւատո՞ւմ ես, ա՛յ իմ խեղճ ազգ, որ քո երկրումը հազարաւոր էսպէս քաղաք կամ կրակով փչացան, կամ սուրը քաշեցին, ու քեզ չոր քարեր մենակ թողեցին։

Որ տեսնիս ու լաս,
Տաս քո գլխիդ վայ,
Խելքըդ ժողվես,
Լինիս կորիճ հայ...

Ռուսաց հզօր քաջ ձեռի տակին քիչ հանգստանաս ու քո աշխարհքին պահապան կենաս, արիւնըդ թափես, քո ազգը պահես, քեզ անուն ճարես...

3.

Ամեն մարդ փորձած կըլինի, որ մութ ժամանակը մարդ որ մէկ գերեզմանատան կամ քանդւած եկեղեցումօտովը անց է կենում, զարզանդում է։ Սրա միակ պատճառն էն է, որ մարդ սովոր է, ինչ տեղ տուն է տեսնում կամ շինութիւն, կարծելով թէ նրանցում մարդ կըլինի, ու յետոյ, երբ ձէն չի լսում, էնպէս է կարծում, թէ էնտեղ չար հոգիք են բնակում, եթէ ոչ՝ — մեռելի

չոր մարմինը կամ փլատակներն ի՞նչ զորութիւն ունին որ մեզ ինչ անեն։ Սրա համար ես աւերակներումը էլ ո՞վ սիրտ կանէր որ կամ եկեղեցու մօտենայ, կամ բուրգերից մէկը մտնի, էն էլ էն երկրումը, ուր ամեն քարի տակի հարիւր գլուխ էր կտրւում, ամեն մէկ ձորում հազար մարդ հոգին տալիս…

«Տղէք, չար սատանի թուրը գլխներիս խաղում է»— ձէն տուաւ պինդ սրտով քաջ Աղասին։ «Տղամարդութիւնը էսպէս տեղը կերևայ, զէնք ու զրահ պատրաստեցէք, ձիանը հանգստացրէք, որ թէ Աստուած տայ, մինչև առաւօտը գլխներս վրաներըս լինի, տեսնենք, թէ ո՞ր անդառնալի ճանպէն ենք ընկել։ Փոքրոգութիւնն էլ մեզ ձեռք չի տալ։ Ձիաներին ջուր տուէք, քաշեցէք մի պատի տակ, իսկ ես շունս առնեմ, կամաց-կամաց մէկ աչք ածեմ, տեսնեմ, թէ տեղներըս ապահո՞վ է արդեօք, թէ՞ էլի սրով ու արիւնով պէտք է կամ գլուխ պահենք, կամ գլուխ կտրենք։

Ընկերները շատ խնդրեցին որ չանի, ականջ չարաւ։ Հրացանն ուսին դրաւ, տարճանակները պատրաստեց, սուրբ Սարգսի անունը տուաւ, ու քայլերը շարժեց։

Գիժ կըլինի էն տղամարդը, որ գլուխը մահու կըտայ, բայց Աղասին իր գլխիցը վաղուց էր ձեռք վերցրել։ Հաւատարիմ շունը գլուխը նրա ոտիցը չէր հեռացնում։ Մէկ հոտ առնելիս կամ շշիւն իմանալիս՝ կանգնում էր, եղի ոտի մինն էլ ցըցում, երկար ժամանակ ականջ դնում, յետոյ քայլերը շարունակում։

Հէնց մի քիչ հեռացան թէ չէ՝ մէկ եկեղեցու դռնից կրակի լոյս ընկաւ Աղասու աչքը։ Արիւնն աչքն առած, էլ միտք չարաւ, թէ էսպէս տեղը բացի գողից ու աւազակից՝ ուրիշ ոչ ոք չի լինիլ, ուղղակի կրակի վրայ գնաց։

Աստուած հեռու տանի, ինչ նա տեսաւ։ Տասը քուրդ եկեղեցու մէջտեղը կրակ էին արել, չորս կողմը նստել, խորոված էին անում, շամփուրներով բերանները քաշում, ուտում, խնդում, ու աչքները որսորդի արթուն շան պէս կամ դուրսն էին գցում կամ քունջը։

Աւազակը՝ ինչքան էլ գազան ըլի, իր շւաքիցն էլ կը վախենայ։ Մինչև նրանք կրակի մօտիցը ձեռները աչքներին կըդնէին ու մի բան կընշմարէին, Աղասին կամաց-կամաց ներս մտաւ, ծանր դէմքով, առանց բարով տալու՝ կրակին մօտեցաւ, ու ձեռը մեկնեց որ մէկ խորովածի շամփուր էլ ինքը քաշի։ Նրա դեղնած, մեռելի պատկերը, նրա անահ շարժմունքը ու էնպէս անժամանակ ներս գալը որ չըտեսան քրդերը՛, հէնց իմացան, թէ նա էն աշխարհքիցն է վեր եկել, լեզուները չորացան, ձեռները թուլացան։ Ի՞նչ կըկարծէին, թէ էն ժամանակին մահկանացու մեն մենակ սիրտ կանէր էն աւազականոցը մըտնէր, ուր ցերեկն էլ հարիւր մարդ զարզանդում էին մօտովն անց կենան, ուր հազար տարուց աւելի էր, ինչ որ մարդ սիրտ չէր անում, որ գայ էն շինած պատրաստներումը կենայ։ Կարծես մարդիկ չըլինէին առաջին․ աչքը խժռած, մէկ դէս գցեց, մէկ դէն, քրդերէն չըգիտէր, որ մէկ բան ասէր, բայց էս էր, որ նրան պրծացրեց, որովհետև եթէ խօսէր, կիմանային որ մարդ է, դև չէ, իսկոյն կտոր կտոր կանէին։

Մէկ շամփուր խորովածի որը կերաւ, որն էլ ետ կրակը գցեց։ Տաճարի հիանալի շինուածքին ու գեղեցկութեանը մտիկ արաւ ու գլուխը ժաժ տուաւ։ Քրդերը փետացած մնացել էին նստած։ Աչքը որ յանկարծ նրանց վրայ չըխժռռեց, ամեն մէկը տեղն ու տեղը ուզեցաւ որ հալչի։ Էնքան էդպէս նրանց աչքը մոխիր ածեց, որ ընկերների ոտի շշիւնը իմացաւ ու շունն ուրախ-ուրախ ներս ընկաւ, ոտներովը փաթաթւեց։ Աւազակները հէնց շանը տեսան թէ չէ՝ աչքների փառը վեր ընկաւ, ամեն մարդ թրին վրայ վազեց, որ նրան միջիցը կիսի։ Առաջի թուրը վրայ բերողի գլուխը կէս էլաւ, տարճանակների երկուսն էլ իրանց որսը ճարեցին, ու զամէն ձեռն առած որ գոռաց ո՛չ. «Տղէք, ձեր արևին ղուրբան, Աստուած մեր կողմն է, դուռը կտրեցէք, որ սրանց մատաղն էս գիշեր անենք…»

Հայի լեզուն, որ բաց չէլաւ, համարեա թէ պատերը լեզու առան. «Ամա՛ն, ձեր եկած հողին ղուրբան, ճար ու-

նիք, տեսէք, մեզ ազատեցէք, տանով-տեղով ձեզ գերի կըդառնանք»։ Տասը տասնըհինգ քրդստանցի հայ էլ՝ որ էս կողմից, էն կողմից գլուխ չըբարձրացրին ու քրդերի մնացած թրերն ու նիզակները ձեռք առան, քրդերի աստղը թեքւեց. ութը կոտորւել էին, երկուսը մնացել վիրաւոր ընկած. սրանց էլ կապեցին մէկ ձիու բըհիրի վրայ, ու աչքդ բարին տեսնի, ոչ մի րոպէում մարդի քաջութիւնը էն բարերարութիւնը չի արել, ինչպէս հիմիկ։

Աղջիկ ասես, տղայ, հարսը, երեխայ ծըծկեր՝ հազար չըւանով կապած տուն էին արել, Ղարսի գեղերից գերի բերել, որ տանեն կամ սարդարին ընծայ անեն, կամ Ախըլցխա ծախեն։ Ո՞ւմ էսպէս վիճակում մարդ կեանք տայ, որ նրա առաջը ծունր չըդնեն, երկըրպագութիւն չանեն։ Բայց հսկայ Աղասին ինքն էր ընկնում նրանց ճըտովը, ինքը նրանց կապերն արձակում, ինքը երեխին ջոկ, մօրը ջոկ գուրգուրում, մխիթարում, որ Աստըծուն փառք տան սուրբ Սարգսին խունկ ու մոմ վառեն, թէ չէ՝ էս իր հունարը չէր։ Ոչինչ գիշեր էն լոյսը, էն կեանքը չի տեսել, չի քաշել, ինչպէս էս։ Ազատւողները՝ թէ ազատողները իրար տեսնելիս, հէնց իմանում էին, թէ երկնքումն են և ոչ երկրումը։

Փոքր ինչ որ հանգստացան, աչքըդ բարին տեսնի, քրդերի խուրջինները որ բաց չարին, հազար արիւնի գին կար մէջներումը, ամեն մէկի վրայ հազար մանէթի զարդ, արծաթ ու ոսկի, թող զուտ փողը և իրանց զէնք ու զրահը։ Աղասին ոչ մէկին էլ չընայեց, ուղարկեց ձիանը բերել տըւաւ, ներս քաշեց, ու քրդստանցի հայերին հարցրեց, որ իրան միամտացնեն, թէ էն գիշերը կարո՞ղ են էնտեղ ապահով մնալ թէ ոչ։

«Աղա, գլխուդ արևուդ ղուրբան, վալլահա, չընք գինա, թէ էս շան լաջերից էլ կա՞ն, թէ չէ. ամմա օյաղութիւն աղէկ է։ Սրանց ճանգիցը շուն չի խըլսի, մարդ ի՞մալ խըլսի։ Մըկա Աստծուն փառք, խազար էնպէս ջահուար մեր առաջը գան, գէնոնց խէրն անիծեմ, մէկ թուր տուր մեր ձեռը, մենք գինանք, թէ իմալ քո ճակատը պարզ կէնենք։ Մեր ամեն մէկը, սուրբ Կարապետ

զինւայ, էսոնց տասնին խաւի պէս կըծալի, տակը կըքաշի։ Դու զարդ մի էնի, ռահաթ պառկի, մեր երեսը ոտացդ հողն ըլի։ Էսոնց քօքը կըտրւի, քանց շուն շատ են, քանց գէլ առաւել։ Թէ մեզ կըխարցնես, մենք էմլա խէյրաթ կըտեսնենք, որ մեր կէս պառկի, կէս ղարաւուլ քաշի։ Էս ձորեր խանա լիքն են։

Հէնց էս զրոյցումն էին, մէկ էլ տեսան, որ ձիաւորի ոտի ձէն է գալիս, Արխասիրտ Աղասին միտք արաւ, որ սրանք նրանց ընկերները պէտք է լինին. մի վայրկենում երեխայ մեծ ու փոքր մի կողմ քաշեց, խստիւ պատւիրեց որ ձէն չըհանեն, երկու քրդի էլ բերան, ձեռք, ոտք աւելի պինդ կապեց ու մէկ քաջ քրդստանցու թուրը հանած վրաները կանգնացրեց, միւս քրդստանցոցը կրակի չորս կողմը նստացրեց, որ կասկած չըտանեն, ու ինքը իր քաջ ընկերներովը եկեղեցու աջ ու ձախ կողմը կտրեցին, թուրները հանած պատնըդուրս ցըցւեցին ու թըշնամուն ճանպա տըւին։ Լօլօ ձէն տալով՝ քանից աւելի ձիաւոր ժամի դուռը վէր եկան... Հէնց խունւած ու աղմուկով որ ներս չընկա՛ն, էլ չիմացան, թէ մա՞րդ է որ իրանց գլուխը կտրում է, թէ՞ դևեր են կամ սրբեր, էլ թրի, նիզակի կամ վահանի ժամանակ չէր։ Քրդստանցի հայերը ժամանակ չըտւին պարսկաստանցի հայերին. շատերին հէնց կրակի շամփուրներն ու թրերն էին բերանը կոխում...

Էլի Աղասին էր որ հայերի կատաղութեանը չափ դրաւ. սպանածներին դուրս ածել տըւաւ, ու որը վիրաւոր էր, նրանց վէրքերը փաթաթելու հոգ տարաւ, իսկ ողջ մնացածներին թոյլ չըտւաւ սպանելու, այլ միայն կապելով՝ մի կողմը տարաւ։ Աղասու այս վարմունքի դէմ բողոքում էին քրդստանցի հայերը և ասում.

«Աղա, մեր տուն աւրող էսոնք են, էսոնց խօր տուն աւերի, էսոնք մեր ճըժեր խատացրին, թո՛րկ, թորկ, էսոնց սատանի կեր էնինք, էսոնց խօր զազա զօռբէզեօռ էղնի...

4.

Առաւօտը որ լուսացաւ, Աղասու աչքը մնացել էր սառած, չէր իմանում աչքին հաւատայ թէ ոչ։ Եկեղեցիք, պարիսպ, բերդ, մինարէք՝ էնքան նոր, էնքան պայծառաշէն ու անբնակ։ Պատմութիւն չըգիտէր, որ իմանար, թէ էս ինչ քաղաք պէտք է լինի, տէրտէրին որ չըկանչեց ու պատմութիւնն իմացաւ, խելքը գլխիցը թռաւ…

«Վա՜յ իմ օրին, արևին, մեր ազգն էսպէս քաղաքներ է ունեցել, էսպէս մեծութիւն, ու հիմա ամենն էլ կորցրել, աւազակների ձեռքում գերի է մնացել։ Չէ, տէր հայր, մեզ Աստուած է բերել էստեղ։ Աստուած մեր թըրին, մեր կռան ուժ տըւաւ, որ մէկ գիշեր էսքան բաներ արինք․ էն Աստուածն էլ էնքան կարողութիւն ունի, որ մեզ միշտ կը յաջողի։ Աւազակութիւն չենք անում, որ նա բարկանայ, աւազակի տուն ենք կտրում, Աստծոյ ստեղծածն ազատում։

«Մնանք էս սուրբ հողումը, մեր սուրբ թագաւորների գերեզմանը, մեր սուրբ եկեղեցիքը ազատենք գողի, աւազակի ոտքից։ Հարիւրից աւելի ենք հիմա. ինչ ձեռք ենք գցել՝ ձեզ լինի։ Մնանք էստեղ․ կամ մենք էլ մեր արիւնը մեր սուրբ թագաւորների հողի վրայ թափենք, կամ քիչ-քիչ նրանց քաղաքը կրկին պայծառացնենք։ Տներ կան, ջուրը՝ առատ, հանդը, դաշտը՝ մեծ, մէկի տեղ հինգ զարմանալի եկեղեցիք, քարի տակիցն էլ որ լինի՝ մնունդ կըհանեմ, ձեզ կըպահեմ»։

Բայց թէ քարին ասած, թէ մեր քրդստանցի հայերին։ Կուռումը, ճշմարիտ է, ամեն մէկը մի աժդահա է, բայց ինչ որ գրումը գրւած է, նրա հակառակ չի գնալ երբէք։ Մեռնիս էլ՝ նա իր ասածը կանի, էնքան կողքը հաստ է։

«Իմա՞լ կեղնի, անիծած խողումը վօ՞վ կըմնայ։ Այմաւուրք սուտ իմա՞լ կըխօսի։ Մեր վիզ զարկես, մեր ջանն խանես, վալլախա, էս չօլում կեցող հըմլա մէկ լէ չեղնի, չեղնի… Խազար տարի խա ասա, խա գլուխդ ի քարին

զարկ։ Մենք չընք կենայ, չընք գինայ. ինչ կասես՝ ասա։ Մենք մեր խող չենք թողա…

—Չէք թողալ, Աստուած ձեզ հետ։ Մեր աստղը մէկ անգամ ծռւել է։ Մարդն ինքն իր գլուխը որ թրի տակ դնի, էլ ո՞ւմ բանն է կտրւել, որ նրան օգնութիւն անի։ Էսպէս արինք որ մեր տունը քանդւեց՝ է… Գնացէք, Աստուած բարի ճանապարհ տայ ու ձեր սիրտը մէկ լոյս գցի, որ ձեր չարն ու բարին իմանաք…

5.

Գիժը, ասած է, մէկ քար գցեց ծովը, հազար խելօք վրայ թափեցին, չկարացին հանել։ Աղասին տեսաւ ասածը զուր է անցնում, քաշւեց մի կողմը, թաշկինակը դրաւ աչքերին ու բերանը բաց արաւ.—

«Փառքըդ շա՜տ ըլի, ո՜վ Արարիչ Աստուած, էլ ո՞ւր ենք ասում, թէ մարդ քո սուրբ հոգին ունի, քո պատկերն է, քանի որ շատ անգամ նրա միտքը քարից պինդ է, գլուխը՝ հաստ։ Գող ու աւազակ էստեղ տարիներով բուն են դրել, էլի քո երկիրը նրանց տակովը չի արել, վրան պահել է, հէնց մեր ազգի՞ն է քո զուլումը հասել, որ չես թողում իրանց աշխարհքը չէն անեն, քո սուրբ անունը փառաբանեն, կեանք ազատեն ու կեանք վայելեն։ Չէ, Ամենակալ Արարիչ, դու քո ստեղծածը, քո որդին էդքան չես անարգիլ, չես ոտնահարիլ։

«Մարդս որ ծնւում է, մէկ զունդ մսից աւելի ոչինչ չենք տեսնում։ Տարիք են անց կենում, որ քիչ-քիչ ոտն է ըլում, քիչ-քիչ լեզու, ուշ ու միտք ստանում, ձեռը բերանը տանելը սովորում։ Բայց վա՜յ էն երեխին, վա՜յ էն ազգին, որ աչքը էնպէս գոգում բաց կանի, որ լոյսի տեղ խաւար կըտեսնի, աչքը բաց՝ ուղիղ ճամպէն կըթողի՝ քարէ քար կընկնի։ Վա՜յ էն ազգին, որ բնական օրէնքը կըթողի, անբնականին կըհետևի, որ էնպէս խրատ տըւող չի ունենալ, որ նրան հոգի տայ և ոչ թէ ունեցած հոգին էլ հանի։

«Արդեօք՝ որ լաւ կարդացողներ էին էլել, երեխանց

ջոկ, ժողովրդին ջոկ, գիշեր-ցերեկ խրատ էին տըւել, կարդացրել, լուսաւորել էին, հիմա մեր ազգը էս վիճակը կունենար, էս օրը կընկնէր։ Սարի անասունն էլ մեզանից լաւ է ապրում, թշնամուց, որսորդից կամ փախչում է, կամ վրայ թռչում, կոտրատում, գլուխը պահում։ Ծըտի բունն էլ որ քանդում ենք, ճըժւըժում, թևին, գլխին է անում։ Մենք մի ծըտի չափ էլ չըկանք, որ մեր բունը պահենք…

«Ի՞նչ օգուտ էն գիրքն ու աւետարանը, էն խաչն ու երկրպագութիւնը, որ մենք չենք հասկանում։ Գետնի տակին էլ շատ գանձ կայ, մեզ ի՞նչ։ Ա՜խ, մեր կարդացողնե՛ր, ի՞նչ կըլինի որ ինչքան ժամանակ քնի, քեֆի հետ են անց կացնում, աւելի փողի թամաշ անում, էսպէս բանի թամաշ անեն, մեզ լուսաւորեն, իրանք էլ թըշնամուց, աւազակից ազատւին, մեզ էլ ազատեն։

«Մարդս մէկ անգամ է աշխարհք գալիս. էնպէս պէտք է անի, որ էս աշխարհքից հեռանալիս՝ էս կեանքումը անունը յիշւի, տօնւի, էն կեանքումն էլ հոգին փառաւորւի, լոյսի բաժին դառնայ։ Բայց ի՞նչ օգուտ, որ ասածս քարերն են իմանում։

«Ասենք՝ թէ տգէտ ժողովուրդը էս բանը լսել, ասում է, կարգաւորին ի՞նչ է էլել, որ նա էլ է հաստատութիւն տալիս, թէ էսպէս հրաշալի քաղաքը անէծքով է կործանւել։ Առաջինը՝ սուրբ մարդու բերանից անէծք, դառը խօսք չի՛ պէտք է դուրս գայ. դուրս էլ եկաւ, Արարի՛չ, երեսս ոտիդ տակը, դու պէտք է մէկ մարդի խաթեր միլիոն հոգի կորցնէ՞ս։ Թէ պէտք է կորցնէիր, ինչի՞ ստեղծեցիր…

«Ա՜խ, հազար էսպէս ցաւեր կան սրտումս, բայց բերանս փակում են, չեմ կարում ասել»…

6.

Աղասին Անի քաղաքից հեռանալիս՝ շուտ շուտ յետ էր մտիկ տալիս։ Քանի որ Անւայ պարիսպները, եկեղեցիքը աչքին երևում էին, սիրտը մի քիչ հանգստանում

էր, կրծքին խփում էր, ա՛խ քաշում, կրակ վէր ածում։

Հէնց սարի գլուխը բարձրացան, որ միւս կողմն անցնեն, ու Անին պէտք է աներևութանար, էլ չըկարաց իրան պահել, թուլացաւ, ձիուց վէր ընկաւ, չոքեց, ձեռները երկինք գցեց, աչքերը Անու վրայ, ու գոռաց.—

Կա՛մ առ իմ սիրտս, կամ տուր ինձ հնար,
Ո՛վ դու երկնային Ստեղծող Բարերար,
Կամ իմ հոգիս էլ հանիր քեզ մօտ տար,
Կամ քո երկնքիցըդ արա ինձ մէկ ճար…

Քանի շունչս վրաս է, քանի խելքս գլուխս,
Կրակ էլ որ թափես, խորովես սիրտըս,
Էլի իմ հոգիս ուրախ քեզ կըտամ,
Թէ Անու միջումն իմ մարմինս թողամ։

Աչքեր, կուրացէք, գուցէ թէ էլ բաց
Չըտեսնիք դուք Անու լոյս-հողն օրհնած,
Գուցէ թէ մեռնիմ էս հոգսովս էրւած,
Հողս գոնէ հողին չըմնայ կորած։

Թող հոգիս դժոխքը գնայ, խորովւի,
Իմ սուրբ նախնեաց տեղ, իմ ազիզ Անի,
Էլի որ մարմինս մէկ քարի տակի
Լինի քո ծոցումն, ինձ դրախտ պէտքը չի՛։

Թո՛ղ էն անէծքը, որ քեզ են տըւել,
Բանան անդունդը, կուլ տան ինձ ողջ էլ,
Քո հողն երեսիս մտնեմ գետնի տակ.
Երկնային լոյսին էլ չեմ կարօտիլ։

Սո՛ւրբ Երզնկացի, սուրբ Երզնկացի,
Պարծեցիր, որ ես չեմ շինիլ Անի,
Անէծքդ այնուհետ, թրի, կայծակի
Պէս թող ինձ էրեն, իմ հոգիս տանջւի։

Ձեզ մատաղ լինիմ, ով սուրբ քար, հողեր,
Տաճարք, ապարանք, պարիսպք, տապաններ,
Թէ մուրազս սրտումս պէտք է մեռնի, մնայ,
Էս չոքած տեղս թող ջանըս քարանայ։

Քարացած տեղիցս կանգնեմ ու ասեմ,
Ամեն անցնողի ետևից կանչեմ,
Քարացած լեզւով վա՜յ տամ, աղաչեմ,
Ո՞ւր էք գնում, թողում, ձեր նախնեաց տեղն եմ։

ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՋՈՒՂԱՅԵՑՈՑ ՈՂԲԸ*

Ափսո՜ս քեզ, Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիրուցան եղաք անմեղ, անխորհուրդ.
Գերի էք գնում դէպի Խորասան,
Քաղցած ու ծարաւ, տկլոր, թշւառական։
Հարիւր ու հազար ցաւեր կրեցիք,
Ձեր քաղցր երկրից ոտք դուրս չըդրիք.
Հիմա ձեր հօր մօր գերեզման թողած,
Տներ ու ժամեր ուրիշին տըւիք։
Էս սիրուն դաշտերը, մեծ-մեծ քաղաքները,
Քաղցրիկ ջրերը, ձեր շէն գեղերը,
Որի՞ն էք թողում, որ հեռանում էք,
Էսպէս կըլինի՞, որ մոռանում էք։
Վախում եմ էնպէս մտքներից ընկնի,
Որ քանի ողջ էք, մտքերնիդ չընկնի,
Գոնէ ձեր որդոց, թոռներին ասէք,
Որ ձեր հայրենիք աւերակ թողիք։
Մասիս անունը, Նոյեան տապանի,
Արարատ դաշտի, սուրբ Էջմիածնի,
Մեր Խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Չըմոռնան մինչև օր դատաստանի։
Աչքս կուրանար, շլինքս կոտրւէր,
Խե՜ղճ Հայաստան, քեզ էսպէս չըտեսնէր,
Մեռած լինէի, ինձ երանի էր,
Քան թէ կենդանի, աչքս բաց տեսնէր...

---

* Այս ողբն առել է Ջուղայեցոց բարբառով Ստեփան անունով մի վարդապետ 1605 թւին, երբ պարսից Շահ Աբասի հրամանով Արարատեան դաշտի հայերի մեծ մասին և ամբողջ Ջուղան գերի տարան Պարսկաստան։

ԳԻՒՂԱՑՈՒ ԳԱՏՈՂՈՒԹԻՒՆԸ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄԱՍԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՑՈՒՆԸ՝ ԳԻՒՂԱՑՈՒ

1.

Պատանի Արութիւնը գիւղից նոր էր եկել քաղաք և նոր էր քաղաք տեսնում։ Շաբաթ երեկոյին էր։ Հալւաբարի մէյդանի վրայ եղած տներից մէկի պատշգամբումը նստած՝ նայում էր մէյդանում անց ու դարձ անող մարդկանցը։ Նրանցից որը կառքում նստած, փափախը թեք դրած, պապիրոսը բերնին՝ շտապեցնում էր կառապանին, որը ոտով էր վազում դէս ու դէն։

Քիչ-քիչ մութը վրայ հասաւ, մէյդանի չորս կողմով շարւած դուքաններում սկսեցին վառել ճրագները և կըշեռքները մինը քան միւսը բարձր ձայնով շըրըխկալ։ Որը կանչում էր.—Մօթալի՜... կայի մօթալի...», որը՝ «Խրամուլի՜... խրամուլի՜...», որն էլ—«Արմ, ահա» բղաւելով՝ զնգացնում էր կախ տըւած փոքրիկ զանգակը (որ հիմայ) և կշեռքը դատարկ շըրըխկացնում... Ո՛վ ինչ բարիք որ ունէր վաճառելու, իր ձայնի ուժովը հրաւիրում էր գնողներին։ Կանաչի ծախողն անգամ իր ձայնի բոլոր ուժը մի տեղ հաւաքած, բղաւում էր.—Կանանչի՜ն... լաւ կանանչի՜ն, օ—հօ—հօ—հօ... սրան է...

Մի բարակ ու քաղցր ձայն միայն մանրուքի խանութների առջևից էր լսւում, ուր նստած էին երեխէքը, և մի սեղան՝ խունկ ու մոմ վրան՝ առաջները դրած՝ հրաւիրում էին տուն գնացող պարոն ուստաներին, որ խունկ ու մոմ առնեն, և հրաւիրում էին երգելով՝

Համեցէ՜ք, ուստէ՜ք,
Խունկ ու մոմ տարէ՜ք,
Հոգու վարձք արէ՜ք...

Այսպէս՝ բարակ ու հաստ, քաղցր ու կոպիտ, բարձր ու ցածր ձայներ դրօշկաների գըրգռոցի ու զանգակների զօղանջիւնի հետ խառնւած՝ գըմբացնում էին քաղաքը և ապշեցնում Արութիւնին։ Այն, որ մի նուրբ ճաշակ ունեցողին կարող էր ձանձրութիւն պատճառել, Արութիւնին

հիացնում էր։ Նա ինքն իրան մոռացել էր, և գեռ կա շատ կընստէր դրսումը, եթէ ներսից Ովակիմը չը կանչէր նրան։

—Արի՛ ներս, Արուսթիւն, արի, ասեց Ովակիմը,—ես էգուց քեզ կըտանեմ քաղաքը ման կածեմ, ինչ կայ, չըկայ, դիփ էլ կըտեսնես։

Վեր կացաւ Արուսթիւնը և մտաւ ներս, ուր տէր հայրը նստած էր տախտի վերի ծայրին։ Տախտի դիմացը դրւած էին մի քանի հասարակ աթոռներ ու մի գրասեղան։ Արուսթիւնը նստեց գրասեղանի մօտ, ուր մի քանի հատոր գրքեր կային դրւած։ Արուսթիւնը հետաքրքրութեամբ նայեց գրքերի վերնագրերին, նրանցից մէկը վերցրեց և սկսեց լուռ կարդալ։ Գիրքը հասարակ բարբառով էր գրւած։ Առաջին անգամ պատահելով իրան բոլորովին հասկանալի բարբառով գրւած մի գրքի, Արուսթիւնը չըկարողացաւ իր հրճւանքը ծածկել։ Ովակիմն այդ նկատելով՝ ասեց.—

—Արուսթիւն, ես տեսնում եմ, որ քեզ շատ դրաւեց էդ գիրքը, արա մէկ բարձր կարդա, տեսնեմ ինչպէս ես կարդում։

—Ո՞ր երեսից սկսեմ, հարցրեց Արուսթիւնը.

—Հէնց էդ կարդայ, ինչ որ կարդում էիր։

Արուսթիւնն սկսեց կարդալ հետագայ տողերը։

«Քաղաք որ մտնում եմ, հէնց իմանաս, թէ աշխարհք սով է ընկել, էլ ոչ խէր կայ, ոչ բարաքեաթ։ Հացն ու ջուրն էլ որ փողով ըլին ծախում ու առնում, էլ ո՞ւմ դուռը գնաս, ո՞ւմ ձեռըդ դէմ անես։ Բաղի վախտ էլ տեսել եմ, որ դուքաններումը կիտուկ-կիտուկ մանեթները, ոսկին ածած, ամեն մէկ փող համբրելիս՝ էնպէս գիտես՝ թէ փողատիրոջ հոգին հետն է դուրս գալիս, էնպէս են սըթսըթում իրանց խազինի վրայ, հէնց իմանաս՝ թէ առաջներիցը թև կառնի, կըթռչի։ Մէկ ձեռըդ դ՚էմ արա, մէկ ծեղ էլ չեն տալ, որ աչքդ կոխես։ Մարդ իրա հոգին պէտք է ծախի, որ փողի թամահ անի։

«Հազար տարի էլ՝ որ քու ազիզ սիրելու դռանն էլ՝ չլինքդ ծռես, կանգնես, սովից մեռնիս, հազար տարի

անօթի փորով զկւտաս, ոչ մէկը քեզ տուն չի կանչիլ, մէկ սառը ջուր խմացնիլ։

«էն մարդն էլ՝ որ քու տանը կերել, խմել, ամսով, տարով քու աղ ու հացի վրայ է էլել, աչքն աչքիդ առնելիս՝ հէնց գիտես թէ գիւլլով խփեցին. ետեն է քեզ դէմ անում, աչքը քամակը գցում։

«Տօ՛, փողըդ էլ ջըհա՛նդամը գնայ, դու էլ, տօ՛, ա՛նպիտան, ասենք թէ աչքըդ է կուրացել, ինձ չես ուզում որ ճանաչես, կամ սուփրիդ ղրաղը ցոյց տաս, տօ՛, գըլխիդ քա՛ր ընկնի, ինչ կերել ես, բթովըդ դուրս գայ, խնդրել եմ Աստուածանից, զահըրմար ըլի, էն կեա՛նքդումը առաջդ գայ, աչքերըդ բռնի, տօ՛, մէկ «բարով, Աստըծու բարին» էլ է գլխիցդ կտրւե՞լ, որ դունչըդ ցըցում ես ու եդ փախչո՞ւմ։ Մէկ բարի լոյս, բարի օր էլա տուր, է՛, բերնիցդ հօ քըէհ չե՞ն ուզում, ինչ ես քարացել, էդ էլ հօ փողով չի՛, ա՛յ փողակեր, հողակեր»...

—Էդ ի՞նչ գիրք է, հարցրեց տէր հայրը, միջահտելով Արուսթիւնի կարդալը։

—«Վէ՛րք Հայաստանի»,—պատասխանեց Ովակիմը, «վէրք» բառին մի ցաւակցական ձայն տալով։—Դա մի շատ պատւական գիրք է, նոր է տպւել. բայց ափսո՛ս, որ մեր ժողովուրդի մէջ չի տարածւում այդ անման գիրքը։

—Թէ որ էժան է, ես մի հատ կառնեմ, և կարծեմ ամեն մարդ էլ կառնի։

Բանն էժանութեան վրայ չէ, տէր հայր, մեր ժողովրդի ճաշակը խանգարւած է, նա մի տեսակ ճ՜թնասիրութիւն ունի. նրան եթէ էնպէս բան է ասւում, որ իրա խելքիցը բարձր է, ու ինքը չի հասկանում ոչ նրա լեզուն, ոչ միտքը,—բերանիցը ջուր է գնում, զմայլւում, զարմանում է, գովում, բարձրացնում, թէ՝ տեսէք, էնպէս բան ասեց, որ ոչով չըհասկացաւ. բայց եթէ իրան օգուտ, հասկանալի ու խելքիցը մօտիկ բան ես ասում, ասում է.—էդ ո՞վ չըգիտէ, որ էդպէս է, էդպէս հէքիաթներ ես հազարը գիտեմ։

«Բայց, ի հարկէ, երբ որ էդպէս գրքերը կըշատանամ, մեր նոր սերնդի աչքը կը բացւի, կըտեսնի որ հնի-

ցըն էլ օգուտ չըկայ, գրաբառը եա կըքաշի, իր տեղն աշխարհաբառին կըտայ, էն ժամանակն էդպէս գրքերն էլ կստանան իրանց վայելուչ յարգն ու պատիւը։

«Դրա գրողը մի ճշմարիտ ազգասէր մի երևելի հանճարի տէր մարդ է էլել։ Պէտք է մի հարիւր տարի անցնի, որ էդպէս գրող էլի մէկը դուրս գայ հայերից։ Ով որ մօտիկ ծանօթ է մեր ժողովրդի կեանքին, ով որ մի զարգացած խելք ու միտք ունի ու. սիրող սիրտ, միայն նա կարող է հասկանալ, որ էդ գրքի խօսքերը հեղինակի սրտի արիւնովն են գրած։ Էդ հեշտ բան չի, բայց ռամիկ ժողովուրդը ծիծաղում է էն խօսքերը կարդալիս՝ որ հեղինակի աչքերից դառն ու յորդ արտասուքն են թափել... Է՜հ, ինչևիցէ... դո՛ւ, Արութիւն, հաւանո՞ւմ ես էդ գիրքը։

Արութիւնը ոչինչ չըխօսեց, բայց այն անմեղ ժպիտը և ամօթխածութիւնով լի անկանոն շարժւածքը որ նա երևացրեց, դա նշան էր խորին համաձայնութեան։

—Քե՛զ եմ բաշխել այդ գիրքը, — ասեց Ովակիմը, — քանի փոքր ես, դա քեզ համ կուրախացնի, համ կըտըխրեցնի. բայց երբ որ կըմեծանաս, էն ժամանակն էլ ուրիշ տեսակ մտածմունքների մէջ կըձգի քեզ...

Արութիւնը իր հոգու մէջ անչափ շնորհակալ եղաւ Ովակիմից, բայց բերանացի չըկարողացաւ արտայայտել։

Այս միջոցին ներս մտաւ մի ջահել կինարմատ, քնքուշ ու գեղեցիկ դէմքով, մաքուր ու պարկեշտ հագնւած և գըգւեց Արութիւնին մի այնպիսի ջերմ ու կարօտալից սիրով և արտասւալից աչքերով, որ սակաւ եղբայր արժանացած կըլինի իր քրոջից։ Այո՛, անծանօթուհին Արութիւնի քոյր Օսանն էր, որի աչքերի յորդ արցունքը քաղցըր և ուրախ ժպտի հետ խառնւած՝ ցոյց էր տալիս նրա ցնծալից յուզմունքի բարձր աստիճանը։ Մի րոպէ տիրեց լռութիւն, և ապա խօսեց Օսանը և խնդրեց տէր հօրը՝ որ թոյլ տայ Արութիւնին իր մօտ տանելու։ Տէր հայրը կատարեց նրա խնդիրը, և մի քառորդ ժամ չանցած, Արութիւնը դուրս եկաւ Ովակիմի տանից՝ մի ձեռում «Վէրք Հայաստանին» բռնած՝ իսկ միւս ձեռն իր քրոջը տըւած։

2.

—Ովակիմ, էդ աղջիկը ձեռիցս չըխլի՞ Արութիւնիս, հարցրեց տէր հայրը, երբ որ քոյր ու եղբայր դուրս էին եկել արդէն։

—Խլում են, թո՛ղ խլեն, ի՞նչ ես դարդ անում, — պատասխանեց Ովակիմը։ — Էստեղ քաղաք տեղ է, նրան շատ չեն պահիլ։ Շատ էլ որ ուզենայ Օսանը, նրան ո՞վ մօտիկ կանի։ Նա մի սկեսուր ունի, որ Աստւած ազատի, գեանջըցի է, քաղքըցի (Թիֆլիսեցի) դառած, որ մի բանի վրայ խօսում է, էլ չի լռում... Չէ՛, տէր հայր, նա գեղի տղայ է, կուշտ ուտելու և խմելու սովոր, էստեղ նրա՛ն ո՞վ էնքան հաց կըտայ, որ նրա աչքը կշտանայ։

—Ի՞նչ ես ասում, քա՛, — մէջ ընկաւ Ովակիմի կինը՝ Սօփիօն, — բա մինչև հիմա ո՞վ է պահել նրան, միթէ չէ՞ն կարող էստեղ էլ պահել։

—Պահել էլ կայ՝ պահել էլ... մարդ իր երեխին հօ չի՞ դէն գցիլ։ Իրանց գեղումը մի երկու այբ բէն էին սովորեցրել, էլ ուրիշ բան չըգիտէին։ Մէկ օր տաւարն էին ուղարկում, միւս օր հորթեր, մէկ էլ օր գութան։ Էսպէսութիւնով նա էլածն էլ մտիցը կըգցէր, թէ որ՝ նրա բախտիցը՝ տէրտէրը վրայ չըհասնէր։ Ահա չորս տարի է, տէրտէրի մօտն է, նրա հօրիցն ինչ է ստացել էս խեղճը։ Մէրը շատ խելօք, ժրագլուխ կնիկարմատ է, թէ բան արել է, էլի նա է արել...

—Ես նկատել եմ, տէր հայր, — շարունակեց Ովակիմը, — որ գիւղի կնանիքը աւելի շատ բան են շինում, քան թէ տղամարդիկը։ Գիւղերումը առհասարակ ծոյլ տղամարդիկ շատ կան, բայց ծոյլ կնիկարմատ հազիւ թէ պատահի։ Խօսքս մանաւորցնելով՝ պէտք է ասեմ, որ Արութիւնի մայրը ժրագլուխ կանանց մէջ կարող է աւագագոյնը համարւել։ Ինչ որ նա անում է, հարիւրից մէկը հազիւ կարող է անել։

«Մանդր երեխանց տէր, որոնց թիւը մի դիւժինից անցնում է, հիմա արի դրանց շորերը կարի, կարկատի,

լըւա, հացցրու, օրը երկու թոնիր հաց թխի, կուժն ուսիդ դի, գնա հեռու գետից հինգ վեց անգամ ջուր բեր, կերակուրը եփիր, մշակներին, հիւրերին հաց տուր, տանըցոց գլխըները շաբաթը մէկ անգամ լըւա, երեխանցը լողացրու... Հիմի արի աղջկերանցդ համար բաժինք շինիր, չըւալ, խալիչա, կարպետ, խուրջին, մափրաշ, աղաքսակ, մէզար, ջէջիմ, ղաջարի գործի, նոքարի ու տղէրանց համար հորագործ շալ, մարդի համար տափագործ. ներկի, կարի, հացցրու...

«Հիմի արի ճիճու պահի, աբրեշում քաշի, քեզ համար ու աղջկէրանցդ համար աբրեշումէ դէրիացու գործի, տղէրանց համար շապկացու, զօտկացու... Հիմի արի կովերը կըթի, հորթերը կապոտի, դուրս արա, օրը մէկ-երկու խնոցի հարի, եղը հալի... Հիմի կալի-կուտի ժամանակ է, գնա արևի տակին՝ երեխէն ձեռիդ՝ կանգնի, կամը քըշի, կալը կասի*, հաշան արա, եղի, քամելուն օգնի, կալը սրբի, ցորենը շատարարի, աղունի համար խախալի, տեփրի, քարերը ջոկի, ձաւարի համար ընտրի։ Հիմի այգեքաղի ժամանակ է... Հիմի սար գնալու ժամանակ է... Է՞հ, ինչ եմ ասում, որ մի շաբաթ օր ու գիշեր հաշւեմ, էլի նրա արածի համառօտ ցուցակը չի կազմւիլ։

Գեղի մէկէլ կնանիքն էլ՝ ներքի թաղից սկսած մինչև վերի թաղը՝ խեղճին հանգստութիւն չեն տալիս։ Ով մի նոր բան է ուզում շինել, պէտք է նրա օգնութեամբ, նրա խորհրդին դիմի.—ձևել է, գործել է, հինել է, նախշել է, կար է, ով գիտէ՝ հազար ու մի բան։ Որ մի չըմտածող ու անգէտ կնիկ լինէր, կասէինք՝ էհ, ինքն էլ չի իմանում, թէ ինչ օրում է, բայց չէ, նա տէր Օհանի թոռն է, Հեղինէ կուսի քըւոր աղջիկը։ Լուսահոգի Հեղինէն մի աշխարհք ման եկած, փորձառու, շնորհքով կոյս էր, նրա ձեռին է մեծացել Հռոմսիմը։ Ղորդ է, գիր չըսովորեցրեց, որ կուս չըդառնայ էն սիրուն, շարմաղ աղ-

* Մեզանում՝ Տէր Ղևոնդեանցի Մայրենի Լեզւի շնորհիւ՝ գրում են *կալսել*, որ մի կոպիտ սխալ է. կալը չեն *կալսում*, այլ՝ կասում են։

ջիկը, բայց անգիր աղօթքներ էր սովորեցնում ու կար, ձև, գործ, որ Հեղինէն լաւ գիտէր։ Նրա կարովի սրբերի պատկերները որ տեսնես, կըմնաս զարմացած, հիացած...

ՔՈՅՐ ՈՒ ԵՂԲԱՅՐ

Երբ որ Օսանը եղբօրը տարաւ մօտը, սկսեց պատմել նրան, թէ ինչ են դառնում գիւղից քաղաք եկողները. թէ՝ քաղաքի ուսումնարանները լաւ են, սովորեցնում են մի քանի լեզու, թէ՝ շատ անգամ, գիւղից աղքատ երեխէք են գալիս և ուսում առնելով՝ դառնում են վարժապետներ, գրագիրներ, չինովնիկներ, թէ ինչպէս նրանք հարուստի փեսայ են դառնում ու իրանք էլ հարստանում, թէ ինչպէս ահա այս և այն անձը աղա է դառել, էլ ոչովի չի հաւանում, մոռացել է իր ստոր ծագումը...

Այսպէս՝ երբ տան միւս անդամները գնացել էին իրանց գործին, քոյր ու եղբայր առանձնացած, մտածում էին, թէ ինչպէս լաւ կըլինէր Արութիւնի համար,—մնա՞լ քաղաքումը, թէ՞ էլի ետ դառնալ դէպի գիւղ։

—Զէ, լաւ կանես, որ էլ գեղը չըգնաս,—ասեց Օսանը,—էնտեղ ի՞նչ պիտի սովորես, էդ տէրտէրն ինքն ի՞նչ գիտէ, որ քեզ ինչ սովորեցնէ...

—Էդ մի՛ ասիլ,—պաշտպանեց Արութիւնն իր տէրտէրին.—էդպէս տէրտէր էս քաղքումը չի լինիլ. դա մէկ անյայտ փիլիսոփայ է. կաթողիկոսը որ գիտենայ, եպիսկոպոսի խաչ կըտայ...

—Ի՞նչ ես ասում, ա՛ տղայ,—ընդդիմախօսեց Օսանը։

—Դա մեր Ովակիմի մօրաքրոջ որդին է, ես մի՞թէ չեմ ճանաչում դրան։ Մէկ օր խօսք բացւեց, ես հարցրի Ովակիմին, նա թէ՝ «Ճգնաւոր, բարեսիրտ մարդ է, դրա համար սուտն ու ճշմարիտը մէկ է, երկուսին էլ հաւատում է, միայն թէ տպւած լինի։ Էստեղ գիմնազիումն էնպէս բաներ են սովորեցնում, որ դա իրան օրումը լսած չի լինիլ։ Մեր հարևան Սառի տղայ Եագորը հիմի գիմնազիի չորրորդ դասատանն է։ Նրա մէրն էնպէս բաներ է ասում նրանից, որ մարդ լսում է, մնում է զարմացած։

—Ի՞նչ բաներ է ասում.

—Ասում է՝ իմ տղան հիմի գիտէ, թէ էստեղից մինչև Մոսկով՝ սայլի անիւը քանի անգամ է պտոյտ գալիս. նա, ասում է, գիտէ, թէ Ադամից մինչև հիմա քանի րոպէ է անցել. նա, ասում է, իմանում է, թէ մեր ողջ աշխարհքը ջրով ու ցամաքով, իրանց միջի եղածովը քանի մսխալ կըլինի. ու էլի ուրիշ էսպէս բաներ։ Արա քո տէրտէրն էդ գիտի՞, քեզ ասել է՞...

—Ես որ քաղաքումը մնամ, էդ բաները կըսովորեմ։

—Ի հարկէ, կըսովորես։ Որ մտնես Վանքի ուսումնարանը, (Ներսէսեան դպրոց) յետոյ տէրտէր կըդառնաս, ուզենաս՝ գրագիր կըդառնաս կօնսիստորումը, կամ թէ չէ՝ վարժապետութիւն կանես, ժամումն էլ տիրացութիւն։ Թէ որ խելօք կըլինիս, մի հարուստի փեսայ կըդառնաս և մի հարուստ եկեղեցու վրայ էլ քահանայ կըձեռնադրուիս։ Կամ թէ չէ՝ կըմտնես գիմնազիա, էնտեղ լաւ ռուսերէն կըսովորես, յետոյ կըմտնես ծառայութեան, չինովնիկ կըդառնաս, տարէցտարի չինըդ կըբարձրանայ, մեծ մարդ կըդառնաս։

—Որ գիմնազիումը լաւ սովորեմ, յետոյ մողրով էլ կըդառնամ, չէ՞...

—Մողրովն ի՞նչ է, դու նրանից էլ մեծ մարդ կըդառնաս, ենէրալ կըդառնաս...

—Ո՛ւհ, ինչքա՜ն մեծ մարդ կըլինիմ... Մի՞թէ, իրաւ, էդքան կըբարձրանամ... Ես քչով էլ կըբաւականանամ։ Եթէ մի հասարակ թարգման էլ դառնալու լինիմ, ես էլի կըմտնեմ գիմնազիա։ Ա՛յ, մեր գեղըցիք, որ ոչ լեզու գիտեն, ոչ օրէնք, մի հասարակ եասաւուլի առաջին փափախնին վեր են առնում, կշտին կուչ գալիս։ Քանի անգամ եմ տեսել մողրովին մեր հօրը ծեծելիս։ Նոր չէ՞ր, որ բերդումն էլ նստեցրին, ուզում էին Սիբիր ուղարկեն, թէ դու ինչ իրաւունքով ես վիճում կնեազների հետ, ի՞նչու ես ասում՝ էդ հողերը նրանցը չի, զոռով են յափշտակել։ Մէկ անգամ էլ մողրովը տարել էր մօտը, էլ բաց չէր թողում, թէ՝ «դու ինձ պէտք ես, լեզու գիտես, քաջ մարդ ես, ինձ պէտք է օգնես, որ բոլոր աւազակներին բռնոտենք»։

Վար ու ցանքի ժամանակ էր, ամենքն իրանց բանը վերջացրել էին, իսկ մենք դեռ մի հատ ցորեն չէինք գցել հողը։ Մէկ էլ տեսանք, հրէս մողրովը եկաւ մի յիսուն ձիաւորով։ Եկան մեր դռանը վեր եկան։ Երբ որ գնալու էին, հէրս ասեց.—Աղա, խնդրեմ ինձ ազատ թողես, ես մենակ մարդ եմ, տանս ուրիշ աշխատող չունիմ, հիմա էլ ուրիշներին տար. թէ որ բէգառ է, պէտք է ամենքն էլ քաշեն։ Նա թէ՝ չի կարելի, պէտք է գաս։ Հէրս ուզեց ընդդիմանալ, արդարութիւն էր պահանջում, մօղրովը մի երկար չիբուխ ունէր, նրա գլուխը հանեց ու կոթովը սկսեց հօրս երեսին, գլխին... էնքան խփեց, որ արնակոլոլ արաւ։ Էնպէս բարկութիւնս եկաւ... մի մեծ քար վեր առայ ու բարձրացայ կտուրը, որ տանեմ էնտեղից մօղրովի գլխին գցեմ, մերոնք խլեցին ձեռիցս, թէ՝ ի՞նչ ես անում, գիժ, ուզում ես որ ողջ գեղը կրակ տան, էրեն... Հարա՜, էնպէս բաներ եմ տեսել, որ սիրտս արնով լցուել է, դու չըգիտես ինչե՜ր են կատարւում, ինչե՛ր, ինչե՛ր... Ես որ չինովնիկ դառնամ, էլ ոչով իրաւունք չի ունենալ ինձ վրայ ձեռք բարձրացնել, այնուհետև ես գիտեմ, թէ ինչպէս կըվարուիմ խեղճերի տունը քանդողների հետ...

—Չէ, ես քեզ էլ չեմ տալ տէրտէրին, որ տանի, ես նրան պատասխան կըտամ։ Մանուէլի հետ միասին կերթաք Վանքի ուսումնարանը. կամ թէ չէ՝ գիմնազիա. որտեղ որ ձեզ յարմար կըլինի, էնտեղ կերթաք։

—Շատ լաւ, էդպէս արա։ Ես էլ մի գիր կըգրեմ, որ մեր տանիցը ալիր, բան ուղարկեն։ Դու ինձ մի թուղթ ու թանաքաման տուր։

Արութիւնը դեռ չէր աւարտել իր նամակը, որ տէր Պետրոսը ներս մտաւ։

—Արութիւն, որդի, մենք ուշանում ենք, էստեղ քաղաք տեղ է, գարին, գարմանը թանգ է,—ասեց տէր հայրը, նստելով աթոռի վրայ, որ Օսանն առաջ քաշեց։

—Տէր հայր, խնդրեմ Արութիւնին թողէք մնայ էստեղ, ասեց Օսանը։

—Ես հէնց երազումս տեսայ, որ դու Արութիւնին

պիտի ձեռիցս խլես։ Բայց քո հայրն էլ համաձայն կլինի այդ բանին։

—Ես իմ հօրը կըհամաձայնացնեմ։

—Լաւ, որդի, ես հօ չըկամութիւն չեմ անում։ Ես ինքս էլ եմ ուզում՝ որ Արութիւնը լաւ ուսում առնի, խելօք տղայ դառնայ, ասեց տէր հայրը և դառնալով Արութիւնին՝ հարցրեց.—Արութիւն, որդի, ուզո՞ւմ ես մնալ։

—Այո՛, ասեց Արութիւնը ամաչելով։

—Լաւ, որդի... դէ, խելօք կաց, առաւօտ իրիկուն ժամ գնա, ժամ ասա, վատ տղոց հետ ընկերութիւն չանես, չըգնաս Թռումը լողանալու, կամ Օրթաճալա՝ ման գալու։ Դու գիտես, ինձ չամաչացնես, էնպէս արա, որ քեզանով պարծենանք։ Ինձ շուտ-շուտ նամակ գրիր, մի նեղութիւն ունենաս, իմաց տուր։ Մնաս խաղաղութեամբ. Տէր ընդ քեզ։

Արութիւնը համբուրեց տէր հօր աջը տէրտէրն էլ նրա գլխին մի պահպանիչ ասեց և բոլորին խաղաղութիւն մաղթելով՝ դուրս գնաց...

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Շաբաթ առաւօտը՝ որ նոյեմբերի տասն էր լուսանում, Բօնիսի ամբողջ բլրակը շաղախուել էր մատաղի արիւնով, էլ ոտք դնելու տեղ չըկար։ Համբուրողները (ուխտաւորները) մի կեռումեռ ճանապարհով վերև ու ներքև էին անում անդադար իրար սեղմելով։ Տէրտէրները չէին կարողանում «Փարատեմ զցաւս» և «Պահպանիչը» հասցնել, մնացել էին քրտնքի մէջ կորած։ Խեղճ կարգաւորները կարծես երեք մանկանց դերերը լինէին կատարելիս Ս. Գէորգի փոքրիկ մատուռաձև շինութեան մէջ, որի ներսի պատերին անհամար մոմեր վառելով՝ վերափոխել էին մի բաբելոնեան հնոցի։ Եկեղեցու մէջ սուգ ու շիւան էին անում ջերմեռանդ ուխտաւորները իրանց աղերսալի մաղթանքներով, որ բարձրաձայն խնդրում էին Սուրբ Գէորգից, իսկ դուրսը մի և նոյն ուխտաւորները մեծ ուրա-

խութեան և զըւարճութեան մէջ էին։ Խնդում, ծիծաղ, հրհռոց, քրքջոց, գգւանք, կարօտածների հանդիպում, պաչպչոց...

Մէկ տեղ կպչում էին ընբիշները, միւս տեղ պար էին գալիս, մի ուրիշ տեղ խաղեր ու օյիններ սարքում։ Մէկ խօսքով՝ զուռնա, դհօլ, դահիրա, նաղարա, սազ, թառ, սանթուր, չօնգուր, խաղ, տաղ, պար, իրար հետ խառնուած՝ խրտնեցնում էին գոմէշներին ու քուռակներին, որոնք պըլշած դուրս էին ընկնում, տրտինգ տալիս, փախչում, կնիկ. երեխայ ոտի տակ գցում, մուրազներին հասցնում։ Աբէլն էլ, իր տասը կանգուն երկայնութեամբ փայտէ ոտներին սիպտակ վարտիկ հագցրած, խաղում էր նրանց վրայ, խաղցնելով մատներին հագցրած չըխկչըխկան պղնձէ մատնոցները, և երբ յոգնում էր, ձեռն էր առնում իր աշակերտի շլինքը ձգած, կլոր ու մէջ տեղը ծակ թաղիքը և նրան զանազան գլխարկի ձև տալով՝ ցոյց էր տալիս, թէ ո՛րտեղ ինչ տեսակ գդակ են ծածկում։ Երբ որ իջնում էր փայտէ ոտներից, գետնի վրայ ցոյց էր տալիս իր ճարպիկութիւնը մարմնամարժական խաղերի մէջ, օրինակ՝ ման էր գալիս գլխիվայր կանգնած ձեռքերով և զանազան ոստիւններ անում յետ ու առաջ գըլխիվայր շըջւելով և այլ այս տեսակ ձևեր, որից յետոյ ձեռնածութիւն էլ էր անում, այսինքն ֆօկուսներ, որից հասարակ ժողովուրդը շատ էր զարմանում և աչքակապութիւն էր համարում ու կախարդական զօրութեամբ արած մի բան։

Աւելի զարմանալի էին մի շիրակեցի երիտասարդի կատարած խաղերը։ Նա լարախաղաց էր. պարանի վրայ սովորական ճարպիկութիւնները կատարելուց յետոյ, գետնի վրայ ցոյց տուաւ մի աւելի հրաշալի տեսարան։ Նա սկսեց տեղն ու տեղը պտոյտ գալ այնպէս արագ, ինչպէս մի ճախարակի անիւ, և այդ պտոյտը տևեց այնքան ժամանակ, մինչև նա կարձակէր իր երկու հատ օսմանցըւ պըռւնի և բաճկոնակի բազմաթիւ կոճակները։ Նոյն պտոյտի ժամանակ, նա երկու սուր դաշոյններ ձեռքն առած՝ նրանց ծայրերը դնում էր աչքերի աղբիւրների վրայ,

քթումը, ականջներումը, որից յետոյ կանգնում էր նոյն դաշոյնների սուր բերանի վրայ բոկոտն և կտըրտելով խաղցնում ձեռները իր պղնձէ մատնոցները չխկչխկացնելով։ Նա անթիւ թիլիսմներ ունէր կարած իր վրայ, և ժողովուրդը նրա այդ զարմանալի ճարպիկութիւնը վերագրում էր թիլիսմների զօրութեանը։

Թիֆլիզի զւարճասէր երիտասարդներն էլ, որ յատուկ այդ օրւան համար լաւ ձիաներ են վարձում, նոր չորեր առնում, զուգւում, զարդարւում արծաթապատ զէնքերով, թէև չեն իմանում նրանց գործածելը, խառնըւել էին Ջրիդի հանդէսի մէջ, որ կատարւում էր ուխտատեղի ստորոտում մի ընդարձակ դաշտի վրայ։ Ջրիդ խաղացողները երկու մասի էին բաժանւած և կանգնած դէմ առ դէմ։ Մի մասումն էին հայերը, մեծ մասամբ շուլավերեցիք և խաչէնցիք, իսկ միւս մասումը Բորչալուի թուրքերը։ Հայերը հետզհետէ տաքանալով՝ կատաղեցրին թուրքերին և խաղը վերջացրին սովորական դիպւածները կատարւելուց յետոյ, այսինքն բանը կուի հասցրին, շատ գլուխներ պատռեցին, մինչև գաւառապետն ու մողլովը իրանց ղազախներով մէջ ընկան և մի կերպ խաղաղացրին վիրաւորւածներին, որոնք լռեցին միայն այն յուսով, որ միւս տարին կառնեն իրանց վրէժը...

Այսպէս մի տեղ զանազան խաղեր էին խաղում, միւս տեղ՝ շատ ժամանակ իրար չտեսած ծանօթ, բարեկամներ էին հանդիպում միմեանց և մէկ մէկու հրաւիրում միմեանց սեղանի վրայ։ Հարս ու աղջիկ գեղեցիկ զարդարւած, բոլորեքեանք ուրախ, բոլորեքեանք զւարթ. մի խօսքով՝ ամեն ինչ հրաշալի էր, միայն Արութիւնն էր տխուր։ Նա կարծես մտքում դրել էր, որ այդ հանդէսի լաւ կողմերը չընկատէ. նա չէր հասկանում, թէ որքան գեղեցիկ մի առիթ է դա, որ տարին գոնէ մէկ անգամ ամեն կողմից մարդիկ մի տեղ են հաւաքւում, իրար տեսնում, կարօտներն առնում. քաղաք չտեսածները քաղաքացոց նիստ ու կացն են տեսնում, քաղաքացիք՝ գիւղացոց, թող այն զւարճութիւնները, խաղերը, որոնք ամեն անգամ ոչ տեսնում և ոչ վայելում են։ Նա գիտէր, որ

այդ ուխտատեղի բոլոր արդիւնքը յատկացրած է Ներսիսեան դպրոցին, բայց որովհետև Ներսիսեան դպրոցը այդ տեղերից մօտիկ ոչ մի գիւղից մի որդեգիր չէր պահած և չէր պահում, դրա վրայ բարկացած՝ ասում էր. «ժողովուրդի մի աչքը կուրացնում են՝ որ միւսը լուսաւոր պահեն»...

Կէսօրից յետոյ ամեն խաղ պառաւեց, և սայլերն ու փուրգուններն սկսեցին իրար ետևից գոգալ, որից յետոյ բոլոր տեսարանի վրայ իջաւ մի դատարկ վարագոյր։

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ ԵՒ ՄԱՅՐԵՆԻ ԲԱՐԲԱՌ *

Արութիւնը, որ երկար անջատումից յետոյ քաղաքից եկել էր Բօլնսու ուխտատեղին և այդտեղ գտել մօրը. Նրա հետ նստեց սայլումը և ճանապարհ ընկան դէպի գիւղ—Խաչէն։ Մայրն անդադար համբուրում էր որդուն և ամեն անգամ կրկնում.—

—Ես քը մատաղ ընիմ, ա Թիւն ջա՛ն...

Իսկ Արութիւնն ընդդիմանում էր, ասելով

—Դէ լաւ ա, լաւ, խրեգ պաչի. ես գիւղում ըմ, վար տիւ ինձ շատ ըս սիրում։

—Քը մատաղ ընիմ, ա Թիւն ջան, տիւ վար գիդաս հուչ, էլ հո՞ւ կըգիդա... Ես քու չարը տանէմ, ա Թիւն ջա՛ն...

—Դէ լաւ ա, լաւ, բա՛հ...

—Ա տղա, քը մատաղ ընիմ, դէ հո՞ւնց անէմ, կարում չըմ թա տաղ անէմ... Քը մատաղ ընիմ, ա Թիւն, Օսանը հո՞ւնց ա, խօխէքը լա՞ւ ըն, մէր պառաւ Խնամէն ըրխէս նըհէտ բըըշո՞ւմ ա...

—Թօղ կօրչի, է, մին նըրայ անումը տա՛լ մի... Ես էլ ասէլ պիտիմ թա՝ հա՛ր օնէմ, մա՛ր օնէմ, էլի՛...

—Խէ՞, քը մատաղ ընիմ, հինչ այ ըլալ.

* Այս յօդւածը պէտք է կարդացնել այն սաներին, որոնց համար սա մայրենի է։

—Հի՞նչ պիտոյ ըլլի… ղահլաս տարալ ըն. ասում ըն. «Է՞ս հինչ ա. եկալ ա կլխներէս վէր ընգեալ, ըսկի հաց չօնէնք թա մունք օտէնք, մին բօղազ էլ սայ ա տառալ»… Տիուք էլ՝ Ա՛ստուծ օրհնալ ա՝ վար մէ հէտ մին չուվալ ալէր ըղարկէք, հի՞նչ կընի. պա ծէր սրտումը ջըգեծր չըկա…

—Քը մատաղ ընիմ, ա Թիւն ջան, իմ ծէռանը հինչ կայ… Պա տիու գիւղում չըս քօ հօր խըսեաթը՞… Է՛րուալ ըմ, խըռուալ ես էտ մարթին ծէռանը… շինը մին օղեօղ եա աշըղ եկած վախտը՝ հուվ վար մին չանաղ ա տալիս, նա մին չուվալ ա տալիս… Ուրըքշէր մարթիքը պիրում ա տօնը լխնում, ուտըցընում, խըմըցընում, կըրըմնէն տըրտակում. խօխէքըս մըսըրնէն պա՛ց, վընըրնէն պա՛ց, նահանց հէտէ մին ճօխտ չըմօշկ չիյ ինք օնում… Ասում ըմ. «Էտ ըրարմո՛ւնք չի վար տիու անում ըս», վէտանը տա՛կն ա քըցում, թա՛կում, կուտրա՛տում, թա՝ «լի՛ւզիտ կորէ»… (արտասւում է)։

—Լաւ ա, լաւ ա, լա՛ց մինիլ, ազի ջան. … Ես լաւ տղա կըտառնամ, քեզ կըտանեմ քաղաք… Ա՜խ… սրտումս շա՛տ մուրազ կայ… Մին քեզ տըսնի մէ հէտ դինջ նըստած, էն վախը վար մըռնի, էլ սըրտումըս դարդ չար ընիլ… Ամմա հո՞ւնց անէմ մըհէզ, հի՞ւր աւէմ, թօ՞րը կօրչիմ… (արտասւում է)։

—Ես քու ցաւը տանէմ, ա՛ Թիւն ջան. լաց մինիլ, քը մա՛տաղ ընիմ, լաց մինիլ… Վա՛խէլ մի, քը մատաղ ընիմ. տիու քու մուրազէն կըհասնէս, հալա ջահիլ ըս… Տիու ինձ հէտէ դա՛րդ մի անէլ, քը մատաղ… Ես էս ա պըռաւուալ ըմ, էքիւծ-ալեօր կը մէռնէմ… Տիու վար իմ իրիսին մին հափուռ հօղ քցիս, էն ինձ բօլ ա… Լա՛ց մինիլ, ցաւըտ տանէմ, լաց մինիլ… (տիրում է լռութիւն)։

ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Մայրական սէրը ամեն մի զգացող մարդի յայտնի է։ Արութիւնը գլուխը դրաւ մօր գոգումը ու լացեց։ Մայրը

արտասուքն աչքերին՝ սկսեց շփել որդու գլուխը, որով մի քաղցր քուն բերաւ վըրան։ Սայլն էլ օրօրոցի պաշտօն էր կատարում երեխայացած Արութիւնի համար և անընդհատ օրօրում էր մինչև հասան տուն, որ շատ հեռու չէր։

Արութիւնը վայր իջաւ սայլից, համբուրեց հօր ձեռքը։ Հայրը շատ ուրախացաւ, բայց սանձելով ներքին յուզմունքը, «Աստուած պահէ քեզ, որդի», ասեց՝ վարդապետի ոճով։

Արութիւնը մնաց գիւղումը։ Երեք օրից յետոյ, նա այլ ևս հիւր չէր։ Այն փաղաքշանքը, որ նա վայելեց հօրից, րոպէական էր, չէր կարող երկար տևել։ Նա պարտաւոր էր, ինչպէս տան անդամներից մէկը, որ և իցէ կերպով օգտակար լինել, որ կերածը կորած չըհամարուէր։ Նրա անելիքը շատ ծանր չէին լինելու. պէտք է գոմը բերէր, ձիանը տանէր ջուրը, տաւարին դարման տար, փայտ կըտրատէր։ Այս կատարեց նա։ Յետոյ հարկադրւեց գնալ այգին մշակելու, անտառից բերելու փայտ, շինութեան համար՝ գերան, քար, ջուր, կիր, աւազ և ուրիշ ինչ որ հարկաւոր լինէր։

Ուր որ գնում էր, ինչ որ անում էր Արութիւնը, առանց մի վնասի չէր լինում, ոչ մի բանում յաջողութիւն չէր ունենում, ոչ մի տեղից անվնաս չէր վերադառնում, կամ ձեռքն էր կտրած լինում, կամ ոտքը ցաւցրած, երեսը չանգռած, մի բան կորցրած, սայլը շուռ տըւած, կամ կոտրած, եզը կամ գոմէշը փախցրած կամ կորցրած։

Սկզբում հայրը չէր բարկանում այս անյաջող հանգամանքի համար, ասում էր. «Դեռ խամ աչառ է, եզը կըղառնայ». բայց տեսնելով որ հետզհետէ վնասներ աւելի է տալիս, առածը փոխեց, ասելով՝ «Մինչև աչառը եզ կըղառնայ, տէրը խոզ կըղառնայ»։ Մտածեց շտկել Արութիւնին և վերակրթել իր ինքնուրոյն մեթոդով, Խիկարի խրատներով, յանդիմանութիւնով, նախատինքով, վերջապէս զանազան առակներով, կատակով ու ծիծաղով։ Հօր կրթութեան այս ձևը ոչ միայն չըշտկեց Արութիւնին, այլ ընդհակառակն՝ աւելի ևս գրգռեց նրա ինքնասիրութիւնը։ Նա տեսաւ, որ ոչ ոք իրան խելօք չի համարում, այլ

մինչև անգամ գիժ, ինքնապաշտպանութեան դիրք բռնեց, սկսեց ինքն իրան գովել, իրան խելօք, հասկացող համարել, իսկ բոլոր միացածներին, նոյն իսկ իր հօրը՝ գոռոզ Աւետիքին էլ՝ անխելք: Այս մի անակնկալ հարւած էր, մի սաստիկ զարկ, որ չէր կարող տանել ոչ մի հայր, ուր մնաց Աւետիքը: Պատճառն այն էր, որ գիւղացոց աշխարհայեացքը մնացած էր անփոփոխ, մինչդեռ Արութիւնինը կերպարանափոխւել էր, բայց այդ հանգամանքի վրայ ոչ որդին էր ուշադրութիւն դարձնում և ոչ հայրը, որ բարկանալով՝ ասում էր կնոջը.—Սա իմ տղան չի…

—Թէ որ քո տղան չի՞,—պատասխանում էր կինը մի այնպիսի ձայնով, որ ազատ չէր երկիւղի ազդեցութիւնից.—Թէ որ քո տղան չի՞, բա ինչի՞ է քեզ նման անկոտրում, քեզ նման իր ասածի:

Կնոջ պատասխանը շատ էր ուղիղ, որովհետև մոլեռանդ ծնողները մոլեռանդ էլ զաւակներ են ունենում, թէև միմեանց հակառակ գաղափարով: Աւետիքը շատ լաւ գիտէր այն առածը, թէ «վէմն ապառաժի է հանդիպել», բայց չէր ուզում խոստովանել, որ եթէ ինքը վէմ չըլինէր, իր որդին էլ ապառաժ չէր լինիլ… Նա փոխանակ այս ճշմարտութիւնը խոստովանելու, կնոջն էր մեղադրում և ասում.

—Դրա մեղաւորը դու ես, դու գովում ես իրան, նա էլ երես է առնում, էլ հետը խօսել չի լինում:

—Ինչո՞ւ չեմ գովիլ, այ մարդ, աչքումս մազ է բըսել, մինչև նա մի սև ու սպիտակ է սովորել: ո՞վ է նրանից ուսումով, նրանից շնորհքով…

—Մէկ դու ես շնորհքով, մէկ էլ նա, մի երկու տաւար է տանում հանդ, կէսն է յետ բերում, էդ չէ՞ դրա շնորհքը:

—Թէ որ ուզում էիր տաւարած չլինես, էլ ո՞ւր էիր ուսում տալիս. ո՞վ է անում իր չբերած բանը՝ որ նա անի. Նրա ուշքն ու միտքը իր գրի, իր ուսումի վրայ է, ուրիշ ոչ մի բան նրա աչքին չի երևում: Տառերն են ուզում, որ նրա պէս որդի ունենան, բայց Աստուած նրանց թողած՝ քեզ է տւել: Նա հիմի ասում է. «ես իմ

կարդալս, իմ ուսումս դեռ չեմ վերջացրել, ինձ օգնեցէք, ասում է, մինչև իմ ուսումս աւարտեմ:

—Ա՛ կնիկ, քո խելքն էլ էնքան է կտրում, ինչքան նրանը: Ուսումն ի՞նչպէս կաւարտւի, ի՞նչ ես խօսում: Ուսումը որ կայ, մի ծով է, ոչով չի կարող նրան հատցնել: Ամեն մարդ ինչ աման որ ունի, էնքան կըհանի նրանից: Մարդ իր եօրղանի համեմատ կըձըգի ոտները: Ես աղա չեմ, փողատէր չեմ, ինչքան իմ կարողութիւնս ինձ թոյլ է տւել, ինչքան որ կըտեղաւորւէր իմ ամանումը, ես էլ իմ որդուն էնքան եմ ուսում տւել, աւելի կարողութիւն չունիմ: Մեր գեղումը ո՞ր հայրն է ինձ չափ չասեմ՝ իմ չարեքի չափ ուսում տւել իր որդուն…

—Դու ճարտար լեզւով ուզում ես քեզ արդարացնես. դու որ ուզենաս, էլի կարող ես օգնել. նրա մի տարւայ հացն ու ջուրն ինչ է, որ չըտաս: Նա ասում է. «Իմ ընկերները ժամանակով մարդիկ կըդառնան, բայց ես որ ձեզ մօտ մնամ, ինչ պիտի դառնամ…

—Ուրեմն նա մեզ մարդու տեղ չի՞ դնում: Սպասիր, ես դրան ցոյց կըտամ ուղիղ ճանապարհը:

—Աստուածդ կըսիրես, այ մարդ, երեխիս չըգժւացնես. նա առանց էդ էլ գժւած է. էլ ոչ մեծ է հարցնում, ոչ փոքր, ամենքին էլ անպատիւ է անում…

—Հալբա քո ասելդ ի՞նչ է, ա կնիկ, ինչպէս պէտք է անենք. որ՝ ինչպէս կասեն. «ոչ շամփուրն էրւի, ոչ խորովածը»…

—Թէ որ ինձ կըհարցնես, ես կասեմ, որ եթէ խորոված չես ուտեցնելու գոնէ շամփուրն աչքը մի՛ կոխիլ, հաց չես ուտացնում, դէ, ատամն էլ մի՛ կոտրիլ…

ԱՐՈՒԹԻՒՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՆՒԷԼԻՆ

Սիրելիդ իմ Մանւէլ,

Չըգիտեմ դու հիմա ի՞նչ տեղ ես արդեօք և ինչ վիճակի մէջ. այս նամակն ուղարկում եմ ձեր գիւղը, որ ուր էլ լինիս, քեզ հասցնեն:

Ընքըդ լոյս, Մանուէլ, ես հիմա գիժ եմ։ Այսպէս են համարում ինձ հիմա ամենքը։ Եթէ մի քանիսն էլ՝ և այն էլ շատ հազիւ՝ իմ ասածների մէջ խելք են նշմարում, ասում են՝ «գժից ուղիղ համբաւ»։ Ասենք սա մի անպատւութիւն չէ, այլ ընդհակառակն, մեծ պատիւ, որովհետև ցոյց է տալիս, որ ես այլ ևս իրանց նման չեմ մտածում։ Նրանց սպիտակ երեսը իմ աչքումը սևացել է, նրանց ճշմարիտն ինձ համար սուտ է, նրանց նիստ ու կացը՝ վայրենի, կոպիտ, անճաշակ։ Անտանելի է մանաւանդ դրանց զզւելի անմաքրութիւնը։ Նրանց դռների առջև, իրանց քթերի տակ հարիւր տարւայ աղբ ու փէյին կայ դիզւած, չեն տանում իրանց այգիքն ու արտատեղերն ածում, որով թէ իրանց հողերը կըբարւոքեն և թէ իրանց տները կազատեն անմաքրութիւնից և զանազան հիւանդութիւններից։ Կարելի՞ է միթէ այս բանը տեսնել աչքով և լռել։ Կարելի՞ է չասել, թէ ձեզ չարչարող միջատները Աստծոյ ստեղծածը չեն, այլ ձեր աղտոտութեան, որ աղքատութեան, չքաւորութեան հետևանք չէ, այլ վայրենութեան և անասնութեան։

Միայն մի հատիկ հոգի կայ այստեղ, որ ինձ մխիթարում է. դա իմ մայրս է։ Մի զարմանալի բացառութիւն է սա։ Մայրըս Ռեբեկայի վիճակումն է։ Ինչպէս Ռեբեկան իր որդի Յակօբին միշտ պաշտպանում էր հօր սառնասրտութիւնից, այնպէս էլ մայրըս պատրաստ է ինձ պաշտպանելու համար ամեն զրկանք կրել հօրիցս։ Նա հաւատում է իմ բոլոր ասածներին և փառաւորւում, որ ինձ նման իմաստուն որդի ունի։ Այդպէս է թելադրում նրան իր մայրական սիրտը և ծնողական սէրը դէպի իր զաւակը։

Մայրըս միշտ սիրտ է տալիս ինձ և ասում է.—«Մի վախենար. Աստուած քեզ հետ կըլինի միշտ։ Նա չի կորցնիլ, եթէ դու նրա փէշիցը պինդ բռնես։ Միտըդ բեր Յակօբին, Յօսէփին և Մօսէսին. դու հօ գիտես՝ Աստուած նրանց ինչպէս առաջնորդեց...

Յետոյ ես ասում եմ.—«Աստուած նրանց հետ էր, բայց նրանք հայ չէին։ Աստուած մեր պապերի հետ էլ է

եղել։ Եւ պատմում եմ Հայկի, Արամի, Տիգրանի քաջագործութիւնները։ Մայրըս շատ ոգևորւում է, մանաւանդ երբ պատմում եմ Եղիշէից հինգերորդ դարում մեր փափկասուն տիկնանց կրած նեղութիւնները իրանց հայրենիքի պաշտպանութեան համար։ Արդեօք մօրից քաղցր ուրիշ ինչ կայ աշխարհքումս։ Ինչքան բախտաւոր կըլինէին զաւակները, եթէ հայրերն ևս մայրերի քնքոյշ վերաբերութիւնն ունենային...

Հայրըս ինձ չի օգնում ոչ թէ նրա համար, որ ժլատ է. ոչ։ Հայրըս ոչ միայն ժլատ չէ, այլ ընդհակառակն անհաշիւ շռայլ է, միայն ոչ իր տան համար, ոչ իր համար, իր զաւակների համար, այլ... օտարների, առանց ազգի և կրօնի խտրութեան։ Զափազանց հիւրասէր է, և հիւրերի համար յատկապէս օդա ունի շինած գոմի մի ծայրումը։ Առանց հիւրի ճաշ անելու սովորութիւն չունի։ Եթէ չըկայ մի օտարական, նա պատահած շինականին կըկանչի, որ նրա հետ ախորժակով հաց ուտի, ուրախ մաղահաթ անի գինի խմի։ Շատ անգամ տան երեխէքը անբաժին են մնում, բոլորը հիւրերն են ուտում։ Այս հիւրերը երբեմն այնպիսի մարդիկ են լինում, որ իմ միտս են բերում Աւետարանի այն ասածը, թէ «Ոչ է պարտ առնուլ զհաց մանկանց և արկանել շանց»... Շատ անգամ, իմանալով՝ որ տանը կերակուր չըկայ պատրաստած, նա էլի բերում է հիւրերին, ասելով՝ «սոխ ու հաց, սիրտը բաց», և այդպիսի դէպքերում սովորաբար կռւում է մօրըս հետ, տեսնելով նրա լուռ անբաւականութիւնը։ Ահա այս է իմ հայրը, որ ինչքան լաւ մարդ է հասարակութեան համար, նոյնքան անտանելի է իբրև գերդաստանի հայր։ Ես ի հարկէ ընդդէմ չեմ նրա հիւրասիրութեանը, այդ գիծը մեր տոհմի ժառանգական յատկանիշն է, այլ ընդդէմ եմ, որ մէկը զոհում է միւսին, որ կորցնում է հաւասարակշռութիւնը, ինձ չի տալիս այն, ինչ որ կըկնապատիկ տալիս է օտարին։ Այս կողմանէ հայրս մի բացառութիւն չէ, այսպէս են նրա դասակարգի և հասակացողութեան բոլոր մարդիկը։ Սրա գլխաւոր պատճառը՝ իմ կարծիքով այն է, որ մեզանում մտաւոր սնունդի պահանջ չկայ, այդ պահանջը պէտք է

արհեստական կերպով մտցնել: Մի՞թէ մարմնական սնունդի և պահանջի մեծ մասը արհեստական կերպով չե՞նք մըտցնում. ի՞նչ բան է, օրինակի համար՝ թէյը, սուրճը, ինքնաեռը, կարտօֆիլը, կաղամբը, ծխախոտը, քթախոտը և զանազան տեսակ նորելուկ հագուստեղէնը: Մարդոց մարմնական պահանջների համար հիմնում են զանազան գործարաններ, հեշտացնում են ապրանքների տեղափոխելու և տարածելու գործը: Ե՞րբ վարւեցին այսպէս և մտաւոր սնունդ տալու գործի վերաբերութեամբ: Ի՞նչ ունինք սրա համար, ուսումնարաննե՞ր.—ոչ, գիրք ու գրատարածութիւն.—ոչ... Ուրեմն ինչպէս կարելի է հունձ պահանջել այն տեղից, ուր ոչինչ չունենք ցանած:

Սիրելի Մանուէլ, իմ վերջին կտակը, որ ուզում եմ քեզ յայտնել, այս է.—Եթէ Աստուած տայ՝ լաւ ուսում առնես, չըմոռանաս գեղացի լինելդ, և գիւղին ծառայելդ մի սրբազան պարտականութիւն համարես: Կարող ես մի ամսաթերթ հրատարակել յատկապէս գիւղացոց համար, նրանց հասկանալի լեզւով ու մտքով, նրանց տնտեսական և մտաւոր զարգացման ծառայող բովանդակութեամբ: Տպւած խօսքը անհամեմատ աւելի ազդեցիկ կլինի, քան թէ բերանացին: Գրքում եղածը գիւղացու համար սուրբ է, թէկուզ սուտ լինի: Ի՞նչ պտուղ կարող ես սպասել մի խոպանացած անդաստանից, ուր միայն փուշ ու տատասկ կարող է բուսնել: Պէտք է մշակել այդ վայրենացած անդաստանը, բարի սերմեր ցանել: Եթէ մենք չենք տեսնիլ, գոնէ մեր յետնորդները կըտեսնեն և կըվայելեն նրա պտուղները:

Իսկ ես մտադիր եմ գլուխս առնել և կորչել այստեղից, որովհետև բանից այնպէս է երևում, որ հայրս մտադիր չէ ինձ իր մօտը պահելու: Ուրեմն մնաս բարով, սիրելիդ իմ Մանուէլ:

Քո Արութիւն:

Բօլնիս-Խաչէն գիւղ, 1858.

ԵՐԿՈՒ ՈՐՍՈՐԴ ԸՆԿԵՐՆԵՐ

Արութիւնը զանազան տեղեր զանազան պաշտօններ կատարելուց յետոյ՝ մէկ անգամ էլ գնաց Լօռի, ուր Մարցայ անտառներում որսորդութիւն անելիս՝ հանդիպեց արտաքին կերպարանքով և հասակով իր նման մի որսորդի: Արութիւնն ուզեց մօտենալ նրան, բայց անծանօթը նրան Թուրք համարելով՝ հրացանը դէմը բռնելով՝ ասեց Թուրքերէն.

—Քի՞մ սան, եախըն գեալ մա (ո՞վ ես, մօտ մի գար):

Արութիւնին որսորդների զգուշութիւնը ծանօթ լինելով, ասեց.

—Ես Թուրք չեմ, միամիտ կաց, ես էլ քեզ պէս մի որսկան եմ:

—Հմ՜մ... դէ որ հայ քրիստոնեայ ես, լաւ է:

Սրանք մօտեցան միմեանց և մի համառօտ հարցուփորձից երևաց, որ անծանօթը մի որսորդ է, Դսեղ գիւղից և անունն էլ Պօղոս: Սա երբ իմացաւ, որ Արութիւնը մի օտարական է և նոյնպէս որսորդ, առաջարկեց նրան իր մօտ գնալ: Արութիւնը յօժարութիւն ցոյց տըւաւ, և վերադարձին մի եղնիկ սպանեց, որով ցոյց տըւաւ Պօղոսին իր հմտութիւնը և վաստակեց նրա համարմունքը, որովհետև գնդակը դիպել էր եղնիկի ուղիղ ճակատի մէջ տեղը...

Արութիւնը Պօղոսի մօտ մնաց և նրա հետ ընկերութիւն արաւ մի քանի ամիս, առանց ցոյց տալու նրան, որ ինքը կարդալ գրել գիտէ: Թէ ինչից ստիպւած այդքան երկար մնաց այնտեղ, այդ հանգամանքը կարելի է վերագրել միայն որսորդութեան: Այդ պարապմունքով յափշտակւողը շատ չի կարող ազատւել նրանից:

Ձմեռը Թակարդ էին լարում մազաւոր կենդանիներ որսալու համար, իսկ գարնան վերջերին խրամների անմատչելի ծերպերում փեթակ էին գտնում մեղու որսալու համար: Երկուսն էլ բաւական զբաղեցնող և գրաւող պա-

բաղմունք էին։ Դրա հետ միասին շարունակում էին իրանց որսորդութիւնը թէ միասին և թէ ջոկ ջոկ։

Պօղոսը կատարեալ անտառի մարդ էր, որսորդութիւնը նրա համար մի զւարճութիւն չէր, այլ մի արհեստ իր ապրուստի համար։ Նրա բոլոր հարստութիւնն էր իր մի հատիկ կովը, երեք հատ գամփռ շները, որոնցով շատ անգամ արջ ու վարազ էին որսում, և երեսուն փեթակ մեղուն։ Նա չունէր ոչ հայր, ոչ եղբայր և ոչ քոյր, այլ միայն մի պառաւ մայր, կսկծից չորացած, որ միշտ աղաչում էր Պօղոսին, որ որսորդութիւնից ձեռք վերցնի, և երկրագործութիւնով պարապի, բայց Պօղոսը չէր լսում նրան։

Մէկ անգամ Արութիւնն ու Պօղոսը մի եղջերու սպանեցին. երկուսի գնդակն էլ դիպել էր։ Արդէն երեկոյ էր և տունն էլ հեռու, այս պատճառով նոյն գիշերը մնացին մի աւերակ եկեղեցում։ Կրակ վառեցին եկեղեցու մէջ տեղը, եղջերուի մսից խորոված արին և պատրաստեցին մի շատ համեղ ընթրիք։

Արութիւնը, որ մինչև այսօր խօսում և դատում էր Պօղոսի հայեացքով, որ կարծել չըտար նրան որ ինքը կարդացող էր, այս երեկոյին սկսեց բացւել։

—Պóղոս, լսիր ինչ եմ ասում, ասեց Արութիւնը.

—Ասա տեսնեմ, ինչ ես ասում։

—Ես էգուց պիտի ճանպա ընկնեմ դէպի քաղաք։ Դու մի ձի կըքըէհես, կըգաս պախրէն կըտանես։

—Քաղաք ինչի՞ ես գնում, ուզում ես մորթիքը տանես էնտեղ ծախե՞ս։

—Չէ, մորթիքն էլ ու մէկէլ բաներն էլ ինչ որ ընկերովի ունենք, դիփ էլ թող քեզ լինի, ես ոչինչ չեմ ուզում։

—Բա քաղաքումն ինչ ունիս, ինչու համար ես գընում։

—Էնտեղ ընկերներ ունիմ, պէտք է գնամ տեսնեմ։

—Ընկերներդ ինչ են շինում էնտեղ։

—Վարժապետ են, երեխէք են կարդացնում։

—Բա ասում ես ընկերներ ունի՜մ... վարժապե՜տ... երեխայ...

—Զարմանում ես, հա՞... Մի՛ զարմանար... ես էլ եմ վարժապետ...

—Հա՞մ... դէ էդպէս ասա է... հը՛մ...

—Ինչի՞ ես հը՛մ անում։

—Դէ ասում են՝ շատ կարդացողը կըգժւի։ Էդ բանը ես լսել էի, բայց չէի տեսել։ Ես հիմի տեսնում եմ աչքովս։

—Պօղոս, շատ կարդացողը չի գժւիլ, քիչ կարդացողը կըգժւի։

—Բա մեր տիրացուն ինչի չի գժւում։

– Ձեր տիրացուն էլ կըգժւէր, եթէ գիտենար, որ քիչ է կարդացել։

—Է՛հ, ասում ես էլի, ես չեմ հաւատում, որ դու գրի սև ու սիպտակը ջոկելիս ըլիս։ Թէ որ կարդալ գիտես, արա ասա, էն զատի անունն ինչ է, էն որ գիրը դնում են վրէն՝ կարդում։

—Նրան կասեն գրքակալ...

—Հա՛, գրքակալ, գրքակալ... լաւ զատար։ Էդ գրքակալի անունը ոչով չի գիտենալ, մինչև կարդացած չըլինի։ Ես էլ մեր տիրացուիցն եմ լսել։ Լաւ. թէ որ կարդալ գիտես, բա ինչի՞ ոչ մի օր մեր ժամը չըգնացիր, ժամ չասեցիր։

—Մենք հէնց ամեն օր էլ ժամերումը չենք լինում. հրէս էս ժամ չի՞։ Պօղոս, հիմի քու խելքով Աստուած մեծ կըլինի, թէ՞ էս ժամը։

—Ի հարկէ, Աստուած։ Աստուծու մեծութիւնը ով կարայ չափի։

—Աստուած որ ժամիցը մեծ լինի, էլ ինչպէս կարող է ժամումը տեղաւորւել։

—Ժամի Աստուածը Աստծու պատկերն է, ինքը հօ չի՞...

—Էդ շատ ուղիղ է։ Բայց պիտի գիտենաս, որ Աստւած էնքան մեծ է, որ բոլոր երկինք գետինք նրա համար մի աւազի հատիկ է, բայց նրա զօրութիւնը ամեն փոքր բանի մէջ էլ կայ։ Աստըծուն ժամումը դնելու փո-

խանակ պէտք է մեր սրտումը, մեր մտքումն ունենանք։ Մեր սրտումը, մեր մտքումը Աստծու անչափ մեծութիւնը կըտեղաւորւի, եթէ մեր սիրտը մաքուր պահենք, սուրբ պահենք։ Երբոր Աստուած մեր սրտումը լինի, և մեզ հետ կըլինի միշտ, էլ չենք պըտռիլ Նրան մի ուրիշ տեղ...

—Սպասիր, սպասիր, դու էդ ինչե՞ր ես ասում, խոր-խոր տեղերից ես խօսում. էնպէս բան ասա, որ իմ խելքիցը մօտիկ ըլի։ Արութիւն, մեր ժամումը մի մեծ, շա՜տ մեծ գիրք կայ, աշխարհիս երեսին ինչքան որ սրբեր են էլել, դիփ էլ էնտեղ կան, ամենի համար էլ էնտեղ գրած է։ Դու էդ գիրքը կարդացել ե՞ս։

—Ի՞նչպէս չէ. Նրա անունը Այսմաւուրք է։

—Թէ որ կարդացել ես, բա ինչի՞ Նրա միջի սրբերիցը մի բան չասեցիր, չըպատմեցիր։

—Պօղոս, իմ սիրտը խաղաղ չէր, որ դրանց մասին մտածեմ։ Եթէ խաղաղ լինէր, ես դրանց տեղակ քեզ կըպատմէի մեր քաջ պապերիցը, որ իմանայիր, թէ մենք հայերս ո՞վ ենք, ի՞նչ ենք, ի՞նչ ենք էլել ու ինչ պիտի լինենք։

—Դէ հիմի ըլի, դրանցից մի բա՛ն ասա, որ մտքումս պահեմ ու քեզ միշտ յիշեմ...

—Հիմի ի՞նչ ասեմ, Պօղոս, հիմի միայն էսքանս կասեմ, որ մենք հա՛յ ենք, հա՛յ։ Ինչքան որ հայեր կանք, ամենքս էլ ախպէր ենք, ամենքս էլ մի հօրից ու մի մօրից ենք առաջ եկել։ Մեր պապի-պապի, Նրա էլ պապու-պապի անունը Հայկ է էլել, Նրա համար ենք հայ ասւում։

«Մեր պապ Հայկը էնպէս մի քաջ տղամարդ է էլել, որ իր որդոց ու թոռների հետ հազար-հազար մարդի հետ է էլել կռւելիս։ Էնքան ուժով է էլել, որ Նրա նետաղեղը տասը մարդ կարալիս չի էլել տեղիցը շարժել։ Նա մի ընկեր է ունեցել ուրիշ ազգից, անունը Բէլ։ Սրանք միասին որսկանութիւն են էլել անելիս։ Մէկ օր էլ՝ որտեղից որտեղ, մի քամի է մտնում էս Բէլի գլուխը, գոռոզանում է, բոլոր ժողովրդին իր ձեռի տակն է հաւաքում, ինքը դառնում Նրանց մեծը։ Նրանք էլ ամենը Նրան են

հնազանդում, Նրան են համարում իրանց աստւածը ու Նրան են պաշտում։ Ասում են.—Դու ես որ կաս, մենք ուրիշ աստւած չենք ճանաչում»։ Մեր պապ Հայկը Նրան գլուխ չի վէր բերում. ասում է.—Դու շուն ես, դու աղւէս ես, դու ո՞վ ես, ի՞նչ ես, որ քեզ գլուխ վէր բերեմ։ Էս ասում է մեր պապը, հաւաքում էր իր որդոցը, թոռներին, հեռու թէ մօտիկ ազգականներին ու քաշւում դէպի մեր հիմիկւայ երկիրը։

«Բէլն էս որ լսում է, կատաղում է. անհամար զօրք է հաւաքում ու գալիս մեր պապ Հայկի վրայ։ Արևի՜ն մատաղ մեր պապ Հայկի։ Հաւաքում է իր քաջ զինւորներին ու ասում Նրանց. «Տղէ՛ք ջան, քա՛ջ կացէք, մեր անունը չըկոտրենք, էսօր պէտք է դրա ջամդաքը դուրդ ու դուշի փայ շինենք։ Հէնց էդպէս էլ արել է։ Բոլոր զօրքը կռունկների շարքի նման թռած գնում են Բէլի զօրքի առաջը կտրում եկրճղանի,—աջ ու ձախ թևերով, գլխին Հայկը կանգնած սարի նման։ Հէնց որ մօտենում է Բէլը, հայերն իրանց թևերը աջ ու ձախ ձգում են ու Նրանց մէջ առնում, սկսում նետահարել կարկուտի նման։ Էս որ տեսնում է Բէլը, սարսափն ընկնում է ջանը, ուզում է փախչել, բայց Հայկը Նրա միտքն իմանալով՝ ձգում է իր հսկայական նետը, որ կայծակի նման դիպչում է Բէլի պղնձապատ կուրծքին ու թիկունքովը դուրս գալիս։ Աժդահա Բէլը պառաւած աճարքու նման ճռճռալի կործանւում է ու շունչը փչում։

Բէլի զօրքը որ տեսնում է իր անմահ համարած աստուծու մահը, երեսը շուռ է տալիս ու փախչում։

—Դէ հիմի հասէք, տղէք ջան, ձէն է տալիս Հայկը, դէ հիմի հասէք, էդ անիծածներին կոտորեցէք, որ էլ մեր աշխարհքումը ոտը չըդնեն... Էդ օրւանից քանի հազար տարի է անցկենում, էլ Բէլի աշխարհքիցը ոչով չի համարձակւում մեր աշխարհի վրայ կռիւ գալ։ Հայկի անունն էլ կնքւում է մեզ վրայ ու մեր աշխարհքի վրայ, մենք ասւում ենք ՀԱՅ, մեր աշխարհքն էլ՝ Հայաստան։

—Բա՛հ, Նրա արև՛ին մատաղ։ Ա՜յ քաջ տղամարդ։ Բա

հիմի ինչո՞ւ ենք էսպէս փոքրացել, կուչ եկել, Արութիւն, բա չենք ամանչո՞ւմ...

—Էնդուր ենք էսպէս դառել, որ Հայկին թողած, Բէլին ենք պաշտում, մեր սուրբ քաջերին թողած, օտար սուրբերի ենք պաշտում։ Բայց քո ինչի՞դ է պէտք, դու հիմի իմացար, թէ ինչպէս մարդ է էլել մեր պապը։ Ինչո՞վ ցոյց կըտանք մենք, որ նրա հարազատ թոռներն ենք, չէ՞ որ թոռը որ պապին չըքաշի, նրա նման չըլինի, էլ ինչպէս կարող է ասել որ նրա թոռն է. էդ կնշանակի, թէ նա՝ ո՞վ գիտի՝ ո՞րտեղից է ծնունդ առել... Բաւական է, էնքան խօսեցինք, որ լուսացաւ։ Դէ, մնաս բարով, ես գնում եմ։

—Գնա՛ս բարով, քե մատաղ, ասեց Պօղոսը և նրա աչքերը լցւեցին արտասուքով։

Մեր տղէքը համբուրեցին միմեանց։ Արութիւնը հեռացաւ ուրախ, զըւարթ, իսկ Պօղոսն ընկաւ խոր տխրութեան և մտածութեան մէջ։

—«Ո՞վ էր սա, որտեղից եկաւ, ինչո՞ւ եկաւ, ինչո՞ւ բաժին չստացաւ մեր աշխատանքից», և սրա նման շատ հարցեր տըւաւ ինքն իրան Պօղոսը և վերջն այն եզրակացութեան եկաւ, որ Արութիւնը մի անգին գիւտ էր իր համար, բայց ինքը չիմացաւ օգուտ քաղել նրանից բարոյապէս։ Այս դէպքից յետոյ Պօղոսի մտածութեան եղանակը փոխւեց, նա սկսեց իրան երևակայել մի այլ աշխարհ և միշտ կարօտով սպասում էր Արութիւնին, որ նա գայ և մտցնէ այդ նոր աշխարհը։ Արութիւնն այլ ևս չըհանդիպեց Պօղոսին, բայց նրան հանդիպեցին Արութիւնի նման մարդիկ, որոնք հետզհետէ ծնունդ առան և ժամանակակից լուսաւոր մտքերը տարածեցին մեր երկրի մութ ու մոռացւած խորշերում ու անկիւններում։

Ղ. Աղայեանց

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Որպէս ձմրան շղթաներում կաշկանդւած՝
Մայր-երկիրը լուռ հեծում է ըղձալով,
Որ գայ գարուն և նա մի օր՝ անկասկած՝
Փայլելու է՝ երկրին նորից կեանք տալով։—

Այսպէս և՛ դու, իմ տառապեա՛լ ժողովուրդ՝
Դու տանջւելով, չես դադարում յուսալու,
Որ կա՛յ քո մէջ մատաղ մի ոյժ—նոր սերունդ,
Եւ այդ ոյժն է քո կուռ շղթան փշրելու...

Ալ. Ծատուրեան

ԱՂԹԱՄԱՐԱՅ ԾՈՎԱՓՈՒՄ

Ամէն տեղ տիրած խորին լռութիւն,
Կարծես թէ մեռած լինի բնութիւն.
Նստած սգաւոր, պանդուխտ, միայնակ,
Ո՛հ, քեզ եմ տեսնում, ով փայլուն լուսնեակ։
Աշխարհի սկզբից դու մինչև վախճան,
Երկնակամարով անում ես շրջան,
Ո՛հ, դու տեսե՛լ ես հայ ազգ բարեփառ,
Արդեօք տեսնո՞ւմ ես նրա ցաւն անճար։
Արդեօք դո՞ւ ևս խղճալուս նման
Տեսած Հայաստան ժանտ ոտքի կոխան,
Թափո՞ւմ ես աչքիցդ աղի կաթիլներ,
Եւ սրտիդ միջին ցըցւո՞ւմ են նետեր։
Քա՛ր է քո սիրտը և խիղճըդ մեռա՛ծ.
Քանի՜ արիւններ, քանի՜ կոտորած
Տեսար, լռեցիր և դարձեալ պայծառ
Հայ երկրի վրայ կապում ես կամար։

* * *

Ջա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես,
Ողբակից լինել չըկամի՞ս դժբախտիս,

Ձարժեցէք, զեփիւռք, ալիքը վէտ-վէտ,
Խառնէք արտասուքս այս ջրերիս հետ։
Հայաստանի մէջ անցքերին վկայ,
Սկզբից մինչև այժմ, խնդրեմ ինձ ասա,
Մի՞թէ միշտ այսպէս կըմնայ Հայաստան—
Փշալից անապատ՝ երբեմն բուրաստան։
Մի՞թէ միշտ այսպէս ազգը խղճալի
Կըլինի ծառայ օտար իշխանի,
Մի՞թէ Աստուծոյ աթոռի մօտին,
Անարժան է հայն և հայի որդին։
Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,
Եւ ամեն կողմից պանդուխտ հայազգիք,
Դիմել դէպ իւրեանց սիրուն հայրենիք։
Դժուա՛ր այդ, միայն Տեսուչըդ վերին
Կենդանացրու հայութեան հոգին,
Տազիր նոցա դու քո լոյս գիտութեան,
Որով իբր էակք նոքա բանական,
Կըճանչեն մարդուս կեանքի խորհուրդը,
Կըլինին գործքով Տիրոջ փառաբան։

* *
*

Յանկարծ ծովակի երեսին մի լո՛յս.
Ջրից դուրս եկաւ նազելի մի կոյս,
Մի ձեռում ունէր նա վառած լապտեր,
Իսկ միւսում քնար փայլուն փղոսկեր։
Արդեօք հուրի՞ էր, հրեշտա՞կ աննշան,
Ո՛չ, հայ մուզաների տիպ համանըման,
—Հայոց ճակատագիրը կարդա, ով Մուզա,
Ներկա՛յ և գալոց գուշակի՛ր, ասա՛։

(Ասաց երկնային այն ոգին քաղցրիկ)

—«Աւետիք տամ քեզ, նժդեհ պատանի,
Սրբիր աչքերիցդ արտասուքդ աղի։
Կըգան նոր օրեր, օրեր երջանիկ,—

Երբ Տիրոջ կամքը ազատ ու արդար
Կըթագաւորէ.—կրկի՛ն Ոսկեդար։
—«Հայոց Մուզայքը կըզարթնեն կրկին,
Հայոց Պառնասը կըծաղկի վերստին,
Եւ Ապոլոնեան կառքը լուսաբար
Կըբոլորէ Հայոց Թուխս երկնակամար։
—«Մենք ևս քեզ պէս,—երբ խորին գիշերն
Պատեց Հայաստան,—սգաւոր օրեր
Շատ ենք անցուցել. այժմ, սիրելի,
Մենք ևս հաշտութեան ստացանք ձիթենի»։
«Սրբեցէք քնարի լարերը ժանգոտ,
«Ելէք Հայաստան երգով եռանդոտ,
«Զարթեցրէք Հայոց աշխոյժը մեռած,
«Լըցւեցաւ կամքը, հասաւ ժամանակ,
«Օրը կըբացւի, ահա Արուսեակ,
«Ձեզ յայտնի նշան,ասում է Աստուած»։
Կրկին մթնեցաւ։ Չըքացաւ պատկերը։
Երկար ժամանակ դիւթական ձայնը
Լսում էր խառն ալիքների հետ,
Օդին տիրել էր բուրումն հոտաւէտ։
Ախորժելի՜ լուր, աւետիք քաղցրիկ,
Որպիսի՜ հրճւանք, Մուզայդ գեղեցիկ,
Ասա՛ մեզ, մեկնի՛ր, արդեօք հնարի՞ն
Մի մեռած մարմնի զարթնուլ վերըստին։

ՌԱՖՖԻ

Մ Շ Ա Կ

«Թողեր եմ ու եկեր զաւակներս, այգիս,
«Քանի որ ախ կանեմ, կու քաղւի հոգիս,
«Կռունկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս,
«Կռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս»։

Պանդուխտի երգ·

Ա.

Գալիս է գարուն, նոր կեանք է բերում.
Վարդ և շուշանը բացւում են բուրում,
Թարմ և ծաղկազարդ փայլում է տերև,
Մանուկ զօրութեամբ ծագում է արև։
Ճնչում է անտառ։ Երգում է ծիծառ։
Վաղորդեան ցօղը սփռում է գոհար,
Կանաչ հովիտը վառւում է պայծառ։
Զարթնեց բնութիւն կուսական խանդով,
Գործի է գնում մեղուն եռանդով։
Վաղ—առաւօտեան ձայնը կոչնակին
Դաշտ է հրաւիրում անբախտ մշակին։
Բայց արշալուսի վարդագոյն շքեր,
Զարթած բնութեան հրաշալի պատկեր,
Չէն, չեն հրապուրում սիրտը վշտահար,
Սիրտը, որ մեռած էր ցաւով հազար...
Գլուխը ծռած մշակը տրտում
Վարում է գութան արգաւանդ դաշտում,
Եւ նորա երգը հնչում է արդէն
Երգը հոգսերով ծանրացած սրտէն։

Բ.

Գալիս է ամառ,—կրակոտ եղանակ,
Անխոնջ վաստակի, պտղի ժամանակ։
Ո՜ր աստուածեղէն ջերմութեան հոգին
Կենսատու շնչով փռում է արփին։

Հասել է ծիրան, տանձը մեղրածոր,
Սիրուն թշի պէս վառւում է խնձոր,
Սաթանման դեղին կախւած է ողկոյզ,
Մանկտին զբաւում դամոնը և թուզ.
Սեխով, ձմերկով լիքն է բուրաստան,
Ոսկեայ հասկերով ծփում անդաստան,
Եւ արտօրայքի ծանրացած հասկեր
Խիստ հիանալի նախշում են պատկեր։
Վաղ առաւօտուն, արևածագին՝
Զարթնում է իսկոյն հնձւորի հոգին։
Փայլում է մանգաղ։ Գործում է մշակ։
Բարձած սայլակի ճռինչն անուշակ
Հնչւում է հեռու, հեռու դաշտերից,
Բերում դէպի կալ խուրձերն արտերից։
Կասում է կալը, մաքրում է ցորեան,—
Պտուղն իր ձեռքի, քրտնքի, արեան.
Եւ այդ բոլորը նա զոհ է բերում,
Կալւածատիրոջ լցնում ամբարում,
Անիծելով բախտ, գնում է իր տուն,
Լացում է սև օր, քաղցած գերդաստուն։

Գ.

Գալիս է աշուն։ Թափւում է տերև,
Սոխակն ասում է վարդին մնաս բարև։
Եւ տեղափոխւող արագիլ, կռունկ
Գաղթում դէպի տաք երկիրներ խորունկ։
Մահւան դեղնութեամբ ծածկւում են դաշտեր,
Զւարճասէր սրտից չեն ցրւում վշտեր։
Լիքն է հունդերով մրջիմին ամբար,
Թէև չըցանեց, չըկասեց իր կալ,
Եւ իր մոմեղէն խցում շար ի շար
Մեղուն կազմել է ձմեռւայ պաշար։
Իսկ իր արտերով մեր խեղճ գիւղացին
Մնում է կարօտ պատառ մի հացին.

Տխուր, յուսահատ, գլուխը ծռած,
Նստած է տան մէջ, ձեռքերը փակած։
«Անցուցի՛ր Ամառ, անցուցի՛ր Գարուն,
Ասում է կինը. անցաւ և Աշուն,
Դրանը կանգնած է ցրտաբեր Ձմեռ,
Որդիքս կիսամերկ, որդիքս կիսամեռ՝
Ես ինչով պահեմ, ասա ինձ, այրիկ»։
—«Աստուած գթած է, ըսպասի՛ր, կնիկ»։
Ասաց մշակը և լռեց իսկոյն,
Ծածկեց ցաւերը վշտալից հոգուն...

Դ.

Գալիս է Ձմեռ,—ալևոր ծերուկ.
Խոժոռած դէմքով, սպիտակ մօրուք,
Չըկայ մի ժպիտ նորա աչքերում,
Դառնաշունչ ձայնով սարսափ է բերում.
Արիւնը սառած երակներումը,
Սիրոյ ջերմութիւն չըկայ սրտումը։
Մահաբեր ձեռքով ձիւնեղէն պաստառ
Տարածում է նա։ Սար, դաշտ և անտառ
Ողջը ծածկւում են սպիտակ պատանով...
Լռում է թռչնիկ. մեռնում է ծաղիկ.
Սառցապատ գետակ մնչում է լռիկ։
Կտուրի վըրայ նստեց սև ագռաւ,
Ծերի գալստեան համբաւը բերաւ,
Կռկռաց, կռկռաց և չարագուշակ
Ձայնով գուշակեց գիւղացու վիճակ։
Բայց մեր գիւղացին էլ դուրս չի երթում,
Փակւած է մթին նա իր խրճիթում։
Նըրա անօթի որդիք կիսամերկ
Սառը թոնրի մօտ նստած են տրտում,
Դուրսը սաստիկ ցուրտ, խաղալ չի լինում։
Հագնելիք չըկայ, խեղճերի հագին։
Գործում է թէև ոստայն ջուլհակին,
Գործում է կտաւ և մանում է կին,

Բայց նոցա գործւածք պիտ՛ գնան վաճառ
Վճարել խանի տուրքը անվըճար։

Ե.

Իսկ մեր մշակի պարտքի մուրհակին
Լրացան տարիք կրկին և կրկին.
Այն անիծեա՜լ պարտք... որ պարտ է պարսկին,
Որով նա գնեց եզները ջուխտակ՝
Եզաւ նա գերի, ընկաւ հոգսի տակ։
Նա չունի արծաթ, չունի եկամուտ,
Բայց մահմետական վաշխառուն անգութ
Քաշում է տանից նըրա երեխէն՝
Ծանրացած պարտքի շահի փոխարէն։
Անգութ վաշխառւին խիղճը չէ ծանօթ,
Նա չունի օրէնք, իրաւունք, ամօթ...
Ի՞նչ անէ խեղճը, ի՞նչ հող տայ գլխին,
Ազատէ կեանքը անբախտ երեխին.
Իր պարտատէրին ակամայ սրտիւ
Զոհում է նա շատ արտասուք, պատիւ...
Մինչ կրկին տարի ժամանակ առաւ,
Տուն, տեղ, ամեն ինչ նա դրեց գրաւ.
Նորից ամրացաւ գերութեան շղթան,
Թողեց վարուցանք, արօր ու գութան,
Եւ պանդխտութեան կրեց գաւազան,
Դէպի հեռաւոր, դէպ՛ օտար աշխարհ,
Տխուր, սրտաբեկ ուղղեց ճանապարհ։
«Կերթամ,—ասեց նա,—դու մի՛ լար, կնիկ,
Կամ օտար երկրում կըմեռնեմ, կըկորչեմ,
Կամ պարսկի պարտքից որդիքս կազատեմ...»

Զ.

«Ա՜խ, Աստուած...» կոչեց, գնաց գիւղացին,
Չը նայեց կնոջ արտասուք—լացին,
Թողեց ընտանիք քաղցած, կիսաշունչ,
Թողեց անխնամ, մերկ ու անտէրունչ։
Աշխարհից աշխարհ շրջէր գաղթ ի գաղթ
Եւ յուսակտուր որոնում էր բախտ։

Եւ վերջ ի վերջոյ մի մեծ պանդուկում
Եղաւ նա համբալ, բեռն էր շալակում,
Բեռն էր շալակում, որպէս մի գրաստ,
Գործում անբանից նա գործ չարաբաստ...
Տրեխներ հագած, փալանը մէջքին,
Մինչև կէս գիշեր քաղւում էր հոգին,
Եւ նոյն փալանին գլուխը դրած,
Սառը գետնի վըրայ քնում էր յոգնած։
Բայց և այդ բախտը չըտևեց երկար.
Մի օր մի մեծ հակ տանում էր բազար,
Չատ ծանր էր բեռը, ծանր և ահագին,
Ոտքերը դողաց, աչքերը մթնեց,
Յանկարծ գլորւեց իր բեռան տակին...
Անշունչ կիսամեռ վեր առան նըրան
Եւ հիւանդանոց ընկերքը տարան։

Է.

Տիծառը դարձաւ դէպ' իրա բունը,
Կարգեց, նորոգեց աւերած տունը,
Բայց մեր մշակից դեռ չկայ համբաւ,
Ընտանեաց վիշտը դառն էր և անբաւ։
Հին պարտատէրը շատ շատ էր տանջում,
Նըրա կնկանից փող էր պահանջում։
Տանջւեց խեղճ կինը, տանջւեց անպայման,
Մանուկ հասակում մաշւած թառամած
Անբախտ գլուխը տարաւ գերեզման...
Փոխան նոցա հին պարտքի մուրհակին
Տիրեց պարտատէրը կայք ու տնակին։
Կորած պանդխտի դստերքը մատղաշ
Գարսկի հարեմում եղան գարաւաշ.
Հայերից մի տան մարեցաւ օջախ։
Բայց քանի՜ հարիւր տուն այդպէս յաճախ
Անհետանում են ամենայն տարի...

ՐԱՖՖԻ

ՀԱՅՐԵՆԻՔ

(Տօպելիուսից)

Յիշում եմ ես մի հէքիաթ, բայց միայն չեմ յիշում, արդեօք ո՞վ է պատմել ինձ այդ։ Շատ կարելի է, նա թռել եկել է մի անգամ, երեկոյեան անտառի կանաչ ճիւղերի վրայ, երբ ծովը քնած է եղել և աստղերը պայծառ փայլելիս են եղել երկնքում։ Եթէ կամենում ես, ես կըպատմեմ քեզ։

Լինում է չի լինում մի մեծ, գեղեցիկ և հրաշալի մայր, որ շատ որդիներ է ունենում։ Նա մի անգամ հաւաքում է նրանց իր շուրջը, տարածում է նրանց վրայ իր ձեռները և օրհնում։—Թանգագին որդիքս, ասում է նա,—ես ձեզ բոլորիդ էլ ջերմ սիրով սիրում եմ. ես ձեզ տալիս եմ հագուստ և կերակուր՝ մանուկին օրօրոց, չափահասին՝ տուն և գերեզման՝ նրան, ով թողնում է այս աշխարհը։ Ես ամենահին ժամանակներից սկսած նստել եմ ձեր օրօրոցի մօտ և երգել ձեզ օրօրոցի երգեր, ես հետեւել եմ ձեր առաջին քայլերին և սովորեցրել եմ ձեզ զանազան օգտակար արուեստներ։

Այժմ, որդիքս, պահանջում եմ, որ դուք էլ ինձ սիրէք այնպէս, ինչպէս ես եմ սիրել ձեզ։ Աշխատեցէք ձեր մօր համար, աշխատեցէք և աղօթեցէք նրա համար ձեր ամբողջ կեանքում։ Ձեր մայրը աղքատ է. դուք պարտական էք հարստացնել նրան։ Նա տխուր է, դուք պարտական էք ուրախացնել նրան։ Նա մրսում է, դուք պարտական էք տաքացնել նրան։ Նա ապրում է խաւարի մէջ, դուք պարտական էք լուսատու ճրագ վառել նրա պատուհաններում։ Եթէ դուք, որդիքս, խոստանում էք ինձ այդ ամենը, ես այն ժամանակ կաղօթեմ ամենակարող Աստծուն որ ձեզ՝ դէպի ձեր մայրն ունեցած անհուն սիրոյ փոխարէն՝ իմաստուն և բախտաւոր անի։

—Այո, այո,—պատասխանեցին որդիքը, և ամեն մէկը գնաց իր գործին։ Որովհետև նրանցից մի քանիսը ծոյլ էին, աշխատանքը շուտով ձանձրացրեց նրանց և նրանք

պառկեցին քնելու։ Միւսները թեթեւագնաց էին, և վազեցին գոյնզգոյն թիթեռնիկների ետևից, որոնք թռչում էին մարգագետնի վրայ։ Ոմանք էլ ամաչեցին իրանց մօր աղքատութիւնից և գնացին դրացիների տները, որոնք աւելի հարուստ էին։ Իսկ մի քանիսն էլ այնքան անազնիւ էին, որ կամենում էին ծախել իրանց մօր տունը մի օտար վաճառականի այնպէս, ինչպէս Յակոբի որդիքը ծախեցին իրանց եղբօրը՝ Յովսէփին եգիպտացի վաճառականներին։ Բայց դրանց փոխարէն մի քանիսը առաւօտից մինչև երեկոյ, օրօրոցից մինչև գերեզման աշխատում էին իրանց մօր բախտաւորութեան և փառքի համար, իսկ մի քանիսն էլ ուրախութեամբ զոհում էին իրանց կեանքը, նրան աւազակների ձեռքից ազատելու համար։

Այն ժամանակ մայրը նորից կանչեց նրանց իր մօտ և ասեց.

—Ես գիտեմ, որ ձեզանից ամեն մէկը արդէն իր գործը կատարել է, ձեզանից հաւատարիմներին ուզում եմ գրկել և սեղմել իմ կրծքին, իսկ անհաւատարիմներին մերժում եմ։ Եթէ ես մինչև անգամ ուզենամ էլ բոլորիդ էլ գրկել անխտիր բարիներին էլ, չարերին էլ, մոռանալով և ներելով ձեր պակասութիւնները, —բայց ես չեմ այժմ ձեր դատաւորը. ձեզ դատում է իմ փոխարէն արդարադատ Տէրը։ Ես չեմ կարող փոխել Նրա դատավճիռը։ Ահա երկնային գահի վրայ արդէն բազմել է Նրա հրեշտակը։

Տղայքը երկիւղով նայեցին դէպի վեր և լաւերն էլ մինչև անգամ երկնքում բացուած Դատաստանագիրքը տեսնելով՝ սկսեցին դողալ։

Լուսափայլ հրեշտակը թերթում էր նրա թերթերը։ Ամեն անգամ երբ նա թերթում էր, կայծակը փայլատակում էր երկնքում. և նա ասեց անհնազանդներին։

—Ձեր մօր վիշտը դատապարտում է ձեզ։ Դուք, ծոյլեր, աղքատ կըլինէք. դուք թեթեւամիտներ, դառնապէս կըզղջաք. դուք, մեծամիտներ, արհամարհուած կըլինէք. դուք, նենգամիտ մատնիչներ, բոլոր մարդոց մէջ զզուանք պիտի յարուցանէք։ Իսկ լաւ և պարտաճանաչ որդիներին ասեց հրեշտակը.—Դուք կըլինիք խելացի և բախտաւոր

այս աշխարհում, իսկ մահւանից յետոյ էլ ամենից յարգուած, որովհետև ձեր մօր օրհնութիւնը միշտ պիտի հետևէ ձեզ՝ թէ ձեր կեանքում և թէ ձեր մահւանից յետոյ։

Այն ժամանակ անհնազանդ որդիքն ասեցին.—Բայց ո՞վ էր մեր մայրը, մենք նրան չենք ճանաչում։ Հրեշտակը պատասխանեց.

—Հայրենիքը, ձեր մեծ և գթառատ մայրը, որ կերակրում և սիրում է ձեզ, որ տալիս է ձեզ այն ամեն բարիքը, ինչ որ կարող է տալ։ Ահա նրան է, որ ձեզանից մի քանիսը վշտացրին, իսկ միւսները ուրախացրին։ Տղէք, յիշեցէք, որ ձեր հայրենիքը ձեր մասին վկայում է թէ ներկայումս և թէ ապագայում։

Ահա այս է ամբողջ հէքիաթը։ Ի՞նչ կասէք դուք սրա մասին։

Կըլինի՞նք մենք էլ անհնազանդ որդիներ մեր մեծ մօրը, այնպիսի որդիներ, որ նրա սէրը կըվարձատրենք վշտով և ապերախտութեամբ, թէ՞ կըլինինք նրա բարի, հնազանդ որդիներ, նրա սիրտը ուրախացնող և նրա բախտաւորութեան համար աշխատող։

Ո՛չ, ո՛չ, մեր բարի մայր, մեր երկիր, մեր հայրենիք, մենք երբէք քեզ չենք վշտացնի։ Մենք միշտ քո սիրոյդ և հոգացողութեանդ արժանի կըլինինք։ Երբէք չենք ծախիլ մենք քեզ եգիպտական վաճառականներին. երբէք չենք ատիլ քեզ քո աղքատութեան համար և չենք ծուլանալ, երբ դու կասես մեզ. «Աշխատեցէք ինձ համար»։ Մենք կըլսենք քո մեծ հրաւէրը, ինչպէս այդ անում էին մեր պապերը։ Եթէ դու աղքատ ես, մենք քեզ կըհարստացնենք։

Եթէ տխրութեան մէջ ես, մենք քեզ կուրախացնենք, եթէ դու մրսում ես, մենք կըտաքացնենք քեզ մեր սիրով, և եթէ տխրութիւն մէջ ես, մենք կըվառենք քո պատուհանում լուսատու ճրագ. որովհետև դու մեծ ես, մեր սիրելի մայր և այդ պատճառով էլ մենք կըխնդրենք Աստծուց մեծ մօքերի մասին։

Դու խոնարհ ես, մենք կըխնդրենք Աստծուց, որ նա տայ մեզ խոնարհ սիրտ, և ամենակարող Աստուածը կըլսէ

մեր խնդիրը և կանչ մեզ մեր սիրոյ փոխարէն խելացի ու բախտաւոր։

Մենք մի քանի ժամանակ ապրում և աշխատում ենք քո հովիտներում, իսկ յետոյ դաշտի ծաղիկների նման թառամում ենք. մեր տեղը ուրիշներն են գալիս և աշխատում մեզ նման. բայց դու, մեր մեծ և ազնիւ մայր, դու ապրում ես յաւիտեան։ Դու հաւաքում ես կամաց—կամաց քո որդիների սէրը, ինչպէս գանձ և զարգանում ես մեծութեան և փառքի համար յաւիտենական Աստծոյ հովանաւորութեան տակ։

Այո, աճիր, մեր սիրելի մայր, աճիր մեր սիրով։ Եղիր ուժեղ և զօրաւոր, եղիր ազնիւ և լուսաւոր, եղիր հարուստ Աստուծոյ ողորմութեամբ։ Այն ժամանակ դու երբևիցէ մեր մասին կասես. «Նրանք իմ շատ որդիներն էին. Նրանք սիրում էին իրենց Հայրենիքը»։

Յ. Տէրտէրեան

Ա Ր Տ Ո Ւ Տ

Արտուտիկ, ինչո՞ւ թռչում ես վեր-վեր,
Երկնքիցն ասում քո տխուր տաղեր,
Պարտէզ ու այգի ինչո՞ւ չես գնում,
Քնքուշ ձագերըդ ո՞րտեղ ես հանում։
—Ա՜խ, շատ են, շա՛տ են իմ կսկիծն ու ցաւ,
Իմ մտերիմը գնաց, հեռացաւ,
Հայ հողագործը,—իմ սերտ բարեկամ,
Թշնամու ահէն գնաց գաղթական։
Այն օրից Հայոց դաշտը ամայացան,
Բերրի դաշտերը փշով լցւեցան…
Տափի վրայ չունիմ ես հանգստութիւն,
Եւ այդ պատճառով երկինք եմ թռչում։
Երկինք եմ թռչում, ցերեկ, իրիկուն,
Երգով աղերսում գթոտ Աստուծուն,

Որ մեզ ողորմի իր աջով գթած,
Հայ հողագործին անէ գերեդարձ,
Հայաստան բերէ խեղճ հայ գեղջուկին,
Այս է խորհուրդը իմ տխուր երգին։

Ռ. Պատկանեան

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԸ

Օտա՛ր երկինք, օտա՛ր արև,
Որ շողում էք գլխիս վերև,
Ինչքա՜ն շողաք… դուք ինձ համար
Միշտ կըմնաք գիշեր խաւար…
Սիրտս տոչոր՝ ձեզ նայելով,
Անտէր, պանդուխտ կեանքս լալով,
Օր չի անցնում—հայրենիքիս
Վառ կարօտը չայրի հոգիս։
Մատա՜ղ լինիմ նըրա պայծառ
Էն երկնքին, ուր սիրավառ
Ոսկէ՜ արևն ինձ վերևից
Փայփայել է մանուկ օրից։
Հայրենիքիս խաղաղ ծոցում,
Ինչպէս փափուկ օրօրոցում,
Ես մեծացել, կեանք եմ առել,
Նրա շնորհով մարդ եմ դառել։
Ո՞նց մոռանամ ես էն օրհնած
Սարն ու ձորը ծաղկով լցւած.
Էն կենսատու ջուրն ու հողը,
Գարունքի էն հովն ու ցօղը.
Ո՞նց մոռանամ ես էն փարթամ
Դաշտն ու արտը, ուր շատ անգամ
Ինչպէս թիթեռ թըրթըռացել,
Արար-աշխարհն եմ մոռացել…
Ուր լսել եմ սրտիս ազիզ
Գեղջուկ մշակ եղբայրներիս

Դառն լացը, կուշտ ծիծաղը,
Որախ-ուրախ երգ ու տաղը...
Օտար երկինք, օտար արև,
Որ շողում էք գլխիս վերև,
Ինչքա՜ն շողաք... դուք ինձ համար
Միշտ կըմնաք գիշեր խաւար...

Ս.. Ծատուրեան

ԳԻՇԵՐԱՊԱՀ ՄԿՕԻ ԵՐԱԶԸ

Դաժան ձմեռուան մի ցուրտ գիշեր էր։ Թիֆլիզի մեծ փողոցներից մէկում, մի շքեղ տան սայլադրան առաջ, մի մաշուած քուրք ուսերին՝ փայտանի վրայ պպզած էր մշեցի գիշերապահ Մկօն։ Նա աչքերը ձգած գետնին՝ տխուր մտածում էր... Լռութիւն էր չորս կողմը, անցուդարձը կտրուել էր, միայն երբեմն երբեմն գիշերաշրջիկ աղաների կառքը մօտից անցնելով՝ մի րոպէ նրա ուշքը գրաւում էր և կրկին գլուխը խոնարհում։

Գիշերուան երկու ժամը խփել էր և ահա մի կողմից ցուրտը, միւս կողմից դադրածութիւնն ու նինջը կամաց-կամաց յաղթեց Մկօին. Նա գլուխը թաղեց քուրքի մէջ, թինկ տըւաւ պատին և անշարժ մնաց տեղը կուչ եկած։ Հէնց էն է քաղցր քնի մէջ էր մտել, որ մէկը կողքին աքացի տալով զարթեցրեց. «Տօ, ախմախ, էտէնց էս տանը ամուղայիթ կենո՞ւմ, քիզ քա՞նի չէր ասիլ իմ ու էլի իմ ասում, մէկ էլ էսէնց չնթռած չտեհնիմ քիզ, թէ չէ...

Խեղճ Մկօն քնից վեր թռաւ, տեսաւ տանտէր աղային, որ սամուր քուրքի մէջ կոլոլուած, փո՜ւհ-փո՜ւհ անելով, բերանից հայհոյանքներ էր թափում։ «Աղա՜, ոտացդ մեռնիմ, բաշխի, ցուրտ կէնէր չդիմցայ ու աչքս նոր խուփ էրի»։

—Աբա փուղը վո՞նց իս դադում. 'երգնքեմէն խօմ դէվէր չէ թափւում. անքուն վուր չըմնաս, էլ քիզ փուղ

ինչ՜ իմ տալի. էս վերջի գամն իմ ասում, թէ մէկ էլ մրափած տեհնիլ իմ քիզ, դուս կօնիմ»։

Աղան մի քանի սպառնալիքներ էլ տալով, քաշեց տան զանգը, դուռը բացուեց և մրթմրթալով գնաց իր տաք սենեակում մինչև կէսօր խռմփալու, իսկ Մկօն վա՜շ-վի՜շ անելով, մի քանի րոպէ անցուդարձ արաւ տան դիմացը, սառած ոտները թմփթմփացրեց գետնին, որ քիչ տաքանայ ու կրկին քաշուեց սայլադրան անկիւնը և առաջուան մտածմունքի մէջ ընկաւ։

Նրա մտածութիւնները Թիֆլիզի սահմանից շատ հեռու էին, նա մտքով փոխադրուել էր Վասպուրական, իր հայրենի գիւղը. յիշում էր իր մանկութեան քաղցրիկ օրերը՝ երբ մի խումբ ընկերների հետ ճան (վէգ) էր խաղում, լճակներ շինում, դաշտում ծաղիկներ փնջում, կամ գառնուկներն առաջն արած՝ հանդում արածացնում. յիշում էր իր պատանեկութիւնը՝ երբ տափը վարելիս, հայրը գութանի մաճը բռնած, իսկ ինքը եզների լծի վրայ հօտաղների հետ լա՜յ-լա՜յ կանչելով, երգում, աշխոյժ էր տալիս եզ ու գոմշուկին և ակօս ակօսի կողքից ընկնելով, ահագին դաշտը մի քանի օրում հերկւում, պատրաստւում էր... Յիշում էր իր երիտասարդութիւնը՝ երբ ամեն ինչ նրան ժպտում էր, ամեն ինչ նրա աչքին փայլուն էր երևում, որովհետև ոչ մի դառնութիւն դեռ նրանց շէմքից չէր մտել և հայրական տունը լիքն էր ամեն բարութիւնով։ Բայց շուտով նրա առաջ արձանացաւ մի շարք պատկերներ, արիւն արտասուքով ներկուած. Նա յիշեց այն սոսկալի օրը, երբ հինգ տարի առաջ քրդերը մտան իրանց գիւղը՝ սուգ ու շիւան ձգեցին ամեն տուն, թալանեցին և իրանց խրճիթը, և երբ հայրը գութանի ձեռինը ձեռին պաշտպանում էր գազանների ձեռքից իր ընտանիքը, իր կայքը, ինչպէս քրդի նիզակը նրա կուրծքը խըրուեց և արիւնաթաթախ գետնին փռուեց... Յիշեց նաև հարկահանից ոչ պակաս քաշած տանջանքները և այն պարտքը, որ ընտանիքը պահելու համար արել էր և տարէցտարի դիզւում էր և իր արիւն քրտնքի վաստակը ձեռքից խլում... Եկաւ և այն դառն րոպէն, երբ պարկն ուսին,

վիզը ծուռ, մնաս բարով ասեց իր մօրը, քոյրերին, ամուսնուն, համբուրեց օրօրոցում քնած փոքրիկ զաւակը և արցունքն աչքերին՝ հեռացաւ հայրական օջախից դէպի Կովկաս պանդխտութիւն...

Եւ այժմ նա Թիֆլիզում, ցերեկը փալանը կռնակին, քար ու ցախ է կրում աղաների տունը շինելու համար, աղբ է դուրս ածում, փողոցներն է մաքրում, իսկ գիշերները՝ անքուն մնում, գիշերապահութիւն անում այն ցեխ ու ձնի մէջ, որ դարձեալ նոյն աղան հանգիստ ու ապահով քնանայ իր տաք անկողնում և ինքը կարողանայ մի քանի շահի յետ գցել իր աղքատ ընտանիքի համար...

Այս և սրա նման մտածութիւններ էին պաշարել Մկօի միտքը, որ յանկարծ քունը կրկին խժբժաց աչքերում. շատ էլ աշխատեց աղայի ահից արթուն մնալ, բայց չըկարաց... Նինջը յաղթեց նրան, գլուխը ծանրացաւ և ծուեց կրծքի վրայ։ Նա մտաւ քնի աշխարհը, ուր թագաւորում են չար ու բարի երազները և մարդիս ներկայացնում են աշխարհիս թէ հաճոյքները և թէ չարիքները, բայց միայն խաբուսիկ ձևով։ Մկօն այդ աշխարհի մէջն էր. նրա դէմքից, շրթունքների ժպտից կարելի էր որոշել նրա ուրախ վիճակը. արդարև նա տեսնում էր իրան կրկին հայրենի տուն վերադառնալիս, շորերը նոր, քիսան փողով լիքը, մի խուրջին ուսին չթեղէններով տրաքում։ Իր դիմացն են գալիս պառաւ մայրը, կինը, քոյրերը. իրար ճտով են ընկնում, նրանց պատմում է իր երեք տարուայ քաշած պանդխտութիւնը և այժմ էլ նրանցից չի բաժանուիլ, նա հարուստ է. խուրջինից հանում, բաժանում է նրանց համար բերած ընծաները, ամենքն ուրախ են, ամենքը գոհ են... Տեսնում է նաև իր փոքրիկ Սաքօն տօտիկ-մօտիկ տուն պրծաւ, նա չի ճանաչում իրան. մայրը «քո պապօն է», ասում է նրան... «Իմ պապօն», կանչում է մանուկը և ցատկում հօր գիրկը... «Սաքօ ջան...» սեղմում է իր գրկի մէջ հայրը և համբոյրներով ծածկում նրան...

Հէնց այդ հայրական գգւանքի մէջ էր Մկօն, որ կրկին մի թեթև աքացի դիպաւ կողքին։

Մկօն սարսափած վեր թռաւ տեղից. «ա՜խ կորսւեցայ, բաշխի, աղա ջան, ոտացդ մեռնիմ, և սպասում էր աղայի նոր հայհոյանքներին. բայց սխալւեց. իր դիմացը այժմ կանգնած էր իր ընկեր Խաչօն։

—Ծօ́, Մկօ́, հերիք քնես էս ցրտուն, էթանք բանատեղ, լիսը բացւեր է։

Մկօն ոչինչ չըխօսեց, մի դառն ախ քաշեց, փալանը ձգեց ուսովը և ցրտից սրթսրթալով, տխուր հետևեց ընկերին...

Կ. Մելիք-Շահնազարեանց

ՍՈՎԻ ՏԱՐԻՆ

Չոր ծղնոտի վրայ պառկած,
Թշւառ Մըրտօն խոր կըքնէ,
Երկու օր է, չի կերել հաց,
Ի՞նչ ճար ունի, որդի՛ց պտնէ։
Վե՛ր կաց, Մրտօ, էլ մի՛ քնի,
Քիւրդը կըգայ, քեզ կըթալնի։
Քո աղքատիկ մերկ յարկի տակ,
Թէպէտ սովն է միակ բաժին,
Սակայն ունիս դեռ մի հրեշտակ՝
Որդիդ սիրուն, ժիր ամուսին։
Վե՛ր կաց, Մրտօ, էլ մի՛ քնի,
Քիւրդը նրանց չի պաշտպանի։
Արդէն մեռան մերկ ու քաղցած,
Երկու քնքուշ քո զաւակներ,
Նրանց մարմին դեռ չի թաղած,
Մայրը նրանց մօտն է պառկեր։
Վե՛ր կաց, Մրտօ, էլ մի՛ քնի,
Քիւրդը կըգայ ձեզ կանպատւի։
Այն բոպէին քիչ հեռուից
Ձիաների սուր ոտնաձայն.

Վեր թռչրեց մօրն իր տեղից,
Որ զարթեցնէ քնած էրկան։
    Վե՛ր կաց, Մրտօ, էլ մի՛ քնի,
    Քիւրդը եկաւ որ քեզ թալնի։
Վե՛ր կաց, հոգիս, իմ արև ջան,
Պաշտպանիր ինձ, տես մօտեցան,
Քիւրդը գտաւ մեր տան ճանպան,
Վե՛ր կաց ցած բեր քո հրացան։
    Վե՛ր կաց, Մրտօ, էլ մի քնի,
    Քիւրդը մեզ մահ պիտի բերի։
Լսիր, գիւղի շունք կըհաչեն,
Փակ դռները կըկոտրատեն,
Ամեն կողմից մա՛հ կըգոչեն,
Սև օր հասաւ, լոյս է արդէն։
    Վե՛ր կաց, Մրտօ զարթիր, ժամ է,
    Մի ուշանար, վեր կաց կուէ։
Նա պինդ բռնեց մարդու ձեռից,
Ուժով թոթւեց, որ վեր կենայ,
Սակայն սառած՝ ցնցւեց ահից,
Արդէն սովից մեռած էր նա։

Պետրոս Ադամեան

ԿԵԱՆՔԻ ՍԱՂՄՈՍԸ

(Լօնգֆէլլօից)

Օ՜, մի՛ ասիր, յոյսըդ կտրած,
«Կեանքն է երազ»․ թող լռեն
Այդ տրտունջներ․ միայն թմրած,
Երկչոտ հոգիք կեանք չունեն։
    Ո՛չ, մեր կեանքը երազ չէ լոկ,
    Թէպէտ ունի նա վախճան,
    Մեր բաժինը խիստ չէ անհոգ,
    Ոչ էլ վիշտ կամ գերեզման։

Եւ ոչ հոգու համար Աստւած—
Երկինք, երկիր արարող
Խոր անցեալում մարդուն ասաց․
«Հող էիր և դառնաս հող»։
    Հանիր մոքից մահ ու դագաղ,
    Ճակատագիր, անգութ բախտ․
    Մի լինիր գառն, անխօս մատաղ,
    Հերոս եղիր քաջայաղթ։
Ընշարժ, անգործ մի՛ երազիր,
Գալիք օրեր ըղձալի,
Եւ ուժերըդ զուր մի՛ թաղիր,
Սառն աճիւնում անցեալի։
    Ուժիդ համար այդ աճիւնում
    Չըկան երկնից սուրբ կայծեր,
    Սիրով գործիր դու ներկայում,
    Եւ փայփայիր կեանքի սէր։
Թող քո գործից մի հետք մնայ,
Գուցէ նորից ուժ առած՝
Այդ թարմ հետքով առաջ գնայ,
Քո եղբայրը մոլորւած...
    Գուցէ, եռուն ծովում կեանքի
    Բազուկդ անյաղթ ուժ պահած,
    Առաջն առնէ շա՜տ փորձանքի,
    Մահից փրկէ շա՜տ մարդկանց։
Կեանքը գործ է և ոչ երազ,
Գործ սեփական և հանուր,
Գործիր ազատ, չըվախենա՜ս,
Գործիր ազնիւ ու մաքուր։
    Ազնիւ գործն է մեր սուրբ դրօշակ,
    Պահիր կրծքումդ վառ, անշէջ,
    Ոգի, եռանդ, կեանքի կրակ...
    Եւ միշտ յառա՜ջ կեանքի մէջ։

Ալ. Ծատուրեան

«ՉԱՐԽԱԴԱՐՆԵՐ»

Իլէք գնանք,
Հերիք մնանք.

(Պատկեր)

Ձմռան կէսն էր։ Սարեր ձորեր, դաշտ ու դուրան, ձիւնով ծածկուել պլլուել էին։ Ամբողջ աշխարհ, միայն սպիտակ, ջինջ ու մաքուր ձիւնով ծածկուած, հարանդ մարանդ քուն էր մտել, կարծես մեռել, մարել, լռել, անշնչացել։ Սառը բուքն էր փչում ազատ, գետին չանկռում, ձիւն էր առնում, խեղճ ճամբորդի առանց այն էլ սառած դէմքին, քթին, պնչին խփում անցնում, նորից կրկնում, չար երեխի նման անմեղ խաղ էր անում։ Ամբողջ աշխարհ սառն էր, սառած, դաժան ու ցուրտ։ Երեկոյեան դէմ էր արդէն. Սբուլ լեռան փէշերի տակ, Փարւան լճի արեւելքում, շարան—շարան իրար ետքից լռիկ, մնջիկ օրօրուելով անվերջ ձիւնի անապատում, ծանր, դանդաղ յամր քայլով, մի քարւան էր առաջ գնում։ «Չարվադարներ» էին նոքա, որ գիւղերից, դէսից դէնից, հաւաքելով ձուն ու իւղը, հաւն ու ճիւը, տանում էին դէպի Թիֆլիզ։ Այդ մարդիկը քաղաքից գիւղ՝ գիւղից քաղաք անխոնջ կերպով, ձիաները բեռնաւորած, իրանք ոտով, նոցա յետքից միշտ քաշ գալով՝ գնում գալիս։ Ոչ հանգիստ կայ նրանց համար, ոչ ցուրտ ձմեռ, ոչ սառը բուք. գարնան սկզբին, ձմռան կիսին, մէջ գիշերին, լուսաբացին, միեւնոյն է նրանց համար. քրէհով բեռներ տեղափոխում, կամ ապրանքներ բերում ծախում, քաղցն ու ծարաւ, դառն տանջանք միշտ կրելով համբերատար։ Պատահում է ձին է ընկնում կիսաճամբին, շունչը փչում, բեռը թողնում չոլի միջին, կամ յոգնելով գետին պառկում բեռը ճխլում, «չարվադարի» ամբողջ յոյսը դերւ հանում։ Յոգնած, դադրած «չարվադարը» բեռը նորից ցած է բերում, հանգստանում, նորից բեռնում առաջ գնում, կամ եթէ չէ՝ յոյսը կտրած, ոլոր մոլոր, վիզը ծռած, ողբում է նա անճարացած։

Սբուլ լեռան արեւելքում երեւացող քարւանին հե-

տեսում են երեք թշւառ խեղճ ու անճար գիւղացիներ, հաստ մահակներ ձեռքըներին։ Երբեմն քիչ կանգ էր առնում դադրած, փոքրիկ քարւանը, կամ ուժ ու կող առած նորից մէկ խրուելով ձեան դէզի մէջ, սայթաքելով, փռշտալով, ծանր ու բարակ զգուշութեամբ քայլ փոխելով առաջ գնում։ Դաժան քամին ձեան թեփերով ծածկել լցրել էր ճանապարհ։ Չարւադարի հմուտ աչքն էր, որ միեւնոյն տեղերից հազար անգամ գնալ գալով սովորել էր ուղղութիւնը լաւ որոշել, ու քարւանը անշեղ կերպով առաջ տանել։ Փարւան լիճն էլ սաստիկ ցրտից սառել նոյնպէս քարացել էր. սպիտակ ձիւնի ու սառուցի մի անապատ էր նա դարձել։

Քարւանը անց էր կենում սար ու ձորով, հովիտներով։ Երկինք ու ձիւն էին նոցա աչքի առաջ, կենդանութեան ոչ մի նշոյլ չէր նկատւում շրջակայքում. երբեմն միայն ճանապարհին ագռաւներն էին երեւում, գէշ կռկռոց արձակելով, թեւերը բաց անում, թռչում ամպից հեռու նորից կանգնում և զարմացած նայում էին տարաժամ ճանպորդներին, կամ հեռուից նապաստակը վախկոտ գլուխը բարձրացնում, ապշած նայում, նորից վազում, գնում, կորչում անհետանում։

Մութը արդէն գրկեց գետին, և խաւարի մռայլ քօղը պատեց, ծածկեց ողջ աշխարհը. դար ու դուրան խոր քուն մտան, տխուր մրմունջ և լուռ ու մունջ, քամուց ցրտից պապանձուեցին, ու լռեցին։

—Քշի՛ր, Մկօ, լսւեց մի ձայն քարւանից, տօ, մութըն ընկաւ, դէ՜, շուտ արա, մի տեղ հասնենք, պատսպարւենք, թէ չէ՝ Աստուած չանէ՝ եթէ ճամպէն կորցնենք, սոված գայլի բաժին լինենք։ Էս ի՞նչ օր է, եաման Աստուած, «եարադանիդ էդիմ ղուրբան»։ Քիթս պռունգս ցրտից սառել, ոտքերս, ասես, փէտացել է, քոքոջացել (կծկուել)։

—Հա, հա, ախպէր, էլ մի ասա, հոգիս ելաւ, դէհ, Մկօ ջան, Մարտօ ափուն լաւ է ասում, դու շուտ արա, վատ տեղումն ենք մենք, դու գիտե՞ս, ձիու սանձը բռնիր, քաշիր, քեզի տեսնեմ, առա՛ջ գնա, շառը գնաց, քինը

մնաց, մատաղ լինիմ ես քո հոգուն, մի քիչ զօռ տուր ձիաներին։

—Տղէք, քշի՛, քշի՛, ասում էք դուք, ապա ինչպէս ես ստիպեմ յոգնած, դադրած ձիաներին, ինչպէս արագ—արագ տանեմ, այս դար ու փոս դիզուած խորունկ ձեան վրայէն։ Մութը ընկաւ, մէգը պատեց, էս անտէրն էլ, էս ձեան թեփը, աչքերս ողջ քոռացրեց, բան չեմ տեսնում, ուր ենք գնում, ես չըգիտեմ. կարծես ճանպէն կորցրել ենք, դէպի սարերն ենք գնացել... եամա՛ն, Աստուած, դու մեզ քեօմակ, մեզ օգնական հասիր շուտով. էս չոլի մէջ տանից հեռու մեզ մի թողներ անտիրական։ Տղէք, սըպէրք, էլ ճար չըկայ, ճանպէն էս չի, կանգնենք տեսնենք մի հնար անենք. դը՛ռ՛ռ հօ՛օ՛պ, ձայն տուաւ նա ու քարւանը կանգնեց իսկոյն տեղն ու տեղը։

—Յակոբ ախպէր, փորձուած մարդ ես, խօսեց Մկօն, շուտով դու մեզ մի հնար տես։

—Ի՞նչ ճար տեսնեմ, ձեզի մատաղ, ես ի՞նչ գիտեմ, որ ինչ ասեմ, լեզուս բերնումս է պապանձուել, ուղեղս զանգումս է քարացել. առաջ գնալն անմիտ բան է, միւնոյն է, տեղ չենք հասնիլ, քանի վաղ է, բերէք այստեղ բեռները ցած իջեցնենք, կրակ անենք, մնանք մինչև առաւօտեան լուսաբացին, թէ ողջ մնանք այն ժամանակ մի ճար անենք։ Դէ՛հ, շուտ արէք ինչ էք ապուշ-ապուշ նայում, կանգնել, լռել ու մոլորուել։

Երեք հոգով ուժով զօռով, արկղները իջեցրին, փոքրիկ տնակ պատրաստեցին, մէջ տեղումն էլ զօռով, շատով արկղների կտորներից կրակ արին և շուրջ-բոլոր բոլորուեցին։

Բայց ինչ կրակ կօգնէր նրանց. կրակն ընկել նրանց կայրէր, ցուրտը նրանց «ջանն» էր մտել։ Մարտօ ափուն լեզուն կապուած, ձիւնի վրայ վայր էր ընկել փլփլացող կրակի մօտ։ Թւում էր թէ իրա տան մէջ, իր օջախի վառ կրակի մօտ է պառկած, ընտանիքով շրջապատուած։

—Ա՛խ, մայրիկ ջան, նրա համար աշխարհ բերիր, որ ես այստեղ չոլի միջին, տանից հեռու գայլի բաժին դառնամ այսպէս։ Ա՛խ, ոտներս, ճ՛խ, ձեռներս, էլ հալ չկայ, էս ինչ զուլում ցաւ էր եղաւ, ա՛խ, բալէքս...

Կէս գիշեր էր արդէն անցել։ Մարտօն, Յակօն դեղին տալով, զառանցելով, ձիւնի վրայ քնել հանգիստ, լռել էին։ Միայն Մկօն դեռ կռւում էր չար բախտի հետ և չէր ուզում սառչել, լռել ու պապանձուել, անհետ կորչել։

—Յակօ, Մարտօ, տօ, վե՛ր կացէք, նա ձայն տուեց, դէ՛հ, վեր կացէք, ելէ՛ք գնանք, հերիք մնանք... բայց ոչ Յակօն և ոչ Մարտօն չէին լսում նրա ձայնը։

Նա սարսափած նայեց իրանց սառած դէմքին, ամբողջ ոյժերը հաւաքեց, զօռով մի կերպ ոտի կանգնեց, խլեց մի փայտ վառւող կրակից ու դուրս վազեց սարսափահար, իր մօտալուտ մահն զգալով. բայց մի քանի քայլ դեռ չարած, նրա ծնկները թուլացան. ընկերներից ոչ շատ հեռու ընկաւ նա էլ ձեան դէզի մէջ. միայն մի ձայն նա արձակեց խզուած, խռպոտ, մռայլ, տխուր, որ օդի մէջ սառաւ, կորաւ, անհետացաւ ու չքացաւ...

Տիրեց դարձեալ խոր լռութիւն. գիշերն ու մահ թըռչում էին այդ ամայի հովտի միջին...

Ամբողջ գիշեր փչող քամին ձիւնով ծածկեց դիակները ու կենդանի քարւանի հետքը իսպառ անհետացրեց, գերեզմանոց նա դարձրեց։

Լոյսը բացւեց. առաւօտեան խառը խուրը իրար մօտիկ ձեան թմբերի վրայ արդէն չարագուշակ ու գիշատիչ սև ագռաւներն էին թռչում ու անախորժ, վատ կռռոցով անդորրութիւնը խանգարում։

Յով. Կարապետեան

ՀԱՒԱՏ, ՅՈՅՍ

Ղարաբաղը լեռների երկիր է. լեռնե՛ր, մեծ ու փոքր, կարճ ու երկայն, քանի՛ քանիները կան։ Բայց նրանց մէջ յայտնին, եթէ ոչ բարձրը, Դիզափայտն է, Դիզակ և Վարանդա գաւառների հսկան։

Աստուած այդ սարին ծառ չի տուել․ ձմեռը ձիւնն է ծածկում նրա մերկութիւնը, իսկ ամառը կանաչ խոտը անթիւ, անհամար ծաղիկների հետ խառնուած։

Մարդիկ չըգիտեն, թէ ով է ապրում դրա վրայ․ բայց ո՛վ չըգիտէ, որ այդ բարձր գագաթին պինդ նստած ու կայծակներով կռած կոփած մեծ մեծ քարերի մէջ կանգնած է մի փոքրիկ քարաշէն խորան։ Այդտեղ է սուրբը, որ Դիզափայտ է կոչւում․ նրան ճանաչում, պաշտում է ամբողջ Վարանդան, Դիզակը։

Վարդավառ է, կիրակամուտ։ Գիւղացիները ամեն կողմից գնում են, գնում․ հարս ու աղջիկ, մարդ ու կնիկ, տղայ, երեխայ, ո՛չ ծայր կայ, ո՛չ համար։ Գնում են, սողում են դէպի բարձր, կտրում են սարի փափուկ, կանաչ կուրծքը․ քրտինքը դէմքին, սիրտը թմփթմփում, ոտով ու ոտաբոբիկ բարձրանում են։ Դժւար է բարձրանալը․ ճանապարհը երկար, թեք․ երկու—երեք տեղ նըստում են, հանգստանում, վերևից ցած են նայում, աչք է մթնում, ցածրից վերև են նայում, սիրտ է ճաքում․ այնքան բարձր է։ Բայց գնում են անփոյթ, հասնում են գագաթին։ Հաւաքւում են, հաւաքւում, խմբւում են, և երբ արեգակը անակնկալ անցնում է միւս սարի քամակը, Դիզափայտի գլուխը սևանում է մարդկանց շատութիւնից։

Գիշեր է, յուլիսի հանդարտ գիշեր։ Ուխտաւորի ուրախութիւնը, երգը, զուռնան, մարդկային ամեն գործ լռեցնում է։ Ինչ ուզում է՝ թող լինի այն մթին, անտառոտ խորհրդաւոր ձորերի և անդունդների մէջ, բայց այս սարը ազատ է, գիշեր ու ցերեկ իր կարգն ունի․ գիշերը տիրում է լռութիւնը, որ նրա բնութիւնն է, և ինչ փոյթ, թէ տարին մի երկու անգամ թզուկ մարդիկ վեր են ելնում և մի կարճ միջոց ձայն ու ծպտուն են հանում։ Ուխտաւորները կուճ են եկել քարերի տակ, քնած են։ Սարի ցուրտ քամին, որ անպակաս է ամեն ժամանակ, մրսացնում է հանգստացած մարդկանց, որոնք այսօր են դուրս եկել յուլիսի տաք ու կրակի միջից։ Խոր գիշեր է։

Իր կոշտ կապերտի տակից գիւղացի տղամարդը անթարթ աչքերով նայում է երկնքին։ Նա չի ուզում քնել,

նա սպասում է։ Երկինքը պարզ է, լուսին չըկայ․ և ծովի աւազի համարքով աստղերը բռնել են երկնքի երեսը, փայլփլում են, ճպճպում։ Որքա՜ն շատ են, Արարիչ Աստուած․ միշտ ծնւում են, միշտ փայլում են, զւարթ, միամիտ, հեզ։ Ահա երկնքի միջով գնում է ծուռ ու մուռ, բայց լայն ճանապարհը։ Ա՜խ, այն գողացողը… գողացել է ու փախել․ կարծել է թէ ռաւամ թիքան մարդու բերանով կուլ կըգնայ․ գողացել է ու տարել․ փախել է խեղճը, երեսը սևացրած, սիրտն ահ ու դող գցած։ Գող է, ուղիղ ճանապարհ չի կարել։ Նա պատժւել է․ դարմանը թափւել է ճանապարհին և քանի որ երկինք կայ գետնի գլխին, դարմանագողի ճանապարհը պիտի մարդու ականջին ի վեր կարդայ․ «մի՛ գողանար»։ Ահա այստեղ է եկել այն աստղը, որ գիւղացու հետ գիշերը մինչև լոյս խօսում է․ նա ցոյց է տալիս քնի ժամանակը, ցոյց է տալիս գիշերւայ ամենաերկիւղալի ժամը, ցոյց է տալիս թէ երբ պէտք է աշխատանքի ետևից գնալ, քրտինք թափել, հացի կտորն աշխատել։ Երկինք… դա մի մեծ աշխարհ է, ամեն մարդ իր աստղն ունի այնտեղ․ ո՛րքան շատ մարդ կայ աշխարհում։ Գիւղացին նայում է երկնքի իրան լաւ ծանօթ կողմին, ո՛րտի մէջ մի ծածուկ ախ է գոյանում։ Նա երբեք չի մոռանալ, որ այդտեղ էր իր մեծ եղբօր աստղը․ եղբայրը շատ անգամ էր ցոյց տուել այդ աստղը սրահի ծայրից, նա թէժ էր, պայծառ, բայց մի օր կորաւ երկնքից և նա թաղեց եղբօրը։ Այդ օրից մենակ է նա այս աշխարհում․ լուծն ու ծանրոցքն ընկաւ նրա վզին, մինչև որ աչքում մազ բուսնելով բերաւ, մեծացրեց իր որդուն։ Հին ցաւ է, վո՜նց մոռանալ․ երկինք ու գետինք իրանց հաշիւն են պահում և այդ անբախտ եղբօր մասին երկու յիշատակ մնաց․ մի գերեզման ներքևում եւ դատարկ մնացած տեղ երկնքում… Է՛, փառքդ շատանայ, Աստուած…

Գիւղացին անշարժ է կապերտի տակ, սպասում է երկնքից մի բան։ Այս գիշեր, այս սուրբ նաւակատիք գիշերը բոլոր սուրբերը «հէրէնց» են գնում։ Նրանց տօնն է․ նրանց հարսանիքը, և նա որ նստած է երկնքում, այդ գիշեր ղրկում է իր սիրելիներին մի մի շաղաթաթաւ

լոյս։ Գալիս է լոյսը երկնքից, թրթռում է, շողշողում է, ինչպէս մի պլպլող խուրձ, իջնում է սուրբի գերեզմանի վրայ, ծլլում է, թափւում սուրբի ծոցը։ Երանի այն հոգուն, որի համար ծածուկ չէ այդ լոյսը. երանի այն աչքին, որ տեսնում է նրան։ Եօթը տարի պաս են պահում, տարէնը եօթը մատաղ են մորթում որ արժանանան այդ լոյսը տեսնելուն, բայց հազարից մէկն է արժանի լինում։

Մեծ է Հայի Աստւածը, ողորմած է. լոյսը ծըլլում է ամեն տարի, և ամեն տարի հայ-քրիստոնեաների միջից կայ Աստըծու մի ընտրեալը, որի աչքը տեսնում է սուրբի բաժինը, սիրտը փառաւորում է, հոգին աղաւնու պէս թրթռում, բլբուլի պէս կարդում։ Մեղաւորի աչքըն էլ տեսնում է այդ հրաշքը, Աստւած ինքն այնքան ողորմած է։

Ախ, Ողորմած, խեղճ գիւղականի հոգին Քեզ մատաղ... Ե՞րբ է նա մոռացել Քեզ. Երբ է դուրս եկել քո օրէնքից, ծուել հօր, պապի դրած ճանապարհից։ Նա խեղճ է, միամիտ, նրան միշտ խաբել է իրանից խելօքը, խաբել է ծաղրելով, մարդու տեղ չըդնելով։ Նա միշտ կտրել է իր երեխայի բերանի հացը, տւել է իրանց մեծին. կորեկ, գարի է ուտեցրել երեխային, դեղին ցորենը ուրիշին է տւել, կերել են, չեն կշտացել։ Տարին տասներկու ամիս, օր ու գիշեր ոտը ցեխում, կողքը քարին, գլուխն անձրևի, արևի տակ, մէջքը ծռած, կուրծը թըրջած... շորը պատռւած, մի օր կուշտ, մի օր քաղցած արել է, արել, աշխատել է իր էշի, ջորու, եզան եաքիցն ընկած. ուրախացել է դրանց հետ, տրտմել է դրանց համար. քորել է, ջուր է տւել, անքուն է կացել երբ հիւանդացել են, ցեխով, բանջարով բժշկել է մի կերպ, կամ մէջքը կոտրւել է, երբ սատկել են։ Արել է ու արել. լոյսը Քեզ վրայ, միտքը Քո ոտի տակ, բայց այսօր... Ա՛խ, քանի՜ ցաւ։ Նա ցորեն չունի, արտը խորշակահար է դառել, երեխան միրկ, տունը դատարկ, իրանք պակաս, պտատ։ Անձրևն ու թայը խեղդեցին ամեն ինչ։ Ինչ որ արել է, իր համար է արել. ոչ ոք նրա չոքած ժամանակ կոնիցը չի բռնել, երեսնիվեր չի ծիծաղել։ Ժամանակը

չար, դառն. օրն ու ապրուստը խելօքինն է. առանց խելքի հաց էլ չի ուտւում հիմա. ի՞նչ անէ խեղճ ռամիկը, արածն ուտում է, մնացածը չի երևում։ Մէջքը բարակ է, նեցուկ չունի։ Մեծ տղան ոտը դրել է քսանից անց. Ի՞նչ կըդառնայ։ Կալ է արել, քամել է, դարմանն էլ կոյտ-կոյտ է դառել, ցորենը, գարին քիչ է, հազիւ իր փողերը կըտայ, պարտքից, պատուհասից կազատւի և մի երկու երեք բուռն կըմնայ իրանց բերանների համար. եթէ արտը չի տալիս, գիւղացին ինչո՞վ ապրի։ Ա՛խ, Աստւած, սուրբ Դիգափայտ, դուք որ չըպահէք, դուք որ ողորմութիւն չանէք, ի՞նչ կըլինի խեղճի ճարը, պէտք է գլուխը վերցնի, գնայ ջուրն ընկնի։

Մտածում է գիւղացին։ Եւ անթիւ աստղերը աւելի պայծառ, աւելի պարզ են նայում, ճպճպում են, ուրախ են։ Քամին քարի քամակից վայր պըծաւ, գետնին քսւելով, ոլոր-մոլոր եկաւ, վազեց, անցաւ նրա երեսով, բերաւ, նրա ականջին հասցրեց հեռու քնածի երազական ակամայ բառաչը, որ իսկոյն վերցրեց իր հետ, տարաւ գլորեց դէպի անյատակ ձորը...

Ա՛խ, խեղճի, անօգնականի, անճարի Աստւած։ Էլ ինչի՞ համար է այս մեծ գիշերը. սրբերը ուրախ են, երկնքի դռները բացւել են. գնում գալիս են հրեշտակները, փող են ածում սուրբերի հետ թև թևի տւած։ Էգուց այսքան մարդիկ, ժամ-պատարագ, խունկ ու մոմ, մատաղ, աղաչանք, պաղատանք. սրանք Քեզ համար են, Ողորմած, Քո սուրբերի համար են, Դու՛ նրանց լսէ։ Երկնքի դռները բաց, շաղաթաթախ լոյսը թափւում է, կաթկաթում է, ծլլում։ Ո՛չ, այդ լոյսերը, սուրբերը, երեսս նրանց ոտի հողն ու մոխիրը դառնայ, խռով չեն աշխարհից, կօրհնեն մեր չորացած, չարացած երկիրը, կօրհնեն մեր անդն ու անդաստանը, մեր օջախն ու հացը, մեր արտն ու հորը, եզն ու մաճը։ Կօրհնեն սուրբերը, հրեշտակները. օրհնութիւնով կըլցւի աշխարհս, կապրենք քիչով, սոված չենք լինիլ, ցաւն ու չորը կըհեռանայ։ Սրտի ուխտը կըկատարւի, մի ամբողջ տարի է այդ ուխտը սրտի մէջ բոյն է դրած, նա քո առաջիդ է, ո՛վ սուրբ։ Ախ, կինս այժմից

էլ լաց չի լինիլ, մեծացած տղաս երազում չի տեսնիլ ծոմ ընկած խեղդւում։ Ախ, այս գիշերւայ շաղաթաթախ լոյսերը, աջեր ու խաչեր, ձեր թևն ու թիկունքը Հայոց ազգից։ խեղճ գիւղացուց չըհեռացնէք, երեք-չորս արդարի շնորհքով բոլոր ձեզ կանչողներին օգնութեան հասէք։ Ձեր օգնութիւնն ու օրհնութիւնը որ լինին, քարը հաց կըդառնայ, չբերքը կըծնի, աշխարհը պակասութիւն չի տեսնիլ, ծմակի գազանն էլ շնորհակալ կըլինի. այնքան կըհաւաքենք, որ ամենքին կըլիացնենք։ Ահա աստղը բարձրացաւ, հաւականչ է. ժամանակն է հիմա. իմ երեսս ոտքիդ տակը, սուրբ մուրազատու Դիզափայտ. փէշիցդ բռնել եմ, դու սրտինս սրտումս, մտքինս մտքումս չըթողես, խեղճ եմ, երեխաս գրկիցս չըհանես...

Նա նայում է, նայում։

Երկնքի շաղաթաթախ լոյսը չի երևում, նրա սիրտը կուչ է գալիս։ Բայց մեծ է, զօրաւոր է նրա հաւատը. նա յոյս ունի, որ երկնքի լոյսն ու օրհնութիւնը անպատճառ կըգան, կըթափւին երկրի վրայ։ Առաւօտը նա մէկ երկու անգամ էլ չոքէչոք կանէ սուրբի դռանը, երեսը կըքսէ նրա քարերին։

Եւ զւարթացաւ, հոգի առաւ գեղջուկը. սուրբը պահապան է իրան, նեղ օրի օգնական։ Նրա գլխի մօտ ընկած է մատաղացու ոչխարը, ծանր որոճում է, երբեմն հոտոտում է իր տիրոջ ճակատը, փնչացնում է. այնքան կակուղ, բարակ է նրա շունչը, կասես երեխայ է, կաթը բերանին երեխայ։ Խոնարհ, սիրուն, նախշուն է մատաղացուն, հեզ, բան հասկացող. գիւղից մինչև այստեղ եկաւ վազէվազ, մի անգամ էլ ճանապարհից չըշեղւեց։ Ինքն իր ոտքով էր մատաղ գնում, սուրբի գլխովը շուռ գալիս։ Ընդունելի մատաղ։

Գիւղացին ձեռքը տարաւ, բռնեց ոչխարի դունչը. նա չընդդիմացաւ, լիզում էր ձեռքը, և երբ տէրը բաց թողեց դունչը, ու սկսեց գլուխը շոյել, արդար խոտակերը քթածակերով շատ օդ ու կեանք ներս քաշեց ու էլի սկսեց ծամել, և նոյնպէս աստղերին նայել։

Գիշերը իր կէսից դէպի լոյսն էր գլորւում. լուռ ու

անձայն կատարւում էր նա իր խորհրդաւոր գործունէութիւնը։ Յոյսերի ու մտքերի մէջ թաղւած մարդն էլ չըդիմացաւ, սկսեց ծանր խռմփացնել...

Լ Ե Օ

ԶԱՆԳԻ ՀՐԱՒԷՐԸ

I

Արևը մարեց։ Սարի կատարից ղօղանջեց զանգը։

Ծինգ-ծը՛նգ, ծինգ-ծը՛նգ, ծինգ-ծը՛նգ... Հանդերում դադարեց գեղջուկի աշխատանքը։ Մաճկալն արձակեց դութանի եզները, հօտաղը նրանց արօտը քշեց, իսկ ինքը մեկնւեց կանաչների մէջ աստղեր համրելու։

Ջահել գեղջկուհին կապոցը ձեռքին, մանր աղջիկներ ուրախ երգերով տուն են շտապում։ Այդ երգերի մէջ հալալ վաստակ ու նամուս են գովում և մաքուր սէրը կարօտով երգում։

Տանը բեզարած աշխատաւորին հարսն է ողջունում հոգացողութեամբ։

Իսկ ծերուկ ափին ու պառաւ տատը ժամ են շտապում աղօթք անելու, Աստծուց խնդրելու, որ ամէն փորձանք, արիւն ու չարիք գիւղի վրայից միշտ հեռու լինի, որ սուրբ տաճարի զանգակատնից ղօղանջէ զանգը մըշտընջենապէս և նրա զօրեղ հնչիւնների մէջ միշտ սէր, աշխատանք ու բարի հնչէ...

Եւ ապրում էին միշտ գոհ ու անդորր սարի կատարին, արծիւների պէս, զանգի հրաւէրով՝ հանդերը գնում, տուն վերադառնում...

II

Տարիներ անցան... ապառաժների խրոխտ կատարից զօրեղ չի հնչում զանգակի ձայնը. հնութեան ժանգը մաշել է նրան ու խռպոտ ձայնը հանդերի միջում հազիւ է լսւում...

Մեռել է կեանքը, սառել ժպիտը ու լռել երգը գեղջուկի համար։ Ծանր հոգսերով մռայլւած է նա, սարի փէշերից էլ ցած չի իջնում, հանդը անմշակ, խոփը ժան-

գոտած, գուխտանը թողած, միշտ դիրքեր մտած իր սուր աչքերը ձորին է յառել: Նամուսի համար նա ուխտ է արել, հարամիների մուտքն է հսկում և ժանգոտ հրացանը ջլոտ ձեռքերում բնազդով սեղմում:

Լուռ է ամեն տեղ: Սարի փէշերումն երբեմն միայն պաշտպան տղէքն են սուլում կամացուկ, սուլոց ստանում, որ դիրքում զգաստ հսկում են նրանք:

Մի ուրիշ տեղում մէկը շշուկով անցեալն է քրքրում. հայի չար բաղդը, արիւնոտ ներկան մեր տհասութեան, կարճամտութեան, մեր անմտութեան արդիւնք համարում:

—Ո՞վ է այդ ժխտում: Ո՞վ է ուրանում այդ արատները, որ մեզ ծւատում, որ մեզ պառակտում, տկար է դարձնում վտանգի առաջ:

Այս փուչ աշխարհքում էլ օրէնք չըկայ, տիրական չըկայ, թոյլը ուժեղի կամքին է թողնւած: Մ՛ինթէ չէք տեսնում: Մեր գլխի ճարը մենք պէտք է տեսնենք, մեր յոյսը մենակ մեզ վրայ դնենք, միշտ էլ կըփրկւենք: Ասեց ու յանկարծ լռեց...

Սարի փէշերից խիճեր են թափւում, քարեր գլորվում... Որսորդը դիրքից իր սուր աչքերով այծեամ է տեսնում... ծանր ախ քաշում, որ որսը ազատ անցնում է մօտից ու պրծնում ձեռքից:

Ի՞նչու է փախչում, ո՞վ է հալածում... Ձորակի միջում, սարի ստորոտում ամբոխ է եռում: Արիւնածարաւ մարդ-բորենին է թալանի յոյսով դէպի վեր շարժւում...

Եւ արդէն մօտ է չարանի ծայրը առաջին դիրքին, երբ համազարկը ուժգին որոտաց, սարեր ու ձորեր արձագանք տւին այդ տխուր խաղին... Գմբէթի ծայրից զանգակը հնչեց սրտաշարժ ձայնով ու դիւթեց գեղջուկին: Նա ուշքի եկաւ... Գիւղը խառնշկւեց, լեռան զաւակին: Նա ուշքի եկաւ... Գիւղը խառնշկւեց, լեռան զաւակը դիրքերը վազեց... Հարամին փախաւ, գիւղը փրկւած է... Տաճարի զանգը նորից է հնչում ուժգին ու զւարթ: Նա հրաւիրում և սիրտ է տալիս, կոչնակի նման մեզ համախմբում:

Լ. Դանիէլեան

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

Սև մռայլութեան ամօթը ճակտիս, անյագ վրէժի զայրոյթը կրծքիս, սար ու ձոր անցած՝ ուխտի եմ եկել: Եւ մէկիկ-մէկիկ ես կըհամբուրեմ սուրբ շիրիմները նահատակների, թողութիւն կուզեմ նրանց սուերից, որ ազատութեան սրբազան մարտին ես անմասն եղայ, ես ապրում եմ դեռ...

Եւ լուռ գիշերւայ այս տխուր ժամին, երբ մեռելները մեզ փսփսում են և պատմում իրար իրենց վիշտ ու ցաւ, երբ մռայլութեան, ապերախտութեան խորունկ կսկիծը ցաւի երգ շինած՝ ողբ են մրմնջում շիրիմների տակ՝—գլուխս դրած հողի թմբերին՝ ես ականջ կանեմ նրանց զրոյցին, անգիր կուսանեմ նրանց շշուկներ և սրտիս վրայ բոցեղէն տառով ես կըդրօշմեմ մահու աշխարհից հնչւող ձայները, ես կըհառաչեմ, ես կըկսկծամ նրանց ցաւերով, ես լաց կըլինեմ նրանց արցունքով, ապա անզգայ, քարսիրտ աշխարհին ցաւը կըպատմեմ նահատակների...

Լուռ է ամեն ինչ, գիշերը խաւար, դաշտերը՝ մռայլ, լեռները՝ համր, վտակն՝ անձայն, քամիներն՝ զգոյշ: Խաղաղութիւնը նւիրական է—այստեղ են հանգչում նահատակները:

Շիրիմ չըկայ, թմբեր չըկան, քար չըկայ անյիշատակ ու անզարդ, հսկայական դամբարան...

Դ՛աշտ. արիւնոտ վա՛յր. գիտեմ, դու տեսար այն ահեղ մարտը, ուր մէկը տասի դէմ, նզովք կարդալով սև ճակատագրին, մէկ-մէկ փւեցին իմ եղբայրները՝ խեղճ հայրենիքի մօտիկ փրկութեան անհուն կարօտը պահած սրտերում... Ասա դաշտ, ո՞ւր, ինչպէս ընկան նահատակները, ո՞ւր են նրանց սրբազան շիրիմները...

Լուռ է սև դաշտը, գիշերը՝ խաւար, քամիներն՝ անձայն:

Մեծ լռութիւն, գուսար անհունի. դու, որ ոճիրն ու

ազնիւ գործը միևնոյն սիրով համր խաւարի բիւրածալ քօղով ընդմիշտ ծածկելու տխուր դերն ունիս, միայնութեան, խուլ անկիւնների, լուռ գիշերների մռայլ սիրահա՛ր, որ անհուն դարուց, ով գիտէ ինչու, քո անզգայ ծոցում արիւնոտ դէպքի, անյայտ ցաւերի, ծածուկ արցունքի, կորած հառաչի, անզօր զայրոյթի գաղտնիքն ունիս, — դու տեսար մի օր այս սև դաշտերում, ինչ որ աշխարհում ոչ ոք չտեսաւ։ Դու ասա գոնէ, ինչպէս ընկան նահատակները և ու՞ր են նրանց սուրբ շիրիմները…

Լուռ է ամէն ինչ, խաւարը՝ խեղդող, վտակը՝ համր։

Գարահիսար լեռ, անէծքի՛ անուն. քո կանաչ մէջքին այն սև գիշերում դու բոսորային ծիրանի առար, խոչ ու խոռոչներ և մերկ կողերդ ալ-կարմիր քօղով մէկէն պատեցիր. թէ որ խոր ցաւից, անհուն ամօթից բարդ-բարդ ամպերով չէիր պատել դէմքդ, ասա դու ինձ, լեռ, քո ո՞ր ժայռի տակ լուռ ընկաւ Պետօն, ո՞րտեղ պառկեցին իր ընկերները… Մարտիկն ու Աւոն և միւս քաջարի հարիւրեակները։ Դու միայն էիր քո ստուերի հետ լուռ յուղարկաւոր նահատակներին. ասա, ողբացի՞ր այնքան մահերը, և քո այրերի լուռ կամարները արձագանք տուի՞ն քո հսկայ սուգին…

Լուռ է սև լեռը, խաւարը՝ ճնշող, քամին՝ անշշունջ։

Մոլար Թափառիկ. խելագար քամի. դու, որ մենաւոր եղեգների հետ ողբ ես յօրինում ուշ գիշերներին և նրանց դալար մէջքերին փարած՝ մեղմ հեծեծում ես մի անյայտ ցաւից. դու որ կորած, անտէր շիրիմների գաղտնիքն ես երգում մեղմիկ շշունջով. դու, որ արիւնոտ մարտի դաշտերում ընկած քաջերին գովք ես յօրինում և անյագ լիզում վառ ծաղիկների արիւնոտ ցօղը կիզիչ արևի շողերից ծածուկ,— ասա, դու ինչո՞ւ ես այսօր լուռ, զգոյշ, ինչո՞ւ ես անձայն. այն ինչ գաղտնիք է, որ եթերային թևերիդ առած՝ լռիկ փախչում ես աշխարհէ աշխարհ։ Դու վախենո՞ւմ ես յուզել հանգիստը այս լուռ վայրերի… Չլնի՞ թէ գիտես, թէ ու՞ր են պառկել

հայ կտրիճները։ Դէ՛հ, ասա դու ինձ, ո՞ր ձորում փնտռեմ շիրիմը նրանց…

Լուռ է խենթ քամին, խաւարը՝ խեղդող, դաշտերը՝ մռայլ, լեռները՝ համր։

Բայց ահա թփերն ու ծաղիկներն իրար են գալիս, նրանց թերթիկներ մեղմ փաթաթւում են, փարում են իրար և գալարւում են քամու մեղմ շնչով, իրար մօտ գալիս ինչպէս անտէրունչ, մոռացուած որբեր, որոնք դողում են խաւարից, ցրտից,— և նրանց քնքոյշ սօսափիւնի մէջ հազիւ լսում եմ ուշիկ շշունջներ, որպէս մրմունջը վշտացած ոգու, որպէս հեծծիւնը լացող գիշերւայ…

—«Լո՛ւռ կաց, ուխտաւո՛ր, լո՛ւռ… Մի խռովիր տխուր հանգիստը ցաք ու ցրիւ ընկած մեր ոսկորների… Շիրի՞մ ես փնտրում… Գնա՛ դէպ՝ այնտեղ, ուր կեանքից խպառ յղփացած մարդը, աշխարհի ցաւին անզգայ, անփոյթ, սիրում է մեռնել ճոխ ապարանքում—այնտեղ՝ ուր մարդը դողում է մահից և բռնութեան առաջ՝ ինչպէս վատ սողուն՝ և՛ գալարւում է, և՛ հողը լիզում, ուր մի կաթ արնից սարսափի մատնուած, նա ծով արցունքով ցօղում է ձեռքը բիրտ բռնաւորի, որ թողնի նրան անարգ կեանքից յետ՝ մի անարգ մահով իր շունչը փչել…

«Շիրի՞մ ես փնտրում… Ո՜հ, զգոյշ շարժւի՛ր։ Նայի՛ր ոտքիդ տակ. տե՛ս, դու քայլում ես շիրիմների մէջ… Ժայռերի ներքև, վտակի ափին, սև լեռան կրծքին, այս թփերի մէջ, այն խոտերի տակ, անտէր փռւած են մեր ոսկորները… Քամին է շօյում մեզ իր մեղմ շնչով, ծաղիկն է լալիս մեզ ուշ գիշերին, խաւարն է ծածկում մեզ գազաններից… Թո՛ղ, թո՛ղ մեզ հանգիստ ու անցի՛ր գնա՛…

«Երբ արշալոյսի առաջին շողեր կը ոսկեզօծեն լեռան կատարը, դու ուշով նայի՛ր հսկայ ժայռերին. տե՛ս, սև են կտրել ինչպէս,—մութ գիշեր և պատառ-պատառ բաժնւել իրարից։ Այն սև օրերում նրանք զայրոյթի ցաւից ճեղքւեցին, այն մեր անէծքից նրանք սևացան մեր սրտերի պէս… Ինչե՛ր են տեսել. այն ինչ կռիւ էր… Օրերով սոված՝ մենք խոտ ծամեցինք, չար կուլի համար փամփուշտ էլ չկար (ա՛խ հայ ժողովուրդ, ա՛խ, անմիտ լալկան). Թըշ-

նամու գնդակով երկու տակ խոցուած, հրացաններիս տաք-տաք փողերով դեռ կռւում էինք, ճանապարհ հարթում նրանց կարգերում և երկու քայլում ընկնում շարքերով... Իսկ ով զէնք չունէր, ողջ թէ վիրաւոր, այն օրհասական, արիւնոտ մարտում գէթ վերջին անգամ պինդ փաթաթւում էր թշնամու վզով, կրծում կոկորդը սուր ատամներով, յոգնած, ուժասպառ գետին թաւալւում, կրկին վեր կենում, կրկին գալարւում վիրաւոր օձի պէս թշնամու մարմնով և վերջին անգամ փռւում էր գետին՝ կուրծքը պատառուած, անյոյս, անկենդան... Այսպէս ընկանք մենք, և մեր կոչերին ձայն տուող չեղաւ, մեր աղաղակներին, ոչ մի արձագանք, բացի լեռներից և սև ժայռերից... Թո՛ղ, թո՛ղ մեզ գնա՛ և մի խռովիր դու մեր հանգիստը...

«Ուխտի՞ ես եկել... ինչո՞ւ չըհասար այն ահեղ ժամին, երբ մենք ուժասպառ, յոգնած, վիրաւոր ընկնում էինք զէնքով կամ անզէն, տասնեակ գնդակից սրտերս խոցուած... Ո՞ւր էիր, երբ զէնք, զէնք աղերսեցինք, երբ որ անփամփուշտ մեր հրացաններ ժայռերի վրայ մէկ-մէկ փշրեցինք, երբ իբր վահան՝ կրծքերս ունէինք և հաստ դաշոյն՝ մեր բազուկները, երբ լալիս էինք անզօր զայրոյթից՝ մատնուած մի անարգ, սև մոռացութեան, երբ որ մեր շուրջը մարդիկ անվրդով գլուխ էին պարզում սրերի առաջ, ինչպէս ոչխարի հնազանդ հօտեր... Այն օրհասական, այն ահեղ ժամին, ասա՛, ո՞ւր էիր, ինչո՞ւ լուռ կացար... Թո՛ղ, մի՛ խռովիր դու մեր հանգիստը, անցիր ու գնա՛...

«Ի՞նչ ես փնտրում խուլ ամայութեան մէջ մռայլ դաշտերի, ուր մահն է իշխում և լուռ գերեզման, ուր ցաւն ու վշտեր մարած են ընդմիշտ մեր կեանքերի հետ, ուր քամին անգամ զգոյշ է սլանում, ուր թռչուններն էլ ահով են անցնում... Թո՛ղ մեզ, հեռացի՛ր: Գնա՛ ուխտ այնտեղ, ուր վէրքն է մխում խորունկ ցաւերով, արցունքն է հեղեղ, հառաչանքն՝ անվերջ: Թողութի՛ւն կուզես... Երբ որ կըսրբես լացող աչքերը, երբ որ կըփափես այրուած սրտերը, երբ մենակ կանես այն, ինչ մեզ հետ չարեր.—այն ժամանակ արի և ասա. «Թողութիւն տուէք»...

Ա՜հ, այն ժամանակ հազար տեղերից, հազար ձայներով հազար ձորեր և հազար քարեր քեզ մէկէն կասեն—«հազա՜ր երանի քեզ»: Եւ թէև անշիրիմ ու անյիշատակ, մենք էլի կըքնենք հանգիստ յաւիտեան»...

Եւ լուռ անցնում եմ արիւնոտ դաշտով, քայլում եմ անվերջ յառաջ ու յառաջ—այնտեղ ուր վէրքն է մխում ցաւերով, ուր արցունքն է հեղեղ, հառաչանքն՝ անվերջ և արիւնը՝ ծով...

Նահատակ ընկերներ, արդեօք դեռ երկա՞ր պիտի սպասէք իմ վերադարձին...

Ա. Ահարոնեան

ՍԵՒԱՆԱՅ ԾՈՎԱԿԸ

Ո՜վ դու ի վաղուց մոռցուած հայրենիք,
Ո՜վ դուք իմ սրտիս անմոռաց տեղիք:

Ալիշան

Հրաշագեղ լեռներն գեղեցիկ դէմքով,
Ձիւնապատ գլխներն երկինք են հասցրել,
Ձեռք ձեռքի տըւած, դալար կողերով
Մի փայլեչագեղ շրջան են կազմել...
Եւ ինչպէս անմեղ մանկիկ մի քնած՝
Հանգչում է այնտեղ մեղմ օրօրւելով,
Կարծես պլթառատ մօր խնամքին յանձնւած
Մի սիրուն մանկիկ—ծովակ անվրդով:
Նորա ջրերն են կապուտակ ու ջինջ,
Երկնային խաղաղ եթերի նման.
Նորա ալիքներ քնքոյշ—հանդարտիկ,
Հայոց ամաչկոտ նորհարսի նման:
Երկինքն ու ծովակ իրար են նայում,
Իբր հարս ու փեսայ հրճւալից աչքով,

Եւ հեռու, գաղտնի, թագստեան միջում
Իրար են գրկում կուսական սիրով։
Երկնքի ուրախ ու մռայլ տեսքին
Ծովակն հայելի է ներկայանում,
Նորա սպառնացող, հեգնող բարբառին
Ազգու արձագանք իր միջից կրկնում։
Ծովի կապուտակ ջրերից ի վեր
Բարձրանում է մի գեղեցիկ կղզի,
Եւ ուղղահայեաց նրա ժայռոտ ափեր
Իջնում են խորին յատակը ծովի։
Տխուր է կղզին, թէև գեղ շքով,
Լուռ, անձայն, թէև մարդկանց բնակութիւն.
Սիրուն է կղզին, կենդանի տեսքով,
Բայց այնտեղ մեռած է կենդանութիւն...
Կղզու կանաչուտ երեսի վերայ
Բուսնում են ծառեր՝ սաղարթով զուգւած,
Եւ նոցանից վեր սև գմբէթներով՝
Ժայռի վրայ երեք վանքեր կան հիմնւած։
Ծովակին նայող ափերի վերայ
Այրեր, անձաւներ բնութիւնից շինւած.
Այնտեղ մաշելով անձն անգթօրէն,
Ճգնում են մարդիկ աշխարհից փախած։
Թէ երկնից վերայ լուսինն ու աստղեր,
Թէ այրող արեն են թագաւորում—
Այնտեղ չեն դադրում՝ աղօթք, մաղթանքներ
Երգեր սրտառուչ երկինք են ուղղւում։
Բայց այդ երգերը չեն արտայայտում
Սէրը և գինին, փառքը աշխարհի...
Արհամարհում են այդ և քարոզում
Ունայնութիւնը ամեն վայելքի։

Գէորգ Աստւածատրեանց

ԻՏԱԼԱՑԻ ԱՄԻՉԻՍ ՀԵՂԻՆԱԿԻ

«Ս Ի Ր Տ» ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԻՑ

Թարգ. Փ. Վարդանեանի

1.

ՓՈՔՐԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

Ոչ, ես չեմ վհատիլ, չեմ ծուլանալ. բայց աւելի սիրով ուսումնարան կ'երթայի, եթէ վարժապետն ամէն օր այս օրւայ պատմածին պէս բաներ պատմէր։ Նա խոստացաւ ամէն ամիս մի մի այդպիսի բան կարդալ և մեզ տալ որ արտագրենք։ Եւ դրանք պիտի լինին որ և է տղայի ազնիւ գործի ճշմարիտ պատմութիւններ։ Այս օրւայ պատմութեան վերնագիրն է «Փոքրիկ հայրենասէրը»։

Սպանիայի Բարցէլոնա քաղաքից մի ֆրանսիական շոգենաւ մեկնեցաւ դէպի Գէնովա։ Շոգենաւում նստած էին ֆրանսիացիք, իտալացիք, սպանիացիք, զւիցերացիք և նրանց հետ կար տասնմէկ տարեկան, վատ հագնւած մի պատանի։ Նա կանգնած էր մեկուսի, մի փոքրիկ կենդանու նման, և խոժոռ նայում էր ուրիշներին։ Իրաւունք էլ ունէր այդպէս նայելու։ Երկու տարի առաջ հայրն ու մայրը, որոնք Պադուայի շրջակայքի գիւղացիք էին, վաճառել էին նրան մի դերասանական խմբի։ Նա պտտել էր դրանց հետ Ֆրանսիա, Սպանիա և սովից տանջւել էր. նրան սովորեցնում էին ֆոկուսներ անել ու ծեծում էին։ Բարցէլոնա որ հասան, նա այլևս չհամբերեց անօթութեան ու հարւածներին. իւր ողբալի դրութեան մէջ նա փախաւ տիրոջից ու դիմեց իտալական հիւպատոսի պաշտպանութեան։ Հիւպատոսը գթալով վրան, մի տոմսակ տւաւ նրան՝ ձրի նաւելու մինչև Գէնովա և մի նամակ առ Գէնովայի գանձաւորն, որպէս զի սա ծնողների մօտ հասցնէ մանկան... այն ծնողների, որոնք վաճառել էին նրան իբրև մի անասուն։ Խեղճը ցնցոտիներ ունէր հագին և

սատիկ նիհարել էր։ Շոգենաւում նրան երկրորդ դասի բաժանման մէջ տեղ տուին։ Ամենքը հետաքրքրւում էին նրանով ու հարցմունք անում, բայց նա ոչ մի պատասխան չէր տալիս. լկանքից ու զրկանքից դառնացած՝ նա կարծես բոլորին էլ ատում էր։ Բայց և այնպէս ուղևորներից երեք հոգի, նեղելով նրան, ստիպեցին որ լեզուն բանայ, և նա սպանիերէնն իտալերէնի հետ խառնելով, իւր արկածները պատմեց։ Այդ երեք ուղևորներն իտալացիք չէին, բայց հասկացան նրա պատմածը. և փոքր ինչ կարեկցելուց, փոքր ինչ էլ գինովի լինելուց, մի քանի սոլդի * տուին նրան, դրդելով որ այլ ևս բաներ պատմէ։ Այդ միջոցին սրահ մտան նոր մարդիկ, և այն երեքը պարծենալով սկսան դարձեալ դրամ շպրտել ու գոռալ.— Այս էլ վերցրու, հաւաքի՛ր։— Տղան դրամները ժողովեց, կիսաձայն ու տրտմագին շնորհակալ եղաւ, և այս անգամ իւր աչքերը կարծես փոքր ինչ մեղմացան։— Յետոյ իւր օթեակի անկողինը մտաւ ու վարագոյրը քաշելով սկսաւ իւր գործերի վրայ մտածել։ Այս փողերով կարելի է որ և է համեղ բան ուտել... Ի՜նչ լաւ կըլինէր երկու տարւայ սովալլուկ կեանքից յետոյ։ Գէնովա որ հասնենք՝ կարելի կըլինի շորեր գնել։ Ի՜նչ փառաւոր բան կըլինի երկու տարի ցնցոտիներ հագնելուց յետոյ... Կարելի է և տուն տանել փողերը. այն ժամանակ հայրն ու մայրը նրան մարդավարի կընդունեն։ Եթէ ոչ՝ կասեն.— Դարձեա՜լ դատարկ տուն եկար... Այս փողերը հօ մի ամբողջ հարստութիւն ե՜ն... Տղան երջանիկ էր և շարունակում էր մտածել. թէ ի՞նչպէս գործ պիտի գնէր այդ գանձը։

Այն ինչ երեք ճանապարհորդները՝ նստած սեղանի առջև երկրորդ դասի նոյն դահլիճում, խօսակցում էին, խմում էին, պատմում էին իրենց տեսած երկիրների մասին, և վերջապէս սկսան Իտալիայի վրայ էլ բաներ ասել։ Մինը գանգատւում էր պանդոկներից, միւսը՝ երկաթուղիներից, յետոյ սկսան Իտալիայի ամեն բաները հայհոյել։ Մէկը գոռում էր, թէ աւելի լաւ է Լապլանդիայում ճա-

* Մանր դրամ։

նապարհորդել, միւսը՝ թէ Իտալիայում ամենքն էլ խաբեբայ են, խարդախ են, երրորդը—թէ իտալացի պաշտօնատարներն անգրագէտ են։— Տգէտ ժողովուրդ է, ասեց առաջինը։— Կեղտոտ ժողովուրդ է, աւելացրեց երկրորդը։— Գողեր են, սկսեց երրորդը և դեռ խօսքը չէր աւարտել —յանկարծ սոլդիներ ու ֆրանկներ էին որ զնգզնգալով տեղացին յատակի վրայ, սեղանի վրայ և մանաւանդ նրանց գլխին։ Երեքն էլ կատաղած վեր թռան, շուրջ նայելով. մի քանի դրամ էլ եկաւ դիպաւ նրանց երեսին։—

—Յե՛տ առէք ձեր փողերը,—գոռաց տղան, դուրս նայելով վարագոյրի ետևից,—իմ հայրենիքը նախատողներից ես ողորմութիւն չեմ ընդունիլ։

2.

ՓՈՔՐԻԿ ԼՐՏԵՍԸ

Լոմբարդիայի ազատութեան պատերազմի ժամանակ 1859 թ. Սոլֆէրինոյի ճակատամարտից փոքր ինչ յետոյ, ուր ֆրանսիացիք ու իտալացիք յաղթեցին աւստրիացոց, յունիս ամսի մի գեղեցիկ առաւօտ մի փոքրիկ հեծելազօր վաշտ, ուշադրութեամբ դիտելով ամայի ճանապարհը, հանդարտաքայլ յառաջ էր գնում թշնամու դէմ։ Վաշտի առջևից լուրիկ գնում էին սպան ու յիսնապետը, շարունակ իրենց շուրջը նայելով և ամեն վայրկեան սպասելով, որ ծառերի մէջ թաքնուած թշնամու առաջապահ զինւորներին կըտեսնեն։ Վաշտը մօտեցաւ մի գեղջիկ տան, որ սօսիներով պատած էր։ Դռան մօտ նստած էր տասներկու տարեկան մի տղայ և փայտիկ էր տաշում դանակով. պատուհանի վրայ ծածանւում էր մի եռագոյն դրօշակ. ներսը ոչ ոք չկար. գեղացիները դրօշակը կախել էին աւստրիացոց երկիւղից։ Տղան վաշտը տեսնելուն պէս փայտը դէն ձգեց ու գլխարկը հանեց։ Սիրուն տղայ էր՝ արիադէմ, խոշոր ու կապոյտ աչքերով, երկայն ու շէկ մազերով,—առանց բաճկոնակի, պարզ շապկով, կուրծքը բաց։

— Ի՞նչ ես անում այստեղ,— հարցեց սպան, իւր ձին կանգնեցնելով.— Ինչո՞ւ դու էլ ծնողներիդ հետ չես փախել։

Ես ծնողներ չունիմ,— պատասխանեց տղան,— որբ տղայ եմ, մնացել եմ՝ պատերազմ տեսնելու։

— Աւստրիացիք անցա՞ն այս տեղից.

— Ոչ. ահա երեք օր է, որ չեն երևում։

Սպան փոքր ինչ մտածեց, յետոյ ձիուց վայր թռաւ, ներս մտաւ՝ տանիքի վրայ բարձրացաւ։ Տնակը ցած էր. տանիքի վրայ հեռու նայել չէր կարելի։

— Լաւ կըլինէր ծառի վրայ բարձրանալ,— ասեց սպան, վայր իջնելով։

Ամբարի առջև կանգնած էր մի մեծ սօսի, որի գագաթը ճօճւում էր կապուտակ օդի մէջ։ Սպան մէկ ծառին նայեց, մէկ զինւորին, և յետոյ յանկարծ տղային դարձաւ.

— Ա՛յ տղայ, աչքերդ սո՞ւր են.

— Ի՞մ աչքերը,— պատասխանեց տղան,— մղոնից հեռու թռչող ճնճղուկին էլ կըտեսնեմ։

— Կարո՞ղ ես այս ծառի ամենաբարձր գագաթը բարձրանալ.

— Ա՞յս ծառի. կէս րոպէում կըբարձրանամ։

— Կարող կըլինե՞ս տեսածներդ ինձ պատմել։ Արդեօք աւստրիացիք չե՞ն երևում, փոշու ամպեր, փայլատակող հրացաններ, ծուխ ու ձիեր.

— Հապա չէ՞։

— Ի՞նչ տամ քեզ դրա համար.

— Ի՞նձ, այդ բանի համա՞ր,— կրկնեց տղան։ - Ոչինչ։ Ինչե՞ր էք հնարում։ Եթէ գերմանացոց համար լինէր,— ինչ էլ տային, չէի բարձրանալ,— իսկ մերոնց համար... ես հօ լաւ լօմբարդացի եմ։

— Լաւ ասացիր, դէ ուրեմն բարձրացիր։

— Մի րոպէ ժամանակ տուէք, որ կօշիկներս հանեմ։

Կօշիկները հանեց. վարտիքի գօտին քաշեց, գլխարկը գետնով տուաւ ու գրկեց ծառի բունը։

— Սպասի՛ր,— գոչեց սպան, ահ զգալով։

Տղան իւր գեղեցիկ կապոյտ աչքերով հարցական նըշան արաւ։

— Բան չկայ, բարձրացիր... ասեց սպան. տղան կատուի պէս վեր մագլցեց։— Իսկ դուք ձեր շուրջը նայեցէք,— գոչեց սպան զինւորներին։

Մի քանի րոպէից յետոյ տղան արդէն գագաթի վրայ էր. ճիւղերը նրա ոտքերը ծածկում էին, շապիկը մինչև գօտին սպիտակ սպիտակ փայլում էր, շէկ գլուխն արևի տակ պսպղում։ Հազիւ կարելի էր նշմարել նրան — այնքան բարձր էր։

— Հեռո՛ւ նայիր,— գոչեց նրան սպան...

Աւելի լաւ տեսնելու համար՝ տղան աջ ձեռն արձակեց ու ճակատին դրաւ։

— Ի՞նչ ես տեսնում,— հարցրեց սպան։

Տղան գլուխը ցածացրեց ու կանչեց ձեռի միջով.— Երկու ձիաւոր ճանապարհի վրայ։

— Այս տեղից ո՞րչափ հեռու.

— Մի կէս մղոն։

— Շարժւո՞ւմ են.

— Ոչ, անշարժ կանգնած են։

— Է՛լ ինչ կայ. հապա նայիր դէպի աջ.

Տղան նայեց դէպի աջ։

— Գերեզմանատան մօտ, ծառերի մէջ, մի բան է փայլում... կարծեմ սուիններ են։

— Մարդիկ տեսնո՞ւմ ես.

— Ոչ. երևի թէ պահուել են արտերի մէջ։

Նոյն վայրկեանին մի գնդակ սուր շչելով՝ բարձրացաւ ու գնաց ընկաւ տան ետևը։

- Իջի՛ր, իջի՛ր,— աղաղակեց սպան,— նրանք քեզ նըշմարել են... էլ ոչինչ հարկաւոր չէ. վայր իջիր...

— Ես չեմ վախենում,— պատասխանեց տղան։

— Իջի՛ր,— կրկնեց սպան։— Է՛լ ինչ է երևում ձախ կողմից.

— Ձա՞խ կողմից.

- Այո, ձախից.

Տղան գլուխը դէպի ձախ ճկեց... Մի ուրիշ սուր շա-

չիւն ևս աւելի մօտիկից ծակեց օդը։ Տղան սոսկաց։—Ա՛յ քեզ բան, բռնւած եմ,—գոչեց նա։—Գնդակը մօտովս թռաւ։

— Իջի՛ր,—կրկնեց սպան հրամայաբար։

—Իսկոյն, իսկոյն,—պատասխանեց տղան։—Սակայն ծառն ինձ պաշտպանում է։ Ուզում էք իմանալ, թէ ձախ կողմում ինչ բան կայ.

—Այո, ձախ կողմը,—բայց իջի՛ր, իջի՛ր...

—Ձա՛խ կողմը,—կանչեց տղան, մինչև գօտին դուրս կախւելով տերևների միջից,—ա՛յն տեղ, ուր կանգնած է մատուռը. տեսնո՛ւմ եմ. կարծեմ այն տեղ...

Մի երրորդ սաստիկ շաչիւն... տղան սկսաւ ցած իջնել ու յանկարծ գլխիվայր ընկաւ։

—Անիծւի՜ն,—աղաղակեց սպան, վրայ հասնելով։

Տղան ընկաւ մէջքի վրայ և փռւեցաւ բազկատարած. կուրծքի ձախ կողմից արեան վտակ էր հոսում։ Յիսնապետը և երկու զինւոր վայր թռան ձիերից. սպան խոնարհեցաւ, շապիկը պատռեց—գնդակը մտել էր ձախ կողքը։

—Մեռա՛ծ է,—գոչեց սպան։

—Կենդանի՛ է,—պատասխանեց յիսնապետը։

—Ափսո՜ս, կորի՜ճ տղայ,—աղաղակեց սպան։ Բայց մինչ նա այս ասեց ու թաշկինակով վէրքը ճնշելու վրայ էր,—տղան աչքերը բաց արաւ, գլուխը յետ ձգեց և մեռաւ։ Սպան այլագունած մի քանի վայրկեան դիտեց տղային և նրա գլուխն արօտի վրայ հանգչեցրեց. յիսնապետն ու զինւորներն անշարժ կանգնած նայում էին. վաշտն արդէն թշնամու կողմն էր երեսն ուղղել։—Խե՜ղճ տղայ,—կրկնեց սպան տխրագին,—պատւակա՛ն, կորի՛ճ տղայ։—Սպան մօտեցաւ տնակին, հանեց պատուհանից եռագոյն դրօշակն ու փռեց մեռելի վրայ, իբրև ծածկոյթ, բաց թողնելով երեսը։ Յիսնապետը հաւաքեց և տղայի մօտ դրաւ նրա կօշիկները, գլխարկը, դանակն ու փայտիկը։ Այլ ևս մի վայրկեան լուռ կեցան։ Սպան դիմեց յիսնապետին.

—Մարմնի ետևից մարդ կուղարկենք, մեռաւ իբրև

զինւոր, զինւորներն էլ կըթաղեն։—Նա համբուրեց փոքրիկ աջը և հրաման տւաւ.—Հեծէ՛ք։

Վաշտը խաղաց դէպի յառաջ։ Մի քանի ժամից յետոյ սպանւած տղային զինւորական շքով պատւեցին։ Արեգակը մայր մտնելու վրայ էր։ Նոյն ճանապարհով, որով անցել էր առաւօտեան հեծեալ վաշտը, այժմ անց էր կենում Թեթևընթաց զօրքի գունդը, որ մի քանի օր առաջ արիաբար ողողել էր իւր արիւնով Սուրբ Մարտինոյի բլուրները։ Պատանու մահւան լուրն արդէն յայտնի էր զինւորներին։ Նրանց ճանապարհը ձգւում էր տնակի մօտով սահող մի առւակի երկայնութեամբ։ Առջևից գնացողները տեսան սօսիի արմատի մօտ փոքրիկ դիակը՝ ծածկւած եռագոյն դրօշակով, և զինւորական պատիւ տւին։ Սպաներից մէկը ծաղիկներ քաղեց առւի ափին ու սփռեց մեռելի վրայ։ Յետոյ ամեն զինւորներն էլ անց կենալիս ծաղիկ քաղելով նոյնն արին. փոքրիկը միանգամայն ծաղիկներով ծածկւեց։ Ամենքն էլ նրան ողջունում էին, բարև մնա ասում.—Ապրի՛ս, փոքրիկ լօմբարդացի։—Կեցցե՛ս, քաջ պատանեակ։—Բարև՛ մնաս, խարտեաշ մանուկ։—Ապրե՜ս։—Փա՜ռք և պարծանք։—Մի սպայ իւր քաջութեան մեդալը ձգեց մեռելի վրայ, միւսը համբուրեց նրան, և ծաղիկներն անվերջ թափւում էին նրա մերկ ոտքերի վրայ, արիւնաթաթաւ կուրծքի վրայ, շէկահեր գլխի վրայ։ Իսկ ինքը ննջում էր բարձր արօտի մէջ, դրօշակի տակ, սպիտակ ու ժպտերես, կարծես թէ ողջոյնները լսելով և երջանիկ, որ տւել էր կեանքն իւր Թանգագին Լօմբարդիայի համար...

3.

ՍԱՐԴԻՆԱՑԻ ԹՄԲԿԱՀԱՐԸ

Կուստոցցայի ճակատամարտի առաջին օրը, 24 յուլիսի 1848 թ. իտալական հեծեալ զօրքի վաշտերից մինն առաքւած էր գրաւելու բլրի վրայ ջոկ կանգնած մի

տուն։ Ճանապարհին հանդիպեցան երկու սովորական հատւածներ ու սկսան հրացան արձակել իտալացոց դէմ։ Իտալացիք, թողնելով դաշտում մի քանի սպանուած ու վիրաւոր, հազիւ կարողացան այդ մենացեալ տան մէջ պատըսպարուիլ։ Զինուորները, հապճեպ ամրապնդելով դռները, վազեցին գետնայարկի պատուհանների մօտ և սկսան ուժգին հուր տեղալ յարձակուողների վրայ։ Աւստրիացիք, կիսաշրջան կազմած, հանդարտ մօտենում էին։ Իտալական վաշտին հրամայողներն էին երկու երիտասարդ սպաներ և մի բարձրահասակ, նիհար, ալեոր ու խստաբարոյ գնդապետ։ Նա ունէր մի թմբկահար, որ տասն և չորս տարեկան թխադէմ ու սևաչեայ համբակ էր։ Ստորին յարկից գնդապետը տալիս էր կարճ ու արագ հրամաններ. նրա երկաթեայ դէմքի վրայ գրգռութեան ոչ մի նշան չէր երևում։

Փոքրիկ ու փոքր ինչ գունատ թմբկահարը, վիզն երկարացնելով ու պատին յենուելով, կանգնած էր սեղանի վրայ ու յառաջ էր նայում։ Ծխի միջից երևում էին աւստրիացոց սպիտակ համազգեստները։

Տունը գտնւում էր մի սեպ բարձունքի վրայ. վերի կողմը, տանիքի տակ, մի փոքրիկ պատուհան կար,— այն կողմից աւստրիացիք չէին կարող սպառնալ, նրանց կրակի առջև բաց էին միայն տան ճակատն ու կողմնակի որմերը։ Գնդակների տարափը սուր սուլմամբ ու ճայթմամբ թափ էր անցնում որմերից, ջախջախում էր կարասիքը, դռներն ու պատուհանները. ապակիների փշրանքը, փայտի չերտերը, ծեփն ու գաճը վայր էին թափւում։ Պատուհանների մօտ զօրականներից մերթ մինը, մերթ միւսը դիտապաստ գլորւում էր. նրանց քաշելով հեռացնում էին։ Ոմանք, վէրքերը բռնելով, դէս ու դէն էին գանդաչում. խոհանոցի մէջ ընկած էր ջարդուած գլխով մի դիակ։ Յանկարծ թշնամիների կիսաշրջանը սեղմուեց ու գրոհ տուաւ դէպի յառաջ։ Այդ րոպէին սառնարիւն գնդապետը մի անհանգիստ շարժում արաւ և մեծ մեծ քայլերով դուրս ելաւ սենեակից։ Նրան հետևեց յիսնապետը։ Երեք րոպէից յիսնապետն արագ արագ յետ եկաւ և նշան ա-

րաւ պատանուն։ Պատանին փայտէ սանդուխքից վեր վազելով մտաւ դատարկ օճոքը։ Այնտեղ գնդապետը, պատուհանի մօտ կանգնած, մատիտով բան էր գրում մի թղթի կտորի վրայ. Նրա ոտքերի տակ, յատակի վրայ, ընկած էր ջրհորի պարանը։

Գնդապետը տոմսակը ծալեց և բևեռեց պատանու վրայ իւր գորշագոյն, պաղ աչքերը, որոնք սարսափ էին ազդում զինուորներին։

— Թմբկահա՛ր,

Թմբկահարը գլխարկին դրաւ իւր աջը։

— Ե՛կ մեզ մի ծառայութիւն արա. կարո՞ղ ես.

Պատանու աչքերը ցոլացին։

— Կարող եմ, պարոն գնդապետ։

— Նայի՛ր,— (գնդապետը պատուհանից դուրս ցոյց տուաւ) տեսնո՞ւմ ես — Վիլլաֆրանկայի մօտերքում հովտի մէջ սուիններ են պսպղում.— այդ մերոնք են։ Ահա մի տոմսակ. բռնիր այս պարանի ծայրը, պատուհանից վայր սահիր, վազելով անցիր դաշտի միջով մերոնց մօտ և տուր տոմսակս առաջին քեզ պատահող սպային։ Հանիր գօտիդ ու պայուսակդ։

Թմբկահարը գօտին ու պայուսակը հանեց և տոմսակը ծոցը դրաւ։ Յիսնապետը պարանի մի ծայրը պատուհանից վայր ձգեց, իսկ միւս ծայրը երկու ձեռքով բռնած ունէր. գնդապետն օգնեց տղային դուրս ելնել պատուհանից՝ մէջքը հովտին դարձրած։

— Միտդ պահիր. բոլոր վաշտի փրկութիւնը կախուած է այժմ քո քաջութիւնից և ոտքերիդ արագութիւնից։

— Վստահ եղէք իմ վրայ, պարոն գնդապետ,— պատասխանեց պատանին, վայր իջնելով։

— Ծկուիր՝ դաշտի միջով վազելիս,— աւելացրեց գնդապետը, ինքն էլ պարանի ծայրից բռնելով։

— Միամիտ կացէք։

— Աստուած քեզ օգնակա՛ն։

Մի րոպէից տղան ոտք դրաւ գետնի վրայ, յիսնապետը պարանը քաշեց ու հեռացաւ։ Գնդապետը շտապով դուրս կախուեց պատուհանից. տղան արագ ցած էր վա-

գում դարիվայրից. գնդապետն արդէն վստահ էր թէ փախուստը յաջողեցաւ։ Բայց յանկարծ տղայի առջևից ու ետևից փոշու ամպիկներ երևցան. աւստրիացիք նշմարեցին փախչողին։ Փոշու ամպիկներն առաջ էին գալիս այն հողից, որ փորում ու բարձրացնում էին գնդակները։ Սակայն պատանին զօրելուն չափ վազում էր։ Յանկարծ նա տատանուեց ու ընկաւ։

—Սպասե՛ր,—որոտաց գնդապետը, բայց թմբկահարը նոյն վայրկեանին ոտքի ելաւ։

—Ա, միայն ընկե՛լ էր...

Գնդապետն առատ շունչ քաշեց։ Թմբկահարն իրաւ շարունակեց վազել բոլոր ուժով, բայց կաղում էր։

—Ոտքը ցաւցրած կլինի... մտածեց գնդապետը։ Դարձեալ փոշու մի քանի ամպիկներ վեր սլացան, բայց տղան արդէն հեռու էր և ապահով։ Գնդապետն ուրախացաւ, սակայն չէր դադարում սրտատրոփ նայելուց։

Այժմ ամեն բան կախուած էր ժամանակից. եթէ պատանին չըյաջողի ժամ առաջ լուր հաղորդել իւրայիններին,—նրանց, որոնք կանգնած են հովտի մէջ, եթէ անմիջապէս մի օգնութիւն չըհասնի,—բոլոր վաշտը կըկոտորուի և գնդապետը գերի կառնուի։

Տղան վազում էր մերթ արագ, մերթ քայլերը փոքրացնելով. երբեմն կաղում, գայթում, կանգ էր առնում։

—Գուցէ վիրաւորուած լինի...—մտածեց գնդապետը ցնցուելով, և հետևում էր տղայի ամեն մի շարժման, քաջալերում էր նրան ու կանչում, ասես թէ իւր ձայնը կարող լինէր նրան հասնել։ Ամեն րոպէ տագնապալից աչքերով չափում էր նա փախչող պատանու և այն սուինների միջև եղած տարածութիւնը, որոնք փայլում էին արևափայլ արտի մէջ։

Ստորին յարկի սենեակում շաչում էին գնդակները, լսւում էր սպաների հրամանը, վիրաւորների աղեկէզ հառաչանքը, տապալւող կահ կարասիքի դղրդիւնը, վայր ընկնող ծեփի շխինդը

—Յառա՛ջ, մի՛ վախենար,—կանչում էր գնդապետը

պատուհանից.—յառա՛ջ, շտապի՛ր, սլացի՛ր... Կանգ առաւ, ա՛յ նզովուած... Չէ, նորից սկսեց արշաւե՛լ...

Մի սպայ հևալով ներս թռաւ յայտնելու, թէ թշնամին, շարունակելով հուր տեղալ, պարզել է սպիտակ դրօշակը և առաջարկում է անձնատուր լինել։

—Հարկաւոր չէ նրան պատասխան տալ,—գոռաց գնդապետը, շարունակելով դիտել թմբկահարին, որ արդէն հեռու էր, բայց կարծես դժւարութեամբ էր յառաջ դիմում։

—Դէ, ժրացի՛ր, շուտ վազի՛ր,—գոչում էր գնդապետը, ատամներն ու բռունցքները սեղմելով,—մեռի՛ր, փուճ կենդանի, բայց վազի՛ր։ Ա՜հ, վատթար։ Ա՜հ, անպիտա՛ն. հանգստանալ է կամենում, նստե՛լ է։

Պատանու գլուխը դեռ երևում էր հասկերի միջից, բայց յանկարծ անհետացաւ, մի վայրկեանից կրկին երևաց ու դարձեալ կորաւ արտերի մէջ... Գնդապետըն այլ ևս չըտեսաւ նրան... Գնդապետը վայր վազեց։ Գնդակները սուլում էին։ Սենեակները լի էին կարեվէրներով. ոմանք դեռ տատանուելով կանգնած էին. որմերն ու յատակն արիւնթաթաւ էին. դրան առջև դիակներ էին կուտակուած։ Տեղակալ սպայի աջը ջարդուած էր—և ամեն բան ծխապատ։

—Արիութի՜ւն,—գոռում էր գնդապետը.—մի՛ վհատէք, ամո՛ւր կացէք։ Շուտով օգնութիւն կըհասնի՜։

Աւստրիացիք արդէն բոլորովին մօտեցել էին. արդէն կարելի էր ծխի միջով նշմարել նրանց երեսները. հրացանների որոտման հետ լսւում էր և նրանց վայրագ աղաղակը, որով պահաջում էին անձնատուր լինել, և կոտորած էին սպառնում Մի քանի ահաբեկուած զինուորներ յետ քաշուեցան պատուհաններից. յիսնապետներն յառաջ էին մղում։ Սակայն պաշտպանողների կրակը գնալով գնալով նւազում էր. ամենքի սրտին լքում էր տիրել. այլ ևս դիմադրելու հնար չկար։ Թշնամու հրացանաձգութիւնը վայրկեան դադար առաւ։

—Անձնատուր եղէք,—գոռաց մի ձայն։

—Ո՛չ,—որոտաց գնդապետը պատուհանից։

Եւ հուրն սկսեց երկուստեք նորից տեղալ և՛ս աւելի ուժգնութեամբ և սաստկութեամբ: Դարձեալ մի քանի զօրականներ վայր ընկան: Պատուհաններից շատերն անպաշտպան մնացին: Օրհասական ժամն արդէն մօտալուտ էր:

—Չե՛ն գալիս, չե՛ն գալիս,—գոչեց գնդապետը, իւր սուսերը ճօճելով, և մոլեգնաբար յառաջ անցաւ մեռնելու հաստատ որոշմամբ:

Մի յիսնապետ, վայր իջնելով օճառքից, բարձրաձայն աղաղակեց.—Գալի՛ս են:

—Գալի՛ս են,—կրկնեց գնդապետը խնդագին ցնծութեամբ:

Այդ ձայնը հնչելուն պէս՝ յիսնապետներն ու սպաները թէ առողջ, թէ վիրաւոր, միհամուռ պատուհանների վրայ ընկան և կրկին դիմադրութիւնը սաստկացաւ: Մի քանի վայրկեան անցնելուց յետոյ թշնամիների մէջ մի տեսակ անկարգութիւն ու վարանման նշան երևաց: Գնդապետը կայծակի արագութեամբ մի խմբակ կազմեց գետնայարկում. ուզում էր մեկնած սուիններով դուրս նետուել: Յետոյ վազելով բարձրացաւ: Գնաց թէ չէ, լսելի եղաւ մի հապճեպ ոտնատրոփ, մի որոտացող հուռայի ձայն և պատուհանի ծխի միջով երևաց իտալական արշաւասոյր հեծելազունդը, որ մերկ սուրերով հարուած էր տալիս թշնամու գլխին, ուսին, թիկունքին: Այժմ խմբակը, սուինները բռնած, գրոհ տուաւ դէպի դուրս: Թշնամին տատանուեց, շփոթուեց, փախուստ տուաւ. կռուի տեղը, տնակն արդէն ազատ էր: Շատ չանցած՝ երկու իտալական հետևակ վաշտեր և երկու թնդանօթ եկան բռնեցին բարձունքը:

Գնդապետն իւր ձեռքի տակ մնացած զինուորներով միացաւ իւր գումարտակին, շարունակեց այլ ևս պատերազմել և վերջին սուինամերկ կռւի մէջ գնդակի վէրք ընդունեց ձախ թևից: Օրը վերջացաւ մերայնոց յաղթանակով:

Սակայն յաջորդ օրը, երբ մարտը նորից բորբոքուեց, իտալացիք, չնայելով դիւցազնական դիմադրութեան,

ընկճուեցին թշնամու գերազանց թւից և ստիպուած եղան յուլիսի 26-ի արշալուսին տխուր-տխուր յետ նահանջել դէպի Մինչիօ:

Գնդապետը, թէպէտ և վիրաւոր, հետի էր գնում իւր յոգնած ու լուռ զինուորների հետ, և երբ արևի մայր մտնելու ժամանակ Գոյտօ հասաւ, Մինչիօի վրայ, իսկոյն սկսաւ որոնել իւր վիրաւորուած տեղակալին, որին վերցրել էր մեր շարժական հիւանդանոցն և անշուշտ այն տեղ տարած պիտի լինէր: Գնդապետին ցոյց տուին մի եկեղեցի, որ շտապով զինուորական հիւանդանոցի էր փոխարկուած: Նա գնաց այն տեղ: Եկեղեցին լի էր վիրաւորներով. ոմանք պառկած էին անկողիններում, ոմանք էլ յատակի վրայ: Երկու բժիշկ ու քանի սպասաւորներ զբաղուած էին հիւանդների շուրջը. լսւում էին սրտաճմլիկ աղաղակներ ու հառաչանքներ: Գնդապետը կանգ առաւ շեմքի մօտ և պտրում էր իւր տեղակալին: Յանկարծ մի խռպոտ ձայն նրա անունը տուաւ:

—Պարոն գնդապե՜տ

Գնդապետը շուռ եկաւ. կանչողը փոքրիկ թմբկահարն էր: Տղան պառկած էր անկողնում՝ ձգւած, դունատ ու նիհար, բայց աչքերն ադամանդի պէս վառվռուն:

—Այստե՞ղ ես դու,—հարցրեց ապշած գնդապետը: —Ապրե՜ս—պարտքդ լաւ կատարեցիր:

—Ինչ որ կարողացայ՝ այն արի,—պատասխանեց թմբկահարը:

—Վիրաւորեցի՞ն քեզ,—հարցրեց գնդապետը, ման ածելով աչքերը միւս մահիճների վրայ՝ իւր տեղակալին գտնելու համար:

—Ի՞նչ արած,—ասեց պատանին, որ իւր վիրաւորուած լինելու գիտակցութիւնից սիրտ էր առնում գնդապետի հետ խօսակցելու. այլապէս չէր համարձակւիլ բերանն անգամ բաց անել նրա առջև:—Ես վազում էի, հնար եղածին չափ կռանում էի, բայց և այնպէս նրանք իսկոյն նկատեցին ինձ: Եթէ վէրք չստանայի, քսան րոպէ առաջ տեղ կը հասնէի: Ծարաւը հոգիս հանում էր. վախե-

նում էի, թէ կուշանամ. լաց էի լինում զայրոյթից ու սարսափից. կարծում էի – դանդաղ եմ, մինչդեռ ամեն րոպէն զոհ էր տանում միւս աշխարհ։ Ես արի, ինչ որ միայն կարողացայ, և զոհ եմ... Բայց ներեցէք, պարոն գնդապետ, արիւն եմ տեսնում ձեր մատերի վրայ։

Եւ իրաւ՝ գնդապետի վէրքը վատ էր կապւած և արեան կաթիլները ձեռի վրայից հոսում էին։

—Թոյլ տւէք՝ կապն ամրացնեմ, պարոն գնդապետ։ Թոյլ տւէք ես մի վայրկեանում կամրացնեմ։

Գնդապետը ձախ ձեռը մեկնեց, իսկ աջովն օգնում էր պատանուն վէրքի կապը բաց անել. սակայն թմբկահարը բարձի վրայ յենւելուն պէս՝ երեսի գոյնը նետեց ու վայր ընկաւ։

—Հերիք է, թող—ասեց գնդապետը, նայելով վրան ու ձեռը յետ քաշելով, որ պատանին դեռ բռնած ունէր.—լաւ է՝ դու քո ցաւին դարման արա. ամենաթեթև վէրքերն անգամ, եթէ լաւ չխնամւեն, կարող են սաստիկ վատանալ։

Թմբկահարը գլուխը թօթւեց։ Գնդապետն աւելի ուշադրութեամբ նայեց վրան։

—Երևի դու շատ արիւն ես կորցրել, որ այդ աստիճան թուլացել ես։

—Շատ արի՞ւն,—ասեց տղան, ժպտալով։—Ոչ միայն արիւն... Նայեցէք... Նա մէկդի քաշեց վերմակը։

Գնդապետը զարհուրելով ցնցւեցաւ. պատանու ձախ ոտը հատւած էր. այլանդակ կոճղը փաթաթւած էր արիւնազանգ լաթերով... Անց էր կենում կարճուկ, հաստլիկ բժիշկը։

—Ա՜, պարոն գնդապետ,—ասեց նա արագ, նշանացի անելով պատանու վրայ.—այ դժբախտ պատահար. չէ՞ որ կարելի էր ոտը փրկել, եթէ դա վէրքը սաստիկ գրգռւած չլինէր. անիծած բորբոքումը. ճար չկար... հարկ եղաւ կտրել ոտը... Ո՜հ, բայց... Կորիճ տղայ է, հաւատացէք, մինչև անգամ ձայն չհանեց, մի կաթիլ արտասուք չթափեց։ Պարծենալու տեղիք ունինք. ահա այսպէս են մեր իտալական մանուկները. պատւիս վկայ, լաւ ազգ ենք։

Բժիշկը գլուխ տւաւ ու շուտով յառաջ գնաց։ Գնդապետը յօնքերը կիտեց, վերմակը տղայի վրայ ծածկեց և երկար նայեց՝ աչքերն անքթիթ վրան յառած. յետոյ հանդարտ, առանց հայեացքը շրջելու, կարծես թէ մեքենաբար՝ աջը վերցրեց ու կէպին (գլխարկը) հանեց։

—Պարոն գնդապետ,—գոչեց ապշած պատանին.—ինչ էք անում։ Պարոն գնդապետը, իմ առջևս...

—Ես գնդապետ եմ, իսկ դու հերոս,—պատասխանեց զորովանքով այդ կոշտ մարդը, որից երբէք սորադրեալ զինւորները մի բարի խօսք չէին լսած,—և խոնարհելով դէպի մանուկը, երեք անգամ համբուրեց նրան։

ՇԻԼԼԵՐԻ

ՎԻԼՀԷԼՄ ՏԷԼԼԻՑ

Թարգ. Գէորգ Բարխուդարեանի.

1.

ՖՐԻՍՀԱՐԴՏ և ԼԷՅՏՀՕԼԴ պահապան են կանգնած Գեսլէր կուսակալի գդակին, որ դրւած էր մի ցցի վրայ։

ՖՐԻՍՀԱՐԴՏ Ի զուր կանգնած ենք։ Մի մարդ չի գալիս
Գդակին գլուխ տալու։ Առաջ միշտ այստեղ
Այնպէս էր, կարծես, տօնավաճառ է.
Այժմ անապատ է դարձել ողջ դաշտը,
Ինչ որ այս յիմար գդակն այստեղ է։

ԼԷՅՏՀՕԼԴ Յետին ամբոխից միայն գալիս են
Եւ վեր են թողնում մաշած գդակները,
Իսկ նոքա, որոնք օրինաւոր են,
Լաւ են համարում դաշտը պտտել,
Քան թէ մէջքը ծռել գդակի առաջ։

ՖՐԻՍՀԱՐԴՏ Նոքա այստեղով պիտի անցկենան,
Երբ յետ են դառնում խորհրդարանից՝
Եւ յոյս ունէի, որ լաւ որս կորսամ,
Պատճառ նոցանից ոչ ոք միտք չունէր
Գդակին գլուխ տալու։ Բայց մին էլ տեսնեմ,
Եկաւ Րէսէլման քահանան—նա նոր
Յետ էր գալիս մի հիւանդի մօտից—
Եւ, սուրբ մասունքը ձեռի մէջ բռնած,
Կանգնեց ուղղակի նա փայտի առաջ—

Եւ տիրացուն էլ սկսեց զանգակ տալ։
Այստեղ բոլորն էլ ծունկ խոնարհեցրին,
Ես էլ միասին, և ողջունեցին.
Ոչ թէ գտակին, այլ մասնատուփին։—

ԼԷՅՏՀՕԼԴ Գիտե՞ս, իմ ընկեր, ինձ այնպէս է թւում,
Որ մենք կանգնած ենք այս գդակի առաջ
Ինչպէս պատժւածներ։ Մեծ նախատինք է
Ձիաւորի համար պահպան կանգնել
Դատարկ գդակի մօտ։—Այս պատճառով էլ
Բոլոր լաւ մարդիկը մեզ կարհամարհեն։
—Դատարկ գդակի առաջ վիզը ծռել.
Յիմար հրաման չէ՞, քեզ եմ հարցնում։

ՖՐԻՍՀԱՐԴՏ Թէ դատարկ գլխին գլուխ ես տալիս,
Ինչի՞ չես կարող դատարկ գդակին։

ՀԻԼԴԷԳԱՐԳ, ՄԷԽԹԻԼԴ և ԷԼՍԲԷՏ մտնում են երեխանցով և կանգնում են փայտի շուրջը։

ԼԷՅՏՀՕԼԴ Եւ դու էլ այնքան փուճ կենդանի ես,
Որ միշտ պատրաստ ես փորձանքի բերել
Կորիճ մարդկանցը։ Թող ով ուզում է
Գայ ու անցկենայ, աչքս կըխփեմ
Եւ բան չեմ տեսնի։

ՄԷԽԹԻԼԴ Տղե՛րք, խելօք կացէք։
Տեսէ՛ք, լանդֆօխտը այստեղ կախած է։

ԷԼՍԲԷՏ Երանի՜ թէ գնար, գդակն այստեղ թողնէր.
Առանց նորան էլ վատ չէինք ապրի։

ՖՐԻՍՀԱՐԴՏ (քշում է նոցա)
Կորէ՛ք, գնացէ՛ք, անիծած կանայք։
Ձեզ ո՞վ է հարցնում։ Թող ձեր մարդիկը
Գան, թէ սիրտ ունին Ֆօխտի հրամանին
Ընդդէմ կենալու։

(Կանայքը դուրս են գնում)

Մտնում է ՏԷԼԼը մի ձեռին աղեղ, միւսը տւած իւր որդուն։ Նոքա անց են կենում գդակի առաջ առանց նորա վրայ ուշադրութիւն դարձնելու և կանգնում են բեմի առաջակողմի վրայ։

ՎԱԼՏԷՐ (Ցոյց տալով Բանբերգ սարի վրայ)։
Հա՛յր, ճշմարի՞տ է,
Որ այն սարի վրայ արիւն է կաթում
Ծառերից, եթէ մի մարդ կացնով տայ։

ՏԷԼԼ Այդ ո՞վ է ասում։

ՎԱԼՏԷՐ Հովիւն է պատմում։—
Նա ասում է, թէ ծառերը այնտեղ

Ողջ կախարդւած են, և ով որ նոցա
Մի վնաս կըտայ, երբ որ կըմեռնի,
Ձեռը դուրս կըգայ գերեզմանիցը։

ՏԷԼԼ Հա՛, կախարդւած են ծառերը. սուտ չէ։
—Տեսնո՞ւմ ես սպիտակ այն գագաթները,
Որոնք համարեա երկինքն են հասնում։

ՎԱԼՏԷՐ Այդ սառուցներն են, որոնք գիշերը
Այնպէս գոռում են և ցած են գլորում
Ձիւնի զանգւածներ։

ՏԷԼԼ Այդպէս է։ Եւ այն
Ցած գլորւող ձիւնը վաղուց կըթաղէր
Իւր ծանրութեան տակ Ալտօրֆ քաղաքը,
Թէ այն անտառը կանգնած չըլինէր
Վերևը նրա՝ դէմ ամուր պատի պէս։

ՎԱԼՏԷՐ (մի փոքր մտածելուց յետոյ)։
Հա՛յր, կա՞ն երկիրներ, ուր չկան սարեր։

ՏԷԼԼ Եթէ ցած գնանք մեր բարձր սարերից,
Իջնենք ձորերը և, հետևելով
Գետերի գնացքին, միշտ առաջ գնանք,
Կըհասնենք մի մեծ ու տափարակ երկիր,
Ինչտեղ ջրերը էլ չեն փրփրում,
Գետերը հանդարտ, հանդարտ են հոսում.
Այնտեղ կարող ենք մենք ազատ նայել
Դէպի աշխարհի բոլոր կողմերը.
Մեծ դաշտերի վրայ փռած են արտերը,
Կարծես այգի է բոլոր երկիրը։

ՎԱԼՏԷՐ Հա՛յր, ինչի՞ ապա չենք իջնում շուտով
Դէպ՝ այն գեղեցիկ երկիրը, քան թէ
Ահ ու դողի մէջ տանջւում ենք այստեղ։

ՏԷԼԼ Երկիրը բարի ու գեղեցիկ է,
Ինչպէս երկինքը, բայց նոքա, որոնք
Մշակում են նրան, նոքա կարող չեն
Վայելել իրանց քրտնքի պտուղը։

ՎԱԼՏԷՐ Մի՞թէ նոքա ազատ չեն ապրում
Քեզ պէս սեփական իրան հողի վրայ։

ՏԷԼԼ Հողի տէրերն են եպիսկոպոսը
Եւ թագաւորը։

ՎԱԼՏԷՐ Բայց անտառներում
Կարո՞ղ են նոքա ազատ որս անել.

ՏԷԼԼ Անտառի որսն էլ իւր տէրը ունի։

ՎԱԼՏԷՐ Բայց ձուկ կարո՞ղ են բռնել գետումը։

ՏԷԼԼ Գետն էլ ու ծովն էլ թագաւորինն են։

ՎԱԼՏԷՐ Թագաւորն ծվ է, որ վախենում են
Բոլորն էր նրանից։
ՏԷԼԼ Դա նա է, ով որ
Պաշտպանում է և կերակրում նոցա։
ՎԱԼՏԷՐ Միթէ կարող չե՞ն նոքա քաջութեամբ
Իրանց պաշտպանել։
ՏԷԼԼ Այնտեղ հաւատալ
Կարող չեն միմեանց հարևանները։
ՎԱԼՏԷՐ Հայր, ինձ նեղ է թւում այդ արձակ երկրում,
Լաւ է կրմնամ սառուցների տակ։
ՏԷԼԼ Ի հարկէ, որդեակ, լաւ է սառուցներ
Լինին քամակում, քան թէ չար մարդիկ։
(Նոքա ուզում են անց կենալ)։
ՎԱԼՏԷՐ Հայր, տես այն գդակը, փայտի վրայ ցցւած։
ՏԷԼԼ Գդակն ինչ փոյթ է մեզ։ Ե՛կ, առաջ գնանք։
(Այն ինչ նոքա ուզում են դուրս գնալ, Ֆրիսհարդտը կտրում է
նոցա ճանապարհը և դէմ է անում նիզակը)։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Կայսրի անունով, կացէք, չըշարժւէք։
ՏԷԼԼ (բռնում է նիզակը)
Ի՞նչ ես ուզում, ինձ ինչի՞ ես բռնում։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Դու անարգեցիր Ֆօխտի հրամանը,
Պիտի գաս մեզ հետ։
ԼԷՅՏՀՕԼԴ Դու այս գդակին
Գլուխ չըտւիր։
ՏԷԼԼ Եղբայր, թող գընամ։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Գնա կորիր բանտը։
ՎԱԼՏԷՐ Հօրս բանտ դնել։
Օգնութի՜ւն հասէք։
(Ձայն է տալիս բեմի կողմը)։
Ո՛վ բարի մարդիկ,
Եկէք, օգնեցէք, հօրս տանում են։
ՌԷՍԷԼՄԱՆ քահանան, ՊԷՏԷՐՄԱՆ ոխրացուն և երեք էլ ուրիշ
մարդ գալիս են)։
ՏԻՐԱՑՈՒՆ Ի՞նչ կայ։
ՌԷՍԷԼՄԱՆ Ինչի՞ ես այդ մարդուն բռնում։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Սա թշնամի է կայսրին, դաւաճան։
ՏԷԼԼ (պինդ բռնում է նորան)։
Ե՞ս դաւաճան—ե՞ս։
ՌԷՍԷԼՄԱՆ Սխալւում ես, եղբայր։
Սա Վիլհէլմ Տէլլն է, ազնիւ մարդ է և
Լաւ քաղաքացի։

ՎԱԼՏԷՐ (Տեսնում է Վալտէր Ֆիւրստին և վազում է նորա
մօտ)։
Մեծ հայր, ո՜հ, օգնի՜ր,
Հօրս տանում են։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Դէհ, ի՞նչ ես կանգնել։
Շո՜ւտ, կորի՜ր բանտը։
ՎԱԼՏԷՐ ՖԻՒՐՍՏ (շտապով առաջ գալով)։
Համբերեցէք, ես
Երաշխաւոր եմ։—Տէլլ, Աստւած սիրես,
Ի՞նչ է պատահել։
ՄԷԼԽԹԱԼ և ՇՏԱՈՒՖԱԽԷՐ գալիս են։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Սա կուսակալի
Իշխանութիւնը անարգում է և
Չի ճանաչում։
ՇՏԱՈՒՖԱԽԷՐ Ի՞նչ, Տէ՞լլը այդ անէ։
ՄԷԼԽԹԱԼ Սո՜ւտ ես ասում, լի՜րբ։
ԼԷՅՏՀՕԼԴ Հա՛, նա գդակին
Չուզից գլուխ տալ։
ՎԱԼՏԷՐ ՖԻՒՐՍՏ Եւ դորա համար
Պիտի բանտը գնա՞յ։ Բարեկամ, խնդրեմ
Բաց թողէք դրան։ Ես երաշխաւոր եմ։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Քո գլխի համար երաշխաւոր կաց.
Մենք կատարում ենք, ինչ որ մեր պարտքն է։—
Դէհ, շո՛ւտ, առաջ գնա։
ՄԷԼԽԹԱԼ (գիւղացիներին)։
Ծնտանելի է։
Մի՞թէ համբերենք, որ նըրան տանեն
Մեր աչքի առաջ։
ՏԻՐԱՑՈՒՆ Մենք շատ ենք թւով։
Չէ, բարեկամներ, թոյլ չըտանք տանել։
Մենք պարտական ենք միմեանց պաշտպանել։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Ո՞վ է դէմ կենում ֆօխտի հրամանին։
ԷԼԻ ԵՐԵՔ ԳԻՒՂԱՑԻ (գալիս են վազելով։)
Մենք կօգնենք. ինչ կայ։ Զարդեցէք դոցա։
(Հիլդեգարդ, Մէխթիլդ և Էլսբէտ յետ են դառնում)։
ՏԷԼԼ Գնացէք. սիրելիք. ինքս ինձ կօգնեմ։
Մի՞թէ կարծում էք, թէ նիզակներից
Ես կըվախենամ, եթէ ուզենամ
Ոյժս գործ դնել։
ՄԷԼԽԹԱԼ Դէհ, համարձակւիր
Տանել նրան մեզանից։
ՎԱԼՏԷՐ ՖԻՒՐՍՏ և ՇՏԱՈՒՖԱԽԷՐ Հանգարտ, մի՛ շփոթւիք

ՖՐԻՍՀԱՐԴՏ (աղաղակում է)։
Ապստամբութիւն։
ԿԱՆԱՅՔ Ֆօխտը գալիս է։
ՖՐԻՍՀՍՐԴՏ (բարձրացնում է ձայնը)։
Ապստամբութիւն, շփոթ, խռովութիւն։
ՇՏԱՈՒՖԱԽԷՐ Գոռա՛, մինչև որ ճաքես, անպիտան։
ՌԷՍԷԼՄԱՆ և ՄԷԼԽԹԱԼ Կլռե՞ս, թէ չէ։
ՖՐԻՍՀԱՐԴՏ (կանչում է աւելի բարձր ձայնով)։
Եկէք, օգնութիւն
Հասէք օրէնքի սպասաւորներին։
ՎԱԼՏԷՐ ՖԻՒՐՍՏ Ֆօխտը գալիս է։ Աւա՜ղ, ի՞նչ պիտի
Հիմա մենք անենք։
ԳԷՍԼԷՐ ձիով, ձեռի վրայ բազէն նստած, ՌՈՒԴՕԼՖ ԴԷՌ ՀԱՐ-
ՐԱՍ, ԲԷՐԹԱ և ՌՈՒԴԷՆՑ
Մեծ բազմութիւն զինուորների, որոնք իրենց նիզակներով մի շըր-
ջան են կազմում բոլոր տեսարանի շուրջ։
ՌՈՒԴՕԼՖ ԴԷՌ ՀԱՐՐԱՍ Ճանապարհ տուէք,
Ճանապա՛րհ ֆօխտին։
ԳԷՍԼԷՐ Քշեցէք, գնանք։
Ի՞նչ են հաւաքւում այստեղ։ Այն ո՞վ էր
Օգնութիւն կանչում։
(Ընդհանուր լռութիւն)։
Ո՞վ էր, ասացէք։
(Ֆրիսհարդտին)
Այստեղ ե՛կ, ո՞վ ես և ինչի՞ ես դու
Այս մարդուն բռնում։
(Նա տալիս է բազէն ծառաներից մինին)։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Ողորմած տէր իմ,
Ես քո ծառան եմ. պահապան կանգնած
Այս տեղ գդակի մօտ։ Այս մարդը չուզեց
Պատիւ տալ գդակին ու քո հրամանին,
Համաձայն սորան՝ ուզում էի, որ
Կալանաւորեմ. բայց ժողովուրդը
Բռնի խլում է սորան մեր ձեռից։
ԳԷՍԼԷՐ Այսպէս ուրեմն արհամարհում ես,
Տէլլ, դու քո կայսրին և ինձ, որ այստեղ
Իշխում եմ նրա տեղ, որ դու չես ուզում
Պատիւ տալ գդակին, որ կախ եմ տուել
Հնազանդութիւնը փորձելու համար։
Դրանով ցոյց տուիր դու ինձ չար միտքդ։
ՏԷԼԼ Ներէ՛ր ինձ, իմ տէր։ Ակամայ միայն
Պատահեցաւ այդ, ոչ թէ դէպի քեզ

Արհամարհանքից։ Էլ Տէլլ չէր լինիլ
Անուանս, եթէ խոհեմ լինէի։
Խնդրում եմ ներել։ Ես խոստանում եմ,
Որ ուրիշ անգամ էլ չի պատահիլ։
ԳԷՍԼԷՐ (կարճ լռութիւնից յետոյ)։
Դու մեծ վարպետ ես նետ ձգելում, Տէլլ.
Ասում են քեզ պէս երկրորդը չըկայ։
ՎԱԼՏԷՐ ՏԷԼԼ Այդ ճշմարիտ է, պարոն. իմ հայրը
Հարիւր քայլի վրայ խփում է խնձորին։
ԳԷՍԼԷՐ Սա քո տղա՞ն է, Տէլլ։
ՏԷԼԼ Այո՛, իմ պարոն։
ԳԷՍԼԷՐ Շա՞տ որդիք ունիս։
ՏԷԼԼ Երկու տղայ, պարո՛ն։
ԳԷՍԼԷՐ Որի՞ն աւելի սրտով սիրում ես։
ՏԷԼԼ Նոքա հաւասար սիրելի են ինձ։
ԳԷՍԼԷՐ Տէլլ, որովհետև հարիւր քայլի վրայ
Խփում ես խնձորին, ուրեմն իմ առաջ
Այստեղ ցոյց կըտաս քո մեծ արհեստը։—
Վէր առ աղեղը։ —Արդէն ձեռիդ է։—
Եւ շուտ պատրաստիր քո տղայի գլխին
Խփել խնձորին—բայց խորհուրդ կըտամ,
Տես, լա՛ւ նշան դիր, որ մի անգամով
Խփես խնձորին։ Պատճառ, թէ սխալես,
Մահով կըպատժեմ։
ՏԷԼԼ Ի՛նչ սարսափելի
Միտք է այդ, տէր իմ։—Ես որդուս գլխին—
Չէ՛, չէ՛, իմ պարոն, այդ քո միտքը չէ—
Աստուած ո՛չ անէ։—Դու այդպէս մի բան
Կարող չես երբէք պահանջել հօրից։
ԳԷՍԼԷՐ Դու որդուդ գլխին կըխփես խնձորին։—
Ես այդ կամենում ու պահանջում եմ։
ՏԷԼԼ Ես իմ սիրելի զաւակի գլուխը
Պիտի աղեղիս նպատակ դնեմ.
Լաւ է կըմեռնեմ։
ԳԷՍԼԷՐ Հա՛, կամ կըձգես,
Կամ թէ որդուդ հետ միասին կըմեռնես։
ՏԷԼԼ Ես պիտի սպանեմ սեփական որդուս։
Ո՛հ, պարոն, դու դեռ զաւակի տէր չես—
Չըգիտես, ի՞նչն է շարժում հօր սիրտը։
ԳԷՍԼԷՐ Է՛յ, Տէլլ, ի՞նչ յանկարծ խելքդ գլուխդ եկաւ,
Ինձ ասել են, որ դու երազող,
Եւ կեանք ես վարում առանձին տեսակ։

Դու շատ սիրում ես անսովոր բանը,
Այդ պատճառով էլ այժմ քեզ համար։
Ընտրեցի մի նոր և համարձակ փորձ
Ուրիշը քո տեղ շատ կըմտածէր.
Բայց դու, գիտեմ, որ խփած աչքերով
Կընդունես փորձը։

ԲԷՐԹԱ Ո՛հ, պարոն ասպետ,
Կատակ մի՛ անէք այս խեղճ մարդկանց հետ։
Տեսէք, թէ ինչպէս գունաթափուած են
Եւ դողդողում են։—Նոքա սովոր չեն
Երբէք ձեր բերնից կատակներ լսել։

ԳԷՍԼԷՐ Ո՞վ ասեց ձեզ, թէ կատակ եմ անում։
(Ձեռը մեկնում է դէպի ծառի ճիւղը, որ կախուած է նըրա վրայ)։
Ահա խնձորը։ Ճանապարհ բացէք։—
Թող կանգնի, ինչտեղ որ հարկաւոր է.
Ութսուն քայլ հեռու—բայց ոչ աւելի
Եւ ոչ էլ պակաս։—Նա պարծենում էր
Հարիւր քայլի վրայ խփել մի մարդու։—
Այժմ, նետաձիգ, ահա նպատակ.
Խփի՛ր, չըսխալուես։

ՌՈՒԴՕԼՖ ԴԷՌ ՀԱՐՐԱՍ Տէ՜ր Աստուած, բանը
Սաստկանում է։—Տո՛ւր, ա՜յ տղայ, ծունկ չոքիր,
Պաղատի՛ր Ֆօխտին քո կեանքի համար։

ՎԱԼՏԷՐ ՖԻՒՐՍՏ (Մի կողմը Մելխթալին, որ հազիւ զսպում է իւր անհամբերութիւնը)։
Ո՛հ, զսպիր սիրտդ, ես քեզ խնդրում եմ։

ԲԷՐԹԱ Հերիք է, պարո՛ն։ Անօգուտ գործ է
Մի հօր երկիւղով այդպէս զւարճանալ։
Եթէ այս մարդը իւր թեթև սխալով
Արժանի է, որ մահապարտ լինի,
Վկա՛յ է Աստուած, որ նա տասն անգամ
Արդէն զգաց այստեղ մահու տանջանքը։
Թողէք անվնաս գնայ իւր խրճիթը։
Նա ձեզ ճանաչեց և չի մոռանալ
Այս ժամը, ինչքան որ կենդանի է։

ԳԷՍԼԷՐ Ճանապարհ բացէք։—Տո՛ւր, ի՞նչ ես սպասում
Կեանքդ իմ ձեռին է, ուզեմ կըսպանեմ։
Բայց տես, թէ ինչքան ողորմած եմ ես,
Որ դնում եմ քո վարպետ ձեռի մէջ
Ճակատագիրըդ։ Նա դանդաղ անել
Կարող չէ երբէք սաստիկ վճռի դէմ,
Որին չինում են տէր իւր բաղդի վրայ։

Դու պարծենում ես քո հաստատ աչքով։
Դէհ. աղեղնաձիգ, ցոյց տուր շնորհքդ.
Արժանաւոր է քո նպատակը,
Բայց մեծ է նոյնպէս և մրցանակը։
Սև կէտին խփել մի շրջանի մէջ՝
Այդ հեշտ կարող են և ուրիշները,
Նա է իսկ վարպետ, ով որ ամեն տեղ
Հաւատարի է իւր արհեստի վրայ,
Աչքը չի մթնի, սիրտը չի դողալ։

ՎԱԼՏԷՐ ՖԻՒՐՍՏ (ընկնում է նորա առաջ)։
Ո՛վ տէր կուսակալ, մենք ճանաչում ենք
Քո մեծութիւնը։ Ես ողորմութիւն
Խնդրում եմ քեզնից իրաւունքի տեղ։
Վե՛ր առ ստացուածքիս կէսը, բոլորը,
Միայն այդ տանջանքը մի՛ տար խեղճ հօրը։

ՎԱԼՏԷՐ ՏԷԼԼ Մեծ հա՛յր, մի չոքիր նենգ մարդու առաջ։
Ասացէք, ի՞նչ տեղ պիտի ես կանգնեմ։
Ես չեմ վախենում։ Հայրս թռչունին
Խփում է օդում. նա սխալ չի նետիլ
Որդու սրտի դէմ։

ՇՏԱՈՒՖԱԽԷՐ Պարո՛ն կուսակալ,
Մի՞թէ չի շարժում քեզ երեխայի
Անմեղութիւնը։

ՌԷՍԷԼՄԱՆ. Ո՛հ, մտածի՛ր, որ
Աստուած կայ վերև, որին դու պիտի
Հաշիւ տաս երբեմն։

ԳԷՍԼԷՐ (ցոյց տալով տղայի վրայ)։
Կապեցէք նրան
Այն ծառի վրայ։

ՎԱԼՏԷՐ ՏԷԼԼ Ի՞նձ պիտի կապէք։
Չէ՛, ես չեմ ուզում։ Հանդարտ կըկանգնեմ,
Ինչպէս մի գառը և շունչ չեմ քաշի.
Բայց թէ կըկապէք, ո՛հ, ես կըկռուեմ
Իմ կապերի դէմ։

ՌՈՒԴՈԼՖ ԴԷՌ ՀԱՐՐԱՍ Աչքերդ միայն
Թող կապենք, ա՜յ տղայ։

ՎԱԼՏԷՐ ՏԷԼԼ Աչքե՞րս, ինչի՞։
Մի՞թէ կարծում էք, թէ վախենում եմ
Ես իմ հօր նետից։ Չէ՛, անթա՛րթ աչքով
Կսպասեմ նորան։—Տո՛ւր, հա՛յր, ցոյց տուր, որ
Աղեղնաձիգ ես։ Նա չի հաւատում
Եւ ուզում է որ ոչնչացնէ մեզ։—

Հա՛յր, ամաչեցրո՛ւ այս բռնակալին,
Զգի՛ր ու դիպցրո՛ւ։
(Նա գնում է և կանգնում է կակղի ծառի մոտ, մի խնձոր դնում են նորա գլխին)։

ՄԷԼԽԹԱԼ (գիւղացիներին)։
Այս ի՞նչ է։ Մի՞թէ
Մեր աչքի առաջ պիտի կատարուի
Այս սարսափելի գազանութիւնը։
Էլ ինչի՞ համար էր, որ երդուեցինք։

ՇՏԱՈՒՖԱԽԷՐ Ոչինչ կարող չենք։ Մենք զէնքեր չունինք։
Տեսնո՞ւմ ես մեր շուրջ այն նիզակները։

ՄԷԼԽԹԱԼ Երանի իսկոյն վերջացրել էինք։
Թո՛ղ Աստուած ների, ով խորհուրդ տուեց
Ուշացնել բանը;

ԳԷՍԼԷՐ (Տէլլին)։
Շո՛ւտ արա, սկսի՛ր։
Մարդ զուր տեղ պիտի զէնք չըման ածէ,
Վտանգալի է, և յետ կըթուչի
Նետը տիրոջ վրայ։ Այդ իրաւունքը,
Որ շինականը ինքնակամ իրան
Սեփականում է, վիրաւորում է
Երկրի տիրոջը։ Զըհամարձակուի
Ոչ ոք զէնք կրել, բացի նորանից,
Ով որ իշխում է։ Բայց թէ սիրում էք
Կրել ձեզ վրայ աղեղ ու նետեր,
Լա՛ւ, ես էլ կըտամ ձեզ նպատակներ։

ՏԷԼԼ (Լարում է աղեղը և նետը դնում նորա վրայ)։
Ճանապա՛րհ, հեռո՛ւ։

ՇՏԱՈՒՖԱԽԷՐ Տէլլ, ի՞նչ ես անում,
Միթէ ուզում ես—չէ՛, չէ՛, ո՛չ երբէք։
Դու բոլոր մարմնով սաստիկ դողում ես։

ՏԷԼԼ (Վէր է թողնում աղեղը)։
Աչքս մթնում է։

ԿԱՆԱՅՔ Ողորմած Աստուած։

ՏԷԼԼ (Կուսակալին)
Տէ՛ր, ես չեմ կարող։ Ահա՛ իմ սիրտը.
(պատառում է իր կրծկալը)։
Հրամայի՛ր, թող գան և ինձ սպանեն։

ԳԷՍԼԷՐ Կեանքդ չեմ ուզում, այլ քո արհեստը։
—Տէլլ, դու ամեն բան կարող ես անել,
Գիտեմ դժուար չէ ոչինչ քեզ համար.
Լաւ բանեցնում ես ղեկն էլ, աղեղն էլ.

Քեզ չի վախեցնում ոչինչ փոթորիկ,
Երբ հարկաւոր է մինին ազատել։
Այժմ, ով ազատող, օգնիր ինքդ քեզ—
Դու բոլորին էլ քեզ հետ կազատես։

Տէլլը կանգնած է սաստիկ պատերազմի մէջ ինքն իրան հետ, նորա ձեռները անդադար դողդողում ու ցնցւում են և նորա բորբոքւող աչքերը ուղղած են երբեմն կուսակալի վրայ և երբեմն դէպի երկինք։ Յանկարծ ձեռը տանում է դէպի կապարճը, հանում է մի երկրորդ նետ և ցցում է իւր գօտու մէջ։ Կուսակալը նկատում է նորա բոլոր շարժողութիւնները)։

ՎԱԼՏԷՐ ՏԷԼԼ (Կակղի ծառի տակից)։
Հա՛յր, ձգի՛ր, ես չեմ վախենում։

ՏԷԼԼ Այո՛։
(Շուտ պատրաստւում է և ուղղում է աղեղը)։

ՐՈՒԴԷՆՑ (Որ բոլոր ժամանակ կանգնած էր ամենամեծ ակընկալութեան մէջ և հազիւ կարողանում էր զսպել ինքն իրան, առաջ է գալիս)։
Պարո՛ն կուսակալ, հերիք է արդէն.
Վերջացրէք գնայ։—Այդ մի փորձ էր միայն։—
Դուք հասաք արդէն ձեր նպատակին։—
Անչափ խստութիւնն անօգուտ բան է.
Աղեղը, սաստիկ լարած, ճաքում է։

ԳԷՍԼԷՐ Լռեցէք, մինչև ձեզ բան կըհարցնեմ։

ՐՈՒԴԷՆՑ Չէ՛, ես կխօսեմ, իրաւունք ունիմ։
Կայսրի պատիւը թանգ է ինձ համար.
Սակայն այս տեսակ կառավարութիւն
Կարող է ծնել միայն ատելութիւն։
Կայսրի կամքը չէ, ինչ դուք անում էք։—
Ես կըհաստատեմ։—Այդ հալածանքին
Արժան չէ երբէք իմ ժողովուրդը,
Եւ ձեզ տուած չէ այդքան իրաւունք։

ԳԷՍԼԷՐ Համարձակւո՞ւմ էք։

ՐՈՒԴԷՆՑ Ես լռում էի,
Տեսնելով այնքան անարդար գործեր.
Աչքերս խփում, վրդովւած սիրտս
Ճնշում կուրծքիս մէջ, բայց և աւելի
Երկար լուռ կենալ կընշանակէր
Դաւաճանութիւն թէ հայրենիքիս
Եւ թէ կայսրի դէմ։

ԲԷՐԹԱ (Ընկնում է նորա և կուսակալի մէջ)։
Ո՛հ, Տէ՛ր Աստուած իմ,
Աւելի սաստիկ գազազում ես դու

Այս կատաղածին։
ՌՈՒԴԷՆՑ Ազգս թողեցի,
Հրաժարուեցի իմ ազգականներից,
Քանդեցի բնութեան բոլոր կապերը,
Ձեզ հետ միացայ, կարծում էի, թէ
Կըբաղդաւորեմ իմ ազգը, եթէ
Հաստատեմ կայսրի իշխանութիւնը։—
Այժմ իմ աչքերից վեր ընկաւ կապը։—
Ես սարսափելով տեսնում իմ անձս
Անդունդի վրայ։—Դուք մոլորեցրիք
Ազատ կարծիքս և իմ անխարդախ
Սիրտը խաբեցիք։—Փոքր մնաց, որ
Ինքս իմ ձեռով կործանեմ ազգս։
ԳԷՍԼԷՐ Յանդուգն, այդպէս ես խօսում տիրոջդ հետ։
ՌՈՒԴԷՆՑ Կայսրն է իմ տէրը, ոչ թէ դու։—Ես էլ
Ազատ եմ քեզ պէս և ասպետական
Առաքինութեամբ հաւասար եմ քեզ։
Եթէ դու այստեղ կանգնած չըլինէիր
Կայսրի փոխանակ, որին պատւում եմ,
Թէև նրան այստեղ խայտառակում են,
Ես կըձգէի քեզ իմ ձեռնոցը,
Որ՝ ինչպէս ասպետ՝ տաս ինձ պատասխան։
—Հա՛, կանչի՛ր, թող գան քո զինւորները—
Ես անպաշտպան չեմ, ինչպէս որ սոքա—
(Ցոյց տալով ժողովրդի վրայ)։
Ահա՛ իմ սուրը, և ով մօտ կըգայ—
ՇՏԱՈՒՖԱԽԷՐ (ձայն է տալիս)։
Խնձորը ընկաւ։
(Այն ինչ ամենքը դարձել էին այս կողմը և Բերթան ընկել էր
Ռուդէնցի և կուսակալի մէջ, Տէլլը արձակել էր նետը)։
ՌԷՍԷԼՄԱՆ Տղան կենդանի է։
ՇԱՏ ՁԱՅՆԵՐ Խնձորին կպաւ։
(Վալտէր Ֆիւրստը տատանում է և փոքր է մնում որ վեր ընկնի։ Բերթան բռնում է նորան)։
ԳԷՍԼԷՐ (զարմացած)։
Ի՞նչ։ Մի՞թէ ձգեց
Այն խելագարը։
ԲԵՐԹԱ Տղան կենդանի է,
Ուշքի եկ, իմ հայր։
ՎԱԼՏԷՐ ՏԷԼԼ (Թռչկոտելով գալիս է խնձորը ձեռին)։
Հա՛յր, ա՛յ խնձորը։—
Գիտէի, որ դու փաս չես տալ որդուդ։

ՏԷԼԼ (Կանգնած է դէպի առաջ թեքուած մարմնով, կարծես թէ ուզում է հետևել նետին—աղեղը վեր է ընկնում նորա ձեռից—երբ որ տեսնում է, որ տղան գալիս է, առաջ է վազում տարածած ձեռներով, վեր է թռչնում և սաստիկ ջերմեռանդութեամբ սխմում է նորան իւր կուրծքին. այս դրութեան մէջ վեր է ընկնում ուշաթափ։ Բոլորը կանգնած են յուզուած)
ԲԷՐԹԱ Ո՛հ, բարի Աստուած։
ՎԱԼՏԷՐ ՖԻՒՐՍՏ (հօրը և որդուն)։
Որդի՛ք, իմ որդիք։
ՇՏԱՈՒՖԱԽԷՐ Փա՛ռք քեզ, Տէր Աստուած։
ԼԷՅՏՀՕԼԴ Ա՛յ հարուած, որ և
Ապագայումը կըյիշեն մարդիկ.
ՌՈՒԴՕԼՖ ԴԷՐ ՀԱՐՐԱՍ Անմոռաց կըմնայ Տէլլի անունը,
Քանի որ հաստատ են այս սարերը։
(Տալիս է խնձորը կուսակալին)։
ԳԷՍԼԷՐ Իրաւ խնձորը մէջ տեղն է ծակած,
Յաջողակ հարուած, ես ու իմ Աստուած։
ՌԷՍԷԼՄԱՆ Հարուածը լաւն է, բայց վա՛յ ստիպողին,
Որ նա նրանով փորձեց Ստեղծողին։
ՇՏԱՈՒՖԱԽԷՐ Տէլլ, ուշքի եկ, Տէլլ, վե՛ր կաց գետնիցը։
Դու քեզ թափեցիր, ինչպէս քաջ տղամարդ,
Եւ ազատ գնալ կարող ես քո տուն։
ՌԷՍԷԼՄԱՆ Եկէք, գնանք, տանենք որդուն իւր մօր մօտ։
(Նոքա ուզում են նորան տանել)։
ԳԷՍԼԷՐ Տէլլ, լսի՛ր։
ՏԷԼԼ (յետ է գալիս)
Ի՞նչ ես հրամայում, իմ տէր։
ԳԷՍԼԷՐ Դու մի երկրորդ նետ պահեցիր մօտդ։—
Հա՛ հա՛, ես տեսայ։—Այդ ի՞նչ մտքով էր։
ՏԷԼԼ (շփոթուած)
Տէր, այդպէս է մեր սովորութիւնը։
ԳԷՍԼԷՐ Ոչ, Տէլլ, հաւան չեմ քո պատասխանին.
Երևի այդ մի ուրիշ մտքով էր։
Ճշմարիտ խօսիր, Տէլլ, մի՛ վախենար,
Ինչ կուզէ լինի, կեանքդ ապահով է։
Ինչի՞ համար էր այն երկրորդ նետը։
ՏԷԼԼ Բարի՛ է, իմ տէր, որովհետև դու
Ապահովում ես իմ կեանքը—ես քեզ
Կասեմ կատարեալ ճշմարտութիւնը։
(Նա հանում է գօտիկից նետը և զարհուրելի հայեացքով նայում է կուսակալի վրայ)։
Այս նետով ես քեզ—կըսպանէի,

Եթէ սիրելի որդուս խփէի,
Եւ քեզ խփելիս—ձեռս չէր դողալ։
ԳԷՍԼԷՐ Լաւ եսասում, Տէլլ, կեանքդ ապահով է.
Ես քեզ խօսք տւի և կըկատարեմ—
Բայց որովհետև չար միտքդ իմացայ,
Ես կըհրամայեմ տանել ու պահել
Քեզ մի այնպէս տեղ, ուր ոչ արեգակ
Եւ ոչ էլ լուսին չես տեսնիլ երբէք,
Որ քո նետերից ապահով լինիմ։
Բռնեցէք դորան, կապեցէք։
(Տէլլին կապում են)։
ՇՏԱՈՒՖԱԽԷՐ Պարոն,
Այդպէ՞ս ես վարւում դու այս մարդու հետ,
Որին ինքն Աստուած յայտնի պաշտպանեց։
ԳԷՍԼԷՐ Տեսնենք միւս անգամ կըփրկէ՞ արդեօք։
—Տարէք իմ նաւը, ես էլ գալիս եմ.
Իսկոյն ես ինքս կըտանեմ Կիւսնախտ։
ՐԷՍԷԼՄԱՆ Չես համարձակւի, ո՛չ դու, ո՛չ կայսրը.
Այդ հակառակ է մեր ազատութեան
Հրովարտակներին։
ԳԷՍԼԷՐ Ի՞նչտեղ են նոքա։
Կայսրը հաստատե՞ց։ Նա չի հաստատել։—
Այդ շնորհը պիտի առաջ վաստակէք
Ձեր հնազանդութեամբ։ Դաւաճաններ էք
Ողջդ էլ կայսրի դէմ և պատրաստում էք
Ապստամբութիւն։ Ես ճանաչում եմ
Ձեզ—ինձ յայտնի են ձեր խորհուրդները։—
Այժմ ձեր միջից տանում եմ սորան,
Սակայն ամենքդ էլ դուք մասնակից էք
Սորա յանցանքին։ Ով որ խելք ունի,
Թող լուռ կենայ և միշտ հնազանդ լինի։
(Նա հեռանում է, Բէրթան, Րուդէնցը և ծառաները հետեւում են
նրան։ Ֆրիսհարդտ և Լէյտհօլդ մնում են)։
ՎԱԼՏԷՐ ՖԻՒՐՍՏ Հիմա տեսնում եմ, որ նա վճռել է
Ինձ տուն ու տեղով ոչնչացնելու։
ՇՏԱՈՒՖԱԽԷՐ (Տէլլին)։
Ո՛հ, ինչի՞ էիր մին էլ գրգռում
Այն կատաղածին։
ՏԷԼԼ Կարո՞ղ էր արդեօք
Իմ ցաւի տէրը զսպել իւր անձը։
ՇՏԱՈՒՖԱԽԷՐ Ո՛հ, այժմ ամեն բան կորաւ ու գնաց.
Այժմ բոլորս էլ քեզ հետ կապուած ենք։

ԳԻՒՂԱՑԻՔ (պատում են նորան)։
Քեզ հետ տանում ես մեր վերջին յոյսը։
ԼԷՅՏՀՕԼԴ (մօտենում է նրան)
Տէլլ, ցաւում եմ—բայց պիտի հնազանդւեմ
ՏԷԼԼ Մնա՛ք բարով։
ՎԱԼՏԷՐ ՏԷԼԼ Ո՛հ, հա՛յր, հա՛յր, սիրելի հա՛յր։
ՏԷԼԼ (Բարձրացնում է ձեռները դէպի երկինք)։
Այնտեղ վերևն է հայրդ, նրան կանչիր։
ՇՏԱՈՒՖԱԽԷՐ Տէլլ, քո կնոջը բան չասե՞մ քեզնից։
ՏԷԼԼ (Սաստիկ ջերմեռանդութեամբ սխմում է տղային
իր կուրծքին)։
Տղան կենդանի է. Աստուած կօգնէ ինձ։
(Շուտ խլւում է նրանից և գնում է զինւորների հետ)։

2

ՆԵՂ ՋՈՐ ԿԻՒՍՆԱԽՏԻ ՄՕՏ։

(Ճանապարհ ժայռերի մէջ բեմի ետևի կողմում, այնպէս որ ճանապարհորդները դեռ բեմի վրայ չըմտած՝ աՐդէն երևում են բարձրութեան վրայ։ Բեմը բոլորովին պատած է ժայռերով, որոնցից առաջիններից մինի վրայ կայ մի դուրս ցցուած քարափ թուփերով ծածկուած)։ ՏԷԼԼ (մտնում է աղեղը ձեռին)։

Նա այս նեղ ձորով պիտի անց կենայ.
Ուրիշ ճանապարհ չըկայ դէպ Կիւսնախտ։—
Այստեղ իմ գործը ես կըվերջացնեմ։—
Միջոցն յարմար է։ Այն թանթրւենին
Ինձ կըթաքցնէ. այնտեղից նետս
Կըհասնի նորան. նեղ ճանապարհը
Կարգելէ նոցա ընկնել ետևիցս։
Ֆօ՛խտ, երկնքի հետ տես քո հաշիւը,
Դու պիտի գնաս, զարկեց քո ժամը։

Ես ապրում էի խաղաղ—իմ նետը
Անտառի որսի վրայ էր միայն ուղղած,
Միտքս սպանութեամբ չէր ապականւած—
Դու վրդովեցիր խաղաղութիւնս,
Թունաւորեցիր անարատ միտքս,
Անսովոր բանին ինձ սովորեցրիր—
Ով որդու գլխին նետ է արձակել,
Թշնամու սիրտն էլ կարող է ծակել։

Անմեղ երեխանցս, սիրելի կնոջս
Քո կառավարութեան, դէմ պիտ՝ պաշտպանեմ.
Լանդֆոխտ—Երբ որ ես աղեղիս լարը
Լարեցի—երբ որ ձեռս դողդողաց—
Երբ որ դիւական չարախնդութեամբ
Ստիպեցիր որդուս գլխին նշան դնել—
Երբ ես յուսահատ ընկած քո առաջ
Աղերսում էի որդուս խնայել,
Այն ժամանակ ես սրտիս մէջ ծածուկ
Ուխտեցի անքակ և սուրբ երդումով,
Որ լսելի էր միայն Աստծուն,
Որ իմ հետևեալ նետի առաջին
Նպատակը քո սիրտը կըլինի։
Եւ այն տանջանքով լի վայրկենի մէջ
Ինչ որ ինքս ինձ ես խոստացել եմ,
Է իմ սուրբ պարտքը—և կըվճարեմ

Դու իմ տէրն ես և կայսրի տեղակալ
Բայց ինքը կայսրը չէր վստահանալ
Անել ինչ որ դու։—Նա քեզ ուղարկեց
Այստեղ, որ արդար դատաստան անես—
Ոչ թէ անողորմ չարախնդութեամբ
Ամեն չարութիւն անես անպատիժ.
Կայ Աստուած, գլխիդ կըթափէ պատիժ։

Դուրս եկ, դու, պատճառ դառն ցաւերի,
Այժմ, իմ թանգագին ամենամեծ գանձ—
Ես քեզ մի այնպէս նպատակ կըտամ,
Որ մինչև այսօր անթափանցելի
Էր աղերսանքին։—Բայց քեզ կարող չէ
Նա ընդդիմանալ—և դու, փորձուած լար,
Որ այնքան անգամ ուրախ խաղերում
Ծառայել ես ինձ հաւատարմաբար,
Ո՛հ, չըթողնես ինձ այս ծանր ժամում։
Այժմ միայն պինդ կաց, հաւատարիմ լար,
Որ այնքան յաճախ թռցրել ես նետս—
Թէ որ նա հիմա պրծնի իմ ձեռից,
Երկրորդը չունիմ թռցնեմ ետևից։

(Ճանապարհորդները անց են կենում բեմի վրայ)։

Այս քարի վրայ կընստեմ այստեղ,
Յոգնած անցորդի համար պատրաստած։—
Ո՞ւր է հայրենիք։—Այստեղ ամեն մարդ,

Առանց հարցնելու ուրիշի ցաւին,
Անցնում է մօտից ինչպէս մի օտար—
Այստեղ գնում է և հոգսերով լի
Վաճառականը և ուխտաւորը—
Բարի աբեղան, մռայլ աւազակը։
Ուրախ խաղացողն ու գրաստավարը,
Որ հեռու տեղից բերում է բեռը։
Ամեն ճանապարհ տանում է մինչև
Աշխարհի վերջը։ Եւ ահա նոքա
Բոլորն էլ իրանց գործին են գնում—
Իսկ ես սպանութիւն ունիմ իմ մտքում։

(Նստում է)։

Առաջ ձեր հայրը երբ տանից կերթար,
Սիրելի որդիք, ինչ խնդութիւն էր
Ձեզ համար, երբ որ նա յետ կըդառնար.
Նա միշտ ձեզ համար մի բան կըբերէր,
Կամ ալպեան ծաղիկ, կամ մի նոր թռչուն
Եւ կամ խեցեմորթ հնուց քարացած,
Որոնց անցորդը տեղ տեղ գտնում է
Սարերի վրայ։—Այժմ այլ բանով
Պարապած է նա, խուլ ճանապարհին
Նստած, մտածում է սպանութեան վրայ.
Թշնամու սրտին է նա աչք ածում։
—Բայց էլի ձեզ վրայ, ձեզ վրայ է մտածում,
Սիրելի որդիք։—Ձեզ պաշտպանելու,
Ձեր անմեղ կեանքը չար բռնակալի
Վրէժխնդրութենից փրկելու համար
Ուզում է լարել նա այժմ աղեղը։

(Վեր է կենում)։

Ես աչք եմ ածում մի ազնիւ որսի—
Երբէք որսորդը չի դժւարանում
Ցուրտ ձմեռուան մէջ ամբողջ օրերով
Զափել սարերը, համարձակ թռչել
Ժայռից ժայռի վրայ, վերև ելնել
Մերկ պատերի վրայ, ուր նա կպչում է
Սեփական արնով—մի թշուառ այծեամն
Որսալու համար։ Բայց ես կըորսամ
Աւելի թանկ որս—թշնամուս սիրտը,
Որ կամենում է ինձ ոչնչացնել

(Հեռուից լսում է մի ուրախ երաժշտութիւն, որ հետզհետէ մօտենում է)

Բոլոր կեանքիս մէջ բանեցրել եմ ես
Աղեղը և միշտ վարժւել կանոնով.
Շատ անգամ խփել սև նշանին,
Եւ շատ եմ ստացել լաւ լաւ պարգևներ
Հանդէսների մէջ—Այսօր ուզում եմ
Ամէն յաջողակ հարւածը ես տալ,
Եւ ամենալաւ վարձը ստանալ,

Մի հարսանիք անց է կենում բեմի վրայ և ձորով գնում, բարձրանում է։ Տէլլը նայում է նրան, թեք ընկած իր աղեղի վրայ։

ՇՏԻԽՍԻ (Աղեղը ձեռին մօտենում է Տէլլին)
Մեօռլիշախ վանքի կապալատէրն ,
Հարսանիք անում—շատ հարուստ մարդ է,
Տասը հօտ ունի սարերի վրայ,
Այժմ Իմիզէից նա հարս է բերում.
Լաւ ուրախութիւն կանենք այս գիշեր
Կիւսնախտում։ Արի, գնանք միասին.
Բոլոր լաւ մարդիկ կանչւած են այնտեղ։
ՏԷԼԼ Ես տխուր հիւր եմ հարսնիքի համար։
ՇՏԻԽՍԻ Ջուր մի՛ մտածիր։ Վատ ժամանակ է,
Պէտք է աշխատել ուրախ կեանք վարել,
Այստեղ պակում են, ուրիշ տեղ թաղում։
ՏԷԼԼ Երբեմն երկուսն էլ մէկտեղ է լինում։
ՇՏԻԽՍԻ Աշխարհքն այդպէս է։ Տարաբախտութիւն
Շատ է պատահում ամեն տեղ—ահա
Գլարուս նահանգում փուլ եկաւ մի ժայռ,
Այլ և Գլէրնիշի մի կողքը քանդւեց։
ՏԷԼԼ Մի՞թէ սարերն էլ տեղից շարժւում են։
Էլ ոչինչ հաստատ չէ երկրի վրայ։
ՇՏԻԽՍԻ Ուրիշ տեղեր էլ հրաշքներ են լինում։
Նոր մի Բադէնից եկող ինձ պատմեց.
Մի ասպետ ձիով գնում է եղել
Թագաւորի մօտ, որ ճանապարհին
Պատահում են նրան անթիւ պիծակներ,
Որոնք ընկնում են նրրա ձիու վրայ
Եւ այնքան խայթում, մինչև չարչարւած
Ձին վեր է ընկնում։ Ասպետը ոտով
Գնում հասնում է թագաւորի մօտ։
ՏԷԼԼ Տկարին նոյնպէս տւած է խայթոց։

Արմգարտ գալիս է շատ երեխանցով և կանգնում է ձորի բերանում։

ՇՏԻԽՍԻ Գուշակում են մեծ տարաբախտութիւն

Եւ ծանր գործեր ընդդէմ բնութեան։
ՏԷԼԼ Առանց հրաշքի էլ իւրաքանչիւր օր
Շատ են պատահում այդ տեսակ գործեր։
ՇՏԻԽՍԻ Երանի նրան, ով որ իւր հողը
Հանգիստ մշակում է և միշտ ապահով
Ապրում է տանը։
ՏԷԼԼ Ամենահամեստ
Մարդն էլ կարող չէ հանգիստ կեանք վարել,
Թէ այդ ընդդէմ է չար հարևանին։

(Տէլլը շուտ շուտ և անհանգիստ սպասելով նայում է ճանապարհի կողմը)։

ՇՏԻԽՍԻ Մնաս բարով—Մարդու ես սպասում։
ՏԷԼԼ Այո։
ՇՏԻԽՍԻ Ուրախ տուն հասնես։—Դու Ուրեցի՞ ես։
Մեր ողորմած տէր Լանդֆօխտին այսօր
Մնում ենք այն տեղից։
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ (գալիս է)։
Այսօր մի՛ սպասէք
Ֆօխտին։ Ջրերը շատ մեծացել են
Սաստիկ անձրևից. գետը տարել է
Ողջ կամուրջները։
(Տէլլը վեր է կենում)։
ԱՐՄԳԱՐՏ (առաջ է գալիս),
Ֆօխտը գալու չէ՞։
ՇՏԻԽՍԻ Գո՞րծ ունիս մօտը։
ԱՐՄԳԱՐՏ Ա՛խ, հա, ի հարկէ։
ՇՏԻԽՍԻ Ուրեմն ինչ ես այս նեղ անցքի մէջ
Ճանապարհ կտրում։
ԱՐՄԳԱՐՏ Այստեղ կարող չէ
Իմ ձեռից գնալ. պիտի լսէ ինձ։
ՖՐԻՍՀԱՐԴՏ (վազէվազ գալիս է նեղ ճանապարհով և ձայն է տալիս բեմի վրայ)։
Ճանապարհ տւէք—իմ ողորմած տէր
Լանդֆօխտը անձամբ իսկոյն գալիս է։
(Տէլլը դուրս է գնում)։
ԱՐՄԳԱՐՏ (ուրախացած)։
Ֆօխտը գալիս է։

(Նա իր երեխանցով գալիս է բեմի առաջակողմի վրայ Գէսլէր և Ռուդօլֆ Դէռ Հարրաս ձիով երևում են ճանապարհի գլխին)։

ՇՏԻԽՍԻ (Ֆրիսհարդտին)։
Ի՞նչպէս անցկացաք
Ջուրը։ Ասում են, գետը տարել է

Ողջ կամուրջները։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Եղբայր, ծովի հետ
Պատերազմեցինք և չենք վախենում
Ալպեան ջրերից։
ՇՏԻԽՍԻ Դուք այն փոթորկում
Նաւի վրա՞յ էիք։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Այո։ Ողջ կեանքում
Միտս կըպահեմ։—
ՇՏԻԽՍԻ Կացէք, պատմեցէք։
ՖՐԻՍՀԱՐԴՏ Թող, թո՛ղ, շտապում եմ՝ Լանդֆօխտի գալը
Յայտնել ամրոցում։
(Գնում է)։
ՇՏԻԽՍԻ Թէ որ լաւ մարդիկ
Լինէին նաւում, ծովը անպատճառ
Կուլ կըտար նոցա։ Է՛հ, ժողովուրդին
Ոչ ջուրն է օգնում և ոչ էլ հուրը։
(Նայում է դէս ու դէն)։
Ո՞ւր է այն մարդը, որի հետ այստեղ
Խօսում էի ես։
(Դուրս է գնում)։
ԳԷՍԼԷՐ ՐՈՒԴՕԼՖ ԴԷՌ ՀԱՐՐԱՍ ձիով։
ԳԷՍԼԷՐ Ինչ որ ուզում ես՝
Ասա, սակայն ես կայսրի ծառան եմ,
Պիտի աշխատեմ, որ դուր գամ նրան։
Նա ինձ չուղարկեց այստեղ այս ազգին
Շողոքորթելու, կամ գլուխը եղել—
Հնազանդութիւն է սպասում նրանից.
Եւ վէճը այն է, թէ ո՞վ պիտ' իշխէ
Այստեղ, գիւղացի՞ն արդեօք, թէ կայսրը։
ԱՐՄԳԱՐՏ Յարմար րոպէ է։ Հիմա կարող եմ։
ԳԷՍԼԷՐ Ես ցից չարի իմ գդակը Ալտօրֆում
Կատակի համար, կամ ժողովուրդի
Սիրտը փորձելու. դա ինձ յայտնի է։
Այլ նըրա համար, որ սովրեն նոքա
Վիզը ծռելուն, որ այժմ այնպէս
Ուղիղ են պահում—Ես այն անյարմար
Բանը ցցեցի ճանապարհի վրայ,
Ինչտեղ որ նոքա միշտ անց են կենում,
Որ նոցա աչքը ծակէ անդադար,
Եւ յիշեն նոքա, թէ ունին մի տէր,
Որին ուզում են խպառ մոռանալ։

ՐՈՒԴՕԼՖ Բայց ժողովուրդը ունի նոյնպէս իր
Իրաւունքները—
ԳԷՍԼԷՐ Որոնց կշռելու
Ժամանակը չէ—Համաշխարհական
Գործեր են խմորւում։ Կայսրական տունը
Ուզում է աճել, և ինչ որ հայրը
Փառաւորապէս սկսեց, ուզում է
Որդին լրացնել։ Այս փոքրիկ ազգը
Փուշ է մեր աչքում—Այսպէս կամ այնպէս
Պիտի հնազանդուի։
(Նոքա ուզում են անց կենալ։ Կինը վէր է ընկնում Լանդֆօխտի առաջ)։
ԱՐՄԳԱՐՏ Խղճա՛, ողորմիր
Մեզ, տէր կուսակալ։
ԳԷՍԼԷՐ Ի՞նչ ես առաջս
Կտրում—Յետ գընա։
ԱՐՄԳԱՐՏ Մարդս բանտումն է,
Եւ խեղճ որբերը հաց են պահանջում—
Կարեկից եղի՛ր, ո՛վ մեծազօր տէր,
Մեր թշւառութեան։
ՐՈՒԴՕԼՖ Ո՞վ ես դու։ Ո՞վ է
Քո մարդը։
ԱՐՄԳԱՐՏ Մի խեղճ խոտ հնձող է նա
Րիգեսբէրգից, տէր, որ անդունդի վրայ
Ջառիվայրներից հնձում է խոտը,
Ուր անասունն էլ վերև ելանել
Չի վստահանում։—
ՐՈՒԴՕԼՖ (կուսակալին),
Ողորմելի՜ կեանք,
Ես ու իմ Աստուած։ Ես ձեզ խնդրում եմ
Աղատել խեղճին։ Ինչքան և կուզէ
Մեղաւոր լինի, փոքր պատիժ չէ
Նորա սոսկալի այն պարապմունքը։
(Կնոջը)
Քեզ արդար վճիռ կըտան—ամրոցում
Խնդիրքըդ ասա—Այստեղ տեղը չէ։
ԱՐՄԳԱՐՏ Չէ, ես այստեղից մի քայլ չեմ անիլ,
Մինչև որ մարդուս չազատէ փօխտը,
Արդէն վեց ամիս ընկած բանտի մէջ,
Նա դատաւորի վճռին է սպասում։
ԳԷՍԼԷՐ Կի՛ն, դու ուզում ես ինձ ստիպե՞լ։ Հեռո՛ւ։

ԱՐՄԳԱՐՏ Արդարութիւն, ֆօխտ: Դու դատաւոր ես
Այստեղ և կայսրի և Աստուծոյ տեղ:
Կատարիր պարտքդ: Եթէ ակն ունիս
Ինքդ երկնքի արդարութեանը,
Եղիր և մեզ հետ դու արդարադատ:
ԳԷՍԼԷՐ Հեռացրէք այս լիրբ կնոջն իմ աչքից:
ԱՐՄԳԱՐՏ (բռնում է ձիու սանձը)
Ոչ, ես էլ ոչինչ չեմ կարող կորցնել:
—Ֆօխտ, չեմ թողնիլ քեզ այստեղից, մինչև
Ինձ վճիռ չըտաս—կնճռիր ճակատդ,
Պտոյտ տուր աչքերդ, ինչքան ուզում ես—
Մենք այն աստիճան արդէն դժբախտ ենք,
Որ էլ չենք նայում քո բարկութեանը:
ԳԷՍԼԷՐ Ճանապա՛րհ, թէ չէ՝ ձիս վրէդ կանցկենայ:
ԱՐՄԳԱՐՏ Թո՛ղ անցկենայ վրէս—Ահա—
(Նա շուտով բռնում է իր երեխանցը և նրանց հետ միասին վէր
է ընկնում նրա առաջ ճանապարհի վրայ),
Ընկած եմ
Իմ երեխանցով—Թող խեղճ որբերը
Ոտնակոխ լինին այստեղ քո ձիուց:
Աւելի վատ բան շատ ես արել դու—
ՐՈՒԴՕԼՖ Կին, խելագա՞ր ես:
ԱՐՄԳԱՐՏ (Աւելի տաքացած շարունակում է):
Արդէն վաղուց է, ինչ որ դու
Կայսրի երկիրը ոտնահարել ես:
—Ո՛հ, ես կին իմ միայն: Թէ որ լինէի
Տղամարդ, աւելի լաւ բան կանէի,
Քան թէ հողի վրայ սողալ քո առաջ:—
(Լսւում է առաջւան երաժշտութիւնը ճանապարհի գլխին, բայց
խուլ):
ԳԷՍԼԷՐ Ո՞ւր են մարդիկս: Հեռացրէք սորան,
Թէ չէ կարող եմ ես ինձ մոռանալ,
Եւ անել, ինչ որ յետոյ կըզղջամ:
ՐՈՒԴՕԼՖ Տէր, ծառաները չեն կարող անցնել,
Անցքը բռնած է մի հարսանիքով:
ԳԷՍԼԷՐ Ոչ, ես դեռ էլի շատ ներողամիտ
Կառավարիչ եմ այս ազգի համար—
Դեռ լեզուները ազատ են. նա դեռ
Իսպառ զսպած չէ, ինչպէս որ հարկն է—
Բայց երդւում եմ ես, որ ողջ կըփոխւի:
Ես կըկոտրեմ այդ յամառութիւնը,
Կըխոնարհեցնեմ այդ ազատ հոգին,

Ես մի նոր օրէնք կըհրատարակեմ—
Ես կամենում եմ—
(Մի նետ ծակում է նրա կուրծքը. նա ձեռը տանում է դէպի
սիրտը և ուզում է վէր ընկնել: Թոյլ ձայնով):
Աստուած օգնէ ինձ:
ՐՈՒԴՕԼՖ Պարոն կուսակալ—Աստուած: Այս ի՞նչ է
Ո՞րտեղից եկաւ:
ԱՐՄԳԱՐՏ (վեր թռչելով):
Մարդասպանութիւն:
Նա տատանում է, նա վէր է ընկնում:
Ի մահ խոցւած է,
ՐՈՒԴՕԼՖ (Ցած է թռչում ձիուց):
Տէր—Ինչ սոսկալի
Պատահմունք է այս—Ասպետ—խնդրեցէք
Երկնից գթութիւն: Դուք մահու զոհ էք:
ԳԷՍԼԷՐ Այս Տէլլի նետն է:
(Վէր է թողնւում Րուդօլֆ Դեռ Հարրասի կռների վրայ և նրանց
վէր են դնում նստարանի վրայ):
ՏԷԼԼ (Երևում է վերևը ժայռի գլխին):
Դու ճանաչում ես
Աղեղնաւորին, ուրեմն ուրիշին
Էլ մի՛ որոնիր: Այժմ ազատ են
Մեր խրճիթները, ապահով քեզնից
Անմեղութիւնը: Դու էլ կարող չես
Վնասել այս երկրին:

1.

ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳ

«Մեր հայրենիք, թշւառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ կանչումէ,
Հանել իւր վրէժ քէն ու ոխ»:
«Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդոց սուրը արիւնով
Պիտի լինի ազատւած»:

«Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լւացի»։
«Նայի՛ր նորան, երեք գունով,
Նւիրական մեր նշան,
Թո՛ղ փողփողի թշնամու դէմ,
Թո՛ղ կործանւի Աւստրիան»։
«Ինչքան կին մարդ՝ մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը,
Ջանց չարեցի քո սիրուն»։
«Ահա իմ գործ, ահա դրօշ,
Շուտ ձի հեծի՛ր քաջի պէս,
Գնա փրկել մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս»։
Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝ մեռնի.
Բայց երանի՜, որ իւր ազգի
Ազատութեան կըզոհւի».
«Գնա, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր,
Գնա, թէև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր»։
«Գնա մեռիր դու քաջի պէս,
Թող չըտեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է Իտալացին»։
Ասաց. տւեց օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կան որոշ։
Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քնքուշ քոյր,
Առաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սևաթոյր։

—Քոյրի՛կ, - կանչեց քաջ պատանին, —
Մնաս բարեաւ, սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ իտալեան։
Նա սուրբ է ինձ, երբ մկրտւած
Արտասուքով ու կնքած,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նւիրւած։
Թէ մեռանիմ, դու մի՛ սգար,
Իմացի՛ր որ տարեցի
Դէպի մահու արքայութիւն
Ինձ հետ քանի թշնամի։
Ասաց. վազեց դէպի հանդէս
Աւստրիացոց յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէժ,
Ազատութիւն իտալեան։
Ո՛հ, իմ սիրտը կտրատւում է
Տեսանելով այսպէս սէր
Դէպի թշւառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր։
Սորա կէսը, կէսի կէսը,
Գէթ երևէր մեր ազգում.
Բայց մեր կանայք……ո՛ւր, Եղիշէ,
Ո՜ւր մեր «տիկնայք փափկասուն»։
Ո՛հ… արտասուք ինձ խեղդում են,
Էլ չեմ կարող բան խօսել.
Ջէ՛…… թշւառ չէ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են։

2.

Ազատ Աստուածն այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել
Իմ հողանիւթ շինւածքին՝
Կենդանութիւն պարգևել.
Ես անբարբառ մի մանուկ՝
Երկու ձեռքս պարզեցի,

Եւ իմ անզօր թեւերով
Ազատութիւն գրկեցի։
Մինչ գիշերը անհանգիստ,
Օրօրոցում կապկապած,
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել—
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել։
Թոթով լեզւիս մինչ կապերը
Արձակւեցան բացւեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն, որ ասացի,
Չէր «հայր» կամ «մայր» կամ այլ ինչ.
«Ազատութի՜ւն» դուրս թռաւ
Իմ մանկական բերանից։
«Ազատութի՜ւն», ինձ կրկնեց
Ճակատագիրը վերեւից,
«Ազատութեա՞ն դու զինւոր
Կամիս գրւիլ այս օրից։
Ո՜հ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կըսպասէ.
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է»։
—Ազատութի՜ւն,—գոչեցի,—
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դաւ դնէ թշնամին,
Ես մինչի մահ, կախաղան,
Մինչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ՚ կրկնեմ
Անդադար՝ ազատութի՜ւն։

Միքայէլ Նալբանդեանց

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի՞ էլ լռենք, եղբարք, հիմի՞ էլ,
Երբ մեր թըշնամին իր սուրն է դըրել,
Իր օրհասական սուրը, մեր կըրծին,
Ականջ չի դընում մեր լաց ու կոծին,
Ասացէք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի՞ էլ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թըշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջընջեց աշխարհքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խըլեց մեզանից թագ, և՛ խօսք, և՛ զէնք,
Հիմի՞ էլ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թըշնամին
Խըլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
Մըշակի ձեռքիցն էլ խոփը խըլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կըռեց,
Վա՜յ մեզ, շղթայով կապած գերի ենք.
Հիմի՞ էլ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թըշնամին
Սոսկալի զէնքը բըռնած մեր գըլխին։
Կուլ տալ է տալիս արտասունք առատ,
Աղէխարշ բողոք վարուց ապերատ.
Մեր գլուխը լալու Եփրատ ու՞ր պըտռենք,
Հիմի՞ էլ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թըշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իր հոգին.
Արդարութեան ձայնը հանած իր սրտից,
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից,
Պանդո՜ւխտ, հալածեա՜լ, եղբարք, ու՞ր դիմենք,
Հիմի՞ էլ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին,
Անգոհ մեր բերած ծանր գոհերին,
Իւր լիրբ, նըզովւած ձեռքը կարկառեց,
Ազգութեան վերջին կապը պատառեց.

Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լռենք։
Հիմի է՞լ լռենք, երբ մեր Թըշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր Եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլազգեստ գառին մեզ գըլուխ գըրաւ,
Սուրբ խորան՝ չունինք, արդ ո՞ւր աղօթենք,
Հիմի է՞լ լռենք։
Հիմի է՞լ լռենք՝ մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Չէ՞ն ասիլ որ Հայք արժանի էին
Այդ սոսկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև ե՞րբ լռենք։
Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է Թըշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք Թըշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խըլենք
Ու այնպէս լռենք։

Ռափայէլ Պատկանեան

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՇԽԱՐՀ

ՀՈՂԱԳՈՐԾ, ՄՇԱԿ, ԲԱՆՒՈՐ ԵՒ ԱՐՀԵՍՏԱՒՈՐ

ԵՐԿՐԱԳՈՐԾ ՄԱՏԻԻ ԲԵՐԴԸ

Շւեդերէնից

—Դու խելագա՛ր ես, Մատի, ես այդ շատ անգամ եմ ասել և մի անգամ էլ եմ կրկնում։ Թշնամին անցել է սահմանը և արդէն դիրք է բռնել, կռիւը արդէն մեր երկրում տարածուել է, իսկ դու այնպէս ես ձևանում, կարծես թէ ոչինչ չես տեսնում։ Դու իսկի մատ չես շարժում, չնայած որ տեսնում ես, թէ ինչպէս մենք բոլորս պատրաստւում ենք փախչելու։ Նոյն իսկ ոչինչ չես աբել դիմադրութիւն ցոյց տալու։

—Որտեղի՞ց գիտես այդ։

—Ինչպէս թէ չըգիտեմ։ Չէ՞ որ տեսնում եմ որ դու ոչինչ չես անում, այլ միայն վարում ես և ցանում. օրէ-օր նոր վարելու հողեր ես վերցնում, նոր մարգագետիններ ես պատրաստում, ճահիճներ ես չորացնում և վարելու համար պիտանի դարձնում և նոր ու բարձր ցանկապատ ես շինում կալւածքներիդ շուրջը։ Այդ բաւական չէ։ Ամսէ ամիս դու շատացնում ես տաւարըդ և լաւացնում գործիքներդ։ Գուցէ դու կարծում ես թէ Թշնամին

չի գալիս։ Կամ թէ ի՞նչ ես մտածում։ Դու այստեղ այնպէս ես ապրում, կարծես թէ հարիւր տարիների ընթացքում խաղաղութիւն ենք վայելել, կամ թէ մեր ապագայում մեզ ամենաքիչը հազար տարւայ խաղաղութիւն է սպասում։

—Լաւ, ի՞նչ պէտք է անէի։ Խորհուրդ տուր ինձ, սիրելի հարևան, երևում է դու ամեն ինչ ինձնից աւելի լաւ ես հասկանում։

—Դու պէտք է այնպէս անէիր, ինչպէս արել եմ ես և մենք ամենքս, որ ապրում ենք լճի այն ափում։ Ահա տասը տարի է որ ես ոչ մի բան չեմ կառուցել։ Հողերը տալիս էին այն, ինչ կարող էին տալ առանց մշակելու։ Յետոյ ես ծախեցի հողերս և տաւարս և ամէ՛ն բան, ինչ որ կարելի էր ծախել և կանխիկ դրամ դարձնել։ Հիմի ես իմ ամբողջ կարողութիւնս ինձ հետ եմ ման ածում։ Մեկնելուց առաջ ես տունս հրդեհեցի։ Երբ թշնամին կըգայ, նա վերցնելու ոչինչ չի գտնիլ։

Այսպէս արի ես։

—Ամեն մէկը իրեն արածն է հաւանում, սիրելի հարևան։ Թոյլ տուր որ ես էլ մի քիչ գովեմ այն, ինչ որ արել եմ ես։ Դու լցնում ես գրպաններդ, իսկ ես հողի մէջ եմ թաղում իմ ունեցած հարստութիւնը։ Ի՞նչ ես կարծում, ո՞րն աւելի ապահով կըմնայ այն դէպքում երբ թշնամին մեզ գերի տանէ։ Մի՞թէ կարծում ես թէ թշնամին կըգայ և կըփչացնէ իմ պատրաստած տուները։ Չէ։ —Ահա տեսնո՞ւմ ես.—Դու զարմանում ես որ նոր հողեր եմ վարում, նոր մարգագետիններ եմ պատրաստում։ Միթէ դու կարծում ես որ թշնամին կըգայ և իր հետ կըտանի իմ գութանի ակոսը և մշակած դաշտերը։ Կամ դու կարծում ես, թէ նա իրեն նեղութիւն կըտայ քանդելու իմ տունը և քարերը դէն ածելու։—Չէ, իսկապէս նա այդ չի անիլ։ Բայց ինձ թւում է, սիրելի հարևան, որ իմ անցկացրած առուները իմ ջրի խրամատներն են, իմ այգու ցանկապատը՝ իմ բերդի պարիսպն է, իմ արտերը և մարգագետինները՝ իմ սահմանագծի վրայ գտնւող ամրութիւնն է։ Այդ բոլորի մէջ ես ինձ զգում եմ այնպէս ապահով,

ինչպէս մի ամրոցում։ Դու ինքդ ես ասում, թէ նա չի կարող ոչնչացնել կամ իր հետ տանել հողը։

—Բայց թշնամին կարող է շրջապատել և վերցնել ամբողջը... Ի՞նչ կանես դու այն ժամանակ։ Գուցէ դու մտածում ես, որ կարող ես այն ժամանակ հրդեհել։ Ես վաղուց եմ այդպէս արել և ազատ հեռացել։

—Ազատ հեռացել... Կարծես թէ քո արարմունքովը դու թոյլտւութիւն ես ստացել փախչելու։—Դու կարծում ես գուցէ, թէ դա աւելի ձեռնտու է։ Չէ, ես հարստութիւնս հողի մէջն եմ դրել և ինքս էլ կընստեմ հողիս վրայ։ Բայց երբ թշնամին կըգայ, այլ ևս նրանից ազատութիւն չի լինիլ, ես դուրս կըգամ առաջ և կասեմ նրան. «Ահա այստեղ է ամեն ինչ, իմ ունեցածը... շնորհ արա, վերցրո՛ւ բոլորը։ Ահա վերցրու և իմ բերդի բանալիները... և ես նրան կըմեկնեմ այս բահը և այս բրիչը։

—Նա քեզ գերի կըվերցնի և կըտանի օտար երկիր... Ի՞նչ կանես դու այն ժամանակ քո տունդ ու տեղդ։

—Տուն-տեղս ինձ միշտ հարկաւոր կըլինին։ Կռիւը հօ մի անգամ կըվերջանայ և գերիները կըփոխանակւեն։ Ահա այն ժամանակ, երբ ես յետ կըգամ հայրենիք, եթէ ես նորից կըգտնեմ տուն-տեղս, գոնէ իմ գութանի խոփը ես անց կըկացնեմ պատրաստ ակոսներով։

—Իսկ եթէ դու չվերադարնաս տուն։

—Իմ որդիս յետ կըգայ։

—Իսկ եթէ որդիդ էլ չեկա՞ւ։

—Դէ մի ուրիշի որդին հօ յե՛տ կըգայ։

—Դու խելագար ես, Մատի։ Դու ի զուր տեղից տակից գլխից դուրս ես տալիս։ Շտապիր, եկ մեզ հետ, քանի որ քեզ թշնամին զոռով չի տարել։ Դու չես ուզո՞ւմ. դէ մնաս բարեա՛ւ։

—Բարի ճանապա՛րհ, հարևա՛ն։ Ես ժամանակ չունիմ կորցնելու, ես պիտի շտապեմ գարին վարեմ, քանի որ թշնամին դեռ չի եկել և չի վերցրել նրան իր ձիերի համար։ Ահա արդէն երևում է լճի մօտ, նա ծուում է դէպի մեզ...։

Բժշկուհի Մարիամ Օհան. Մ.-Բէգլարեան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԵՐ

ՀՈՂԱԳՈՐԾՈՒՀԻ

Տուր ինձ տափանը, փոցխը, բահն, ու թին,
Գարնան արևը թող դէմքս այրի,
Նրա կրակոտ համբոյրի տակին
Քաղցր է ինձ կրել բեռը հոգսերի։
Առողջ թևերըս ես վեր կքշտեմ,
Շորերս գոտկիս, ծամս կըկապեմ,
Թող նւաստութիւն համարեն մարդիկ
Սև աշխատանքը չարքաշ գեղջկուհու,
Նա ինձ կըբերի և՛ բաղդ և՛ բարիք։
Կուզէի տեսնել ես այստեղ յոգնած,
Նիհար ու վտիտ նազելի կանանց.
Օ՜, դուք՝ տերևներ, քամուց հալածւած,
Օ՛, դուք՝ ծաղիկներ, գիշերով ծաղկած,
Մեղսոտ ու հիւանդ ձեր ցնորքներով,
Անգործութիւնից դեղնած այտերով
Դէպի մայր հողը դիմեցէք շուտով։
Վա՜յ նըրան, ով որ փախչում է հողից,
Ո՛ր խուսափում է չարքաշ կենցաղից.
Կորսէթ, պաճուճանք հանէք, ձգեցէք,
Նրանց ճնշումից կուրծքն է թառամում,
Որպէս ծաղիկը յափրած ջերմոցում.
Մաքուր թարմ օդին, լոյսին մօտեցէք,
Դէպի մայր հողը Տիրոջ պարգևած։
Տեսէք, քանի կեանք կայ այն հողերում,
Որոնց գութանը դեռ չէ շօշափած,
Ուր բզէզները ոստում են, վխտում,
Որոնց շերտերին սերմն է կարօտում.
Նրանց արգաւանդ ուժեղ ծալքերից,
Ծառերի բնից ու երակներից
Եռուն, անհամբեր հիւթերն են ծորում,
Որպէս յորդ կաթը ծծմօր ստինքից։
Ջերմ արևի տակ վառ ճաճանչների,

Առատութիւնն է ուրախ ծածանւում,
Ոսկի ցորենի արձակ դաշտերում
Առատութիւնը կանաչ խոտերի.
Հասկերի միջից բաց ճակատներով
Ծաղկունքն են ժպտում հագած ծիրանի.
Խոնաւ, հեղեղւած ագարակներում
Ցանքսերն են շողում թաւիշ գորգերով.
Լայն հովիտներում թարմ ծաղիկների
Թմբիր ներշնչող բոյրն է թանձրանում
Եւ դէպ՛ ալեոր ամպերն բարձրանում։
Օդի մէջ կարծես տիրում է աշխոյժ,
Մի կեանք թրթռուն, կենսունակ մի ոյժ,
Որ ամէն քարի հոգի է շնչում,
Ամէն հիւլէի եռանդը շարժում,
Եւ արևի տակ պարզ ու բնական
Ծնչաւոր, անշունչ սէր է շըշնջում.
Օ՜, դէպի հողը, դէպի մայր հողը,
Դէպի մշտական մեզ հաց տւողը,
Լարւած ուժերով եկէք շտապենք,
Նրա գրկի մէջ ոյժ ու ճիգ թափենք,
Խլենք նրանից կենսատու բերքեր,
Եւ անուշաբոյր ժողովենք հասկեր...
Ու ժպտանք անհոգ, բախտաւոր ապրենք։
Եւ ամառնային օդին բնութեան
Հեղեղ տարածէ թող առատութեան.
Բա՛ց են դռները նրա առաջին
Ե՛ւ չքաւորի և՛ թագաւորի.
Մենք զաւակներ ենք հարուստ բնութեան,
Անխտիր կերպով նա կոչ է անում,
Ամենքիս դէպ՛ իր գիրկը հրաւիրում.
Օ՜, այստեղ եկէք, բաց կամարի տակ—
Ո՜վ հզօր ազգի հզօր ժողովուրդ
Մենք բազուկներով առողջ ու ջլուտ
Ե՛ւ գեղեցիկ ենք, և՛ ազնիւ հոգով,
Այստեղ է կեանքը, լոյսի նպատակ.
Ազատ օդի մէջ ազատ շնչելով,

Կուրծքն է զարգանում, թոքը լայնանում,
Զրտւում է հոգին, միտքը թարմանում.
Ինչպէս երկնքում արևից առաջ
Վառւում են շողերն թարմ արշալուսեան,
Այնպէս էլ կարծես կորչում են ահա՝
Տառապանք ու վիշտ թշւառ մարդկութեան.
Զգում է հոգին, որ էլ չըկայ վախ
Ե՛ւ ոչ պատերազմ, ո՛չ դաշտեր արեան,
Շուրջդ տիրում է լոյս ու ազատ կեանք
Եւ ամենուրեք եռուն աշխատանք։
Օ՛, դէպի հողը, դէպի մայր հողը,
Դէպի մշտական մեզ հաց տւողը
Եկէ՛ք շտապենք.
Այնտեղ է առողջ կեանքի նպատակ։

Յակոբ Յակոբեան

ԳԵՂՋՈՒԿ

Առաւօտը վաղ աղամայ մութին
«Ծը՛ռռ» լսւում է մի սուր բարձր ձայն.
Ռաշպարն է նա՝ մրմունջը բերնին՝
Բացում է դուռը իր խարխուլ գոմին։
Շոյում է եզանց իր կոշտ ձեռներով,
Տրորում է նոցա պլըգիկ աչքեր
Եւ մեղմ ու հանդարտ ձայնով դողդոջուն
Նոցա ականջին երգելով ասում.
—Հա՛, իմ սարդարներ, անխոնջ մշակներ,
Դուք երկրագործի աջ ու ձախ ձեռներ,
Արձակեմ ես ձեր վզի կապանքներ,
Երթանք այցելենք ծաղկալից դաշտեր։
Ահա, հասել է գարուն կենսաբեր,
Մեր առաջ բացել խոտաւէտ մարգեր—
Գութան պիտ ձգենք, հողը տապալենք,
Աջ ու ձախ փռենք մենք անթիւ սերմեր։

Շատ շուտ է գալիս ամառը հասնում,
Մեր ամէն բարիք նա է մեզ բերում,
Ես պէտք է հնձեմ, խուրձեր կապոտեմ,
Իսկ ձեզ, իմ քաջեր, պիտ լծեմ սայլում։
Դէ՛հ, իմ եզներ, շուտ ելէ՛ք,
Երթանք, արօտ արածէք։
Նորա ետևից մեծ-մեծ քայլերով
Աշունն է գալիս—տխո՛ւր եղանակ.
Վարած հողերի կոշտ թումբերը
Մանրել փշրելու յարմար ժամանակ։
Սև հողի կակուղ, փխրուն շերտերում
Շպռտում, ցանում յուսոյ հատիկներ,
Ցաքան ենք անում, խնդրելով երկնուց
Լաւ օր, յաջող կեանք, տարի պտղաբեր։
Աչքդ ճպում ես, ձմեռ է առաջիդ,
Քամին ու բուքը փչում են սաստիկ,
«Երթանք անտառը, կանչում են մարդիկ,
Գլխել է փայտը, չունինք վառելիք».
Տրը՛խկ, հա թրը՛խկ, ես փայտ եմ կտրում,
Վիթխարի ծառեր գետնին տապալում.
Կտրի՛ր, իմ կացին, ջարդի՛ր համարձակ,
Որ մեր օջախում միշտ լինի կրակ։
Ձիւնը թափւում է, քամին ղօղանջում,
Ձնի մալանչներ երեսիդ խփում.
Փայտով լի սայլը առաջ է գնում,
Ցեխի մէջ ակը ճրատ ու վրատ անում։
Եւ դուք, իմ քաջեր, ոլորւում, ձգւում
Ծանր լծի տակ, ո՛հ, ո՛րչափ քրտնում...
Տարին պտըտում է, սահում, գլորւում,
Դարձեալ նոյն հոգսեր նորից մեզ բերում։

ՎԱԶԱԳԱՆ

ԱԴԱ ՆԵԳՐԻԻՑ

Թարգ. Յակոբ Յակոբեանի

1.

ՈՂՋՈ՞ՅՆ ՔԵԶ, ԿԱՐԻՔ

Չըգիտեմ՝ ո՛վ է դռնակս բախում...
—Այդ դո՞ւ ես եկել, ո՛վ դաժան կարիք,
Գերեզմանների բնակչիդ ողջո՛յն,
Հպարտ իմ հոգուն գալդ է բարիք.
Եւ քեզ, ո՜ կմախք մահուան բօթաբեր,
Դիմաւորում եմ ահա անտարբեր։
Բայց ինչո՞ւ լուռ ես, բռնակալ ոգի,
Է՞ր չես շտապում մտնել իմ խրճիթ,
Դէ՛, շո՛ւտ, թեւերս ջարդի՛ր, անհոգի՛,
Ցրի՛ր մտքերդ սրտիս մէջ վճիտ,
Կանգնի՛ր խեղճ մօրս մահճի գլխատակ,
Որպէս մահաբեր հոգեառ հրեշտակ։
Դու տատանւո՞ւմ ես, կմա՛խք այլայլուած,
Թէ խնայում ես գարունը կեանքիս.
Օ՜, անհոգ կացի՛ր, չեմ ընկնի յաղթուած՝
Կեանքի դու մարտում ծաղիկ հասակիս.
Տարիքների մէջ, տանջանքի բովում
Կամրանայ հոգիս, կըփթթի գարուն։
Իմ մըրկածուփ չարատանջ կրծքում
Սրտի յոյսերը դեռ անհանգչելի,
Երկնից անսահման, անհուն բարձունքում
Մտքիս թռիչքն է անհասանելի.
Որքան էլ նայես խիստ, մռայլ դէմքով,
Ես պիտի շնչեմ իմ սիրած կեանքով։
Տեսնո՞ւմ ես դաշտը ծաղկունքով զուգուած՝
Ողջ բնութիւնն է եռում, բորբոքւում.
Լսո՞ւմ ես երգը արտոյտի յուզուած՝
Արձագանք տալիս եթեր—բարձունքում.
Ողջը շնչում է վառ յուսոյ արև,
Ողջը թև առած ձգտում է վերև։

Օ՜, դաժան կարիք, վհուկ այլանդակ՝
Սև ծածկոցի տակ, քեզնից չեմ սարսում,
Տանջուած, բորբոքուած անյաղթ կրծքիս տակ
Խեղճ ժողովուրդի արիւնն է հոսում.
Հեռո՛ւ ինձանից վախ ու շղթաներ,
Հոգիս ճախրում է դէպի ջինջ եթեր։
Իմ կէտ նպատակ՝ յաղթական, իշխող
Աշխատանքն է վեհ, ցնորքը յուզող,
Հիասքանչ նուագն դիւթիչ երգերի,
Եւ շոյումները գարնան թովչալի.
Մաքուր, անաղարտ, անհուն եթերը,
Շողը աստղերի, ծաղկանց հիւթերը։
Չքացի՛ր ուրեմն, եղկելի ստուե՛ր,
Չքնաղ բնութեան պայծառ ցոլքերում.
Կեանքը արթնացաւ, շուրջ մանուշակներ
Տանեակների մէջ ծաղկում են, բուրում,
Գոռ կապանքներդ ահա խորտակեմ,
Որ նորոգ կեանքի գարունը երգեմ։

2.

ԱՆԻՒԻ ՏԱԿ

Օ՜, անմեղ տեղից քանի՜ զուր տանջանք
Բերում ես դու մեզ, անողո՛ք սև կեանք,
Չէ՛, էլ չե՛նք տեսնի մխիթարութիւն,
Չէ՛, չի՛ պակսելու մեզ թշուառութիւն։
Տեսայ ես մի օր—թևը աղջկան
Ջարդել էր, կախել արագ մեքենան
Ասես՝ թէ կսկիծ, խուլ հառաչանքներ,
Եւ արիւնալից սև տեսարաններ
Էին պահանջում մեռած ոգիներ.
Օ՜, երանի՜ թէ իմանաք դուք էլ,
Քանի՜ տառապանք, վշտե՛ր անհամար
Տանում է մարդը սև հացի համար։
Խեղճ հաշմանդամը այժմ ի՞նչ անի,
Կարիքի հոգսը արդեօք կըտանի՞...

Հարուստը նրան հօ չի մօտ գալու,
Այս կրակ ցաւին լուծումն տալու։
Ազնիւ աղջիկը, ո՜վ Աստուած բարի,
Էլ ո՞նց աշխատի առանց ձեռների,
Եւ այն մի օտար, անյայտ աշխարհում,
Որը խեղդւում է հեկեկանքներում։
Ու պիտի մուրայ... ուրիշ ելք չկայ,
Խեղճ հաշմանդամը անտուն ու անտէր,
Եւ այս վիճակւեց այն որբ աղջկան,
Որը ուխտել էր ցմահ աշխատել։

3.

ԹԻԹԵՂԱԳՈՐԾԻ ՄԱՀԸ

Հսկայ շինութեան բարձր տանիքին
Վաղ առաւօտից նա աշխատում էր,
Կարիքն ու հոգսը իր ընտանիքի
Նրա եռանդը կրկնապատկում էր։
Երկար աշխատեց... և արեգակը
Մօտ էր կէսօրին՝ ճաշելու ժամին.
«Շտապի՛ր, ճաշի է ժամանակը»,
Ասեց նա ուրախ իր հարևանին։
Յանկարծ սայթաքեց բարձր տանիքից,
Տապալւեց գետին ջարդւած գլխով,
Մարդիկ սարսափած այս դժբաղդ դէպքից,
Կանգնել—դիտում են ապուշ հայեացքով։
Նոքա համակւած կեղծ ցաւակցութեամբ,
Հետաքրքրւած հոսող արիւնով,
«Ափսոս» են ասում անամօթութեամբ
Ու անցնում, դէպքը մոռացման տալով։
Եւ միայն կինը ու քաղցած որդիք
Չեն մոռանալու աշխատաւորին,
Թող—ատելութեամբ պիտի անիծեն
Բիրտ ու քարացած խիղճը մարդկային։

4.

ՁԵ՛Զ, Ո՜Վ ՀԱԼԱԾՒԱԾ ԲԱՂԴԻ ԶԱՒԱԿՆԵՐ

Ձեզ, ո՜վ հալածւած բաղդի զաւակներ,
Որ աշխատում էք
Խուլ, աղմկալի կամարների տակ գործարանների,
Որ հառաչում էք մթին շերտերում լեռնահանքերի—
Ձեզ, ո՜վ թշւառներ, ողջո՜յն եմ բերում
Եւ սուրբ վաստակը ձեր փառաբանում։

Այնտեղ՝ անտառի զով թաւուտներում,
Ուր թռչուններն են երգում խմբովին,
Ուր ձորակի մէջ առուն է փայլում, աշխոյժ գալարւում,
Ուր օրօրւում է զեփիւռի շնչով կանաչ մրտենին—
Այնտեղ պսակւած ծաղկանց փնջերով
Կենսատու արևն եմ փառաբանում։

Եւ ո՞վ է կարող զսպել ընթացքը լեռնավտակի,
Ազատ թռիչքը երկինք սլացող ժիր ծիծեռնակի,
Այն ո՞վ է կարող արգելել թափը թռչող սլաքի,
Որ սլանում է դէպի խոր ծովը կապոյտ երկնքի—
Նետի, թռչունի, վտակի պէս էլ
Երկինք է ձգում հոգիս անարգել։

Քեզ եմ ես պաշտում, ո՛, սուրբ գեղարւեստ, խորին հաւատով,
Եւ մարտնչում եմ անունիդ համար արիւնոտ սրտով,
Ազնիւ զգացմանց խանդավառութեամբ ահա ձգտում եմ
Գաղափարների վեհ իրագործման և ես հիւսում եմ
Փշախառն ծաղկից իմ ազատ երգեր,
Որ բերեմ թշւառ եղբօրս նւէր։

5.

ՈՂՋՈ՜ՅՆ ՁԵԶ

Ողջունում եմ ձեզ, ո՜վ ժիր գութանի չարքաշ հերոսներ,
Որ թէ՛ ցրտի, թէ՛ տապ արևի ճաճանչների տակ

Ուժով խլում էք ագահ, կոշտ հողից
Ձեր հացն ու վաստակ։

Ողջունում եմ ձեզ, ով աշխատանքի անխոնջ հսկաներ,
Որ գիշեր ցերեկ հազիւ շնչելով լեռնահանքերում,
Քլունգ էք մխում խաւար, անիծեալ
Հողի շերտերում։

Յանկարծ չարագուժ ջրի վշշոցը լսեց մօտիկից,
Վայրկեան—և ահա կամարը անյաղթ տապալեց ուժգին,
Զոհի դիակն է լողում անդընդում,
Ողբում անմեկին։

Բայց և՛ ճեղքւած է ու բացւած կուրծքը յամառ, լերկ
սարի
Եւ շոգեկաթսան վազում է միշտ յաղթական անցքով,
Եւ արշալուսին դիմաւորում է
Ողջագուրանքով։

Ողջո՛յն ձեզ, ողջո՛յն, հոյակապ խելքի, մտքի ասպետներ,
Թշւառ ամբոխի դուք նահատակներ, ուղեցոյց աստղեր,
Որ չարիքի դէմ միշտ կոչ էք անում
Անվերջ մարտ մղել․

Ողջո՛յն և նոցա, որոնք տոգորւած ազնիւ վաստակով,
Հալւում են, մաշւում հանգիստ չիմացող անյայտութեան
մէջ․
Ձեզ, «ոգով արի» ցրւած եղբայրներ, սրտով դողդոջուն
Օրհնանք և ողջոյն։

* * *

Ողջունում եմ ձեզ, երկաթէ կրծքեր,
Որ մինչև դագաղ անընդհատ գործում
Ու չէք էլ յոգնում խուլ ժխորի մէջ—
Արհեստանոցում։

Ողջո՛յն և նոցա, որոնք գտնում են
Միակ սփոփանք աշխատելու մէջ․
Զութի, քլունգի, մտքի զինւորներ,
Ձեզ ողջո՛յն անվերջ։

Տեսնում եմ ահա՝ վաստակաւորներ,
Նիրհում են յոգնած, քնով կախարդւած՝
Անթիւ նաւերի ցրւած կմախքներ,
Ալիքից ջարդւած։

Բոկոտն մանուկներ, ծերուկ ճակատներ,
Սովալլուկներ ու հաշմանդամներ,
Թոքախտաւորներ, գունատ, վշտահար
Քայլում են յամառ։

Նրանց ձայները լսում եմ հեռւից,
Նրանց ճանաչում ծանօթ բառերից․
Նրանց աղմուկով—որ մօտ է սրտիս—
Հրճւում է հոգիս։

Ո՛վ աշխատանքի անպարտ հերոսներ,
Ես ձեզ եմ գրկում, ձեր սերտ միութեամբ
Ընդ մի՛շտ եղէք մեծ, կռւեցէք քաջ-քաջ—
Կեանքըն է շատ կարճ։

Օրհնւած վաստակի մայր-անդաստանին,
Կանգուն թէ ընկած նահատակներին
Կըփայլեն անմահ աստղեր, արեգակ,
Որպէս Աստուծոյ աչալուրջ հայեացք։

6.

ԲԱԶՈՒԿԸ

Ճըչում են հնո՛ անիւները ու պտըտւում փոկերը,
Եւ համբերաշխ բանւորների լսւում են գիլ երգերը․
Ամենուրեք իրարանցում, շշուկ, աղմուկ անընդհատ…
Յանկարծ այդ խուլ աղմուկի մէջ պայթեց մի ճիչ
յուսահատ,
Կարծես այստեղ մահացու վէրք առաւ վայրի մի գազան
Ու կատաղի մռնչոցով լռեցրեց ողջ գործարան։

Թշւառ, արդեօք կարծո՞ղ էիր երբևիցէ գուշակել,
Որ հաց տւող բազուկդ յաղթ չար մեքենան կըպոկէր․
Տեսէք, տեսէք, օ, այն ինչ է նրա ուսից բաժանւած…

Ճըչում են հա՜ անիւները, պըտըտւում են փոկերը,
Բայց համերաշխ բանւորների աղմուկն է դադարած,
Ու լռել են, էլ չեն հնչում նրանց ուրախ երգերը։

Եւ արցունքը գլորւելով խառնւում է քրտինքին,
Էս սև օրը ո՛չ առաջին, ո՛չ կըլինի և վերջին.
Մօթորները հա՜ ողբում են պատահարը սև օրւան,
Ու գործում են նախկին թափով անցքը տալով մոռացման.
Միայն ես եմ, ո՜, Արարիչ, որ աչքերիս առաջից
Չի հեռանում այն բազուկը, այնպէս սպիտակ, արնալից...

7.

ԹՈ՛ՅԼ ՏՈՒՔ ՄԱՆԿԱՆՑ ԳԱԼ ԱՌ ԻՍ

Եթէ պատահէք խուլ փողոցներում,
Կամ աղմկայոյզ լայն շուկաներում,
Մոլար հայեացքով կայտառ մանուկին,
Որ թափառում է մենակ, տրտմագին։
Զուրկ խրատներից, մօր գգւանքներից,
Դառն արտասւելիս թարմ շիրմի վրայ,
Որը չէ վանել դեռ մանուկ սրտից
Մօր յիշատակը ու սէրը նորա։
Բերէք դուք ինձ մօտ այդպէս բոկոտին,
Թո՛ղ նա հարազատ լինի իմ որդին։
Ես չեմ բաժանւիլ երբէք նորանից,
Քնելիս նորան աղօթք կըկարդամ.
Այն սուրբ աղօթքը, որ մանկութիւնից
Սիրել եմ ինքս կրկնել ամեն ժամ։
Սիրոյ վեհ խօսքը. մխիթարութեան
Ես կներշնչեմ, կաւանդեմ նորան,
Անվերջ խնամքով քնքուշ մայրական
Կըսնուցանեմ, կըկրթեմ նորան։
Կասեմ՝ կեանքըն է անդուլ աշխատանք,
Կասեմ՝ ներման մէ՛ջ է խաղաղ ոգին.
Եւ մանուկ սրտում բարւոյ, ճշմարիտ
Կըսերմանեմ ես գոհարներ անգին։

Աստուծոյ տւած ոյժ ու շնորհքս
Նորա խելքի մէջ կաշխատեմ վառել,
Նրան կեանք տալով՝ ինձ կըմոռանամ,
Եւ օրըստօրէ կսկսեմ թառամել։
Երբ կըծերանամ, մահս էլ մօտիկ—
Նա կամաց-կամաց կամրանայ, կաճի,
Կըձգտի՝ ոգո՛վ—սուրբ իդէալին,
Ձեռքով—վաստակին, սրտով—Արարչին։
Ու կերթայ վստահ դէմ արշալոյսին,
Որպէս հրեշտակը ձգտող փայլ լոյսին,
Որպէս դալար շիւղ փարթամ, ծաղկալից,
Որպէս փայփայւում է գարնան արևից։
Եւ այն ժամ միայն խաղաղ կըմեռնիմ,
Զգալով, որ կեանքս չանցաւ անպտուղ,
Եւ իմ դագաղը խոնարհած շիրիմ,
Լացով թաց կանի որդիս նոր-ընծիւղ։

8.

Բ Ա Հ Ի Ե Ր Գ Ը

Բահն եմ կոպիտ, գետինը փորող,
Ե՛ւ բիրտ և՛ հերոս.
Արևին ընկեր, սովին դիմադրող,
Ե՛ւ վիշտ և՛ փարոս։
Սովոր եմ այրող կէսօրեայ տապին,
Բուք ու փոթորկին,
Հեղեղատներին, հողմի տագնապին,
Թուխպ ու կայծակին։
Ծանօթ եմ բոյրին արգաւանդ հողի
Մայիս օրերի,
Բոյսերի շնչին, արտ ու զարդերին
Կանաչ տունկերի։
Որքան աշխատում, այնքան աւելի
Սրւում եմ, փայլում,
Անյողդողդ, հուժկու խրւում եմ գետին,
Ուժ չեմ խնայում.

Ազատ մուտք ունիմ աղքատ հիւղերում
Եւ խրճիթներում,
Մոռացւած, մռայլ, խուլ նկուղներում
Եւ այն վայրերում,
Ուր բաց ճեղքերից բուքն է հառաչում
Ու քամին սուլում,
Ուր գետնայարկում լի ածխահոտով
Խանձողն է մլլում։
Ուր բորը դաժան շրջում է ազատ
Ներքնայարկերում,
Ու ապրում, որպէս եղբայր հարազատ,
Մարդկանց վարակում։
Մըտնում եմ այնտեղ ու գաղտուկ նայում,
Թէ ինչպէս մարդիկ
Լուռ խարխափում են անձուկ խաւարում
Ու տանջւում սաստիկ.
Տեսնում եմ՝ ինչպէս ճահճոտ դաշտերում
Տենդն է մաշում,
Մարդիկ ուժասպառ խռպոտ թոքերով
Թառանչ են քաշում։
Ու ես չեմ քնում. վառ արշալուսեան
Շողն եմ երազում,
Խաւարում տքնող թշւառ մարդկութեան
Բաղդին սպասում.
Եւ ոգևորւած հուժկու ամբոխի
Ուժով քաջարի
Կոշտահողերից արտէն ապատւած
Հիւրն եմ ցանկալի։
Սիպտակ դրօշը*)՝ նշան անարիւն
Վեհ յաղթանակի՝
Սիրոյ թևն ելած՝ չարիքն ու ոխը
Պիտի խորտակի։
Բեղմնաւոր հողի բարիքից արբած
Որպէս վարդի բոյր,

*) Որպէս էմբլեմա խաղաղութեան.

Մարդիկ կըգրկւեն ու կըտան իրար
Հաշտութեան համբոյր.
Եւ ահա՛ ձայնը փրկւած ամբոխի
Երկինք կըթռչի,
Սէր, խաղաղութիւն, ազատ աշխատանք
Երկրին կըհանգչի։

Շ Ա Պ Կ Ի Ե Ր Գ Ը

(Անգլիերէնից)

Մատները թմրած, յոգնած են սաստիկ,
Արտևանունքը և՛ խոնջ, և՛ կարմիր,
Թերմաշ շորերով նստած է մի կին,
Նստած կարում է եռանդոտ ու ժիր.
Կարիր ու կարիր…
Սովատանջ, հալ ու մաշ, վշտակիր…
Հեծում է, երգում տխուր ու վհատ
«Մի շապկի մասին» այդ կինը աղքատ։
Աքլարի կանչին զարթնում է քնից՝
Աշխատի՛ր, աշխատի՛ր, աշխատի՛ր,
Աստղեր փայլում են յարկի ճեղքերից՝
Դէհ, աշխատի՛ր, աշխատի՛ր, աշխատի՛ր…
Եւ տանջւիր ինչպէս քրիստոնեայ մի կին՝
Բարբարոս քրդի ձեռքին միշտ գերի.
Աւա՜ղ, մի գերի՛ յուսահատ ու խեղճ,
Նըրա ճանկերից փրկութիւն չունի։
Աշխատի՛ր, աշխատի՛ր, աշխատի՛ր,
Մինչդեռ չէ յաղթել քեզ քունը յամառ.
Աշխատի՛ր, աշխատի՛ր, աշխատի՛ր,
Քանի աչերդ չեն մարած իսպառ.
Շուլալի՛ր, վրձկարի՛ր,
Խըծըպի՛ր, պճակարի՛ր՝
Մինչ շապկի վրայ ընկնես քնահար,
Եւ երազիդ մէջ կարես անդադար։

Ո՛հ, մարդի՛կ, դուք որ ձեր շուրջը ունիք
Քաղցրիկ մայր ու քոյր, կին ու ազգականք,
Ա՛խ, դա կտաւ չէ, որ դուք մաշում էք,
Այլ հարքաշ ու խեղճ մարդկային մի կեանք.
Կարիր ու կարիր...
Կարում եմ սովատանջ, վշտակիր,
Միաժամանակ շապիկ ու պատան
Եւ ամեն րոպէ ըսպասում մահուան։
Բայց, աւա՜, ինչո՞ւ մահից վախենամ,
Թէկուզ այդ հիւրը գար ինձ մօտ այսօր.
Չէ՞ որ ես մահու հրեշտակի նման
Մի չոր կմախք եմ—լոկ մորթ ու ոսկոր...
Հիւծուած մի մարմին, չարատանջ մի կեանք,
Կտոր հացից զուրկ և ծոմ օրնիբուն.
Ա՛խ, ո՜վ Տէր, ինչո՞ւ այդպէս թանգ...
Իսկ այսպէս էժան՝ իմ միսն ու արիւն.
Աշխատի՛ր, աշխատի՛ր, աշխատի՛ր,
Այս ծանր ժամերը. աւա՜ղ, վերջ չունին.
Իսկ ի՞նչ է վարձքըս—չոր հացի փշրանք,
Անպէտք ցնցոտիք, յարդէ անկողին.
Վերը՝ խախուտ յարկ, ցածը՝ մերկ յատակ,
Սեղան ու աթոռ թոյլ ու հասարակ.
Լաւ է որ գոնէ
Մերկ պատի վըրայ
Յաճախ տեսնում եմ ըստուերն իմ միակ.
Աշխատի՛ր անխոնջ, աքնիր ժամէ ժամ
Եւ միշտ նստակեաց գործիր օրավարձ,
Ինչպէս յանցաւոր մի տաժանակիր՝
Աքսոր ուղարկած անյոյս ու անդարձ։
Շուլալի՛ր, վրա՛կարիր,
Խըծըպի՛ր, պա՛տկարիր.
Թափի՛ր վերջին ճիգ, գործի՛ր անձանձիր
Մինչև գըլուխդ թեքուի ուժասպառ
Եւ սիրտ ու ձեռքըդ թուլանան իսպառ։
Կարիր ու կարիր և ցուրտ ձմեռը,
Նոյնպէս գարնանը—օրե՛ր գովարար,

Երբ ծիծեռնակը գալիս է նորից՝
Գարնան վերադարձ տօնելու համար.
Իսկ ձագուկները խուցիս ցեքին տակ
Միշտ ճռուողում են իրանց մօրը հետ—
Կարծես իրար մէջ պայման են դրած
Ինձ կռնակ ցոյց տալ և ծաղրել յաւէտ։
Ա՛խ, մէկ դուրս գայի թարմ շունչ քաշելու։—
Ի՞նչպէս բուրում են վարդերն անուշակ...
Միայն երկինքը լինէր իմ վըրայ,
Միայն դալար խոտը իմ ոտքերիս տակ.
Ո՜ւր էր գէթ մի ժամ ըզգայի այնպէս,
Երբ դեռ փոքր էի՝ գոհ ու բերկրալից—
Հիմիկւայ նըման երկիւղ չունէի,
Թէ մէկ ճեմելով կըզրկուեմ ճաշից։
Ո՛հ, թէկուզ մի ժամ, միայն մի վայրկեան
Հոգիս չըտքնէր ճնշող բեռան տակ.
Աւա՜ղ, յոյս չըկայ մի վայրկեան անգամ,
Հոգսը խըլում է ողջ իմ ժամանակ.
Գոնէ արցունքով սիրտըս ամոքեմ,
Բայց ոչ... շուտ պէտք է վերջանայ այս կար.
Արցո՛ւնք, կա՛նգ առէք—ինձ մի խանգարէք,
Թէ չէ, չի լինիլ կարը միաշար.
Մատները թմրած, յոգնած են սաստիկ,
Արտևանունքը և խոնջ, և կարմիր—
Հնմաշ շորերով նստած է մի կին,
Նստած՝ կարում է եռանդուն ու ժիր.
Կարիր ու կարիր...
Սովատանջ, հալումաշ, վշտակիր՝ —
Հեծում է, երգում հեզ ու լալագին,
Ա՛խ, թէ գէթ հասնէր վէս հարուստներին
Այս կնոջ երգը «Մի շապկի» մասին։

Մէլիք-Ջհանեան

«ՀՊԱՐՏ ՀՈԳՈՒ ԵՐԳԵՐԻՑ»

Հ. Համբարձումեանի

1.

Դ Ա Ր Բ Ի Ն

Մոքէ կայծակներ շանթող քաջ Դարբին,
Որ կեանք ու Հոգի գիտես միշտ կռել.
Ինչո՞ւ, ինձ ասա՛, գործադուլ, անհոգ
Կռան Զնդանին դադար ես տւել...
Կայծակին նայիր,
Ճակատդ լայն բաց.
Ու կարող ձեռքով
Նետիր յաղթ հարւած...

Ու զա՛րկ, զա՛րկ անվերջ երկաթէ Սրտեր
Աստւած հոգիներ կռող կռանով.
Այդ Աստւածաշունչ Զնդանիդ վերայ
Թող ծնունդ առնէ շանթէ Մոքի ծով...
Հպարտ Անհունին
Հաւասար եղբայր
Զնդան ու Մուրճով
Հրդեհի՛ր Աշխարհ...

Տիեզերքը հանուր հոգերուս Դարբնոց,
Հոգեծին արգանդ Կռանն ու Զնդան.
Կայծակը քեզ ձօ՛նք... ու Սիրտդ որո՞տ,
Կռի՛ր ու կռիր... կռի՛ր յաւիտեան...
Արար Աշխարհը—
Գարշ, գծուծ զանգւած,
Կրակի՛ր, դարձրո՛ւ
Մի՛տք, Հոգի՛ կռած...

Լազուրը լաջվարդ աստղերով ցիր ցան
Դարբնոց եարաղին թող փառք նւագեն
Մասիս, Արագած, և՛ լեառ, և՛ հովիտ
Քեզնով կրակւած թող Հոգի շնչեն...

Ու կեանքն ու սրտեր,
Ու Զարն ու Բարին
Թող ի մի կազմեն
Հրաշունչ Հոգին...

Դարբին քաջարի, ճակատդ ազա՛տ,
Վերցրո՛ւ յաղթ Կռանն ու զա՛րկ Զնդանին,
Ու զա՛րկ, զա՛րկ անդուլ, կռի՛ր ու կռի՛ր,
Որ գծուծ Աշխարհն առնէ իր ուղին...

2.

Զ Ո Ւ Լ Հ Ա Կ Ն Ե Ր

Երկնքի ծնունդ, Արևի զաւակ,
Քաջ աշխատաւոր Մոքի Զուլհակներ,
Որ ճակատ ունիք երկնի պէս ազատ,
Երկաթէ մկան, աժդրհայ ձեռքեր...
Շանթի պէս ահեղ
Ձեռք զարկէք Գործի.
Ձեր Թափն ու Հանճար
Նոր կեանք կըստեղծի...
Նման Անհունի արև՛ ու աստղին,
Որ մեծ Աստուծոյ Դազգա՛հն է, Դիւա՛ն.
Զուլհակ ու Գըրար, ձեր կուրծքը արնո՛տ,—
Դազգահ կանգնեցէք հոգու Վեհութեան։

Ձեր ճակտին կնճիռ, ձեր կրծքում արիւն.
Գործի վիճակւած Բանւոր ու Զուլհակ...
Չորս կողմը նայէք... կապանքը հեռո՜ւ,—
Կեանքի կամարում դեռ կա՛յ արեգակ...
Եւ քանի այս վեհ Տիեզերքի բովում
Շնչում է Դազգահ մեծ Աստւածութեան.
Եւ ամպն ու եթեր, լազուրն ու աստղեր
Վսեմ, հոգերուս մանած են նորան,
Վշտի սև ամպերն ձեր յաղթ սրտերից,
Քրտինքն արնաշիթ ձեր լայն ճակատից
Վե՛հ ազատութեան անմե՛ռ շնչի տակ

Երկի՜նք կըթոնեն, յաղթանա՜կ կ'երգեն...
Դազգահին զարկէք Բանւոր ու Ջուլհակ,
Ալիքներ Գործի թող կեանքը գրկեն...

Հողմերն աշխարհի թող նիւթ կուտակեն,
Եւ մանած մանեն կեանքի անիւներ.
Այդ ողջը տւէք Դազգահի բերան,
Գզէք ու գործէք մեզ ազատ օրեր...
Այդ նորոգ կեանքի թերթերն են վսեմ,
Հինուած[1] Դազգահի վերայ կախարդուն,
Թոխիչն[2] ու Թոխմահ[2], մալանչ ու մանած
Այդ ձեզ են կանչում դէպ Գործը անհուն...
Աշխատաւորներ, ձեր յոյսը Արև...
Երկունքով ծնէք գարո՜ւն յարատև...

Գարնան շողքի տակ թող ծիլ արձակեն
Մեր Ազատութի՜ւնն... Աստւա՛ծը Մտքի...
Գործից ու Մտքից հօսէ հեղեղատ,
Գործով են ազատ Սրտերը փառքի...
Դէ՜հ, Գործի զեղում ցրէք աջ ու ձախ,
Զարկէք անդադրում.
«Թո՜ւխխ, Թա՛խխ... Թո՜ւխխ ու Թա՛խխ...»

3.

ԳԶՐԱՐԻ ԵՐԳԸ

Դեռ մեր կեանքը չունի Արեգակ,
Մեր հովտում քարացած է Խաւար.
Բայց մեր Սիրտը տոկուն համարձակ,
Մեզ նո՜ր Կեանք կստեղծի մեր Հանճար։
Որպէս Մէզը կնճռո՜տ, ծովացա՜ծ
Վաղորդեան լուս ու մութ ժամերին,

1. Հինել-հիմնել. հինել խօսքը գործ է ածւում, երբ ուզում են ասել. հիմքը գցած է, գործը սկսած է։

2. Թոխիչ կամ Թոխմահ, երկուսն էլ գործիքներ են, սրանցով Թակում, ամրացնում են գործւածքը։

Որ խոժո՜ռ, համրօրէ՜ն դէպ դիզւած
Ծանրանում է լերան ուսերին.
Այդպէս Բուրդը անգիր, խառնիխուռ,
Որ ծնունդ է Կենաց Յորձանքի,
Կուտակւած է մեր դէմ մունջ ու լուռ,
Պէտք է Գործ ու Ձեռքի, ու Մտքի...
Ահա՛ սուրբ մեր Զաքին[1], մեր Անեղ[2].
Դէ՜հ գզենք տոյաւէտ յաղթաբար,
Բը՛զզ ու զը՛զզ... զըզզ ա զըզզ... չա՛խ ու չէ՛խ...
Մինչ մեզի լոյս Արև՛ ծագէ վառ...

Մեր Կնճիռն է, Կնճի՜ռը Մտքի,
Մեր ճակատին աժդըհայ լերան պէս.
Մեր վեհ Գո՜րծն է արգանդը Փառքի,
Որ հոծ Կեա՛նք է գզում փրփրադէզ։
Քաջ ընկե՜ր, ա՛խ, նայիր դէպ հեռուն,
Տե՛ս, ինչպէ՜ս մութ կեանքի անդունդից
Ալիքներ են գալիս մոլնչուն,
Կատաղած շան նման փրփրալից.
Եւ ինչպէս Կոհակները զաժան
Ուսերին դրած Բուրդ են բերում,
Գզելու Անեղով վեհութեան.
Զաքին ա՜ռ ու գզե՜նք անդադրում...

Շատ վաղուց, դեռ հզօր Ժամանակ,
Որպէս բոյս, Աստծոյ Պարտիզում,—
Որ Տիեզերքն է անհուն, անյատակ,
Նոր-նոր ծիլ էր գցում, արձակում.
Ալիքները այդ գիժ այն օրից
Անգիր Բուրդ են կրում անսպառ
Սրտի մութ և անյագ Ձորերից,
Բուրդ ախտո՜տ, չըզտւա՛ծ ու խաւա՛ր...

1 Զաքի—երկաթ է գնդաձայր գործիք, որով գզրարը գզելիս զարկում է գզող լարին։

2 Անեղ—այն կիսաշրջան գործիքն է, որի վրայ ամրացրած է լինում գիզ անող լարը։

Կենսածին այս Բրդում միաձև
Խճճւած են և՛ Չարն և՛ Բարին,
Ճշմարիտը Կեղծիք, Սուտը սև
Եւ բի՜ւր բի՜ւր գարշ Ախտե՜ր մթածին...
Բայց մեր Ձեռքը ազա՛տ, քաջ ընկեր,
Մեր Անեղը կայծա՛կ երկնացոլ.
Մեր Զաքին է Հոգին անվեհեր,
Ջա՜րկ, զտե՜նք, գզե՜նք Բո՜ւրդը խոժոռ...

Եթէ Բուրդը այս մութ, գզւելիք
Իր մէջ Ծէրք [1], լոյս Արև՛ էլ ունի.
Թէ փառաց մեծ Գարո՜ւն կայ գալիք,
Այդ Անեղ ու Զաքին կըծնի...
Եւ քանի երկնքում շողշողան
Ճշմարիտ վեհ աչերը—աստղեր,
Եւ ծովում ալիքները դաժան
Միշտ ոռնան, կըծոտեն մութ ժայռեր.
Թող անդուլ կայծկտայ յաղթ Անեղ.
Ու Զաքին էլ շանթէ վեհ հարւած,
Դէ՜հ, գզենք Բրդի դէզը ահեղ,
Գզւելու է այս Բուրդը ծնւած...

Մենք գիտենք. Մեծ Աշխարհը սրար
Վեհ Գզրոց է ազա՛տ ու համա՛յն
Ժամանակն է վսե՜մ, գոռ Գզրար,
Որ գզում է անյա՛գ, անսահման...
Նա գզում է ջոկում բրդից
Վսե՜մ Ծէրքը, խաւար գարշ Օւանք [2]...
Եւ Անհունը, Աստւած իր Գահից
Մեծ Գործին այդ տալիս է օրհնանք...
Դէ՜հ, գզենք Բուրդը մութ, լեռնացած,
Եւ դիզենք Ծէրքը ջոկ, Օւանք ջոկ.

---

1 Ծէրք—զտւած, գզւած մաքուր բուրդ։

2 Օւանք, բրդի անպէտք մասը, որը գզելով դուրս են բերում։

Ջա՜րկ, ընկեր, Աշխարհում չենք ծնւած,
Որ սողանք միշտ անգործ ու անհոգ...
Թող մեր Գործն հոգեբուխ, աւիւնոտ
Մեր Սրտում կազմէ նոր լո՛յս Կամար,
Որ գզենք, Արեգակը շողոտ
Մեր հովտում կըփայլէ յուսավառ...

4.

ԿԼԷԿՁՈՒ ԵՐԳԵՐԻՑ

Է՛յ ընկեր, Արեգակը վսեմ
Իր գլուխը հանեց խոր քնից.
Եւ չորս դին ամեն ինչ ջերմաջերմ
Նա շոյեց ժպիտով յուսալից։
Եւ Մշուշը կնճռոտ ու խաւար,
Տեսնելով ազատ Շողն երկնաւոր,
Հեռանում է, ահա՛, սողխող,
Քաշւելով Արևից փառաւոր։

Ընկե՜ր, բա՜ւ է, որքան մոռացւած,
Մենք դադար առանք սուրբ մեր Գործից.
Բե՜ր, սարքենք մեր Դազգահը օրհնւած,
Սուրբ Դազգա՜հ, որ ծնունդ է երկնից։
Մեր ողջ կեանքը եկ տանք այս Գործին,
Մենք սրբենք առյաւէտ Ամաններ.
Մենք ունենք վեհ Կլէկ փառածին,
Որ մաքրում է Հոգի ու Սրտեր...

Ինչպէս յաղթ ալիքներ շուտափոյթ
Ծովի խոր անդունդից անարգել
Կեղտ ու Աղբն են քշում դէպի ափ,
Եւ ցայսօր անբաւ Աղբ են դիզել.
Այդպէս էլ, բարկաճայթ այս Կեանքի
Մութ Յորձանքը Ախտեր է կրում.
Եւ այդ ողջը խղճո՜ւկ ու թշւա՛ռ
Մարդերի Սիրտ-Հոգում է դիզում...

Կեղտ ու Աղբ Աշխարհի սկզբից
Հա՜ դիզուել, հա՜ կիտուել են Սրտում.
Եւ Արևը յոյսի՝ ժանտ ախտից
Մեզի լոյս չի՛ տալիս, չի՛ սփռում...
Պէտք է Գործ և Կչէկ սրբարար,
Որ սրտից այդ Ախտը դուրս հանուի.
Պէտք է Ձեռք, և՛ Մկան, և՛ Հանճար,
Որ Կեանքի մեծ Գարունը հիւսուի...

Եւ եթէ երկնքում այն լազուր
Կայ վսեմ Գործերին հատուցում,
Օ՜, անհոգ կա՛ց, ընկե՛ր, մենք մի օր
Տեսնելու ե՛նք Գարունն անտրտում...
Դէ՛հ, ընկե՛ր, մի՛ քնիր և տոկուն
Ձեռքդ զա՛րկ վեհ Գործի Դազգահին,
Շատ Անօթ կայ մեր դէմ սրբելիք,
Որ կարօտ է մեր յաղթ Հանճարին...

Տե՛ս, այս Սիրտը մի օր լուսեղէն
Ծառազայթ էր սփռում աջ ու ձախ.
Նա մեզի Վեհութեան բարձունքէն
Շողշողո՛ւմ ու կոչո՛ւմ էր յաճախ...
Բայց այսօ՜ր... այսօր ժանտ Ախտերից
Աղբահիւս Վերարկու է հագած.
Գարշն ու Սուտը, Կեղծիք մթալից
Նորա մէջ կայուն Բուն են դրած...
Այս Ամանը, տե՛ս, սև՛ է, դժխեմ.
Օ՜, մանկուց ես յիշում եմ դորան.
Վեհ Հոգի՛, վեհ անճո՛թ էր վսե՛մ.
Նա բաղձանք էր մեզի Սրբութեան։
Տե՛ս, ինչպէ՛ս նորա մէջ այլանդակ
Գարշ Որդեր սողսողում են դէս դէն...
Նայի՛ր, Կա՜նթն է կոտրած... Կողը ծա՜կ...
Այսուհետ նա անպէ՛տք է արդէն...

Օ՜, եթէ վեհ Կչէկ չլինի,
Կրփաեն Կեղտի մէջ Ամաններ,

Որ ծնունդ են Լոյսի՜, և Արևի՜.
Դէ՛հ քսիր, դէ՛հ կոկիր վեհ Սրտեր...
Մի դադրիր. շուտ արա՛, հա՛ սրբիր.
Առ Փոշին, ա՛ռ Անձող շաղախած,
Հա՛ քսիր, հա՛ կոկիր Ամաններ,
Որ կեանքում Սիրտ, Հոգի են կոչուած...

ՄԵՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ

1.

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳԻՒՏԸ

Մեզանից մի քանի հազար տարի առաջ, մարդիկ քանի որ ազիտութեան մէջ էին դեռ, հնարել էին իրանց մէջ մի տեսակ պայմանական գրեր, որ այժմեան ոչ մի գրի ձևը չունէր, այլ ներկայացնում էր զանազան կենդանիների ու առարկաների պատկերներ, որոնք առանձին-առանձին կամ մէկ-մէկու մօտ շարելով, այլ և այլ մտքեր էին յայտնում, ճիշտ այնպէս՝ ինչպէս այժմ մենք րեբուսներ ենք կազմում ու կարդում։

Փորձեցէք այդպիսի նշանագրերով կազմած մի քանի տող բան կարդալ և կտեսնէք, որ բաւականին դժուար են, իսկ բառեր ու խօսքեր կազմելը՝ ևս առաւել։ Ահա այդպիսի նշանագրերով էին նախնի ազգերն իրանց միտքը հեռաւորներին յայտնում և իրա՛նց ժամանակակից անցքերը ապագայ սերնդին թողնում։ Բայց թէ ինչ մեծ անյարմարութիւններ ունէին այդ նշանագրերը, պարզ է. նախ՝ որ ամեն մէկ բառի համար մի տեսակ նշանագիր էր հարկաւոր, իսկ լեզուի մէջ հազարաւոր բառեր են մտնում, ապա ուրեմն և հազարաւոր նշանագրեր պէտք է ստեղծէին, և երկրորդ՝ ինչքա՛ն ժամանակ, ինչքան նեղութիւն պիտի կրէին մարդիկ, որ սովորէին այդ հազար ու մի ձևերով մտքեր յայտնելը, չեմ ասում ամբողջ գրքեր գրելը։ Այդ անյարմարութիւնները տեսնելով, մարդիկ

հետզհետէ փոխեցին նշանագրերի ձևերը և աւելի հեշտացրին, այն է՝ սկսեցին գրել ուրիշ տեսակ գրերով, որ բևեռի ձև ունէին և հէնց դրա համար էլ ասում են բևեռագիր կամ սեպաձև գիր, որ մինչև այժմ էլ ինչպէս շատ հին ազգերի մէջ, նոյնպէս և մեր երկրում՝ Հայաստանում, գտնում են դրանց մնացորդները քարերի վրայ քանդակուած,

Այս սեպաձև գրերը ևս մատչելի չլինելով ամենքին, ճարտար մարդիկ հարիւրաւոր տարիների ընթացքում աշխատելով վերջապէս մարդու ամեն մի ձայնի համար մի-



Ս. ՍԱՀԱԿ

մի փոքրիկ նշանագիր հնարեցին, ինչպէս՝ ա, ի, օ, ու և այլն, և պայման դրին, որ ամեն մարդ էլ այդ ձևերը տեսնելով, ա-ի, օ-ի, ու-ի ձայն հանէ։ Այդ նորահնար ձայնանիշներն ասւեցին տառեր, որոնք կցւելով մէկ-մէկու, կազմում են բառեր ու մտքեր։ Այս տառերը առաջիններից այն առաւելութիւնն ունին, որ անհամեմատ քիչ են թւով, հեշտ են միտ պահւում և գրելիս փոքր տեղ են բռնում։

Նայելով լեզւի կազմութեան, ամեն ազգ իր համար տառեր հնարեց և հեշտացրեց այդպիսով ուսումն ու գի-

տութիւնները։ Մի կողմը թողնելով հին ազգերի, ինչպէս յոյների, ասորիների, պարսիկների, հրէաների լեզւի տառերի գիւտը, որ Քրիստոսից հարիւրաւոր տարիներ առաջ հնարւած են, դառնանք Հայոց տառերի գիւտին, որ եղաւ Ս. Մեսրոպի ձեռքով հինգերորդ դարի սկզբում։

Մենք հայերս մինչև Ս. Մեսրոպի ժամանակները թէև գրքեր ունէինք, բայց բոլորը գրւած էին յոյների կամ ասորիների լեզւով և եկեղեցիներում Ս. Գիրքը կարդալիս, պէտք էր հմուտ թարգմանիչներ հայերէն բացատրէին՝ որ հասարակ ժողովուրդը բան հասկանար։ Դպրոցներում ևս,



Ս. ՄԵՍՐՈՊ

որ մի քանի վանքերում միայն կային, աշակերտները փոխանակ հայերէնի, յունարէն ու ասորերէն էին սովորում, որ շատ խորթ էր նրանց ու դժւար հասկանալի։

Աշակերտի դրութիւնը շատ անտանելի էր. մի կողմից օտար լեզւի դժւարութիւնը, միւս կողմից արտագրելու չարչարանքը մաշում էր նրա սիրտը. ոչ ոք չկար, որ նրա նեղութիւնները թեթևացնէր, ուսումն ու գիտութիւնները նրա համար հեշտացնէր։

Բայց ահա չորրորդ դարում երևեցաւ Ս. Մեսրոպ, որ շատ հմուտ էր յոյն, ասորի և պարսիկ լեզուներին ու

թագաւորի պալատում ատենադպիր էր առաջ, բայց յետոյ պաշտօնը թողնելով և վարդապետ ձեռնադրուելով, քարոզում էր ու գիւղէ գիւղ ընկած սովորեցնում ժողովրդին։ Նա զգաց աշակերտի դառն դրութիւնը և մտածեց սեփական նշանագրեր հնարել մայրենի լեզուի համար։ Նա իր միտքը յայտնեց այն ժամանակուայ Սահակ կաթուղիկոսին, որ համամիտ լինելով Մեսրոպին՝ շատ ուրախացաւ և մի ժողով կազմեց Վաղարշապատ քաղաքում, ուր ներկայ էին մեր աշխարհի գիտնականները և ինքը Վռամշապուհ թագաւորը։

Այդ ժողովում թագաւորը յայտնեց, որ Միջագետքում իր ճանապարհորդութեան ժամանակ Հաբէլ անունով մի քահանայ նրան ասել էր թէ այնտեղի Դանիէլ եպիսկոպոսը հայերի համար տառեր է հնարել և իրանից խնդրում է թոյլ տալ Հայաստանում գործադրելու, բայց ինքը խռնուած լինելով, ուշք չի դարձրել։ Այս բանի վրայ ամենքն ուրախացան և շուտով Վահրիճ անունով մի մարդ ուղարկեցին Դանիէլի մօտ, որ այն տառերը բերէ, բայց երբ ստացան ու առ ժամանակ գործադրեցին՝ տեսան որ շատ ձայներ պակաս են, ուստի Մեսրոպ ինքն անձամբ գնաց Դանիէլի մօտ, որ նրա խորհրդակցութիւնով կարողանայ թերին լրացնել, միայն այնտեղ օգուտ չտեսնելով՝ ճանապարհորդեց շատ տեղ և դիմեց շատ երևելի յոյն լեզուագէտների, բայց ոչ մէկից էլ իր ցանկացած արդիւնքը չստացաւ։ Նա ամենևին չյուսահատուեց իր անյաջողութեան վրայ, այլ աւելի եռանդով սկսաւ գործը. մի գործ, որից միայն կախուած էր Հայաստանի մանուկների փրկութիւնը։

Եւ ահա մի օր, երբ աղօթքի ժամանակ մտքով յափշտակուած էր, այնպէս երևաց նրան, իբր թէ մի ձեռք նշանագրեր էր գրում մի քարի վրայ, որոնց ձևերը իսկոյն տպաւորւում էին իր մտքի մէջ։ Նա տեսած ձևերն իսկոյն գրեց և Հռուփանոս անունով մի յոյն լեզուագէտի հետ կարգի գնելով՝ բերաւ Հայաստան... Անցաւ մի փոքր ժամանակ և ահա Ս. Մեսրոպի ու Ս. Սահակի ձեռքով Հայաստանը լցուեց դպրոցներով, ուր հայ մանուկը բուն

հայկական տառերն արտասանելով՝ ճխաց ամենքի սիրտն ու հոգին։ Շատ առաջադէմ աշակերտներ դուրս եկան այդ ժամանակները, որոնց Ս. Մեսրոպ և Ս. Սահակ ուղարկեցին՝ Կ. Պօլիս, Աթէնք, Աղէքսանդրիա, իրանց ուսումը կատարելագործելու. և այդ աշակերտների օգնութիւնովն էր՝ որ թարգմանեցին յունարէնից Աստուածաշունչը և այլ մատեաններ և մեր մէջ ծաղկեցրին հայկական դպրութիւնը։ Բայց Ս. Մեսրոպի հնարած տառերը երկաթագրեր էին, որոնցով գրուած են մեր շատ հին գրքերը, իսկ այժմ միայն գլխատառերում ենք գործ ածում։ Դրանք էլ շատ փոփոխութիւններ կրեցին, մինչև որ հասան այն կոկիկ ձևին, որ տեսնում ենք այժմ մեր գրքերում և որն օրէցօր աւելի ևս կատարելագործւում է։

Թէ ինչ մեծ ծառայութիւն արաւ Ս. Մեսրոպը մեզ՝ հայերիս համար, սեփական տառեր հնարելով, հասկանալի է. մենք այսօր եթէ մի պարծենալու բան ունինք, այդ մեր հայկական քաղցր լեզուն է, որ կենդանի է մնացել և պիտի մնայ, քանի որ մենք ևս՝ հետևելով Ս. Մեսրոպի օրինակին՝ կաշխատենք միշտ սովորել և սովրեցնել ուրիշներին։

2.

ԳՈՒՏԵՆԲԵՐԳԸ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՒՏԸ

Տպագրութիւնը հնարողների մէջ առաջինն ու ամենից նշանաւոր տեղը բռնում է Գուտենբէրգը։

Գուտենբէրգը ծնուել է Գերմանիայի Մայնց քաղաքում, որ Հռենոսի ափին է, 1400 թուականներին։ Նա աղքատ ծնողաց զաւակ էր։ Դեռ փոքր երեխայ էր, երբ զրկուեց հօրից։ Նրա մանկութեան տարիները յայտնի չեն մեզ, միայն ասում են թէ շատ աչքաբաց, աշխատասէր ու հետաքննիչ երեխայ էր։ Նա գնում էր քաղաքի դըպրոցը, լաւ պարապում էր և երբ չափահաս դառաւ, սկսեց ճանապարհորդել Եւրոպայում և մի քանի տարիներ անցկացրեց Հոլանդիայում. ամեն տեղ նա աշխատում էր օգտակար բաներ սովորել ու զանազան արհեստների գաղտ-

նիքն իմանալ։ Մի բան, որի վրայ նա անդադար մտածում էր, այն էր, թէ ինչ հնար գտնէ, որ կարողանայ հեշտ կերպով շատացնել միևնոյն գրքի օրինակը. մաշեց իր կեանքը դրա համար և վերջապէս հասաւ իր նպատակին՝ գտաւ տպագրութեան արհեստը։

Առաջին մամուլները փայտից էին։ Երևակայեցէք մի սեղան և նրա վրայ դրած մի քարից կամ մետաղից լաւ հարթած տախտակ, և դրա վրայից էլ մի տափակ ու փափուկ բան բարձի պէս, որին կարելի է ուզած ժամանակը պտուտակով բարձրացնել ու ցածացնել։ Փորագրուած ու մրած տախտակը դնում էին քարի վրայ, մի թերթ թուղթ քաշում երեսին ու պտուտակով ցածացնում բարձը, մինչև որ հաւասարապէս ճնշում էր, ապա բարձրացնում էին, հանում տպուած թուղթը և այսպէս շարունակում ամեն մի թերթի համար։

Որովհետև այս ձևով կարելի էր մի երես տպագրել պատկերով կամ առանց պատկերի, աւել է՝ կարելի էր և մի քանի զանազան երեսներ տպել, և ապա միացնելով մի գիրք կազմել. այսպէս էլ անում էին ուրիշները և նոյն ինքը Գուտենբէրգն այդ ձևով մի լատիներէն փոքրիկ քերականութիւն տպագրեց Հառլէմի մէջ։ Բայց նա տեսնում էր որ այդ հին ձևը բոլորովին անյարմար էր, ինչպէս ինքներդ էլ կըհասկանաք։

Գուտենբէրգն ասում էր. «Փոխանակ միևնոյն տախտակի վրայ ամեն մի բառի տառերը փորագրելու, եթէ ես փայտից կամ մետաղից շարժական տառերի մեծ պաշար ունենամ, այն ժամանակ միմեանց մօտ բերելով, կարող եմ կազմել բառեր, տողեր ու ամբողջ երես. ապա այդ փոքրիկ շարժական տառերը սեղմելով մէկմէկու, այնպէս որ չցրուին, կըմրեմ և կըտպեմ այնպէս, իբր թէ բոլոր տառերը մի տախտակի վրայ փորուած լինէին։ Այսպէս 100 կամ 1000 օրինակ տպելուց յետոյ, ես իմ փոքրիկ տառերը կըցրուէի, այսինքն ա-երը մի տեղ, բ-երը ուրիշ և այլն. կըժողովէի ու այդ տառերով ես կըկազմէի մի ուրիշ երես, միայն ուրիշ կերպ դասաւորելով»։

Հասկանալի է որչափ այս միտքը խելացի էր ու յա-

ջող հնարուած։ Այլ ևս պէտք չըկար հարիւրաւոր զանազան փորագրած տախտակների մի գիրք տպագրելու համար, միայն հարկաւոր էր շատ տառեր և միշտ միևնոյնը թէ մէկ, թէ բազմաթիւ երեսներ ու գրքեր տպելու համար։

Ահա այդ էր այն մեծ ու թանգագին գիւտը,—շարժական տառերը, որ տպագրութեան արհեստի մէջ երևելի տեղ է բռնում։

1437 թւականին Գուտենբէրգը թողել էր իր ծննդավայր Մայնց քաղաքը և եկել Ստրասբուրգ իր ընտանիքով։ Նա այդտեղ սկսեց իր առաջին փորձը, բայց երբ տեսաւ բաւական չէ միայն եռանդ ու աշխատութիւն, այլ պէտք են իրան մամուլ, տեսակ-տեսակ մեքենաներ ու գործիքներ, որոնք բաւականին թանգ արժէին. բայց որտեղից ձեռք բերէր, քանի որ իր բոլոր ունեցածն արդէն մսխել էր։ Ի՞նչ անէր։ Նա օգնական որոնեց և գըտաւ երեք աշխատասէր ու եռանդուն ընկերներ՝ Յովհաննէս Ռիֆ, Անդրէաս Հէյլման և Անդրէաս Դրիցէհն. յայտնեց նրանց իր միտքը և բացատրեց անելիքը։ Այդ երեք ընկերները ոչ միայն հարկաւոր եղած դրամն առաջարկեցին, այլ և իրանք էլ սկսեցին նրա հետ բանել, օգնել տառերը փորագրելուն ու գործիքներ պատրաստելուն։

Ստրասբուրգի մօտ մի հին աւերակ ու աչքաթող արած վանք կար. Գուտենբէրգն այնտեղ տեղաւորեց իր գործարանն ու այստեղ չորսն էլ միասին սկսեցին աշխատել։ Մի քանի ժամանակից Անդրէաս Դրիցէհնը, որ երեքի մէջ աւելի գործունեայ ընկերն էր, հիւանդացաւ ու մեռաւ։ Այդ մի մեծ կորուստ ու դժբախտութիւն էր Գուտենբէրգի համար։ Այդ բաւական չէր, Դրիցէհնի եղբայրները՝ իբրև ժառանգներ՝ պահանջեցին իրանց եղբօր դրած բաժինը, բայց Գուտենբէրգը բոլորը մսխել էր՝ մամուլներ, գործիքներ առնելով ու մշակների վարձը տալով։ Նրան դատաստանի մատնեցին, ձեռքից բոլորը դուրս եկաւ, միայն մնաց իր մամուլները և մի քանի կիսատ բաներ։ Նա փորձեց կրկին գործի կենալ, բայց տեսաւ որ ոչ փող ունի, ոչ օգնական, մի օր հաւաքեց իր գոր-

ծարանի փշրանքները, մի փոքրիկ սայլի մէջ ածեց ու տխուր սրտում, ձիու կապը բռնած, հեռացաւ Ստրասբուրգի վանքից, ուր երկար աշխատել էր, և Մայնցի ճանապարհը բռնեց։

Գուտենբերգը Մայնց հասնելով, հանգիստ չընստեց, ժողովեց իր ունեցածը, փող պարտք արաւ իր ազգականներից ու բարեկամներից, մի տուն վարձեց և, իր գործարանը սարքելով, կրկին սկսեց աշխատել։ Շատ չանցաւ նա գտաւ մի խառնուրդ, որ երկաթից ու արճճից շատ յարմարութիւն ունէր և զարմանալի կերպով վեր էր առնում այն ձևը, ինչ ձևի կամ կաղապարի մէջ թափում էին։ Այս կարևոր գիւտերը անելուց յետոյ, նա կամեցաւ մի մեծ աշխատութեան ձեռնարկել—մի հաստափոր Աստուածաշունչ տպագրել լատիներէն լեզուով։ Բայց դրա համար մի բան պակասում էր. ինչ բան... միշտ միևնոյն փողը։

Մայնցում մի հարուստ ու ագահ վաճառական էր ապրում Ֆաուստ անունով. Գուտենբերգը դիմեց նրան և յայտնեց իր միտքը։ Վաճառականը տեսնելով թէ ինչ մեծ շահ կար դրա մէջ, իսկոյն պայման կապեց նրա հետ, որ հարկաւոր եղած փողն ինքը կըդնէ. միայն թէ արդիւնքի մեծ մասը իրան հասնի։ Գուտենբերգն ընդունեց այդ պայմանը և երկու տարի ևս աշխատեց կատարելագործելու իր մամուլները, գործիքներն ու տառերը։

Ֆաուստի տանը այդ ժամանակ կենում էր մի գիտնական երիտասարդ Պետրոս Շեֆէր, որ մի քանի բաներ էր պատրաստել Գուտենբերգի տպարանի համար. նա երբ հետաքննելով իմացաւ նրանց գաղտնիքը, ինքն էլ խնդրեց մասնակցել այդ գործին։ Ֆաուստը և Գուտենբերգը տեսնելով նրա եռանդը, ընդունակութիւնը, ընդունեցին իրանց մէջ և հաղորդեցին իրանց անելիքը։ Շեֆէրը շատ աշխոյժ պարապում էր և հնարեց աւելի արագ ու գեղեցիկ տառեր շինելու ձևը։ Վերջապէս 1452 թւականին տպագրեցին Աստուածաշունչ գիրքը։ Այս մեծ աշխատութիւնից յետոյ, սկսեց նաև ուրիշ շատ գրքեր տպագրել ու ծախել։ Գործը շատ յաջող էր գնում, բայց չըկարծէք

թէ Գուտենբերգի նեղութիւններն էլ վերջացան. ոչ ամենևին։ Ագահ Ֆաուստը մտածեց որ եթէ մի կերպ հեռացնէ Գուտենբերգին, (որովհետև արդէն իրանք գիտէին արհեստը), այն ժամանակ ստացւած բոլոր շահը իրանց կըմնայ ու աւելի հարուստ կըլինին. ուստի չըգիտեմ մի ինչ առիթ գտնելով, մի օր բարկացաւ վրան ու ասեց. «Յետ տուր ինձ այն փողերը, որ ես քեզ տըւի»։ Բայց Գուտենբերգի ձեռին ոչինչ չկար. բոլորը գործարանումն էր. այդ լաւ գիտէր և ինքը Ֆաուստը։ Տպագրութիւն գտնողը չըգիտէր ինչ անէր, թողեց բոլոր ունեցածն ու հեռացաւ....

Կոտրւած սրտով ման էր գալիս Գուտենբերգը, երբ մի ուրիշ հարուստ վաճառական, Կոնրադ Հիմէսի, տեղեկանալով նրա հետ պատահածները, ամենայն սիրով ընդունեց նրան ու ասեց. «Ես քեզ փող կըտամ որքան պէտք կըգայ, և ինձ կըվերադարձնես երբ և ինչքան կը կարողանաս. գնա գործարան վարձիր, մամուլներ, գործիքներ գնիր ու աշխատիր»։

Գուտենբերգը շնորհակալ եղաւ բարի վաճառականից, և այս երրորդ անգամը նոր գործարան բաց արաւ, առաջւանից աւելի ընտիր գործիքներ, մամուլ ու տառեր պատրաստեց, շատ աշակերտների սովորեցրեց այդ արհեստն ու բազմաթիւ գրքեր տպագրեց, որովհետև պահանջը շատ էր։

Խեղճ Գուտենբերգը մի քիչ շունչ էր առել թէ չէ, մի վերջին դժբախտութիւն էլ վրայ հասաւ, թշնամի ցեղեր յարձակւեցին Մայնցի վրայ, քարուքանդ արին քաղաքը և նրա հետ էլ աւերեցին Գուտենբերգի տպարանը։ Նրա աշակերտները, որ իրանց վարպետի անունով Գուտենբերգի որդիք էին ասւում, ցրւեցին Գերմանիա, Ֆրանսիա և Իտալիա, նոր տպարաններ հիմնեցին ու այդ օգտակար արհեստը տարածեցին։

Անցաւ պատերազմը, անցան խեղճութեան տարիները. Մայնցի արքեպիսկոպոսը, որ մի խելացի մարդ էր, կամենալով պատւել ու վարձատրել Գուտենբերգին, որ այնքան նեղութիւններ էր կրել իր կեանքում մինչև իր

մտադրութիւնը գլուխ էր հանել, մշտական ռոճիկ նշանակեց, որով բաւականանում էր համեստ ու տոկուն մարդը, մինչև որ առաջինը տպագրողներից մի քանի տարի էլ ապրելով՝ վախճանւեց 1467 թւին։

Տպագրութեան գիւտից երկու հարիւր տարի անցած, ինչպէս շատ ազգերի, նոյնպէս և մեր մէջ հաստատւեց տպագրութիւնը։ Առաջին անգամ 1657 թւին Յակոբ կաթողիկոսն ուղարկեց Մաթէոս Ծարեցի անունով մի սարկաւագի Եւրոպա, որ հայոց տառերը փորագրել տայ։ Ծարեցին երկար աշխատելուց յետոյ գնաց Հոլանդիայի Ամստերդամ քաղաքը, փորագրել տւեց տառերը և առաջին անգամ տպագրեց «Յիսուս որդի» գիրքը։ Տպարանի ծախքերը հոգում էր մի Երևանցի վաճառական Աւետիս անունով, որ Ոսկան վարդապետի եղբայրն էր։ Այս Ոսկան վարդապետն էլ գնաց Ամստերդամ, առաւել պայծառացրեց տպարանը և տպագրեց Աստւածաշունչ գիրքը 1666 թւին, և ապա ուրիշ շատ գրքեր. այսպիսով մեր մէջ էլ մտաւ այդ գեղեցիկ արհեստը և այսօր մենք ունինք շատ հարուստ տպարաններ Վենետիկ, Կոստանդնուպոլիս, Թիֆլիս, Էջմիածին և ուրիշ քաղաքներ, ուր ամեն տարի հարիւրաւոր գրքեր են տպագրւում և օրէցօր աւելի կատարելագործւում։

Կ. Կ. Մ.—Շահնազարեանց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԵՐԳ, ԶՐՈՅՑ, ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ, ԱՌԱՍՊԵԼ

Հին օրհնութիւն. Յով. Թումանեան . . 3
Երգի հրապոյրը. Աւետիս Իսահակեան . . 4
Երգէ. Ռ. Պատկանեան . 7
Կալանաւոր և Ազատ. Լ. Մանուէլեան . . 8
Երգը, (շւեդերէնից) թժ. Մարիամ Մ.—Բէգլարեան—Օհանեան . 8
Լուր-զա-լուր. Վ. Փափազեան . . . 10
Ծաղկաձոր. Ռ. Պատկանեան 16
Արցունքի Աղբիւր. Գէորգ Աստւածատրեան . 18
Թևազուրկ Արագիլ. Յով. Յովհաննիսեան . 19
Երկու երգիչ. Տիկին Բիւրեղ Տէր-Գրիգորեան 21
Վերջին Ապաւէն. Ս. Փիլոյեան . . . 25
Վարդ Համերոսի գերեզմանից. Անդերսէնից՝ Օնիկ 26
Սոխակի երգը. Անդերսոնից օր. Ե. Պ. . 28
Մանկական երգ. Գեօթէից. Յով. Յովհաննիսեան 31
Վարդը բացւել ա. Ռ. Պատկանեան . . 32
Սոխակը և վարդը. Ա. Զաքարեան . . 33
Աղջիկն ու լուցկիները. Անդերսէնից. Ա. Ծատուրեան . . 35
Վայր ընկնող աստղեր. Միք. Նալբանդեան. 39
Դու կըհանգցնես, իսկ ես կըվառեմ. թժ. Մարիամ Մելիք-Բէգլարեան . . 41
Արև և լուսին. Յով. Թումանեան . . 43
Ամենապէտքական բանը աշխարհում. Աւ. Իսահակեան . . 45
Լուսաւորչի Կանթեղը. Յով. Թումանեան . 49
Քիչ էլ, քիչ էլ. առասպելն ու իրականը. Ղ. Աղայեանց. . 49
Գետակ. Ալ. Ծատուրեան 62
Յօպօպի ծագումը. Յով. Թումանեան . . 63
Անառակ որդին. Լէօ . 65
Արտաւազդ. Յով. Յովհաննիսեան . . 70
Բանաստեղծի բաժինը. Շիլլերից. Ղ. Աղայեանց 71

Անբաժիններ. Աւ. Իսահակեան . . . 72
Երգիչներ. Ալ. Ծատուրեան 73
Աղբիւր. Ռ. Պատկանեան. 74
Ոսկեզօծ լապտեր Ալ. Ծատուրեան . . 77
Սպիտակ Ջգեստ. Յով. Յովհաննիսեան . . 79
Երախտագէտ Առիւծը... 81
Վիշապի յաղթողը. Թարգ. Ղ. Աղայեանց . 83
Ամրոցներ շինող. Լօնգֆ. Ալ. Ծատուրեան . 104
Դրախտ. Վ. Փափազեանց 104
Բոյն քանդողի տունը Աստուած է քանդում. Հասօ 110
Հակապատկեր Ալ. Ծատուրեան . . 111
Ինչքա՜վ է երջանիկ լինում մարդ. Հ. Առաքելեան . : . 111
Լուղորդ. Շիլլերից. Գէորգ Բարխուդարեան 115
Վիշապաձորը. Աւ. Ահարոնեան . . 120
Ջրահեղձը. Պուշկինից. Յով. Թումանեան . 129
Լեռնային Ոգին. Գէորգ Աստուածատրեան . 131
Ֆըրդուսի. Հայնէից Ղ. Աղայեանց . . 144

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՌՕՐԵԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Մայրենի լեզու. Խաչ. Աբովեան . . . 149
Ո՞վ էր Աղասին. Խ. Աբովեան . . . 150
Վէրք Հայաստանիից. Աղասու բնաւորութիւնը. —Աղասին ինչպէս է ազատում Թագուհուն. —Թագուհու մոր սուգը.—Աղասու օրը օտարութեան մէջ.—Իր ամուսնուն.—Աղասին Անւայ աւերակներում. Խաչ. Աբովեան 150—176
Ջուղայեցոց Ողբը. Ստեփան Վարդապետի. 176
Արութիւն և Մանուէլից.—Գիւղացու դատողութիւնը քաղաքացու մասին և քաղաքացունը՝ գիւղացու.—Բոյր ու եղբայր.—Ուխտագնացութիւն. —Մայրական սէր և Մայրենի բարբառ.—Հայր և որդի.—Արութիւնի նամակը Մանուէլին.—Երկու ըստորդ. Ղ. Աղայեանց . . . 177
Նոր սերունդ. Ալ. Ծատուրեան . . 203

Րաֆֆիից.—Աղթամարայ Ծովափում.—Մշակ . 203
Հայրենիք. (Տօպէլիուսից). Յ. Տէրտէրեան . 211
Արտուտ. Ռ. Պատկանեան 214
Պանդուխտի երգը. Ալ. Ծատուրեան . . 215
Գիշերապահ Մկօի երազը. Կ. Մ.-Շահնազարեան 216
Սովի տարին. Պետրոս Ադամեան . . 219
Կեանքի Սաղմոսը. (Լօնգֆէլլօից) Ալ. Ծատուրեան . . 220
Ջարււ դարներ. Յով. Կարապետեան . . 222
Հաւատ, Յոյս. Լէօ . 225
Ջանգի հրաւէրը. Լ. Դանիէլեան . . 231
Ուխտագնացութիւն... Աւ. Ահարոնեան . . 233
Սեւանայ Ծովակը. Գէորգ Աստուածատրեանց . 237
Ամիչիսի «Սիրտ»-ից. Փոքրիկ Հայրենասէրը.—Փոքրիկ լրտեսը.—Սարդինացի Թըմբկահարը. Թարգ. Փ. Վարդանեան . . 239
Շիլլերի Վիլհէլմ Տէլլից երկու պատկեր. Թարգ. Գ. Բարխուդարեան 253
1. Իտալացի աղջկայ երգ. 2. Ազատ Աստուածն. Միք. Նալբանդեանց 279
Վարդան Մամիկոնեանի երգը. Ռ. Պատկանեան 279

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՇԽԱՐՀ

ՀՈՂԱԳՈՐԾ, ՄՇԱԿ, ԲԱՆՒՈՐ ԵՒ ԱՐՀԵՍՏԱՒՈՐ

Երկրագործ Մատիի բերդը. թժ. Մ. Մ.-Բէգլարեան-Օհանեան . . 281
Հողագործուհի. Յակոբ Յակոբեան . . 284
Գեղջուկ. Վաչագան . 286
Ազա Նեգրիից. Թարգմանութեամբ Յակոբ Յակոբեանի. 1. Ողջոյն քեզ, կարիք. 2. Անիւի տակ. 3. Թիթեղագործի մահը. 4. Ձեզ, ով հալածւած բախտի զաւակներ. 5. Ողջոյն ձեզ. 6. Բաղուկը. 7. Թող տուք մանկանց գալ առ իս. 8. Բահի երգը 288—298
Շապկի երգը. Մէլիք-Ջհանեան . . 297
«Հպարտ հոգու երգերից». Հ. Համբարձումեանի. 1. Դարբին. 2. Ջուլհակներ. 3. Գըրբարի երգը. 4. Կլեկչու երգերից. 300—107
Մեր բարերարները. 1. Հայոց գրերի գիւտը. Ս. Սահակ և Ս. Մեսրոպ. 2. տպագրութեան գիւտը. Գուտեմբէրգ. Կ. Կ. Մէլիք-Շահնազարեան 307—316

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0243135

8354

7753

ԹՈՅԼԱՏՐՈՒԱԾ ԵՆ ՊԱՏԿԱՆԱՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ուսումն Մայրենի Լեզուի. ա. տարի «Պատկերաւոր Այբբենարան» . . .	20
Ուսումն Մայրենի Լեզուի. բ. տարի . . .	40
Ուսումն Մայրենի Լեզուի. երրորդ գիրք . .	70
Ուսումն Մայրենի Լեզուի. չորրորդ գիրք .	90

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Գլխաւոր պահեստը գտնւում է Գուտենբերգ գրավաճառանոցում, որ հարիւրից ոչ պակաս գնողներին 25% զեղչ է լինում.

Հեղինակի հասցէն—Կաթողիկական փողոց, տուն № 11.